ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

7 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վնտարես
Երևան 2023

Երաշխավորված է
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Նիկողոսյան Ա., Վարդանյան Ա.
Գրականություն: Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք/ Ա. Նիկողոսյան, Ա. Վարդանյան.– Եր.: Անտարես, 2023.– 176 էջ:

ISBN 978-9939-98-079-9

© ԿԳՄՍՆ, 2023
© «Անտարես», 2023
© Նիկողոսյան Ա., Վարդանյան Ա., 2023

Բոլոր իրավունքները պաշտպանված են

Անտարես

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Պատանի՛ բարեկամ, այս ուսումնական տարվանից սկսած դու ուսումնասիրելու ես ***գրականությունը*** որպես առանձին առարկա: Կծանոթանաս հայ և համաշխարհային մի շարք գրողների երկերին և նրանց կյանքի ուղուն: Կկարդաս և կվերլուծես նրանց լավագույն ստեղծագործություններից մի քանիսը: Կհասկանաս, թե ինչ է գեղարվեստական խոսքը, կկարողանաս տարբերակել արձակն ու չափածոն, կստանաս գրական սեռերի ու ժանրերի վերաբերյալ տեսական գիտելիքներ:

Գրականություն առարկան բացառիկ է դպրոցական առարկաների շարքում: Գրականության շնորհիվ դու հնարավորություն կունենաս նայելու քո ներաշխարհի խորքերը, ձևավորելու գեղագիտական ընկալում և ճաշակ, մարդկային արժեքներ, հմտություններ, որոնք անհրաժեշտ են կիրթ, բանիմաց, լայնախոհ անհատ ու քաղաքացի դառնալու համար:

Դու և քո սերունդը հրաշալի տիրապետում եք տեղեկատվական սարքերին, արագ յուրացնում եք դրանց բազմազան գործառույթները, օգտվում դրանց առավելությունից: Այդ նկատառումով՝ դասագիրքը հարմարեցված է նոր տեխնոլոգիաների պահանջներին, ինտերակտիվ ու գրավիչ է: Այն ոչ թե սոսկ ընթերցարան է կամ տեղեկատու, այլ աշխատանքային գիրք-ձեռնարկ՝ հագեցած գործնական հարցերով և առաջադրանքներով, որոնք կօգնեն քեզ ձեռքբերելու նորանոր գիտելիքներ:

Դասագիրքը բաղկացած է ***բուն*** նյութից և ***լուսանցքի*** նյութից: Բուն նյութին ծանոթանալով՝ դու կստանաս ընդհանուր տեղեկություններ ու գիտելիք: Իսկ եթե ցանկանում ես ավելին իմանալ ու խորացնել գիտելիքներդ, ապա անպայման կարդա՛ լուսանցքի նյութերն ու առաջադրանքները: Դրանք պարունակում են գրական ժանրերի,

Գրական ստեղծագործությունները, ըստ շարադրման եղանակի, լինում են **արձակ** և **չափածո:** Արձակը գրվում և տպագրվում է ամբողջ էջի լայնությամբ, իսկ չափածոն՝ որոշ սկզբունքով ընտրված երկար կամ կարճ տողերով, որոնք, միասին վերցված, սյունակի տեսք ունեն: Արձակն էլ է հնարավոր այդպիսի տողերի վերածել, բայց դրանից բանաստեղծություն չի ստացվի: Չափածոն հատուկ սկզբունքով կազմակերպված խոսք է: Իսկ թե ի՞նչ սկզբունքով՝ կիմանանք դասագրքի հաջորդ էջերում:

ստեղծագործության կառուցվածքի, լեզվի ու տաղաչափության և գրականագիտական այլ հասկացությունների մասին տեսական գիտելիքներ: Դրանց հստակ ու կայուն պատկերացումը ավելի կընդլայնի գրականության մասին քո գիտելիքները թե՛ որպես սովորող, թե՛ առհասարակ որպես ընթերցող:

Դասագրքում կիրառվել են մի շարք պայմանական նշաններ, որոնք կհեշտացնեն քո աշխատանքը:

Ամենից առաջ ուշադրություն դարձրո՛ւ **QR կոդերին** (էլեկտրոնային հղումներ): Պահելով քո հեռախոսի տեսախցիկը այդ կոդի վրա՝ դու կարող ես դիտել կամ լսել տվյալ դասին վերաբերող ամենատարբեր նյութեր: Օրինակ՝ հենց հիմա լուսանցքի **QR կոդի** միջոցով կարող ես ունկնդրել մի հրաշալի երաժշտություն:

Դասի հետ կապված հավելյալ տեղեկությունները տրված են նշանով:

Տեսական նյութը, գրականագիտական հասկացությունների և տերմինների բացատրությունները տրված են նշանով:

Մյուս պայմանական նշաններն ունեն հետևյալ տեսքն ու նշանակությունը.

	ձայնագրություն
	տեսանյութ
	երգ, երաժշտություն
	բառարան
	գեղանկար
	լուսանկար
	տեղավայր
	հարցեր և առաջադրանքներ
	անհատական հարց կամ առաջադրանք
	խմբային հարց կամ առաջադրանք

	առաջադրանք՝ օժտվածություն կամ հատուկ կրթական կարիքներով աշակերտների համար

Դու կծանոթանաս Եղիշե Չարենցի, Դերենիկ Դեմիրճյանի, Ակսել Բակունցի, Նաիրի Զարյանի, Վահան Թոթովենցի, Ստեփան Զորյանի, Համո Սահյանի, Հովհաննես Շիրազի, Սիլվա Կապուտիկյանի, Պարույր Սևակի, Հրանտ Մաթևոսյանի, Զապել Եսայանի, Գուրգեն Մահարու և Ուիլյամ Սարոյանի կենսագրությանն ու մի քանի ստեղծագործությունների: Կընդլայնես քո պատկերացումներն ու գիտելիքները գրականագիտական այնպիսի հասկացություններից, ինչպիսիք են՝

- **Բանաստեղծություն**, բանաստեղծական շարք, հանգ, հանգերի տեսակները, բանաստեղծական տուն, բանաստեղծական տան տեսակները, բաղաձայնույթ և առձայնույթ, մակդիր, կրկներգ (ռեֆրեն)
- **Պատմվածք**, կերպար, գլխավոր և երկրորդական կերպարներ, դրական և բացասական կերպարներ, սյուժե (նախադրություն, հանգույց, գործողությունների զարգացում, գագաթնակետ, լուծում), թեմա և գաղափար
- **Ինքնակենսագրական** վեպ, ակնարկային ժանրեր:

Պատանի՛ բարեկամ, հուսով ենք, որ դու շատ կսիրես «Գրականություն» առարկան, իսկ մեր դասագիրքը կօգնի քեզ այդ ճանապարհին: Եթե առաջարկներ կամ դիտարկումներ ունենաս դասագրքի վերաբերյալ, ապա կարող ես գրել մեզ էլեկտրոնային փոստի միջոցով: Մենք անպայման կկարդանք և հաշվի կառնենք քո կարծիքը, որպեսզի ապագայում ունենանք է՛լ ավելի լավ դասագիրք:

Սիրով՝
Արքմենիկ Նիկողոսյան
Արսեն Վարդանյան

Գեղարվեստական գրականության մեջ առանձնացվում են երեք գրական սեռեր՝ **էպիկական, քնարական և դրամատիկական:** Յուրաքանչյուր գրական սեռ իր հերթին ունի մի շարք գրական տեսակներ, որոնք կոչվում են **ժանրեր:**

Մեզ հետ կարող ես կապվել՝ գրելով նամակ հետևյալ հասցեներին՝

arqmenik@gmail.com
arsenvardanian11@gmail.com

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

(1897–1937)

Եղիշե Չարենցի իսկական ազգանունը Սողոմոնյան է:

Իր ռազմաճակատային տպավորություններն ու զգացողությունները Չարենցն արտացոլել է **«Դանթեական առասպել»** պոեմում:

Կյանքը, ուսումնառությունը: Հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցը ծնվել է 1897 թվականի մարտի 13–ին **Կարս** քաղաքում:

1908–1912 թվականներին սովորել է Կարսի ռեալական (բնագիտական ուղղվածության) ուսումնարանում: Ուսումը, սակայն, նա կիսատ է թողել վարձը չվճարելու պատճառով: Առաջին համաշխարհային պատերազմի օրերին նա զինվորագրվել է հայ կամավորական գնդերից մեկին և մեկնել ռազմաճակատ՝ հասնելով մինչև **Վան**:

1919 թվականի աշնանը Չարենցը ուսուցիչ է աշխատել Կարսի մարզի Բաշքյադիկլար գյուղում: 1920 թվականի հունվար–մայիս ամիսներին աշխատանքի է նշանակվել Հայաստանի առաջին հանրապետության լուսավորության նախարարությունում՝ որպես հատուկ հանձնարարությունների կոմիսար: Չարենցին աշխատանքի էր հրավիրել անձամբ նախարար Նիկոլ Աղբալյանը, որը գրաքննադատ էր և բարձր էր գնահատում երիտասարդ բանաստեղծի տաղանդը:

1920–1921 թվականներին Չարենցը կրկին զբաղվում է ուսուցչությամբ: Այնուհետև՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1920 թվականի նոյեմբերին, նա Լուսավորության ժողովրդական կոմիսարիատում ստանձնում է արվեստի բաժնի վարիչի պաշտոնը: Այստեղ աշխատում է մինչև 1921 թվականի մայիս ամիսը: 1921 թվականի մայիսին Չարենցն

ամուսնանում է Արփենիկ Տեր-Աստվածատրյանի հետ, և հունիսին նորապսակները մեկնում են Մոսկվա՝ սովորելու Արևելքի աշխատավորների կոմունիստական համալսարանում:

1922 թվականին իր երկու ընկերների՝ Ազատ Վշտունու և Գևորգ Աբովի հետ Չարենցը հրատարակում է Երեքի դեկլարացիան:

1924 թվականի նոյեմբերի 20-ից մինչև 1925 թվականի հուլիսի 31-ը Չարենցը շրջագայում է բազմաթիվ քաղաքներով: Լինում է **Տրապիզոնում**, **Կ. Պոլսում**, **Աթենքում**, **Հռոմում**, **Վենետիկում**, **Փարիզում**: Վերադառնալով Երևան՝ նա դառնում է նոր ստեղծված «Նոյեմբեր» միության ղեկավար՝ ծավալելով գրական ու հասարակական բուռն գործունեություն:

1927 թվականին մահանում է Արփենիկը: Չարենցը շատ ծանր է տանում նրա մահը:

1928-35 թվականներին Չարենցն աշխատում է Հայաստանի պետական հրատարակչությունում: Նրա հրատարակչական գործունեության շրջանը համարվում է լավագույններից մեկը հայ գրատպության պատմության մեջ:

1930-ական թվականների սկզբից Չարենցի գործունեությունն ու նրա ստեղծագործությունները սկսում են ավելի շատ քննադատվել գրական հակառակորդների կողմից: Հալածանքները խորանում են հատկապես **«Գիրք ճանապարհի»** ժողովածուի հրատարակման ժամանակ: Գիրքը ի վերջո արգելվում է: Չարենցին հեռացնում են հրատարակչությունից և Գրողների միությունից:

1936 թվականի սեպտեմբերի 24-ից Չարենցը ենթարկվում է տնային կալանքի: Նրան չեն թույլատրում բուժման նպատակով մեկնել արտասահման:

1937 թվականի հուլիսի 27-ին Չարենցը ձերբակալվում է: Մահանում է չորս ամիս անց՝ նոյեմբերի 27-ի առավոտյան՝ ժամը 7-ին, կենտրոնական բանտի հիվանդանոցում:

Ստեղծագործությունը: Եղիշե Չարենցը բազմաժանր գրող է: Հատկապես շատ է կիրառել բանաստեղծական ժանրերը:

Չարենցի **«Ծաղիկները հեզ թեքվում են քամու օրորի տակին»** բանաստեղծությունը նրա առաջին տպագիր գործն է: Լույս է տեսել 1912 թվականին Թիֆլիսի «Պատանի» ալմանախում: 1914 թվականին լույս տեսավ Չարենցի առաջին գիրքը՝ **«Երեք երգ տխրադալուկ աղջկան»** վերնագրով: Այնուհետև նա գրում ու

Երեքի դեկլարացիան կոչ էր անում գրականության մեջ հաստատել նոր բովանդակություն, նոր ձև և նոր ուղիներ՝ մերժելով անցյալի գրականությունը:

Հայպետհրատի շենքը, որտեղ աշխատել է Չարենցը:

1931 թվականին Չարենցն ամուսնանում է երկրորդ անգամ: Կինը՝ Իզաբելլան, Չարենցին պարգևում է երկու դուստր: 1932 թ. ծնվում է Արփենիկը, 1935 թ.՝ Անահիտը:

Ունկնդրի՛ր «Project La» նախագծի երգը՝ գրված Չարենցի բանաստեղծությունների բառերով:

Մարտիրոս Սարյան, «Եղիշե Չարենցի դիմանկարը» (1923)

Եղիշե Չարենցը ստեղծագործել է հետևյալ ժանրերով՝ **բանաստեղծություն**, **պոեմ**, **բալլադ**, **քառյակ**, **վեպ** և այլն:

հրատարակում է բազմաթիվ նոր ստեղծագործություններ՝ պոեմներ, բանաստեղծական շարքեր, **«Ծիածանը»** ժողովածուն (1917), **«Ամբոխները խելագարված»** պոեմը և այլն: 1920-ական թվականները ևս ստեղծագործական առումով բեղուն էին Չարենցի համար: Գրում է **«Տաղարան»** շարքը, որը նվիրված է Արփենիկ Չարենցին: 1926 թվականին լույս է տեսնում Չարենցի միակ վեպը՝ **«Երկիր Նաիրի»**-ն:

1930 թվականին հրատարակվում է **«Էպիքական լուսաբաց»** ժողովածուն, իսկ 1934 թվականին՝ **«Գիրք ճանապարհի»** ժողովածուն: 1934-1937 թվականներին, քննադատությունների և հալածանքների պայմաններում անգամ, Չարենցը շարունակում էր ստեղծագործել: Գրում է **«Նավզիկե»** պոեմը և բազմաթիվ բանաստեղծություններ, սակայն նրա գործերը հազվադեպ էին տպագրվում: Այդ շրջանում ստեղծված գործերի ձեռագրերը հրատարակվեցին նրա մահից շատ տարիներ անց՝ **«Անտիպ և չհավաքված երկեր»** (1983), **«Նորահայտ էջեր»** (1996) և այլ գրքերում: Բազմաթիվ ձեռագրեր, ցավոք, անհետ կորել են, շատերը մեզ են հասել քայքայված վիճակում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ է բանաստեղծն ընտրել Չարենց գրական անունը: Հավաքի՛ր տեղեկություններ, ներկայացրո՛ւ դասընկերներիդ: Իսկ ի՞նչ գրական անուն կընտրեիր դու քեզ համար:
2. Օգտագործի՛ր աշխարհագրությունից ստացած գիտելիքներդ և քարտեզի վրա նշի՛ր Չարենցի այցելած երկրներն ու քաղաքները: Դրանցից մեկի մասին տեղեկություն ներկայացրո՛ւ ընկերներիդ:
3. Ովքե՞ր են մեծ դեր ունեցել Չարենցի կյանքում: Ի՞նչ գիտես Նիկոլ Աղբալյանի մասին:
4. Ո՞րն էր, ըստ քեզ, Չարենցի կյանքի ամենանշանակալից իրադարձությունը: Ինչո՞ւ:
5. «Հայոց պատմություն» առարկայից Հայաստանի առաջին հանրապետության և Հայաստանի խորհրդայնացման մասին տեղեկություններ հավաքի՛ր և ներկայացրո՛ւ նաև դասընկերներիդ:

Եղիշե Չարենցի կյանքի հետաքրքիր դրվագներին ավելի մանրամասն ծանոթանալու համար դիտի՛ր «Մի ճրագ մթում» ֆիլմը:

Տուն-թանգարանի հասցեն է՝ ք. Երևան, Մաշտոցի 17:
Հեռ.՝ (010) 535594:

Երևանում գործում է Եղիշե Չարենցի տուն-թանգարանը: Հիմնադրվել է 1964 թվականին Երևանի այն բնակարանում, որտեղ 1935-1937 թվականներին ապրել է Չարենցը:

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում:

Ուր է՛լ լինեմ — չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր —
Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան–յա՛րն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

Բանաստեղծությունը գրական-գեղարվեստական չափածո ստեղծագործության տեսակ է (ժանր): Բանաստեղծություն են կոչվում քնարական ոչ մեծ ծավալի ստեղծագործությունները, որոնք բացահայտում են որևէ զգացմունք, տպավորություն, խոհ:

Մարտիրոս Սարյան, «Իմ հայրենիքը» շարքից (1959)

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության մեջ առանձնացրո՛ւ և խմբավորի՛ր հետևյալ թեմաներին առնչվող բառերը. ա) մշակույթ, բ) բնություն, գ) Հայաստան և հայկականություն: Հիմնավորի՛ր ընտրությունդ:
2. Հայոց մեծերից ո՞ւմ է հիշատակում Չարենցը: Ովքե՞ր են նրանք: Ի՞նչ դեր ունեն հայոց պատմության և մշակույթի մեջ: Փոքրիկ զեկուցում պատրաստի՛ր և ներկայացրո՛ւ ընկերներդ:
3. Պատկերացրո՛ւ, որ Չարենցն ինքը քեզ համար կարդացել է այս բանաստեղծությունը, և դու կարող ես քո դիտարկումներով օգնել նրան: Ի՞նչ կավելացնեիր բանաստեղծությանը: Արձակ կամ չափածո շարադրի՛ր մտքերդ:
4. Բանաստեղծությունից առանձնացրո՛ւ մակդիրները, ընթերցի՛ր առանց դրանց, ինքնուրույն մակդիրներ ավելացրո՛ւ: Այնուհետև փորձի՛ր մեկնաբանել՝ ինչ դեր ունեն այդ բառերը բանաստեղծության մեջ: Օրինակ՝

   Ես իմ ... Հայաստանի ... բառն եմ սիրում,
   Մեր ... սազի ... ... լարն եմ սիրում,
   ... ծաղիկների ու վարդերի բույրը ...,
   Ու ... աղջիկների ... պա՛րն եմ սիրում:
5. Ի՞նչ են ասել նշանավոր մարդիկ այս բանաստեղծության մասին: Քո կարծիքով՝ ինչո՞ւ է այս բանաստեղծությունը հանրահայտ:

«Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը առանձին ստեղծագործություն է, միևնույն ժամանակ՝ Չարենցի **«Տաղարան»** բանաստեղծական շարքից է: Շարքի յուրաքանչյուր բանաստեղծություն ներքին կապ ունի շարքի ընդհանուր մոտիվների ու տրամադրությունների հետ: Իր հերթին՝ շարքի յուրաքանչյուր բանաստեղծություն կարող է ընկալվել որպես առանձին ստեղծագործություն:

Բանաստեղծության մեջ ռիթմ և մեղեդայնություն ապահովելու համար կիրառվում է **հանգը:** **Հանգն** այն երևույթն է, երբ բանաստեղծության մեջ երկու կամ ավելի տողեր ունեն նման (համահնչուն) վերջավորություն:

Սեդրակ Առաքելյան, «Գյուղը Սևանի ափին» (1926)

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Ձյունապատ լեռներ ու կապույտ լճեր:
Երկինքներ, որպես երազներ հոգու:
Երկինքներ, որպես մանկական աչեր:
Մենակ էի ես: Ինձ հետ էիր դու:

Երբ լսում էի մրմունջը լճի
Ու նայում էի թափանցիկ հեռուն —
Ձարթնում էր իմ մեջ քո սուրբ անուրջի
Կորուստը այն հին, աստղայի՛ն, անհո՛ւն:

Կանչում էր, կանչում ձյունոտ լեռներում
Մեկը կարոտի իրիկնամուտին:
Իսկ գիշերն իջնում, ծածկում էր հեռուն,
Խառնելով հոգիս աստղային մութին...

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր հայրենիքը բնութագրող բառերը:
2. Ո՞ր բառերն ու բառակապակցություններն են արտահայտում բանաստեղծի մտերմիկ վերաբերմունքը հայրենիքի հանդեպ:
3. Ի՞նչ գույներ տեսար, ի՞նչ ձայներ լսեցիր բանաստեղծությունն ընթերցելիս:
4. Ուշադի՛ր նայիր նկարին և այն համեմատի՛ր բանաստեղծության հետ:
5. Համեմատի՛ր այս բանաստեղծությունը «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության հետ:

ՏԱՂ ԱՆՁՆԱԿԱՆ

Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինված անտաշ քարով,
Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով
Եվ Կարինե Քոթանճյանին անգամ չասած մնաս բարով —
Ա՜նց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:

Անց եմ կենում. շուրջս — մարդիկ, շուրջս դեմքեր հազա՜ր-
հազա՜ր.
Շուրջս աշխարհն է աղմկում, մարդկային կյանքն
անհավասար.
Եվ ո՞վ կասի՝ ինչո՞ւ ես դու, և ո՞վ կասի, թե ո՞ւր հասար,—
Դեմքերը, ախ, բութ են այնպես՝ կարծես շինված են
տապարով:

Գորշ, տաղտկալի ու խելագար երգ է կարծես այս կյանքը մի.
Ինչ-որ մեկի սրտում բացված — վերք է կարծես այս կյանքը
մի.
Եվ ո՞ւմ համար — էլ ո՞ւմ համար կարոտակեզ երգե հիմի
Սիրտս՝ լցված տարիների սեղմ արճիճով ու կապարով:

Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի —
Ես — հաշմանդամ ու խելագար ու հավիտյա՜ն վտարանդի՝
Դեպի երկի՜նք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի —
Իմ բա՜րձր, հին ու աստղային երազների ճանապարհով...

Ու էլ ամե՛ն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.
Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ ա՛չքս է հեռուն.
Թե Կարինե Քոթանճյանին տեսնեք Կարսի փողոցներում —
Ասե՛ք նրան՝ Չարենցն ասավ — մնաս բարո՜վ,
մնաս բարո՜վ...

մով կապույտ, մավի, ծավի
տապար կացին
Ամենտի եզերք երևակայական աշխարհ

Հանգերը, ըստ դասավորության, քառատող տան մեջ լինում են երեք տեսակ՝
կից հանգավորում (հանգով կապվում են հարևան տողերը).
խաչաձև հանգավորում (կենտ տողերը հանգով կապվում են իրար հետ, իսկ զույգերը՝ իրար).
օղակաձև հանգավորում (հանգով կապվում են առաջին և չորրորդ տողերն իրար հետ, իսկ երկրորդն ու երրորդը՝ իրար):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բանաստեղծության մեջ հանգավորման ո՞ր տեսակն է կիրառված: Դո՛ւրս գրիր հանգ կազմող բառերը և դրանցով փորձի՛ր վերաշարադրել բանաստեղծության բովանդակությունը:
2. Դու արդեն գիտես, որ բանաստեղծության մեջ բացահայտվում է որևէ զգացմունք, տպավորություն, խոհ: Ըստ այդմ՝ բնութագրի՛ր «Տաղ անձնական» բանաստեղծությունը:
3. Մի քանի նախադասությամբ վերաշարադրի՛ր բանաստեղծության հիմնական բովանդակությունը:
4. Բանաստեղծության մեջ հիշատակվում է Կարինե Քոթանճյանի անունը: Հետաքրքրվի՛ր ու պարզի՛ր, թե ով է նա և ինչ դեր է ունեցել Չարենցի կյանքում:
5. Ներկայացրո՛ւ քնարական հերոսի ապրումներն ըստ բանաստեղծության: Ի՞նչ գույներով կպատկերեիր բանաստեղծությունը, եթե նկարիչ լինեիր:
6. Մեկնաբանի՛ր բանաստեղծության վերնագիրը:

Կարս քաղաքը 1910–ական թվականներին

Անդրադարձ

Դու ծանոթացար Եղիշե Չարենցի կյանքին և ստեղծագործություններից մի քանիսին: Ի՞նչ նոր բան սովորեցիր: Ո՞ր ստեղծագործությունը քեզ դուր եկավ. ինչո՞ւ:

Ամփոփիչ գործնական աշխատանք

Գրի՛ր շարադրություն «Զրույց Չարենցի հետ» վերնագրով:

Բաժանվե՛ք խմբերի՝ ըստ Եղիշե Չարենցի բանաստեղծությունների և պատրաստե՛ք պաստառ կամ սահիկաշար դրանց վերաբերյալ:

Ուսումնասիրի՛ր Չարենցի տարբեր տարիների լուսանկարները, կազմի՛ր ֆոտոռեպորտաժ՝ ներկայացնելով նրա ոճը:
Չարենցի ոճով հագուստի մոդելներ պատրաստի՛ր և ներկայացրո՛ւ դասընկերներիդ:



ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

(1877-1956)

Դերենիկ Դեմիրճյանի իսկական ազգանունը Դեմիրճօղլյան է:

Դեմիրճյանը Արդահանում աշխատել է որպես օդերևութաբանական կայանի դիտորդ, ինչպես նաև՝ փոստակայանի վերակացու: Բաքվում աշխատել է հայ մեծահարուստ Ալեքսանդր Մանթաշյանցի նավթահորերում՝ որպես բանվորական ճաշարանի վարիչ:

Կյանքը, ուսումնառությունը: Հայ նշանավոր գրող Դերենիկ Դեմիրճյանը ծնվել է 1877 թվականի փետրվարի 17-ին Ախալքալաք քաղաքում:

Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի դպրոցում: Հետագայում նրանց ընտանիքը տեղափոխվել է Արդահան քաղաք: Դեմիրճյանն ուսումը շարունակել է այնտեղ: 1892-ին ընդունվել է **Էջմիածնի Գևորգյան ճեմարան**, իսկ 2 տարի անց կրթությունը շարունակել **Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում**:

1899 թվականին Դեմիրճյանը դառնում է Հովհաննես Թումանյանի նախաձեռնած **«Վերնատուն»** գրական խմբակի հիմնադիր անդամներից մեկը: Մեկ տարի անց բնակություն է հաստատում **Թիֆլիսում**: Այնտեղ աշխատում է Հայոց բարեգործական ընկերությունում:

1903 թվականին երաժշտություն ուսումնասիրելու նպատակով մեկնել է **Մոսկվա**: 1905-1910 թթ. սովորել է Շվեյցարիայի **Ժնևի** համալսարանի մանկավարժական ֆակուլտետում՝ ուսումնասիրելով բնագիտություն, նաև՝ մանկավարժություն և գրականություն:

Վերադառնալով Թիֆլիս՝ հայոց լեզու է դասավանդել Գայանյան (Հովնանյան) օրիորդաց դպրոցում:

Ժնևի երաժշտանոցներից մեկում Դեմիրճյանը ջութակի դասեր է առել: Նա շատ է սիրել երաժշտական այդ գործիքը, նվագել է: Դեմիրճյանի «Ջութակ և սրինգ» պատմվածքում արտացոլված է գրողի յուրահատուկ վերաբերմունքը ջութակի նկատմամբ: Դեմիրճյանի տուն-թանգարանում այսօր էլ պահվում է նրա ջութակը:

1925 թվականին Դեմիրճյանը վերջնականապես հաստատվում է **Երևանում**: Եղել է Հայ մշակույթի ինստիտուտի գիտական քարտուղարը, իսկ 1927-1931 թվականներին՝ Հայ աշխատավորական գրողների միության նախագահը:

Այնուհետև՝ մինչև կյանքի վերջը, Դեմիրճյանը հիմնականում զբաղվել է ստեղծագործական աշխատանքով:

Մահացել է 1956 թվականի դեկտեմբերի 6-ին Երևանում:

Դերենիկ Դեմիրճյանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս է (1953):

Ստեղծագործությունը: Դերենիկ Դեմիրճյանը բազմաժանր գրող է: Այսինքն՝ ստեղծագործել է գրական տարբեր ժանրերով:

Գրական ասպարեզ է մտել բանաստեղծությամբ: 1893 թվականին «Տարազ» թերթում լույս է տեսել նրա առաջին տպագիր գործը՝ **«Ապագա»** վերնագրով: Հրատարակել է բանաստեղծությունների ժողովածուներ: Զուգահեռ՝ գրել է նաև պատմվածքներ:

Որպես բանաստեղծ՝ Դեմիրճյանը լայն ճանաչման և բարձր գնահատականի չի արժանացել: 1910-ական թվականներից սկսած՝ գրել է հիմնականում արձակ և դրամատիկական գործեր, որոնք գեղարվեստական ավելի բարձր արժեք ունեն: Դեմիրճյանի լավագույն պատմվածքներից են **«Ավելորդը»**, **«Ստամոքս»**, **«Տերտերը»**, **«Գիրք ծաղկանց»**: Հայ դրամատուրգիայի նշանավոր գործերից են Դեմիրճյանի **«Քաջ Նազար»** կատակերգությունն ու **«Երկիր հայրենի»** դրաման:

Դեմիրճյանի լավագույն երկը **«Վարդանանք»** պատմավեպն է՝ գրված 1943-1946 թվականներին: Այն

Դերենիկ Դեմիրճյանը ստեղծագործել է հետևյալ ժանրերով՝ **բանաստեղծություն**, **պոեմ**, **քառյակ**, **դրամա**, **պիես**, **կատակերգություն**, **պատմվածք**, **ակնարկ**, **վիպակ**, **վեպ**, **պատմավեպ**:

գեղարվեստական հզոր ներշնչանքով պատկերում է հայ ժողովրդի պատմության ամենակարևոր իրադարձություններից մեկը՝ 451 թվականի Ավարայրի ճակատամարտը:

Կյանքի վերջին տարիներին Դեմիրճյանը գրում էր **«Մեսրոպ Մաշտոց»** վեպը, որն անավարտ է մնացել:

Դերենիկ Դեմիրճյանի կյանքի հետաքրքիր դրվագներին ավելի մանրամասն ծանոթանալու համար դիտի՛ր «Մի սիրո պատմություն» հաղորդումը:

Երևանում գործում է Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարանը: Հիմնադրվել է 1977 թվականին այն բնակարանում, որտեղ գրողն ապրել է 1929 թվականից մինչ մահը:

Տուն-թանգարանի հասցեն է՝ ք. Երևան, Աբովյան 29, բն. 4: Հեռ.՝ (010) 527774

Վարդան Մամիկոնյանի արձանը Երևանում Քանդակագործ՝ Երվանդ Քոչար Ճարտարապետ՝ Ստեփան Քյուրքչյան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. 5-10 կետով ներկայացրո՛ւ Դեմիրճյանի կյանքի կարևոր դեպքերը:
2. Դեմիրճյանի կյանքի ո՞ր դրվագն էր ավելի հետաքրքիր քեզ համար: Լրացուցիչ տեղեկություններ հավաքի՛ր և ներկայացրո՛ւ ընկերներիդ:
3. Դեմիրճյանի ապրած վայրերից որո՞ւմ ես եղել: Ի՞նչն է քեզ այնտեղ տպավորել: Դեմիրճյանի կյանքին առնչվող տեղանունների ցանկ կազմի՛ր:
4. Դու իմացար, որ Դեմիրճյանը բազմաժանր գրող է: Գրական ի՞նչ ժանրեր գիտես: Քեզ ծանոթ ստեղծագործություններից օրինակներ բե՛ր և ապացուցի՛ր ժանրային պատկանելությունը: Ինչո՞վ է պատմվածքը տարբերվում հեքիաթից, առակից, կարծիքդ հիմնավորի՛ր օրինակներով:
5. Դեմիրճյանը սիրում էր կատուներ, իսկ դու սիրո՞ւմ ես կենդանիներ: Բնութագրի՛ր քո սիրելի կենդանուն:
6. Դեմիրճյանը սիրում էր ջութակ նվագել: Իսկ դու կարողանո՞ւմ ես որևէ երաժշտական գործիք նվագել: Թվարկի՛ր երաժշտական գործիքների անուններ: Դրանցից որո՞նք են հայկական:



Սալվադոր Դալի, «Մենություն» (1931)

Մտածի՛ր և քննարկի՛ր դասընկերներիդ հետ:

Ուշադի՛ր նայիր նկարին և հայտնի՛ր տպավորությունդ:
Քո կարծիքով, ի՞նչ կապ ունի պատմվածքի վերնագրի հետ:

Մաս 1

Մաս 2

Մաս 3

ԱՎԵԼՈՐԴԸ

Երբեք Հաճի աղան այդպես անխնամ չէր փոխել քայլերը իրենց տնից խանութ գնալիս: Այն Հաճի աղան, որի փողոցով անցնելն իսկ մի հանդես էր. աղայակա՛ն: Միշտ հաստ շալը վաթսուն-յոթանասուն տարեկան կուզի վրայով վզին փաթաթած, երկար իրանը բերընքսիվար ընկնելու պես՝ առաջ թեքած, ուղտի վիզը առջև երկարած, սև ակնոցների արանքից սապատավոր քիթը օդի մեջ խրած, հայացքը դեպի հեռուն, մի կետի՝ ընթանում էր նա: Եվ այդ ֆեսավոր Հաճին ծիսակատարությունների նման անխուսափելի գործելակերպեր ուներ փողոցով անցնելիս. գիտեր ամեն դար ու փոսի, քար ու ոտնատեղի սովորական պատռվածքը, և եթե սայլի, ոտքի կամ բնության հետևանքով քարերն ու ոտնատեղերը նոր կարգով դասավորվեին, Հաճի աղան կանգ կառներ, լրջորեն կկշռեր նոր ոտնատեղի վտանգի չափը, իր դեղնած գավազանի ծայրով բախելով, կստուգեր ոտքը դնելիք քարի հավատարմությունը և, գավազանը ցեխի կամ ջրի մեջ դիմհար տալով, զգույշ աքլորի պես ոտփքերը գետնից պոկելով ու վար դնելով, գերագույն խնամքով կանցներ վտանգավոր տեղը:

Տասը տարի առաջ միայն՝ իր անդրանիկ որդուն թաղելիս, Հաճի աղան թույլ տվեց, որ իր կապույտ մահուդ շալվարի տոտերը ցեխոտվեն, և մեկ էլ այսօր, երբ իմացավ, որ

թուրք զորքը ռուսներին նեղելով, հաղթական մոտենում է իրենց փոքրիկ սահմանամերձ քաղաքին:

Ասենք, այսպես դեկտեմբերի ցրտին Հաճի աղան դուրս եկողը չէր, այն էլ այս ցեխին, որ գոյացել էր սայլերի ու զորքի տակ կոխկրտած ձյունից՝ հակառակ, որ միշտ այս ամսին գետինը սառած էր լինում:

Անհանգիստ էր վերի՛ն աստիճանի: Արդեն մի շաբաթ է, ականջին դիպել էր, որ թուրքը գալիս է:

Փորձված, կյանքի չար ու բարուն տեղյակ՝ Հաճի աղան, որ տեսել էր 1877 թվի ռուս-տաճկական պատերազմը, երբ թուրքը կարծես բնականորեն հաղթվում էր, այն Հաճի աղան, որ «քրդանոցներում ու թուրքանոցներում» զելվել, առևտուր էր արել և շատ անգամ էր ավազակների ձեռքից աղվեսի պես պոչը պրծացրել, նա լավ գիտեր, որ երբեք չեն սպասի՝ վտանգը գա ու փեշիցդ բռնի.— պետք է ժամանակին որսալ խուսափելու անկրկնելի վայրկյանը:

Բայց այս անգամ վրիպեց… Եվ չարաչար:

Երբ մտավ շուկա, փորձված աչքերով չափեց հրապարակը և զինվորների ու խանութպանների եռուզեռում մի անկարգություն նկատեց, որ նրան դուր չեկավ: Մոտեցավ իր խանութին, խանութը կիսափակ էր: Ներս մտավ՝ թուքը կուլ տալով: Իր քառասնամյա որդին շտապով ապրանքը դարակներից թափում էր մի տոպրակի վրա: Գեր ու կլոր տղամարդ էր նա և հևում էր փուքսի պես. քրտնքի կաթիլները շարվել էին նրա չեչոտ, կարմիր երեսին:

Հաճու աչքերը մթնեցին: Ածիլած կզակը հաստ բեղերի տակ դողաց, և նա բառերը լփռտելով՝ մրմնջաց.

– Շմավո՛ն… ի՞ի՞նչ կենիս…

Շմավոնը հորը տեսնելով՝ ավելի մռայլվեց և մեղավորի պես, կարծես ինքը լիներ աղետի պատճառը, չպատասխանեց և աչքերը գետնին գցեց: Իբրև թե՝ «հա՛, իմացի՛ր, մեռել է»:

Եվ իսկապես, կարծես մարդ էր մեռել. կաղ գործակատարը տաբուրետ քաշեց Հաճի աղայի առջև և ասաց.

– Բան չկա, Հաճի աղա, նստե:

– Ջա՛նըմ, ի՞նչ «բան չկա». ֆուրղո՛ն բռնեցեք…

– Միսաքը գնաց խանը՝ բռնելու,– պատասխանեց Շմավոնը:

Հաճի աղան չնստեց. ծուղակն ընկած մկան պես կարծես ելք որոնելով, նայեց չորս կողմը և դուրս եկավ, որ դուրսն էլ նայի: Բայց հարևան խանութներում առուտուրը եռում էր. խանութպանները հանգիստ էին երևում: Իրենց հարևանը, Կորկոտենց Եղիշը, լուրջ և անխռով, ինչպես

«Ավելորդը» պատմվածք է: Պատմվածքը փոքր ծավալով արձակ ստեղծագործություն է: Դեպքերի նկարագրությունն այստեղ սեղմ է ու հակիրճ: Սովորաբար պատմվածքում հանդես են գալիս մեկ կամ մի քանի կերպարներ:

Ի՞նչ տրամադրություն է հաղորդում պատմվածքի առաջին նախադասությունը:

Պատմվածքը կարդալու ընթացքում առանձնացրո՛ւ կերպարները և բնութագրի՛ր նրանց:

Գեղարվեստական կերպարը ստեղծագործության մեջ այն անձնավորությունն է, որն ունի բնավորության և վարքագծի որոշակի հատկանիշներ:

ամեն օր, ահա բան է կշռում կազակների համար: Հանգիստ է նա իր բահի մորուքով և ընկույզի խոշոր աչքերով: Ութ երեխայի տեր է. եթե «նահանջ» լիներ, նա ավելի շուտ պիտի անհանգստանար: Եվ Հաճի աղան մոտենալով նրա խանութին՝ հարցրեց նրան.

– Եղի՛շ, աս ի՞նչ կըսեն, թուրքը զոռի՞ր է:

– Այդպես բան կա՞, չիտե՛մ... մեր բակի ֆետպեպիլը ըսավ՝ ահ չկա,– պատասխանեց Եղիշը և շարունակեց իր առուտուրը եպիսկոպոսական արժանապատվությամբ: Հաճի աղան կանգնեց նրա խանութի առջև՝ չիմանալով ի՛նչ անի: Նրա մոտից անցնում էր դյուրգար Պողոսը, որ իրեն ձեռ առնող զվարճախոսներից մեկին պատասխանում էր.

– Ա՛տամ, ինչ-որ ուրիշներու գըլի՝ ան ա թող մեզի ըլի. աշխըրովի չէ՞:

– Ինձի աշե,– ձայն տվեց հեռու խանութից ձեռ առնողը,– հազրվե՛, կամենդանթը քեզի համար կառեթ պիտի ղրկե, որ փախչիս:

– Կառեթը զանգիններուն համար է, սաղ ըլին ոտքերս,– հանգիստ պատասխանեց առողջ արհեստավորը և շուռ տվեց ուրիշ փողոց:

Հաճի աղային զայրացրեց այս չարագուշակ զվարճախոսությունը, և այն է, հեռանում էր Եղիշի խանութից, որ ներս մտավ նրա ժրագլուխ աշկերտը և՝ իբրև անմիտ քայլի վրա ծիծաղելով՝ զեկուցեց.

– Խանը ինչ ֆուրղուն օր կա՝ հատը հարուր, հարուր իցցուն մանեթով բռներ են:

Հաճին զգաց, որ բերնի թուքը ցամաքում է:

– Ի՞նչ... բռնե՞ր են... մեր Միսաքը հո՞ն էր,– հարցրեց շնչասպառ:

– Հոն էր, հըմը չկրցավ բռնե,– պատասխանեց թարմ ու անհոգ ձայնով աշկերտը և ավելը վերցնելով, սկսեց ուրախուրախ ավլել խանութի սանդուղքը:

Հաճի աղան շտապեց իր խանութը և դողդողալով վրա պրծավ իր որդուն.

– Ի՜նչ էս էրիր... Ֆուրղունները ձեռից բա՛ց ես թողիր... գերդաստա՜նս մնաց...

Շմավոնի կարճ ու գնդլիկ մարմինը շտկվեց: Նա իր քրտնած, չեչոտ դեմքը բարձրացրեց և ապրանքը գոգնոցի մեջ՝ նայեց հորը: Հայացքներն իրար հանդիպեցին, և նրանք իրար հասկացան: Հաճի աղան չարագուշակ ժպիտով գլուխը հանդիմանորեն շարժեց.

– Ֆուրղո՛ւն գտի... տղա՛ք ձեռքե կերթան... տո՛ւնս...

Շմավոնը դեմքը կնճռոտեց:

Կազմի՛ր Հաճի աղայի ընտանեկան տոհմածառը:

Առանձնացրո՛ւ և պատմվածքից դո՛ւրս գրիր այն հատվածները, որոնցում երևում են Հաճի աղայի բնավորության գծերը:

Բնութագրի՛ր գլխավոր հերոսի ընտանիքի անդամների հարաբերությունները:

– Ջանըմ, ֆուրղուն ինչո՞ւ պիտի չըլի,– բարկացավ նա և ապրանքը թափելով, յուղոտ գոգնոցով քրտինքը սրբեց ու գլորվող տակառի պես կողքե-կողք ընկնելով, դուրս գնաց:

Հաճի աղան երկար նայում էր իր որդու թաղիքե վալիկներին, նրա տափակ փափախին և կարմիր շարֆին. մերթ երևում, մերթ կորչում էր զինվորների բազմության մեջ, մինչև որ անհետացավ:

Հաճի աղան դուրս եկավ խանութից և բռնեց տան ճամփան:

Հասնելով տուն՝ դռան մոտ ոտները չքսեց երկաթե քերիչին, ինչպես անխախտելի պարտականությունն էր Հաճիենց տանեցիների, և ներս մտավ: Իր մեծ հարսը, որ տան միջանցքում բուրդ էր ձաղկում, Հաճուն տեսնելով՝ տիրացուի վարժությամբ, իբրև ծիսակատարության որոշ տեղը, ձայն տվեց.

– Շողո՛, Հաճի աղաս էկավ, ղայֆան բեր:

Բայց երբ Հաճի աղան մրթմրթաց «հարա՛մ ըլի ղայֆան», հարսին այնպես թվաց, թե երազումն է, կամ մի անասելի դժբախտություն եկավ իրենց տան գլխին: Վրա ընկավ Հաճու ոտքերին, հանեց նրա կաշվե կալոշները և, տեսնելով **Հաճու շալվարի ցեխոտված տոտերը**, վախեցած գնաց խոհանոց՝ տանեցոց իմաց տալու:

Հաճի աղան մտավ «մեծ օդան» և կանգնեց մեջտեղը տխուր՝ արձանի պես:

Ներս մտավ Հաճի աղայի կինը՝ Հաճի մարը, մի ժիր ու նիհար կին:

– Ի՞նչ է, Հաճի աղա,– հարցրեց:

– Ի՞նչ պիտի ըլի. թուրքը գուքա, հազրվեցեք:

– Օ՛ֆ, ամա՛ն, Հաճի աղա, «թուրք, թուրք» առել անցել ես. քաղաքը լիքը սալդաթ է:

– Գլխեդ շատ մի՛ դուս տա, հազրվե՛,– հրահանգեց Հաճի աղան:

– Թուրք չկա, չկա. ղայֆադ խմե,– արագախոսեց ժիր կինը և դուրս գնաց:

Այդ միջոցին Հաճի աղայի թոռը, Շողոն, մի կարմրաթուշ աղջիկ, տռուզ ձեռքերով ներս բերեց կաթով սուրճը:

Հաճի աղայի մեծ հարսը բերեց կապույտ փռոցը, փռեց մինդարի առջև, կապերտի վրա, առավ աղջկա ձեռքից սուրճը, որ դնի փռոցի վրա: Բայց Հաճի աղան մռութը կախ, հուզված և դժկամ՝ ձեռքով արավ, որ սուրճը տանեն դուրս: Այս արդեն այնպես ազդեց հարսին ու աղջկան, որ նրանք խորտակված իրար նայեցին, կարծես երկրի հաստատությունը խախտվեց: **Հաճի աղան սուրճը չխմի՛...**

Կերպարները լինում են գլխավոր և երկրորդական: Դրանք տարբերակվում են ստեղծագործության մեջ իրենց ունեցած դերի կարևորությամբ:

Մեծ հարսը ձեռքով արավ Շողոյին, որ դուրս գա, ինքն էլ դուրս ելավ՝ ինչպես հիվանդի սենյակից, որ չանհանգստացնեն նրան:

Հաճի աղան գնաց, ծալապատիկ նստեց մինդարին և թթվեց: Մտքերով շփոթված հայացքը գցեց իր տան սարք ու կարգին, կարծես օտարական լիներ: Սենյակը խաղաղ էր: Մինդարները, մութաքաները, խալիները իրենց տեղից այնպես հարազատ և դաշն խաղաղությամբ նայում էին Հաճի աղային, և այնպիսի մի հաստատունություն կար այդ առարկաների մեջ, որ կարծես ոչ մի զորություն խախտել չէր կարող: Տարօրինակ թվաց մի վայրկյան այն խռովությունը, որ ընկել էր իր սիրտը, և պատուհաններում հանգիստ դրած այն ծաղկի փայտե թաղարները, որ հաճախ լվանալուց ճերմակել՝ փայլում էին, կամ սենյակի երեք պատերի տակով փռած մինդարներն ու պատերին կպցրած երկար բարձերը անվրդով պատմում էին խաղաղ հրավերքների, ուրախ հարսանիքների, անխռով օրերի մասին:

Եվ այդ բոլորը ահա այսօր անհաստատ բաներ էին: Այսօր իսկ կարող էին այդ ամենը լքվել… Դեռ տասը տարեկան հասակից իր հոր հետ ճամփորդելով «քրդերն ու թուրքերը», նրանց հետ առևտուր անելով՝ ահա վաթսուն տարի է տուն է շինում Հաճի աղան: Եվ հիսուն տարի կանոնավոր ժամացույցի պես խաղաղ չքչքացել է նրա երջանիկ տունը և ահա այսօր պետք է քանդվեր: Եվ ինչպես ջրում խեղդվողը հանկարծակի արագությամբ հիշում է իր անցած կյանքի մանրամասները, այնպես Հաճի աղան հիշեց իր անցյալը, ինչպես հանգիստ քուն դրեց և թաղեց հանգուցյալ հոր կողքին իր մորը, հիշեց 1877-ի պատերազմը, որ նրա համար անցավ իբրև իրեն չվերաբերող մի փոթորիկ… միտքը բերեց, ինչպես երեսուն տարեկան երիտասարդ՝ իր կնոջը տարավ Երուսաղեմ… ինչպես այնուհետև ձմեռ, գարուն նրա տանը տոն էր ու հարսանիք, նրա կյանքը առևտուր էր, ապրանք ու հարստություն: Հետո որդիները եկան հասան, ամուսնացան, բեղմնավորվեցին: Ամեն, ամեն ինչ եկավ իր կարգով ու եղավ, կարծես այդպես էլ պարտավոր էր լինելու, Հաճի աղան վանքի պես տան տեր դառավ, և այդ տունը այսօր քանդվում էր:

Ի՜ր տունը, հի՜ն տունը: Արյունը գլուխը խփեց: Ինչպե՞ս, իր ընտանիքը, հարստությունը, այդ նույնքան հիմնավոր բանը, որքան ինքը՝ աշխարհի հաստատությունը…

Եվ Հաճի աղան, իբրև փորձված մարդ՝ իսկույն հարմարվեց կենսական իմաստության. որոշեց խիստ ու հրամայական մի կարգ՝ ազատել ամենակարևորը, իսկ եթե այդ

Ըստ քեզ՝ ո՞րն էր Հաճի աղայի անհանգստության հիմնական պատճառն այս հատվածում: Ուշադի՛ր եղիր՝ արդյոք հետագայում կփոխվի՞ այդ պատճառը:

Կերպարները լինում են նաև դրական և բացասական: Տարբերակման համար կարևոր է, թե ինչ վերաբերմունք են նրանք ձևավորում մեր մեջ:

չեղավ՝ կարևորագույնը: Վճռեց ու դաժանացավ.— ամեն ինչ անել, ամեն խստություն գործ դնել, անգթանալ, **թեկուզ և ստորանալ, բայց փրկել այդ կարևորագույնը՝ իր տունը, իսկ եթե այդ չեղավ՝ իր անձը:**

Կողքի «պզտի օդայում», թիթեղե փեչի վրա, հեռավոր զուռնայի պես ծվծվում և դժժում էր գյուգյումը և սենյակի տաք ու չոր օդը բարեխառնում ախորժելի խոնավով:

Հենց այդ փոքրիկ սենյակում, անկողինների ծալքի տակ նստած էր մի տարեց կին: Դա Հաճի աղայի անդամալույծ քույրն էր, Սրբունը, որ ամուսնու մահից հետո լվացք անելիս մի անգամ սաստիկ մրսեց, տիֆով հիվանդացավ և անդամալույծ եղավ. էլ չիմացվեց՝ տիֆի՞ց էր, թե արդեն տրամադիր էր: Ականջներն էլ ծանր էին: Հաճի աղան իր անվան չուտեցրեց, որ իր հիվանդ քրոջը ուրիշները պահեն և իր վրա խոսեն. հիվանդին բերեց իր տուն և անկյուն տվեց: Խեղճ կինը ի բնե աշխատասեր և ինքնասեր, ուզելով մի բանով եղբորը վարձահատույց լինել՝ ընտանիքի կարն ու կարկատանը, ինչպես և գուլպան իր վրա առավ. ու թեև նրա համար սաստիկ դժվար էր այդ աշխատանքն էլ, բայց նա անմռունչ ու կամովին անում էր: Գեր էր, ծանր և սաստիկ նեղությամբ նստած տեղից շարժվում էր և գետնաքաշ մի կերպ դուրս գնում:

Հաճու նստած տեղից երևում էին նրա ուռած մատները, որով նա ծնկան վրա փռած մի կտոր հարդարում, շուռումուռ էր տալիս, նորից հարդարում, չափում ինչ-որ մի կարկատանի համար:

Այդ մատներն սպիտակ էին, կարծես ջրով լիքը: Եվ այնքան խաղաղ, առօրյա էր այդ մատների աշխատանքը, որ բոլորովին չէր բռնում օրվա խռովիչ դեպքերին:

Հաճին նայեց անդամալույծին, բայց չտեսավ նրան: Նա սենյակի իրերն էր մտովի տեղավորում ֆուրգոնի մեջ և որոնում էր ամենապետքական իրերը:

Հետո մի տասը-քսան անգամ վեր կացավ, պատուհանից դուրս նայեց՝ փողոցի շարժումներից մի բան գուշակելու համար: Փողոցում շարժում չկար, կարծես ամեն ինչ խաղաղ ժամանակինը լիներ:

Բայց ահա մթնելու վրա էր, որ խառն ձայներ լսվեցին: Հաճին վեր թռավ և շտապեց դեպի պատուհանը: Մի քանի մարդիկ անցան պատուհանի տակով՝ խանութի ապրանք շալակած, որ տուն էին կրում: Դրանց հետևից մի սահնակ՝ անտանելի ծանր բեռով, բոլորը կին ու երեխա, հետևից տղամարդիկ՝ ոտքով: Հարևանենք էին: Այդ առաջի սահնակը

այնպես ազդեց Հաճուն, ինչպես մի հիվանդի մահը, որ թեև առաջուց սպասելի էր, բայց դեռ այնպես չէր ազդում: Բայց երբ վերջապես սպասելին փաստ է դառնում, մի դաժան ու սառը բան է զգացվում, որ առաջ չէր կարելի երևակայել: Ու մինչ Հաճի աղան դուրս կգար գնացողներին բան հարցնելու՝ հանկարծ իրենց տան դուռը գռռաց: Ներս ընկավ Հաճի աղայի կրտսեր որդին՝ Հակոբը և նախասենյակից հուզված ու կտրուկ ձայնով կանչեց.

– Ապլա՛…

Հաճի աղան վազեց դեպի նախասենյակի դուռը:

– Հակոե՞ք…– հարցրեց շնչասպառ:

Հակոբը ցեխոտ ոտքերը հազիվ սրբած՝ «թուրքերը եկան, փախչինք պիտի» ասելով՝ շնչասպառ ներս մտավ և հարձակվելով անկյունները դրած սնդուկների վրա՝ սաստիկ ուժով առաջ քաշեց:

Հաճին մոտեցավ որդուն:

– Ֆուրղուն բռնեցի՞ք…

– Ֆուրղուն չկա, խզակ բռնեցինք:

Հաճի աղան ընդունեց այդ առաջին մեծ հարվածը, բայց կյանքի բովում զելված մարդը իսկույն անդրադարձավ, որ խորհրդածության ժամանակ չէր. պետք էր ո՛չ միայն հաշտվել այդ աղետի հետ, այլ եղածն ազատել: Եվ ի՞նչ պիտի տեղավորվեր մի սահնակի վրա… Հաճի աղան ավելի խստացավ:

– Տե՛, ազատելո՛ւն ազատեցեք… ամենեն պետքականը…

Հակոբը քանդեց իր կավագույն բաշլըղը, հանեց դեղնած հաստ վերարկուն և, հարձակվելով սնդուկների վրա, այնպես ուժով առաջ քաշեց, որ զոռից դեմքի ու վզի երակները ուռան:

Իրար հետևից, ներս լցվեցին և դռների մոտ արձանացան Շողոն, Շմավոնի կինը, փոքր հարսը և մի հարևանի կնիկ:

Հաճին մոտեցավ Հակոբին և թևը բռնելով՝

– Խելքդ մի՛ կորցնե,– հրահանգեց,– ինչ որ պետքական է, ա՛ն ժողվե:

Հետո տանեցոց հրահանգեց.

– Ամենեն պետքական բաները ժողվեցեք, տեսե՛ք՝ ճամփան կմնաք:

Հարևանի կնիկը, որ լուռ ականջ էր դնում սրանց, տեսնելով, որ տան բոլոր անդամները գործի անցան, դիմեց Հաճի աղային.

– Հա՛ճ աղա, օտա՛ցդ մեռնիմ, դուք կերթաք, մենք ի՞նչ պիտի էնենք:

Ըստ այս հատվածի՝ բնութագրի՛ր Սրբունին:

– Եսի՞մ,– կտրեց Հաճի աղան.– իմ ձեռքս ի՞նչ կա:

Հարևանի կնիկը, որ դառն աղքատի վիճակին էր և համարյա Հաճի աղայի տան գործն անելով՝ մի կտոր, մի փշրանք ստանալու հուսովն էր՝ սարսափեց: Նա կարծում էր, թե աշխարհն այնպես է շինած, որ չի քանդվիլ երբեք, իսկ եթե քանդվի էլ, Հաճի աղան երևի բան կգիտենա դրա դեմ անելու: Չանի էլ ու գնա՝ մի բան կանի իր նման անճարներին:

Բայց Հաճի աղայի չոր ու դաժան պատասխանը սթափեցրեց խեղճ կնկան: Եվ տեսնելով, որ իրեն նայող չկար, հառաչեց ու դուրս գնաց:

Ու մինչ տնեցիք հավաքում էին իրերը, Հաճի աղան սկսեց անցուդարձ անել սենյակում՝ իբրև տխուր ուղտի կերպարանք: Նայում էր անկարգացած սենյակին, ուր իրար վրա թափված էին «անպետք» ու «ավելորդ» իրերը, տեսնում էր իր տան քանդվելը, բայց հուսահատությունից չէր զգում ցավը: Ավելի մեծ զուլումը աչքին բան չէր թողնում երևալու: Նա դեղնել, մագաղաթ էր դառել: Տնեցիք շորերը կապում, նորից քանդում և կրկին ընտրում էին, և շարունակ լսվում էր «Հաճ աղայիս գուլպաները», «Հաճ աղայիս դոշակը», «Հաճ աղայիս քուրքը չթողնեք»: Շմավոնի կինը կողքից նայելով Հաճի աղային և տեսնելով նրա մեռելադեմ երեսը՝ դիմեց նրան.

– Հաճ աղա, կոնյաք ըմ խմե՞ս:

Հաճի աղան լուռ էր, տխրատեսիլ արձանի պես: Նրա բերանը հուզմունքից դառնացել էր, և նա թուքը կուլ տալիս դեմքը ծռմռում էր:

Բայց ներքուստ շտապում էր և դիտում տնեցոց աշխատանքը: Եվ մռայլ, խստացած բերդապահի պես՝ քանի գնում, իր բերդի զանազան իրերի արժեքը վերագնահատելով՝ մերթ կարգադրում էր. «Պետքաննե՛րը, պետքաննե՛րը», մերթ սարկազմով աղաչում էր. «Աստծո՛ւ սիրուն հասկցե՛ք, աս պետք չէ, ա՛ն», իսկ վերջը՝ կռիվը ոգևորողի պես՝ սկսեց քաջալերել. «Տե՛, տե՛, տե՛, հա՛ պապամ հա՛... պետքաննե՛րը, պետքաննները»: Ու այսպես «պետքաննները» կրկնում էր ծիսակատարության ձայնով և զգում էր, որ մեծ գործ է կատարում, *տուն է ազատում:*

Իսկ այդ միջոցին մյուս փոքր «օդայում» նստած էր անդամալույծը և հանդարտ՝ աչքի տակով նայում էր իր եղբորը: Վերին աստիճանի խաղաղ էին նրա խոշոր ու մարած աչքերը, որոնց տակերը կապտած՝ պարկեր էին գոյացել: Նրա դեմքը ուռած, հիվանդագին ճերմակ էր:

Բայց նրան ոչ ոք չէր նկատում:

Տնեցիք արդեն պատրաստ էին, երբ դռան մոտ խզզալով ու դոփելով՝ կանգնեց մի ծանր, մեծ սահնակ: Շմավոնը կարմրած, այլայլված՝ նստել ապրանքներով լի տոպրակների վրա՝ սահնակը բերում էր տանեցոց տանելու: Նրա գնդլիկ մարմինը վար սողաց տոպրակների վրայից, և նա ներս ընկնելով շնչասպառ՝ գուժեց.

– Ջուլումը տեսա՞ք… խանթին ապրանքը մնաց… ֆուրգուն չկա…

– Վո՛ւո՛ւշ…– ծնկները ծեծեցին հարսները և նայեցին Հաճի աղային:

Հաճի աղան ուղտի տխրությամբ նայեց Շմավոնին և լռեց:

– Տե՛ր, Հաճի աղա, հագի՛ր էրթանք,– ասաց Շմավոնը և դուրս գնաց:

Շմավոնի կինը աթոռ բերեց, որ Հաճի աղան նստի. հետո փոքր հարսի օգնությամբ Հաճի աղայի ոտքերը հագցրին մի երկրորդ շալվար ևս:

Այդ ժամանակ «պզտի օդայից» խուլ հեծկլտոցներ լսվեցին:

– Ատ վո՞վ է,– հարցրեց Հաճի մարը և ներս գնաց:

Հարսները հետևեցին նրան: Ինչ-որ բան խոսեցին անդամալույծի հետ, որից միայն լսվեց Հաճի մոր ձայնը.

– Հաճի աղան չի սառի ճամփան, մի՛ վախնա:

Եվ նորից սկսեցին խոսել:

Հաճի աղան բութ հանգստությամբ իր մեջ նկատեց, որ նա ամբողջ օրը չէր մտածել անդամալույծի մասին. և հիմա մտածելով՝ անախորժություն զգաց: Եվ ոտքը կոխելով շալվարի մեջ՝ խոսեց.

– Ի՞նչ է, ի՞նչ է էղեր:

– Հեչ,– պատասխանեց փոքր հարսը,– Սրբունը գուլա:

– Ան ինչի՞ է ձեռք ու ոտք էղեր, ո՞ւր պիտի գա,– խոսեց Հաճի աղան բարկությամբ և մտքում զայրացավ, որ անդամալույծը ինքն իր բերնով չի հայտնում, թե համաձայն է մնալու և ուրիշներին է թողնում այդ բանը հայտնելու անախորժությունը:

Սրբունն ուզո՞ւմ էր հեռանալ քաղաքից: Ի՞նչ ես կարծում, նա ճի՞շտ վարվեց:

Փոքր հարսը զարմանքով լի աչքերը հառեց Հաճի աղային.

– Սրբունին պիտի թողնե՞նք…

Հաճի աղան ծաղրեց.

– Է՛, խանումս, տեսնինք ես ու դուն պիտի երթա՛նք…

Հաճի մարը, որ դուրս էր գալիս անդամալույծի սենյակից և լսեց այս վերջին խոսքերը, սարսափեց.

– Քա, ձունը գլխուս, Սրբունին պիտի թողնե՞նք…

– Ե՞ս եմ թողնողը,– հարեց Հաճի աղան,– տեսնինք խզակին վրա տեղ կա՞:

– «Տեղ կա՞»-ն ինչ խոսք է, Հաճի աղա, ասքան մարդս օր կերթանք…

Եվ Հաճի մարը անընդունելի համարելով ամեն պատճառաբանություն՝ փոքր հարսին ձայն տվեց, ինքն էլ գնալով փոքր սենյակը.

– Եսթե՛ր, օղուլ, Սրբունին հագցո՛ւ:

Անկյունում մինդարի վրա ծալապատիկ նստել էր անդամալույծը և՝ գլուխը ծնկան վրա կախած՝ աչքերն էր սրբում:

Հաճի մարը ծռվեց նրա գլխին.

– Սրբո՞ւն, քո՞ւրս, ինչի՞ գուլաս:

Անդամալույծը չպատասխանեց:

Շմավոնի տղան՝ ութ տարեկան Կարոն, որ ներս էր եկել և հետևում էր սրանց խոսակցության, բացատրեց.

– Թուրքերեն կվախենա:

Տիրեց լռություն:

– Ի՞նչ էնիմ,– լացակումեց անդամալույծը,– Հաճ աղաս շատ է վախեցե, վախենամ թե ճամփան ցավի գա:

– Ատոր համա՞ր գուլասփ,– զարմացավ Հաճի մարը,– ջանըմ, մեր դարդը մի՛ քաշե, հազրվե՛…

– Ե՞ս,– տխրաժպիտ նայելով Հաճի մորն ու փոքր հարսին՝ ասաց անդամալույծը,– ես չեմ գա:

– Ինչի՞,– հետաքրքրվեց Հաճի մարը:

– Դուք ձեր հոգեստանն ազատեցեք. ես անդամալույծ եմ, ասօր կամ, էգվան չկամ,– պատասխանեց անդամալույծը տխուր համակերպությամբ:

– Անդամալո՞ւյծն ինչ խոսք է, ջանըմ,– հանդիմանեց Հաճի մարը,– հոգին հոգի է, հազրվե՛:

Հաճին մեծ սենյակում անցուդարձ էր անում և լսում այս խոսակցությունը: Հաճի մոր պնդումները նրան զայրացրին, և նա իր կնոջը ձայն տվեց.

– Թեզ էրա՛, ատոր վախտը չէ՞:

Հաճի մարը դուրս եկավ անդամալույծի սենյակից և աչքերը հառեց Հաճի աղային:

– Տեղ չկա՛… կիմանա՞ս, – գոռաց, խեղդելով իր ձայնը Հաճի աղան և շեշտեց «կիմանա՞ս» բառը:

– Է՛,– հակաճառեց Հաճի մարը,– բեռդ պակսեցու՝ տեղ գըլի:

– Է՛,– տնտղեց Հաճի աղան,– բեռդ որ պակսեցնես՝ տղաքդ ինչո՞վ պիտի պահես. աշխարհք խո չվերջացավ:

Եվ Հաճի աղան բաշլըղը փաթաթեց:

Այս հատվածից սկսած՝ ուշադի՛ր հետևի՛ր Հաճի մարի կերպարին: Դրակա՞ն կերպար է նա, թե՞ բացասական: Հիմնավորի՛ր:

– Ջանըմ, գնացե՛ք, իմ պատճառովս միք ուշանա, Հաճ աղաս մեղք է,– տրտնջաց անդամալույծը ներսից:

– Ադպես բան չկա, մենք կերթանք, դու ա պիտի գաս,– հրահանգեց Հաճի մարը և դուրս գնաց՝ կառապանին տեսնելու:

Հարսները ներս եկան, և մինչև անգամ երեխաները բոլորեցին անդամալույծի առաջ: Բայց նա տեսնելով, որ ամենքը իրեն են նայում և սպասում, վեր նայեց խաղաղ ու բարի աչքերով և ասաց.

– Դուք գնացեք, ինձի մի՛ք աշե, ես կմնամ, իմ ջանս ազիզ չէ:

Այդ ժամանակ ներս մտան Հակոբն ու Շմավոնը և սկսեցին չորս կողմ նայել, թե ինչ կա էլի վերցնելու:

Հարսներն սկսեցին սրանց աղաչել, որ անդամալույծին համոզեն իրենց հետ գալու և տեղ գտնեն սահնակի վրա:

Երկու եղբայր իրար նայեցին լուռ ու դժվարացած, հետո դեպի Հաճի աղան, որ լսեց հարսների աղաչանքը:

Հակոբը կեղծավորություն արավ.

– Հը՞, Շմավո՞ն, ի՞նչ կըսես, ապրանքը թեթևցնե՞նք…

Շմավոնը դեմքը կնճռեց ժլատի պես, որից փող են խնդրում:

– Չգիտեմ, ի՞նչ ըսեմ…

Ու դուրս գնաց:

Երեխաներն սկսեցին լաց լինել:

– Սրբուն մամին թուրքերը պիտի մորթե՛ն…

Եվ ընկնելով անդամալույծի վրա, փաթաթվեցին նրան և սկսեցին համբուրել:

Սա գրկեց նրանց և փղձկաց.

– Աստված հետներդ, գառնե՛րս, գնացեք, ինձի մի՛ք աշե:

Հարսները լցվեցին և երեխաներին քաշեցին մի կողմ:

Հաճին մի երկու անգամ գնաց-եկավ մեծ սենյակում, հետո՝ մուշտակը հագած եկավ փոքր սենյակը և մոտեցավ քրոջը:

– Է՛, Սրբո՛ւն,– ասաց նա դժվարությամբ ու տհաճությամբ,– մնա՛ս բարով:

Եվ ձեռքը դրեց նրա ձեռքի վրա:

– Մի՛ վախնա, թուրքերը քեզի ձեռք չեն տա. երբ օր ներս մտնին, ըսե՝ «տունը ձեզի», ինձի ձեռք մի՛ք տա:

Շմավոնը, որ ներս էր մտել, հարեց.

– Ըսե՝ «սիզըն օճախա դյուշմիշըմ», ձեր օճախն եմ ընկե:

Անդամալույծը դողդոջուն ձեռքերով բռնեց Հաճի աղայի ձեռքը, տարավ շրթունքներին և համբուրեց: Մի արցունքի

Գրի՛ր կարծիքդ ընդգծված հատվածի վերաբերյալ:

կաթիլ նրա աչքերից գլորվեց, ընկավ Հաճի աղայի ձեռքին: **Անդամալույծը ծոցից թաշկինակը հանեց և սրբեց եղբոր ձեռքը և ապա՝ մի զույգ «դֆտիկ» ձեռնոց հանելով մինդարի տակից՝ տվեց Հաճի աղային.**

– Ձեռքե՛րդ անցու՝ ճամփան չմսիս:

Հետո փղձկալով՝ վրա բերեց.

– Քոռանա՛ լուսս… տղոցը համար չկրցա գործե:

– Բան չկա, բան չկա,– սառը հանգստացրեց Հաճի աղան:

Հետո դարձավ տնեցոց.

– Դե՛:

Ու ինքը դուրս գնաց: Հաճի մարը այնտեղ չէր: Ըստ երևույթին գնացել էր հարևանների մոտ՝ անդամալույծի համար տեղ գտնելու:

Հաճի աղան, ընտրելով սահնակի ամենահարմար տեղը, նստեց, փաթաթվեց վերմակի մեջ ու մնաց:

Եվ որովհետև տնեցիք ուշանում էին,– անշուշտ անդամալույծին համոզելու, որ գա,– Հաճի աղան բարկացավ և գլուխը վերմակի տակից հանելով, ձայն տվեց.

– Թե՛զ էրեք, ատոր վախտը չէ՛… «էկա՜ն»…

Ու շտապով դեմքը ծածկեց վերմակի մեջ, որ չմրսի:

Բայց ներսը ուշանում էին: Շմավոնն ու Հակոբը հասկանում էին Հաճի աղայի հաշիվներն ու խստությունը: Գիտեին նրանք, որ կյանքի իմաստությունը հենց այդ էլ պահանջում է: Եվ տեսան էլ, որ հոր վճռական քայլերի շնորհիվ բավական ապրանք են ազատում և իրենք էլ փրկվում են: Նրանք հասկանում էին, որ հայրն իրավացի է՝ գնահատելով ժամանակը. պետք էր հասկանալ նաև նրա իմաստությունը. ա՛յն, որ *իրենց* հարստությունն էլ *իրենցը* չէր, այլ միայն իրենց *փախցրածն* էր իրենցը: Եվ ահա հաշտվեցին, որ իրենց հայրը խելոք է մտածում՝ անդամալույծին թողնելով և ապրանքը տանելով: Ո՞վ գիտե, օտարություն է, պետք է ապրել, նոր տուն շինել, աշխարհք հո չվերջացավ…

Եվ այսպիսի դեպքերի հասկանալի արագությամբ հաշտվեցին, որ անդամալույծը ավելորդ էր իրենց մեջ:

Եվ որովհետև ուրիշների հետ համեմատած՝ իրենց «հաջող» փախուստը, մահից փրկվելը, վտանգից դուրս գալը մի փոքր բարձրացրել էր նաև նրանց տրամադրությունը, նրանք մինչև անգամ սկսեցին կատակել.

– Մենք կերթանք հարսնիք՝ հորքուրս կմնա տունը պահելու:

– Էրկու օր չի քաշե՝ մենք ետ կդառնանք:

– Թուրքերը խանում–խաթունի պես կաշեն հորքուրին:

– Ջանըմ, անդամալույծին վո՞վ կդիպչի:

– Հե՛չ, հըլպը՛տ որ:

– Քեֆը հորքուրինս է:

Իսկ հարսները, որ լավ գիտեին Հաճի աղայի անկոտրում բնավորությունը, տեսնելով՝ իրենց ամուսիններն էլ անհոգ են, հավերի պես համակերպվեցին ու լռեցին:

Եվ լաց լինելով՝ հագցրին երեխաներին: Հետո մոտեցան անդամալույծին, համբուրվեցին նրա հետ: Հետո բերին մի քանի կարտոֆիլի մոմ, հացի մի մեծ կապոց, ջուր, լուցկի, դրին անդամալույծի մոտ և «օ՛ֆ, օ՛ֆ» անելով՝ դուրս եկան:

Դուրսը թաղի մեջ մեծ տագնապ էր: Լուսամուտներից ու բաց դռներից դուրս ընկած լույսերի շերտերում բացվում ու խփվում էր բազմությունը:

Գլուխները հաստ շալերով փաթաթած ապլաներ, բաշլղներով տղամարդիկ, շարֆերով տղաներ ու աղջիկներ՝ իրար անցած՝ խռնված էին դռների առջև, սահնակների ու ֆուրգոնների չորս կողմը: Աղմուկ, վայնասուն... Ահա ծերուկ ժամկոչը, որի չոր, ածիլած կզակը դողում է, ընտանիքով մնացել է առանց սահնակի. ոտքով պիտի գնան: Ծերուկը գլուխը կորցրել՝ երեխա է դառել: Կինը դայակի պես հետևից քշում է այս ու այն կողմ: Ահա ճամփա ընկան՝ առանց բեռի ու հագուստի: Ահա մի հասակավոր մարդ կռվում է իր հարևանի հետ, որը նրա կառապանին ուզում է մի բան ավել տալ և սահնակը խլել: Երկուսն էլ ձիու սանձերը դեսուդեն են քաշքշում:

– Աստված սիրողը իմտա՛տ հասնի... մնացի՛նք...– գոռում է մի կին անպատասխան ժխորի դեմ:

Մի ֆուրգոն, իրերով ու մարդով սարսափելի բեռնած, եկավ դեմ առավ Հաճիենց սահնակին:

– Խաբարդա՛,– գոռաց կառապանը իր մուշտակի միջից:

Մի դեմք՝ շեկ ու կոշտ բեղերով ու մորուքով՝ դուրս նայեց ֆուրգոնի առաստաղի տակից:

Դատարանի գրագիրն էր:

– Ի՞նչ եք կայնե,– գոռաց:

Ուրիշ երկու ֆուրգոն էլ եկան դեմ առան: Սկսեցին շտապեցնել: Գրագիրը գոռգոռաց: Նրան բացատրեցին, որ անդամալույծի պատճառով են Հաճիենք կանգ առել:

– Ի՞նչ եք կայնե, գնացեք,– ձայն տվեց գրագիրը,– անդամալույծ տանելու վա՞խտ եք գտե, бросьте ее к чорту!

– Կնկան թողնեն, երթա՞ն, ի՞նչ կըսես,– առարկեցին ֆուրգոնի միջից:

– А что-ж: Պռավիլա՞ է, ի՞նչ է: Եփ օր էվակուացիա է, անդամալույծները ավելորդ են:

Ուշադրությո՛ւն դարձրու հերոսների խոսքին: Ինչպե՞ս են նրանք խոսում: Քո կարծիքով, ինչո՞ւ է հերոսների խոսքը տարբերվում հեղինակի խոսքից:

– Տե, թեզ էրեք, ուշացանք,– կատաղեց Հաճի աղան և ուզեցավ տեղից վեր կենալ, որ գնա, տեսնի, թե ինչ են անում ներսը:

Այդ ժամանակ Շմավոնն ու հայ կառապանը՝ Հաճի մոր թևերից բռնած՝ բռնի դուրս էին բերում: Հաճի մարը զայրացկոտ շարժումներով աշխատում էր թևերն ազատել և ներս գնալ նորից անդամալույծին բերելու:

– Թողե՛ք, ես անոր պիտի տանիմ,– ծվում էր նա:

– Տեղ չկա, մա՛րս, տեղ չկա,– համոզում էր կառապանը:

Բայց կինը կատաղի դիմադրում էր:

Հարսներն ու երեխաները լաց էին լինում: Իսկ ֆուրգոններից բողոքում և շտապեցնում էին:

Շտապով հարսներին և երեխաներին տեղավորեցին սահնակի վրա: Հաճի մորն էլ բռնի բերին, գցեցին սահնակի վրա:

Հենց որ նա ընկավ հարսների և երեխաների մեջ, կառապանը մտրակը կատաղի զարկեց ձիերին: Սահնակը թռավ, և կառապանը ձիերի կողքից վազեց:

Ի՞նչ ես կարծում, հարազատները սիրո՞ւմ էին Սրբունին:

Շմավոնն ու Հակոբը մնացին դռանը: Մեկնելուց առաջ մի պահ սպասեցին և նայեցին իրար: Պետք էր ներս գնալ և վերջին անգամ տեսնել անդամալույծին: Պատուհանից երևում էր սենյակի լույսը: Երկու եղբայր ներս մտան, մոտեցան անդամալույծին: Սա հանգիստ նստած էր և այդ խաղաղությունը բոլորովին չէր բռնում այն ընդհանուր շփոթի ու երկյուղի հետ, որ պաշարել էր ողջ քաղաքը:

Հակոբը մոտեցավ նրան.

– Հորքուր ջան… ավել-պակաս հալալ…– և փղձկալով բռնեց համբուրեց անդամալույծի ձեռքը:

– Աստված հետներդ, գառներս, գնացեք… Հաճ աղայիս, տղոցը լավ աշեցեք, չմսին…— խոսեց անդամալույծը հոգածու ձայնով:

Շմավոնը կեղծ ու շիտակ զգացվեց, բերանը ծռմռեց, նա ևս մոտեցավ, համբուրեց անդամալույծի ձեռքը և, անարցունք աչքերը սրբելով՝ դուրս եկավ: Նրան հետևեց Հակոբը, որ դուրս գալիս շտապեց և դիպավ Շմավոնին:

Եվ երկու եղբայր ֆուրգոնների կողքից վազեցին, որ հասնեն իրենց սահնակին:

Քաղաքը տեղից վեր կացել՝ գնում էր: Ֆուրգոններ, սահնակներ, ու նրանց կողքից հետևակ մեծ ու փոքր շարաններ շփոթված, աղմկելով գնում էին: Երբ Շմավոնն ու Հակոբը հասան իրենց սահնակին, հետևից քաղաքը լուսավորվեց շուկայի հրդեհով, իսկ ֆուրգոնների կտավե ծածկոցները սկսեցին փռփռալ թեթև քամուց:

– Հո՜ո՜փ,– ձգեց իրենց առջևից գնացող ֆուրգոնի կառապանը և կանգնեցրեց ֆուրգոնը: Նրան հետևեցին մյուսները, և բոլորը կանգնեցին:

– Ինչի՞ կայնեցիք,– դժգոհեցին և վախեցան զանազան կողմերից: Բայց ոչ ոք չէր իմանում՝ ինչո՞ւ: Միայն երեխաների ճիչն ու կանանց լացը ավելի պարզ լսվեց աղմուկի միջից: Քաղաքի կողմը, դեպի արևմուտք, որ թաղված էր մթան մեջ, լսվում էին թնդանոթի խուլ դղրդյուններ: Տագնապը սաստկացավ քարավանի մեջ: Հաճու թոռները սկսեցին հեծկլտալ:

– Սրբուն մամին մորթե՜ն պիտի...

Հաճի մարը, որ մինչև այդ խստահայաց ու անհաշտ նայում էր չորս կողմը, լսելով երեխաների լացը՝ հանկարծ լցվեց և հեծկլտաց.

– Չեն մորթե, մի՛ք լա,– ու սկսեց աչքերը սրբել:

Երեխաները տեսնելով նրա լացը՝ ձայները բարձրացրին:

Թնդանոթի ձայներից Հաճի աղայի երևակայությունը վառվեց: **Նա ավելի պարզ սկսեց շոշափել մահը:**

Եվ հրդեհի մեջ պաշարվածի պես՝ նա զգաց, որ տարերային մի ուժ նրան միայն մի բան է թելադրում. փախչել, շուտով դուրս գալ մահի ճիրաններից: Մնացածը՝ կին, երեխա, ընկեր, բարեկամ՝ նսեմացավ նրա աչքում: Եվ ակամա՜: Եվ նա զգում էր, թե որքան դառն է այդ «ակաման», բայց և զգում էր, որ այդ այդպես է:

Նա կարծես ցնորքի մեջ լիներ. նայում էր չորս կողմ և, ամեն առարկա մի վայրկյան տեսնելով, մյուս վայրկյանին մոռանում էր: Կարծես երազում՝ նրա մոտով, ճամփի եզրով, իրենց հարևան կոշկակար Պողոսը, ուժեղ երիտասարդ՝ յափնջու վրա երկու երեխա նստեցրել՝ քարշ էր տալիս ձյան վրայով: Նրա հետևից հևալով և լնգլնգալով գնում էր նրա ծերուկ հայրը: Ահա հոգնեց նա, եկավ կանգնեց և ճամփից դուրս գալով, գնաց խրվեց ձյան մեջ ու մնաց.

– Ալ չեմ կրնա… գնացեք…

Նայում է նրան Հաճի աղան և իսկույն մոռանում է:

Ահա քարվանը նորից շարժվում է: Լեռնային սառնամանիքը իր սառցե մատներով բռնում է Հաճու մորուքը, և նա դեմքը ծածկում է վերմակի տակ:

Փչում է լեռնային քամին և ձյան փոշին, առաջ օձերի պես սողալով և ապա բարձրանալով իբրև վիշապներ, թռչում են օդի մեջ, նվում, վայում…

– Աստվա՛ծ, դուն հասնես.– մրմնջում է Հաճի աղայի փոքր հարսը:

Մեծ հարսը երեսը խաչակնքում է և սկսում «Հավատով խոստովանիմը» բարձր և զգացված:

Իսկ իր շալի մեջ Հաճի մարը կծկված՝ մտածում է անդամալույծի վրա և ծանր հառաչում:

Սուր վտանգն ու աղմկալից սարսափն անցել էին, տեղի տալով մի խաղաղ թշվառության, որ ընդունեց փախստականներին հետևյալ գավառական քաղաքում: Հանկարծակի աղքատներ, մի ժամում անտունացած մեծատուններ, ի ծնե չքավորներին խառնված՝ եկան ապաստանելու՝ ամեն կարոտություն չկռահող, ամեն ինքնասիրություն չհաշվող՝ բարեգործության և նրա միշտ ուշացող օգնության: Բարեգործականի, դպրոցի և մասնավոր անբնակ տների մեջ խցկեցին սրանց. բերին հաց, շոր, դրամ, նաև մխիթարական խոսքեր, և նման դեպքերի գթառատության ալիքը ինչ վարարությամբ որ հորդեց, նույն արագությամբ էլ ճապաղեց, և թշվառությունը հիմա այլևս անարգել ու հաստատ անցավ իր գործին:

Հաճիենց քաղաքը շուտով ետ առնվեց: Տղամարդիկ, որոնց մեջ և Հակոբն ու Շմավոնը, վերադարձան տեր լինելու իրենց այրված ու կողոպտված գույքերին: Լուրեր եկան, որ գնացողները քիչ-քիչ հաջողում են կորածը գտնել: Փախստականների երեսը իստակվեց: Հաճի մարը իր հարսների հետ դուրս էր գալիս, այցելում մյուս փախստական ընտանիքներին, հյուրեր էին գալիս իրենց տունը, և հին մեծատան հյուրասիրությունը փորձեր էր անում հին ընթացքով քայլելու: Ծիծաղն սկսեց երբեմն իր ձայնը լսեցնել նրանց տանը: Մի անգամ էլ եկավ իրենց քաղաքի զվարճաբան Գարանը և պատմեց ծիծաղելի դեպքեր թե՛ փախից և թե թուրքերի քաղաք մտնելուց, որ վերադարձողները լսել էին և եկել, տարածել: Ներկայացրեց մի վաճառականի, թե ինչպես էր շփոթվելուց մութաքան գրկել, մինչ երեխան կողքին ընկած լալիս էր: Լսում էին, ծիծաղում: Հետո խոսք եղավ անդամալույծի վրա, որի մասին եկողները միաբերան ասել էին, որ անհայտ կորած է, և որի մասին տնեցիք աշխատում էին կամ չխոսել, կամ մխիթարվել, ասելով, որ եթե գար՝ միևնույն է ճամփին կմեռներ: Հաճին ավելի մռայլվեց: Այդ տեսնելով՝ Գարանը համարձակ և ուրախ հանդիմանեց.

– Ջանըմ, Հաճի աղա, բան չունի՞ս, չարդ տարավ, սաղ ըլին հարսներդ, տղաքդ, թոռներդ:

Սակայն Հաճի աղան խորտակված էր:

Այնուհետև ժամերով մի բառ չէր լսվի նրա բերանից: Նստում էր մի անկյուն, ծխում, համրիչը գցում և երբեմն միայն գլուխն օրորելով մռմռում.

– Է՛, ե՛թ, թո՛…

Եկած օրից ոչ մի անգամ փողոց դուրս չեկավ:

Քաղաքում ծանոթ-բարեկամներ եկան, իրենց տուն հրավիրեցին, կտրուկ մերժեց:

Տնեցիք սկսեցին անհանգստանալ: Հաճու այս արտակարգ խռովությունը նրանք իսկապես կորցրած հարստությանը վերագրեցին և կարծեցին, որ կարող է ծերուկը խելքը կորցնել. ուստի և լուր ուղարկեցին Շմավոնին, որ ինքը կամ Հակոբը գան: Պատասխան չեկավ:

Հունվարի սառն ու պարզկա առավոտը նոր էր բացվում, որ Հաճի աղան անկողնում նստեց: Հաճի մարն ու հարսները՝ երեխաները ծոցներն առած՝ քնած էին փոքր ու նեղվածք սենյակում, որ Հաճին դիտմամբ վարձել էր, մերժելով ձրի սենյակը:

– Հաճի աղա՞, ինչի՞ էլար ասպես թեզ,– անհանգստացավ Հաճի մարը և նույնպես նստեց իր անկողնում:

– Ուշացեր եմ,– մռմռաց Հաճի աղան և սկսեց հագնվել:

Հաճի մարը աչքի տակով ուշադիր նայեց Հաճու դեմքին և նկատեց նրա աչքերում մի տխուր համակերպություն: Վեր կացավ, օգնեց որ հագնվի, ջուր բերեց, լվացվեցրեց: Հաճին վեր կացավ և գավազանը առավ:

– Ո՞ւր,– հարցրեց Հաճի մարը մի փոքր վախեցած:

– Ժամ պիտի էրթամ:

Հաճի մարը զարմացավ, բայց շրթունքը կծեց: Դրդեց հարսներին, որ վեր կենան, և ասաց, որ իրենք ժամ են գնում. հարսները զարմացած նայեցին Հաճուն, բայց Հաճի մարը գողունի մատները դրեց շրթունքին, որ չխոսեն:

Դուրս եկան փողոց և ձների ու սառույցների վրայով անխոս գնացին եկեղեցի: **Երբ մտան եկեղեցու բակը, Հաճու հանգիստ դեմքի մկանները ցնցվեցին: Նա դողդոջուն շրթունքները հպեց եկեղեցու քարե դռան, համբուրեց, երեսը խաչակնքեց** և՝ կզակը դողացնելով՝ ներս մտավ եկեղեցի:

Համադրի՛ր պատմվածքի՝ կարմիրով առանձնացված հատվածները և դրանց միջոցով ցո՛ւյց տուր Հաճի աղայի կերպարի հոգեբանական զարգացումն ու փոփոխությունները:

Առավոտյան ժամ էր, և եկեղեցին թափուր: Երբ ժամն ավարտվեց, Հաճի մարը առաջարկեց, որ գնան տուն, բայց Հաճին մերժեց և մնաց իր տեղում չոքած: Սպասեցին պատարագին: Շուտով եկավ մեծ հարսը: Եվ հարս ու կեսուր քաշված մի անկյուն՝ սկսեցին փսփսալ. Հաճի մոր համար

պարզ էր, որ Հաճի աղան հոգեկան հիվանդ է դառել: Եվ սկսեց աղոթել, տրորվել:

Չոքել էր Հաճին և ավելի մտածում էր, քան աղոթում: Հաճի մարը նայեց նրա սմքած երևույթին, կորացած մեջքին, դեղնած մագաղաթե դեմքին, ծխից կարմրած բեղերին և ճերմակ, ցախ-ցախ մորուքին, որոնց վրա փախից հետո ածելի չբանեց, նայեց Հաճի մարը և զգաց, որ ծերուկի վիշտը շատ խորն է:

Մի մինդար քաշեց ծերուկի տակը, բայց սա մերժեց: Եկեղեցին լուռ էր, ցուրտ: Խնկի դուրեկան հոտը դեռ օդի մեջ: Ահա արևի ծիրանի սյուները պատուհաններից կախվեցին ներս: Եկավ ժամկոչը, հետո քահանան, կամաց-կամաց աղոթավորը շատացավ, սկսվեց պատարագը: Հաճին անշարժ ու հանգիստ նայում էր իր առաջ, պաղ քարերին: Միայն երբեմն, երբ արծաթագլուխ տերտերը շուռ էր գալիս դեպի բազմությունը և հորից լսվող ձայնով ասում էր «խաղաղությո՛ւն ամենեցուն», Հաճին գլուխը կախ էր գցում և երեսը վախեցած խաչակնքում:

Երբ գնացին տուն, և ամենքը շարվեցին «դաստախուն» շուրջը և սկսեցին թեյ խմել, մեծ հարսը բերանը մոտեցրեց Հաճի մոր ականջին.

– Գիտե՞ս, Հաճի աղաս տերտերին, տիրացուին բռերը մեկ-մեկ օսկի դրեց:

Հաճի մարը սառած նայեց հարսի երեսը, հետո վեր թռավ և գնաց դուրս և այնտեղից նշանացի կանչեց հարսին իր մոտ:

– Ե՞ք, աղջի…

– Դուն սեղանին էիր մոտեցե, աղոթք կենեիր,– պատասխանեց հարսը,– աղքըտներուն ա մեկ-մեկ օսկի տվեց…

– Չէ, ջանըմ…– հևաց Հաճի մարը հուզմունքից:

– Աչքովս տեսա:

– Հը՞…– խռովեց Հաճի մարը,– ձեզի բան կըսեմ՝ չեք իմանա: Ամա՛ն, աստծու խաթեր, Հաճիս ձեռքե գնաց, տնե՛ օճըղե հեռու…

Եվ սկսեց ծնկներին տալ ու տրորվել: Հարսը պատմեց տեղով, որ իր աչքով տեսել է: Հաճի մարը նորից ներս մտավ, իրեն զսպեց և հարսներին աչքով արավ, որ ուշ չդարձնեն Հաճու վրա: Ու սկսեց հսկել նրան:

Երեխաները դուրս գնացին՝ ձյան վրա խաղալու: Հարսները սփռոցը վեր քաշեցին, նորից մի թեթև ավլեցին սենյակը, որ առավոտվան խնամքով ավլել էին, փայտ ավելացրին թիթեղի վառարանին և գնացին «աշխանան», խոհանոց՝ կերակուր եփելու: Հաճի մարը նստեց Հաճի աղայի դիմաց

և դիտելով նրա ամեն մի շարժումը, սպասեց, որ նա մի բան ասի:

Բայց ոչ մի նշան՝ թե ուզում է խոսել: Նրա լռությունը ցույց էր տալիս, որ խորին ու մշտական խռովքը և ներքին տաժանելի մի աշխատանք դուր էր գալիս նրան:

Մի պատկեր կար, որ երևակայության մեջ ամբողջացնում էր նա: Դա նրա կիրքն էր, որ նրան և՛ սարսափեցնում էր, և՛ ուրախացնում: Նա տեսնում էր անդամալույծի դիակը և աշխատում էր նայել նրա սառած, բաց աչքերին: Ճգնավորի մոլուցքի մեջ ընկած հավատացյալի կրքով նա հետևում էր այդ պատկերին և աշխատում էր երբեք, ոչ մի վայրկյան աչքից բաց չթողնել. ինքը, միայն ինքը եղավ այդ սարսափելի պատկերի ստեղծողը: Դա իր մեղքն էր, ցածությունը, իր անգթությունը: Եվ ինչքան երկար նայում էր այդ դիակին, այնքան կսկծում էր իր սիրտը և այնքան էլ հաճույք, հանգիստ էր զգում: Անդամալույծը դառավ մի սուրբ, մի պաշտելի սուրբ նրա համար: Նրա դիակը սրբագործում էր ծերուկի մեղսալից սիրտը: Ահա ինչու նա կառչել էր նրան:

Բայց այս ապաշխարողի թեթևացումը երբեմն էր միայն: Լինում էին րոպեներ, որ նա զգում էր, թե խելագարվում է: Այդ պատահում էր, երբ նա պայծառ գույներով պատկերացնում էր ի՛ր իսկ մահվան օրը, կամ երբ հիշում էր իր սարսափները փախի գիշերը: Հիմա էր հաշիվ տալիս իրեն և զգաստորեն հաշիվ տալիս, որ հենց այդ սարսափներն է կրել իր քույրը, այն արհամարհված էակը, որի մեռնելը ինքը ցածոգի կերպով այնքա՜ն հեշտ և հասկանալի համարեց փախի օրը: Եվ ինչպե՞ս կարելի էր թողնել նրան մահվան առջև, և կա՞ արդյոք մի արարած, որ չտանջվի մարմնական ցավից, չվախենա մահից և իրավունք չունենա ապրելու: Եվ ի՜նչ համակերպությամբ ընդունեց անդամալույծը իր համար որոշած վիճակը և ի՜նչ անձնվեր հոգատարությամբ նա մտածում էր փախչողների ապահովության մասին: Սա արդեն խոցում էր Հաճու սիրտը: Եվ երբ Հաճին հիշում էր, թե ինչպես ինքը անկարող եղավ կյանքի սերը մեռցնել իր մեջ և դիմանալ մահվան մերձեցման, մինչդեռ այն հասարակ, չնկատված էակը այնպես արիաբար վճարեց իր տուրքը, Հաճին խայթված վեր էր բարձրացնում իր խոնարհած գլուխը և խելագարի պես նայում Հաճի մորը:

– Հաճի աղա՞,– արթնացրեց նրան իր կինը:

Հաճի աղան նայեց նրան խորասուզված հայացքով և լռեց:

– Ախր մեմ ըսե տեսնենք՝ ի՞նչ կմտածես,– հանդիմանեց Հաճի մարը:

Տեքստը բաժանի՛ր մասերի և վերնագրի՛ր:

Հաճին լուռ էր:

– Թե՞ կորուցածդ է միտքդ ընկե՝ տղաքդ սաղ ըլին. ինչի՞ կմտածես, թե՞ Սրբունին վրա է միտքդ՝ բան չունի՞ս. անքանները մեռան, ավելի ազիզները... լավ կըսեիր, թե «ան ավելորդ է»:

Հաճին մռայլ նայեց իր կնոջը և գլուխը օրորեց:

Եվ նա սաստեց՝ խստահայաց նայելով Հաճի մորը.

– Սո՛ւս... ավելորդ մարդ չկա. աստծու առջև հոգին հոգի է:

Հաճի մարը զսպվեց:

– Օ՛ֆ,– հառաչեց Հաճի աղան,– գնա, սատկող շանը հարցուր, թե սատկելը ղոլա՞յ (հեշտ) բան է:

Նրա դեմքը տխուր էր, աչքերը խորն ընկած, իսկ անաթիլած կզակի ու այտերի ճերմակ մորուքի ցախերը նրա դեմքին տալիս էին խստակյաց ճգնավորի երևույթ:

Մի շաբաթ անց Հաճի աղան պառկեց անկողնում: Երևի ժամում մրսել էր: Քրտնեցրին, ֆելդշեր բերել տվին: Ոչինչ օգուտ չեղավ: Եվ մի երեկո ճրագ վառելու ժամանակ Հաճին տերտեր ուզեց: Հաճի մարը ծնկներն էր ծեծում և գողունի նայում Հաճի աղային, որ տեսնի, թե վտանգն անցնում է, թե ոչ:

Եվ մինչդեռ տնեցիք, թաքցնելով իրենց հուզմունքը, սպասեցին մի պահ ևս, որ գուցե թե Հաճին ինքը մոռանա և էլ չպահանջե տերտերի գալը, Հաճին հանգիստ և պարզ կրկնեց, որ տերտերի պետք ունի: Կանչեցին: Եկավ արծաթազարդ տերտերը, որ բնազդով իմանալով, թե հիվանդը մահամերձ է, հետը բերել էր հաղորդությունը:

Տնեցիք բոլորվեցին հիվանդի շուրջը: Տերտերը ձեռքով արավ, որ հեռանան, հասկացնելով, որ հիվանդին պիտի խոստովանեցնե: Բայց Հաճի աղան խնդրեց, որ մնան: Եվ բարձր ձայնով, մոլեռանդ հույզով խոստովանեց: Պատմեց, թե ինչպես ինքը թողեց անդամալույծին:

– Մեղա քեզի՛, մեղա,– լացեց և համբուրեց ավետարանը:

Տերտերը մխիթարեց և հաղորդություն տվեց:

Եվ երբ հիվանդը հաղորդություն առավ, դողդոջուն ձեռքը տարավ բարձի տակը և, հանելով թղթի մեջ փաթաթած մի քանի ոսկեդրամ, տվեց տերտերին:

– Աս քեզի,– շշնջաց նա և, հանելով մի ուրիշ քսակ, դողդոջուն ձեռքով մեկնեց տերտերին ու աչքերի երեխայական արտահայտությամբ նայեց նրան և ուզում էր մի բան ասել, բայց մնաց. շունչը կտրվում էր. սաստիկ հուզված էր:

– Աս ո՞ւմ,– հարցրեց տերտերը, կռանալով նրա վրա:
– Ո՞ւմ տաս,– մրմնջաց հիվանդը և լռեց:
Արտասուքը խեղդեց նրան: Շունչ առավ և հառաչեց.
– Ադ ա տուր աղքատներուն…
Եվ խլելով տերտերի փեշը, համբուրեց և մղկտաց.
– Ավելորդին հոգուն համար…

կուզ սապատ, ուռուցիկ մաս մեջքին, պարանոցի շրջանում, թիկունքի վրա
սապատավոր քիթ ուռուցիկություն ունեցող քիթ
ֆես կոնաձև կտրած գլխարկ
դիմահար տալ հենվել
շալվարի տոտերը անդրավարտիքի ներքևի եզրերը
զելվել ընտելանալ, հարմարվել մի բանի. զելված՝ եփված, բովված
քարվանսարա իջևանատուն
բառերը լփռել ծամծմել
տաբուրետ քառակուսի ցածր աթոռ
ֆուրղուն (ֆուրգոն) ձիասայլ, ձիակառք
կազակ ռուսական ծայրամասային շրջանների բնակիչ և զինվոր
ֆետպեպիլ (ֆելդֆեբել) ենթասպա
դյուրգար (դուրգար) հյուսն, փայտե իրեր պատրաստող
ատամ (ադամ) մարդ
աշել նայել
հազրվել պատրաստվել
կամենդանթ պարետ
կառեթ կառք
զանգիններ հարուստներ
խան այստեղ՝ իջևանատուն
թաղիքե վալիկներ թաղիքե ձմեռային կոշիկներ
բուրդ ձաղկել ճիպոտով բուրդը ծեծել
դայֆա սուրճ
կալոշ կրկնակոշիկ
սալդաթ ռուս զինվոր
մինդար բարձ, որին թիկնում են կամ որի վրա նստում
մութաքա երկար կլոր բարձ
կապերտ (կարպետ) բրդյա հաստ գործվածք, գորգի տեսակ
գյուգյում պղնձե ջրաման
ապլա հայր
խզակ սահնակ
բաշլըղ գլխաշոր
գուլա լալիս է
օղուլ տղա, երեխա, զավակ
էգվան էգուց
զուլում աղետ
սարկազմ ծաղր
օդա այստեղ՝ սենյակ
թեզ էրա արագացրու
դֆտիկ ընտիր բուրդ
ատոր վախտը չէ դրա ժամանակը չէ
հըլպըտ որ իրոք որ
իմտատ օգնություն
խաբարդա ճանապարհով անցնելիս զգուշացնող բացականչություն
бросьте ее к черту սատանայի բաժին թող լինի
а что ж իսկ ինչո՞ւ ոչ, ի՞նչ կա որ
պռավիլա օրենք
լնգլնգալ կաղալ
դաստախուն սփռոց, որի մեջ լավաշ հաց են պահում
մեկ ըսե մեկ ասա
օճըղե հեռու օջախից՝ տնից-տեղից հեռու
ֆելդշեր բուժակ

Անդրադարձ

Ավետիք Իսահակյանը ասել է.

««Ավելորդը» խոշոր պատմվածքը եզակի է մեր գրականության մեջ՝ մշտարժեք: Զանազան անկյուններից կարելի է նայել այդ երկին և միշտ ընդունել այն գեղեցիկ ու կատարյալ:
...Ինձ զարմացնում են հոգեբանական այն խորունկ, ճշմարիտ վերլուծումները, որ անում է հեղինակը խղճմտանքի, անպարտելի ուժի, խղճի խայթերի և ներքին ահեղ ու արդար դատաստանի վերաբերմամբ: Սրանք համաշխարհային գրականությունը զարդարող էջեր են»:

Համաձա՞յն ես Ավետիք Իսահակյանի կարծիքին: Հիմնավորի՛ր տեսակետդ:

Ամփոփիչ գործնական աշխատանք

Գրի՛ր մենախոսություն Հաճի աղայի կամ Սրբունի անունից:

Բաժանվե՛ք վեց խմբի՝ ըստ Էդվարդ դե Բոնոյի **վեց գլխարկների** մեթոդի և կատարե՛ք համապատասխան առաջադրանքները:

- սպիտակ՝ ներկայացնել պատմվածքի հիմնական գործողությունները
- կարմիր՝ ներկայացնել պատմվածքում առկա հույզերը, զգացմունքները, տրամադրությունները համապատասխան մեջբերումներով
- դեղին՝ ներկայացնել պատմվածքի դրական, ուրախ կողմերը
- սև՝ ներկայացնել պատմվածքում առկա վտանգները, բացասական երևույթները
- կանաչ՝ պատմվածքի համար նոր վերջաբան հորինել
- կապույտ՝ ներկայացնել պատմվածքում շոշափված խնդիրները, հարցերը, բուն գաղափարը:

Պատկերացրո՛ւ, որ դու մարդու իրավունքների պաշտպան ես: Տեղեկություններ հավաքի՛ր Հայաստանում հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների մասին: Արդյոք նրանց իրավունքները պաշտպանվա՞ծ են: Ի՞նչ առաջարկներ ունես:

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

(1899–1937)



Կյանքը, ուսումնառությունը: Հայ արձակի մեծագույն վարպետներից մեկը՝ Ակսել Բակունցը, ծնվել է 1899 թվականի հունիսի 13–ին **Գորիս** քաղաքում:

Գերազանց առաջադիմությամբ սովորել է ծննդավայրի ծխական դպրոցում: Համաքաղաքացիների միջնորդությամբ Բակունցը 1910 թվականին ընդունվում է **Էջմիածնի Գևորգյան ճեմարան** և 1917 թվականին ավարտում ճեմարանի դասարանային բաժինը: 1915–1916 թվականներին ուսուցիչ է աշխատել **Սիսիանի** շրջանի **Լոր** գյուղում:

Կամավոր մեկնելով ռազմաճակատ՝ Բակունցը 1917–1918 թվականներին որպես շարքային զինվոր մասնակցել է Աշկալայի, Իլլիջայի, Արդահանի կռիվներին և **Սարդարապատի ճակատամարտին**:

Այնուհետև կրկին շարունակել է ուսումը: 1919–1920 թվականներին սովորել է **Թիֆլիսի** պոլիտեխնիկական ինստիտուտում: Ապա մեկնել է **Խարկով** և 1923 թվականին ավարտել Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտը: Վերադառնալով Հայաստան՝ 1924–1926 թվականներին աշխատել է Գորիսում՝ որպես Զանգեզուրի գավառական գյուղատնտես, գավգործկոմի հողբաժնի վարիչ: 1926 թվականից մշտական բնակություն է հաստատել **Երևանում** և հիմնականում զբաղվել գրական աշխատանքով: Բակունցը եղել է Եղիշե Չարենցի գլխավորած «Նոյեմբեր» միության անդամ:

Ակսել Բակունցի իսկական անուն–ազգանունը Ալեքսանդր Թևոսյան է:

Ակսել Բակունցի կյանքի հետաքրքիր դրվագներին ավելի մանրամասն ծանոթանալու համար դիտի՛ր «Օ, Զանգեզուր, օ, Կյորես» ֆիլմը:

Ակսել Բակունցը «Զանգեզուր» և «Արևի զավակը» գեղարվեստական ֆիլմերի սցենարների հեղինակն է:

1930-ական թվականներին Ակսել Բակունցի դեմ նույնպես սկսվում են քաղաքական մեծ հալածանքներ: Նրան համարում են այսպես կոչված «ժողովրդի թշնամի» և ձերբակալում 1936 թվականի օգոստոսի 9-ին: Բանտում նա ենթարկվում է սարսափելի տանջանքների:

Գնդակահարվել է 1937 թվականի հուլիսի 8-ին:

Գորիս քաղաքում գործում է Ակսել Բակունցի տուն-թանգարանը: Հիմնադրվել է 1968 թվականին Գորիսի այն տանը, որտեղ ծնվել է գրողը:

Տուն-թանգարանի հասցեն է՝ ք. Գորիս, Մաշտոցի 41: Հեռ.՝ (0284) 22966

Ստեղծագործությունը: Ակսել Բակունցը արձակի վարպետ է:

Բակունցի հրատարակված առաջին գործը **«Հիմար մարդը»** հեքիաթն է, որը լույս է տեսել, երբ նա ընդամենը 14 տարեկան էր: 1920-ական թվականներին տարբեր թերթերում հրատարակում է ակնարկներ՝ նվիրված հատկապես հայ գյուղացիների կյանքին ու խնդիրներին, ինչպես նաև պատմվածքներ:

1927 թվականին լույս է տեսնում Ակսել Բակունցի պատմվածքների առաջին ժողովածուն՝ **«Մթնաձոր»** վերնագրով: Այս գրքում են ընդգրկված **«Ալպիական մանուշակ»**, **«Միրհավ»**, **«Խոնարհ աղջիկը»** հայտնի պատմվածքները:

Հետագայում գրված պատմվածքները Բակունցն ամփոփեց ևս երկու ժողովածուում՝ **«Սև ցելերի սերմնացանը»** (1933) և **«Անձրևը»** (1935): 1930-ական թվականներին Բակունցը ստեղծում է նաև ավելի մեծակտավ

Ակսել Բակունցը ստեղծագործել է հետևյալ ժանրերով՝ **պատմվածք**, **ակնարկ**, **վիպակ**, **վեպ**:

գործեր՝ գրում է **«Կյորես»**, **«Որդի որոտման»** վիպակները, հրատարակում մի քանի հատված **«Կարմրաքար»** և **«Խաչատուր Աբովյան»** վեպերից:

Ակսել Բակունցի առաջին՝ **«Մթնաձոր»** ժողովածուի շապիկը:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Պարզի՛ր, թե ինչու և ինչպես է գրողն ընտրել Ակսել Բակունց գրական անունը: Պատրաստի՛ր նյութ և ներկայացրո՛ւ դասարանում:
2. Պարզի՛ր, թե հայ բանաստեղծներից ո՞վ և ի՞նչ կապ ունի Լոր գյուղի հետ:
3. Ի՞նչ ընդհանրություններ և տարբերություններ ունեն Բակունցը, Չարենցը և Դեմիրճյանը:
4. Դիտի՛ր Բակունցի կենսագրական ֆիլմը և 5-10 հետաքրքիր փաստ գրի՛ր քո գրականության տետրում:
5. Բակունցի կյանքը ներկայացրե՛ք հեռուստատեսային հաղորդման ձևաչափով: Դասարանը վերածե՛ք տաղավարի, ընտրե՛ք հաղորդավար, մասնակիցներ, հանդիսատես և այլն:
6. Կարդա՛ կամ ունկնդրի՛ր Չարենցի «Ա. Բ.-ին» բանաստեղծությունը՝ նվիրված Բակունցին: Ինքնուրույն ընտրի՛ր բանաստեղծության մեջ հիշատակված պատմվածքներից մեկը և ընթերցի՛ր:
7. Գրի՛ր շարադրություն «Լավագույն ընկերոջս» վերնագրով:

Սյունիքի հրաշքներից մեկը՝ Տաթևի վանքը

Եղիշե Չարենց «Ա.Բ.-ին»

Դիտի՛ր Բակունցի պատմվածքների հիման վրա նկարահանված «Լուսաբացից առաջ» կինոնկարը և քննարկի՛ր դասընկերներիդ հետ:

Մտածի՛ր և քննարկի՛ր դասընկերներիդ հետ:

Քո կարծիքով՝ ինչո՞ւ է երեք ձի պատկերված, և ինչո՞ւ է սպիտակավուն ձին կենտրոնում:

Մաս 1

Մաս 2

«Սպիտակ ձին» պատմվածք է: Պատմվածքն ունի **սյուժե (դիպաշար):** Սյուժեն գրական երկում զարգացող դեպքերի, գործողությունների, մարդկային կապերի և հարաբերությունների ամբողջությունն է: Այն բաղկացած է հետևյալ մասերից՝ *նախադրություն, հանգույց, գործողությունների զարգացում, գագաթնակետ, լուծում:*

ՍՊԻՏԱԿ ՁԻՆ

1

Շարմաղ բիբին երեկոյան, երբ ժամհարը քաշում էր եկեղեցու զանգերը, խրճիթի ծանր դուռը տնքալով բաց էր անում: **Երկար ու կերկեր, իբրև արևելյան թախծոտ երգ, ճռնչում էր հին դուռը, երբ պառավի դողացող ձեռքերը ձգվում էին դեպի դռան մաշված ունկը:** Խավար խրճիթում դռան երգին արձագանքում էր պղինձների զնգոցը և Շարմաղ բիբու ջինջ ձայնը.

– Քո փառքը շա՛տ, էսօր էլ զանգերը զարկին,– մրմնջում էր այդ լուսերես կինը, որին իրիկնապահի զանգերն ավետում էին անանձնական անդորր:

Նա կանգնում էր դռան շեմքին, աչքը դեպի ներքևի բլուրները, որոնք անսահման հեռվում ձուլվում էին մայրամուտի մուգ կապույտ երկնքի հետ և կազմում եզրը մի անգո աշխարհի, որին յոթանասուն տարի անդավաճան հավատում էր այդ միամիտ կինը:

Կանգնում էր դռան շեմքին և կարծես թե տեսնում էր պղնձյա զանգերի տխուր ղողանջները, ինչպես մթնող երկնքի տակ նազով ճախրող աղավնիները: Նա հավատում էր, որ երեկոյան զանգերի հետ երկնային մի օրհնություն թրթռալով ներս է մտնում ու քսվում հին տան սևացած քարերին, նրա այրվող օջախին, ինչպես ներս կմտներ գետնի երեսով սողացող մշուշը:

Եվ այդ հին հավատով էլ վերջանում էին Շարմաղ բիբու կրոնական զգացումները: Եկեղեցի չէր գնում, ոչ աղոթք գիտեր, ոչ ծանոթ էր եկեղեցական ծեսերի:

Բայց և այնպես մի խորհրդավոր ակնածանք էր ապրում, երբ երեկոյան երգում էին զանգերը, երգում էր և հին դուռը, բլուրների և աշխարհի վրա իջնում էր մի խաղաղ երեկո, ճախրում էին ոսկեթև աղավնիները, և այդ ամենը ռամիկ հավատով նա ընդունում էր որպես անքննելի խորհուրդ, որ մնացել էր գյուղական աղջկա անուրախ մանկությունից:

Այդ երեկո, երբ Շարմաղ բիբին դուռը քաշեց և ոտքը շեմքին դրեց, հանկարծ ետ քաշվեց մի ահարկու ձայնից, որ անակնկալ որոտաց հենց նրանց կտուրի վրա և խռպոտ աղմուկով խլացրեց զանգերի ծանոթ ղողանջը:

Տանեցիները, որոնք սփռոցի չորս բոլոր նստած լուռ ընթրում էին, արձանացած, զարմացած իրար նայեցին: Ահ կար նրանց աչքերում: Նույնիսկ փոքրիկ Երեմը բնազդով զգաց, որ խռպոտ ձայնը բոթ է գուժում:

– Է՛ հե՛ հե՛յ,– ալիք, ալիք դիզվեց ձայնը,– ժողովուրդ... Թագավորի հրամանով առավոտը կանուխ ձիատերը ձիով քաղա՛ա՛ք, հե՛յ–հե՛յ... Ով չտանի, թագավորի հրամանով տունը, տեղը է՛–հե՛–հե՛յ...

Եվ ձայնը հեռանալով նվազեց, որովհետև գզիրը ուրիշ կտուր բարձրացավ և երեսն ուրիշ թաղի կողմը դարձրեց: Շարմաղ բիբին չլսեց, թե զանգերն ինչպես լռեցին և ուր կորան նրանց վերջին թավ ելևէջները: **Դուռը դժգոհ վրա դրեց և դուռը չերգեց երկար ու կերկեր, այլ դժգոհ վնգստաց շան նման:**

– Չո՛ռ, բայղուշ, հենց էս սհաթին էր...

Երբ Շարմաղ բիբին եկավ տեղը նստեց, և երեխաները տատի ներկայությունից սիրտ առան, Սիմոնը հառաչելով, կարծես ինքն իրեն, ասաց.

– Էսօր Մինասի տղան էր պատմում... Ասում էի սուտ կլինի, ա՛ռ քեզ...

– Ապի, յանի թագավորն էդքան ձի ինչի՞ ա հավաքում,– հորը դարձավ անդրանիկ աղջիկը՝ ութ տարեկան Շողերը:

– Եսի՞մ,– ուսերը վեր քաշեց հայրը, կռիվ ա, բալա ջան... Մարդ են ջարդում, ձիեր են կոտորում: Ժողովուրդ տո՛ւր... Թագավորի հրաման ա:

– Փո՛ւ, փո՛ւ...

Անհայտ էր, թե Երեմը այդ բացականչությամբ իր զարմանքն էր արտահայտում, թե՞ պաղեցնում էր տաք ապուրը: Մայրը սկսեց նրան կերակրել և ահը սրտում ամուսնուն հարցրեց.

Ներկայացրո՛ւ Շարմաղ բիբիի կերպարը հետևյալ հերթականությամբ՝ նրա արտաքինը, բնավորությունը, արարքները:

Նախադրության մեջ նկարագրվում են այն նախադրյալները, որոնք հիմք են դառնում գործողությունների հետագա զարգացման համար:

Համեմատի՛ր այս և նախորդ՝ կարմիրով նշված հատվածները: Ի՞նչ նմանություններ և տարբերություններ ես տեսնում:

Ի՞նչ լուր էր տարածվել: Ինչո՞ւ էին մարդիկ դա որպես բոթ ընդունում:

– Մեր Ցոլակը չափումը կգա՞,– բայց Սիմոնը, որ անակնկալ մտքերի հետ էր, չլսեց նրա հարցը: Ցոլակը նրանց ձին էր, կապտավուն մորթով, որի վրա, ինչպես աստղերը, ցրված էին սպիտակ նշաններ: Երկար, ալիքաձև պոչ ուներ Ցոլակը:

Եվ ասում էին, թե մի հին և ազնիվ ցեղի շառավիղն էր այդ ձին, որ Սիմոնը գնել էր երկու տարի առաջ, փոխարենը տալով իրենց էշը, մի անմայր հորթ, մի կարպետ և երկու բեռ ցորեն:

– Տուն եմ, երեխաների տեր եմ, առանց ձիու հնար չկա,– ասել էր նա և ուրախության ժպիտով առաջին անգամ ձին քաշել աղբյուրը: Հենց այդ օրն էլ նրան անվանել էին Ցոլակ, այն ձիու անունով, որ եղել էր նրանց տանը՝ Սիմոնի մանկության տարիներին:

– Հակառակի պես հայվանն էլ ջանով ա,– ասաց Սիմոնը և սթափվելով խոր մտքերից, դանդաղությամբ հացի փշուրները փեշից սփռոցի վրա թափելով,– տարվա էս ժամանակ ձին էլ էդքան ջանով լինի՞: Հալբաթ էսպես պիտի լիներ...

Ասաց ու վեր կացավ, փափախի մորթու միջից ծղոտները մեկ–մեկ դեն գցելով, դուրս եկավ գյուղամեջ, դրացի հարևաններից իմանալու ավելի ստույգ տեղեկություն:

Դարպասի մոտ Սիմոնը մի պահ կանգնեց, նայեց ձիուն, որ արոտից վերադարձել և ախորժակով խժռում էր սարի թարմ խոտի խուրձը, երբեմն մռութով քրքրում խուրձը և փնտրում սուսամբարի տերև: Սիմոնը տխուր նայեց. Ցոլակի ողորկ մարմինը և մորթու սպիտակ բծերը աստղալուսին մեղմ շողշողում էին:

Նա մի անգամ էլ տեսավ, որ ձին նիհար չի և չար վրդովանքով կանչեց...

– Սատկած, քիչ կեր էլի, տրաքվելու չե՞ս հո...– Կանչեց ու խուրձը դրեց գոմի կտրան: Ձին մեղմ վրնջաց և վիզը մեկնեց դեպի խուրձը:

– Հը՞, բոյը կարճ չի՞, նանի... Չափումը թե չգա,– դարձավ նա մորը, որ հավաբնի մուտքը կալել ու կանգնել էր նրա կողքին:

– Եսի՛մ, այ որդի...

– Ռուսի ղազախը սրա վրա կարո՞ղ է նստի... Չէ՛, չեն տանի,– հուսադրեց իրեն Սիմոնը և քայլեց փողոցով:

Շարմաղ բիբին նայեց որդու օրորվող մարմնին, մինչև նա հալվեց մթնում և կենդանական խանդաղատանքով ինչ–որ բան մրմնջաց, որ չգիտես աղո՞թք էր, օրհնությո՞ւն, թե աղոտ հույսի ակնկալություն:

2

Մութն էր, երբ Սիմոնը տուն եկավ: Գոմում կապած ձին լսեց տիրոջ ոտնաձայնը, նորից վրնջաց, Սիմոնը խղճահարվեց, նա ճրագը վառեց, խոտի խուրձը գրկեց և ներս մտավ գոմը: Ցոլակն ուրախությունից վրնջաց, մի քանի քայլ արեց, փորձեց կապը կտրել, բայց չկարողացավ: Սիմոնը խուրձը մսուրը դրեց և երբ ձին մռութը կոխեց մեջը,– ձեռքով շոյեց Ցոլակի փափուկ մեջքը:

Ընդարձակ գոմի անկյունում նստել էր պառավ կովը: Երկու այծերը, որոնք բարձրացել էին մսուրի վրա, Սիմոնին տեսնելով ցած թռան և միրուքներն օրորելով մոտ վազեցին: Սակայն Սիմոնը չմոտեցավ ոչ կովին և ոչ էլ այծերին: Նա մի պահ կանգնեց, ապա ձիու ոտքերի տակ թափված խոտը ժողովեց և դուռը դրեց: Երեխաները քնել էին: Շարմաղ բիբին, աչքերը կկոցելով, դժվարությամբ թելում էր հաստ ասեղը, որպեսզի կարկատի որդու գուլպաները: Նրանց տան վաղուցվա կարգն էր այդ: Երբ Սիմոնը քաղաք գնար, մայրն էր հոգում նրա ճանապարհի պատրաստությունը:

Խրճիթի հին դուռը ճռճռաց, պառավը ասեղը թողնելով՝ անհանգիստ հարցրեց.

– Հաստա՞տ ա...

– Բա հո սուտ չի՞...

– Ի՞նչ են ասում:

– Ասում են բոյը հաշիվ չի, եթե ձին առողջ է, կտանեն...– և դարձավ մորը.– Նանի, Ցոլակի էն մեծ տոպրակն ո՞ւր ա, հետս դարման եմ տանելու:

Շարմաղ բիբին վեր կացավ մեծ տոպրակի միջի բուրդը թափելու:

Քնելուց առաջ Սիմոնը մի անգամ էլ գնաց գոմը: Պառավ կովը այդ անսովոր այցից զարմացած, մինչև վեր կենար ու որոճալով մոտենար գոմի դռան, Սիմոնը ձիու համետն ու չվանները սարքեց, դրեց ախոռի մոտ ու դուրս եկավ: Դուրսը աստղալույս գիշեր էր: Գյուղում մեկ–մեկ հանգչում էին կրակները և կրակների հետ լռում էին ձայները: Ներքևը, գետափի մարգերում, կանչում էր գիշերահավը: Արտերից, դաշտերից և հեռվի անտառից հովը բերում էր զով սառնություն և հազարավոր խոտերի բույր, որի մեջ ավելի սուր զգացվում էր սուսամբարի և արդեն չորացող դաղձի կծու հոտը:

Սիմոնը նստել էր դարպասի քարին և քարի նման հոգսը ծանրացել էր նրա սրտին: Հազիվ էր ծայրը ծայրին հասցնում, երբ հավասար աշխատում էին ինքն ու Ցոլակը: Իսկ

Ի՞նչ վերաբերմունք ուներ Սիմոնը կենդանիների նկատմամբ: Ինչպե՞ս էր դա արտահայտվում:

Դիպաշարի զարգացման համար շատ կարևոր է **կոնֆլիկտը** (բախումը): Կոնֆլիկտը հակասությունների պատկերումն է ստեղծագործության մեջ:

ա՞յժմ... Եվ Սիմոնին թվաց, թե իրենց տնից տանում են ոչ թե մի ձի, այլ իր եղբորը, իր որդուն, այնպես, ինչպես անցյալ ամառ շատ տներից տարան նրանց որդիներին ու եղբայրներին:

Սակայն հոգնությունը հաղթեց, ու ներս մտավ տուն:

– Հակառակի պես անիրավի մեջքը կասես հինայած լինի,– նորից հիշեց Սիմոնը:

3

Լույսը դեռ չէր բացվել, երբ Սիմոնը ճրագը ձեռքին մտավ գոմը, Ցոլակին համետեց ու դուրս քաշեց: Հարևան բակերում ճրագներ էին շարվում, ճռնչում էին դռները, ինչ-որ ձայներ էին գալիս:

Սիմոնը լսեց իր հարևանի՝ Սաքու տղայի ձայնը: Նա բարկացած կանչում էր հարսի վրա, թե ինչու ձիու չվանը լույսով չի գտել:

Դռանը կանգնել էին Շարմաղ բիբին, **կինը** և նրա փեշից բռնած քնաթաթախ Շողերը, որ անսել էր մոր խոսքը և լացով հագել շորերը, որպեսզի տեսնի, թե ինչպես են ճանապարհ գցում Ցոլակին:

Տխուր ժամ էր, երբ Սիմոնը դռնից հանեց ձին: Կարծես ներսը նա զարդարել էր մի դագաղ, իսկ դուրսը սպասում էին այդ ծանր վայրկյանին, որ աղի արտասվեն:

Ցոլակը գոմից երբ դուրս եկավ, վրնջաց և ականջները խլշեց: Շարմաղ բիբին ձեռքը կրծքին խփեց և աղիողորմ ասաց.

– Ջա՛ն,– ու սրբեց արցունքը:

Շողերը մոտ վազեց, երեկվա խոտի փշրանքից մի բուռ մոտեցրեց ձիուն: Ցոլակի տաք ռունգներից մի ջերմ շունչ շոյեց աղջկա սառած ձեռքերը:

Սիմոնն ամրացնում էր ճանապարհի պաշարը, կապում հարդով լի պարկը և միաժամանակ տնեցիներին պատվիրում, որ ցերեկն այծերը հեռու չքշեն, որ եթե արև լինի՝ հնձած խոտի կիտուկները շրջեն և եթե ջրի հերթն իրենց տան, լոբու մարգերն անպատճառ ջրեն: Հենց այդ խոսքին Սաքու տղան կանչեց.

– Սիմոն, բա չպրծա՞ր...

– Եկա՛, եկա՛...

Եվ Ցոլակի սանձը քաշեց: Տանեցիները դանդաղաքայլ հետևեցին մինչև հարևանի դուռը, ասես հուղարկավոր էին մի թանկագին դագաղի, որին ուղի էին գցում մահվան անվերադարձ ճանապարհով: Շարմաղ բիբին անընդհատ

լալիս էր, լաց էր լինում և Շողերը, լալիս էր նրա մայրը: Փողոցին չհասած, մայրը լսեց Երեմի ձայնը.

– Ապի՛, ապի՛...

Դռան շեմքին կանգնել էր մերկ երեխան ու բարձր–բարձր հեկեկում էր և կանչում հորը: Բայց ուշ էր: Սիմոնը Սաքու տղայի հետ արդեն իջնում էր ձորակը, որպեսզի միանա ուրիշ ձիավորների:

Մայրը վերադարձավ, գրկեց տղային ու տուն մտավ: Շարմաղ բիբին ու Շողերը կանգնեցին այնքան, մինչև ձիավորները դարիվերը բարձրացան և պահվեցին բլուրի հետևը:

Արևը նոր–նոր շողերով ոսկի էր թափում բարձր սարի կատարին, երբ վերջին ձիավորը երևաց դարիվերի գլխին և անհետացավ, ինչպես սև ուրու:

4

Ձիավորները սկզբում լուռ էին, ոմանք առավոտի զովից ընդարմացել ու կարկամել էին: Սակայն բոլորն էլ իրենց դժվար մտքերի հետ էին, ձիերն էին համեմատում իրար, ուշի–ուշով դիտում, որպեսզի որոշեն, թե ո՞րը նորից կվերադառնա այս ճանապարհով, և որի՞ սանձն ու սարքը շալակած տուն կբերի, որպես մեռած մարդու զգեստներ, որոնց վրա այնպես դառնալի ողբ են երգում գյուղի կանայք:

Գնում էին մեկ–մեկ, խումբ–խումբ: Մեկը գրպանից հաց էր հանել, մյուսն ագահությամբ ծծում էր չիբուխը, երրորդը կախ էր արել ոտքերը, աչքը ձիու ականջներին և լուսաբացի նինջով օրորվում էր ձիու հետ:

Բայց երբ սարի հետևից արևը բարձրացավ, կարծես ջերմացավ տխուր ու լուռ ձիավորների սիրտը: Ամենից առաջ խոսեց դարբին Ավագի տղան՝ շիլ Իվանը, որ սարը բարձրանալիս սահել և հասել էր մինչև ձիու գավակը: Նա ընդհատեց իր տխուր երգը և միամիտ պարզությամբ ասաց.

– Ես աստծու քոռ հավատն անիծեմ... Ի՛մ աչքս էսպես արեց: Իմ ձին որ քոռ լիներ, ես էս սարի գլխին ի՞նչ ունեի:

Մի քանիսը ծիծաղեցին: Սաքու տղան մտքում բարկացավ նրա վրա.

– Անդա՛րդ հեյվան...

– Հրեն Հիբանի ձիուն տեսեք,– շարունակեց Իվանը, ուրախ, որ ընդհատեց ծանր լռությունը,– կասես ղազախի ձի լինի: Հիբան, պրիստավը քեզ էդ ձիով տեսնի, քեզ էլ հետը կտանի...

– Ի՞նչ պակաս կավալեր ա,– ձայն տվավ մեկը:– Էն օրը քարուտի առվով էնպես թռավ, որ մնացինք արմացած:

Այս էջում առանձնացրո՛ւ ամենատպավորիչ տողերը և ընտրությունդ հիմնավորի՛ր:

Ի՞նչ մտքեր էին համակել ձիավորներին, ինչպե՞ս փոխվեց նրանց տրամադրությունը:

– Մի տեսեք է՛... Տերտերն իրա ձին ժամհարին ա տվել: Այ, ինչ եմ ասել հալալ ախպերության,– խոսքը փոխեց դարբնի տղան:

– Ա, քիչ յավա–յավա խոսիր, է՛յ...– կանչեց Շուղունց Աքելը, որ գյուղում ավել անունով հայտնի էր որպես «աղվես խեղդող», երիտասարդ ժամանակ ձեռքով աղվեսը խեղդելու համար.– տերտերը հիվանդ տեղով կարո՞ղ ա ձի նստի:

– Դե ասի մնացել ա, որ մեզ համար աղոթք անի, էլի՛,– կծու հեգնեց մի ուրիշը:

Ընդհանուր խոսակցությունից բացի, ծայր առան և մասնակի զրույցներ:

Ոմանք ճանապարհին աննկատ անցնելու համար մի պատմություն սկսեցին, ոմանք էլ խոսում էին պատերազմի և նրա արհավիրքների մասին:

Ուշադի՛ր կարդա հերոսների զրույցը: Նրանց զրույցից եզրակացություն արա, թե ինչ ժամանակաշրջանի դեպքեր են ներկայացվում պատմվածքում: Քննարկի՛ր, թե դա որքանով է կարևոր պատմվածքը մեկնաբանելու համար:

– Մեր Անդրին անցկացած շաբաթը մի նամակ էր ուղարկել Վարշավու կողմերից... Լավ չի գրում, ասում է՝ էս է մի ամիս է ծմակի մեջ, գիշեր–ցերեկ թոփերը տրաքում են: Մինչև անգամ չոլ դուրս գալն ա երկյուղալի...

– Իմ հորեղբայր Սիմոնն էլ ա գրել: Լազարեթից ա գրում, համա տեղը հայտնի չէ: Մի տեսակ անուն են ասում... էն օրը տերտերը ինչքան ման եկավ գրքերում, չգտավ: Ասում ա էդպես քաղաք Ռուսեթու հողումը չկա:

– Նրա ի՞նչն ա որ...

– Ոտիցն ա կպել: Գրում ա, որ ծանր չի, մի ամսից պիտի դուրս գա:

– Աքել ամի, դու երկիր տեսած մարդ ես, էս կռիվն ինչո՞վ կվերջանա,– դարձավ նրան դարբնի տղան: Շատերը ծիծաղեցին, որովհետև Շուղունց Աքելը իր ողջ կյանքում իրենց գյուղից գավառակային ավանից այն կողմը չէր եղել:

Ինքը՝ Աքելը, դժգոհ սաստեց.

– Անհամ անհամի տղա...

Քիչ հետո խոսք ընկավ ձիերի պետական գնի մասին:

– Թեկուզ անունը փող, ի՞նչ կառնվի դրանով...

– Երկու բեռ գարի...

– Էդ էլ չես առնի:

– Դե գոնե գինը տային:

– Տային էլ, որտեղի՞ց ես ձի առնում: Մեր գյուղից որ էսքան ձի են պահանջել, դու տես ամբողջ գավառից քանիսն են բերելու...

– Այ տղա, էս հո կարգին զորք ենք,– և դարբնի տղան բարձր կանչեց.

– Սլուշա՛՛յ... Ափիցեր Աքել Շուղունցով...

– Ա, հերիք տնազ տաս Աքել ամուն:

– Աքել ամիս նեղանալ չի... Դե, շարքով գնացեք, տեսնեմ ով ա ետ ընկել,– ասաց Իվանը և ձին ճանապարհից հանեց:

– Թամամ հաշիվ... Աբրահամի ձին չկա՝ էն ա բազարում, Իսախանենց ձին՝ ոտը գելը ցրիվ ա տվել, մեկ էլ Կոստանդ աղայի սպիտակ ձին...

– Կոստանդը հիմա քնած, ձին էլ ոսկի գարին առաջը... Վեր կկենա, յուղ ու մեղր կուտի, ձին կթամբքի և Կաթնաղբյուր մեզ կհասնի: Նա հո քո հավասարը չի՞, – ասաց Գիլանց Մուքին:

– Մի հաշիվ չի՞... էս գլխից հենց նրա ձին են տանելու,– ասաց Սիմոնը և տխուր նայեց Ցոլակին, որ ականջները խաղացնելով գնում էր մյուս ձիերի կողքով:

– Ոնց չէ,– առարկեց Իվանը,– քո Ցոլակը առաջին նոմերը կհանի, նրանը չէ... Թող Շարմաղ հոքիրն ինչքան ասես լաց լինի,– ձայնը տխուր մեղմացրեց Իվանը:

Սիմոնը վրդովվեց:

– Ուրեմն Կոստանդի սպիտակ ձին ու Ցոլակը մի հավասարի են... նա սպիտակ ձիու արժեքը մի բեռ ոսկի է տվել: Ես ի՞նչ եմ տվել...

– Էս է, սև ու սպիտակ էնտեղ կջոկվի,– ասաց դարբնի տղան և խոսակցությանը վերջ տալու համար սկսեց պատմել, թե իբրև գերմանացիք պայթեցրել են մի ահռելի պարիսպ և ծովը կապել ռուսների հազար–հազար զորքի վրա...

Հանգույցը սյուժեի այն հատվածն է, որտեղից սկսվում է հիմնական կոնֆլիկտը:

5

Արևը բավական բարձրացել էր, երբ ձիավորները հասան Կաթնաղբյուր և Գիլանց Մուքու առաջարկով իջան հանգստանալու: Նրանք ձիերն արձակեցին աղբյուրից ներքև ընկած արոտներում, իսկ իրենք տեղավորվեցին աղբյուրի մոտ և բաց արին ճանապարհի պաշարը:

Այդ աղբյուրը, ուտելու պահանջը, գուցե և այն, որ ճանապարհին հոգնելու չափ խոսել էին պատերազմից, ձիերի հավաքից և օրվա չարիքներից,– այդ ամենը աղբյուրի մոտ նրանց զրույցը փոխեց խաղաղ և սովորական առօրյայի հունով:

Կարծես հունձի ժամանակն էր և ինչպես միշտ, ծփում էին լեռան լանջերի բարձր խոտերը:

Եվ ինչպես ամեն տարի, ահա նրանք ձիերով եկել են սարը:

Հիմա կզրնգան գերանդիները, լորը կթռչի խոտերի միջից և լեռնային կաքավը կկարդա կանաչ սաղմոսը: Դարբնի

տղան հանկարծ նկատեց, որ Շուղունց Աքելը շտապելուց մթնում տրեխները թարս է հագել: Եվ այդ բուռն զվարճություն պատճառեց մյուսներին:

Նրանց զվարթ ծիծաղը լռեց, երբ Գիլանց Մուքին, որ արդեն ալեհեր ծերունի էր, բարձրացրեց օղու առաջին թասը:

– Բարի լույս բացվի մեզ վրա և մեզ նման չարքաշ մշակների վրա... Բարով տեսնենք մեր զավակների ազատությունը սրի բերանից: Ողջություն լինի և արդար լիություն: Դու մեր սրտովն անես,– և ալեհեր գլուխը դարձրեց դեպի ջինջ երկինքը, կարծես նրա անհուն խորքից, մի աչք քաղցր նայում էր այդ խեղճ մարդկանց:

Սիմոնը լուռ էր:

Նա թիկնել էր քարին, թրջում էր հացը պաղ ջրի մեջ և դանդաղ կրծում: Երբեմն նայում էր արածող ձիերին, որոնք գլուխները չէին բարձրացնում ցողապատ խոտից:

Գյուղի ձիերի հետ արածում էր և Ցոլակը:

Սիմոնը մերթ աչքի տակով համեմատում էր ձիու բարձրությունը մյուս ձիերի հետ և տեսնում, որ Ցոլակը նույնիսկ Գիլանց Մուքու ձիուց էլ կարճ է, մերթ հայացքը գցում էր սարալանջի կողմը:

Եվ դժվարին մտքերը խռնվում էին ուղեղում ու ելքը չէր տեսնում: Ահա՝ նորից դռանը կչոքի դառն աղքատությունը, վիզը կծռի ուրիշին, որ իր խուրձերը տուն բերեն, որ խոտը սարից բերեն: Ցոլակին կտանեն, և հնձած արտում խուրձերը անձրևից կսևանան...

Ինչո՞ւ էր Սիմոնը Ցոլակին համեմատում այլ ձիերի հետ:

– Թե Գիլանց Մուքու ձին հավասարվի Ցոլակի հետ... Թե չէ՝ նրանից կարճը չկա...

– Սիմոն, հրե՛ն,– հանկարծ կանչեց դարբնի տղան և Սիմոնը ցնցվեց:

Նա գլուխը ետ դարձրեց:

Հեռվից խաղալով և խայտալով վազում էր սպիտակ ձին, քամին փռփռացնում էր բաշը և ձին լայն կրծքով ճեղքում էր լեռնային օդի սառն ալիքները:

Փոշի չէր բարձրանում գետնից և թվում էր, թե ձիու արագավազ ոտները չեն դիպչում գետնին, և պայտերը զրնգում են օդի մեջ:

Արևը դեմից էր և արևը ոսկևորել էր ձիու մարմար ճակատը, արծաթաձույլ ասպանդակները և պողպատյա սանձը: Ձիավորը ձիու հետ միաձույլ էր և թվում էր, թե արևմուտքի գորշ ամպերի պատվանդանից պոկվել էր մարմարիոնե մի հեծյալ և արշավում էր որպես չքնաղ տեսիլք:

Գյուղացիների զրույցը դադարեց: Բոլորը նայում էին նրա կողմը: Նույնիսկ ձիերից մի քանիսը բարձրացրին իրենց

Գործողությունների զարգացումը սյուժեի այն մասն է, երբ պատկերվում են հերոսների փոխհարաբերություններն ու դեպքերի ընթացքը:

գլուխները և հափշտակված, անասնական ահով նայեցին սպիտակ ձիուն:

Շուղունց Աքելի բերանում հացի պատառը սառել, մնացել էր:

– Այ ձի... Հազար մանեթ գին ունի:

– Տերն էլ պակաս փող չունի:

– Էդ ձին ինձ տան, կռիվ չգնացողը մարդու տղա չի,– ասաց դարբնի տղան:

– Նրա վրա ամենաքիչը գեներալ կնստի...

– Վրան նստողն էլ գեներալ է:

Երբ ձիավորներին հասավ, Կոստանդ աղան սանձը ձգեց և հազիվ կարողացավ պահել ձիու գլուխը: Կապույտ քրտինքի փրփուրը նստել էր ձիու սպիտակ մորթի վրա: Ձին կարմիր ռունգները փնչացնում էր, կանգնած տեղը ոտքերն անհանգիստ դոփում:

– Դուրս գալդ մի սհաթ կա՞, Կոստանդ աղա,– շողոքորթ կեղծությամբ հարցրեց Շուղունց Աքելը, որին շշմեցրել էր այդ տեսարանը:

– Սհաթին չեմ նայել... Մինչև դուք ձիերը նստեք, ես բազար կհասնեմ: Չեմ կարողանում գլուխը պահեմ, ձեռքերս կոտորեց...

Դարբնի տղան կամաց վրա բերեց.

– Տուր ինձ, ես կպահեմ:

Կոստանդն ուզեց ինչ–որ բան ասի, սանձը մի քիչ թուլացրեց, սպիտակ ձին նույն վայրկյանին զգաց այդ և տիրոջ խոսքը մնաց կիսատ:

Գյուղացիները տեսան սպիտակ ձիու ամեհի ոստյունը: Մի ակնթարթից ձին պահվեց սարի հետևը:

– Հրեղեն ձի սրան կասե՞ն...

Քիչ հետո գյուղացիները քաշեցին իրենց ձիերն ու ճանապարհ ընկան:

6

Երկու լեռնաշղթայի արանքում, նեղ հովտի վրա, որի մեջտեղով գլորվում է լեռնային կապույտ գետը, ընկած է այն փոքրիկ քաղաքը, դեպի ուր այդ օրերը լեռնային կածաններով և դժվար արահետներով գնում էին մարդկանց և ձիերի անընդմեջ շարքերը:

Նրանք իջնում էին բարձր լեռներից, որոնց գոգերում, ինչպես լեռնային արծվի բները, ծվարել են քարակոփ գյուղերը: Նրանք ելնում էին մթին ձորերից, ուր խավար խեղճություն կար:

Նրանք գալիս էին բարձրավանդակի տափարակից, որի մեջտեղը ադամանդի նման ջինջ լիճն էր, եղեգների երիզով, քարոտ ափին՝ հին գյուղը, որի կիսավեր վանքը քարափից ցոլք էր գցում ջրերի վրա և թվում էր, թե ջրերի տակ սուզվել է մի մեռած վանք, ու սպիտակ բաղերը գիշերում են նրա մռայլ խորաններում:

Եվ ով հայրենի ճանապարհով հասնում էր այն ծանոթ կետին, որտեղից հանկարծ բացվում էր գետահովիտը, շողշողում էին քաղաքի տների ապակեպատ պատշգամբները, թիթեղյա կտուրները,– ով հասնում էր այդ կետին, ահով էր նայում ներքև, ինչպես արջառը, որին քշում են սպանդանոց և ահա թաց ռունգներով շնչում է թարմ արյան հոտը:

Վրնջում էին ձիերը՝ մետաղաձայն և երկարածոր, ինչպես տխուր երգը, կարծես վերջի հրաժեշտն էին ուղարկում լեռնային կապույտ լճերին, որոնց ջրից խմել էին, տափաստաններին, որտեղ անցել էր նրանց մանկությունը և ամայի գոմերին: Մեկը թավ էր վրնջում, մյուսը՝ արծաթահնչուն, և բարձրանում էր հետևի ոտքերի վրա, ինչպես գազազած ցուլ, ձգում էր սանձը և չէր ուզում իջնել այդ անվերադարձ ուղիով:

Երբ ձիավորները քաղաք հասան, հրապարակում ասեղ գցելու տեղ չկար: Փողոցները, արտերի միջնակները, նույնիսկ տների բակերը սևացել էին ձիերի հազարավոր խմբերից:

Ի՞նչ միջավայր է նկարագրված: Դա ինչպե՞ս կարող է ազդել ընթերցողի վրա:

Կային հազար գույնի ձիեր՝ որձ, էգ, ծանրած և ծեր, քուռակներով և դեռ անծին, թամբած ու մերկ: Նրանց կապոտել էին՝ որին քարից, որին ծառից կամ գետնին խրած սեպից: Կային և իրար կապած ձիերի խմբեր: Մեկի առաջ խոտ էր, մյուսինը հարդ, երրորդը նեղվում էր քաղցից, շոգից և անսովոր միջավայրից: Քաղցած ձիերը պոկոտում էին փողոցի չոր և հազար սմբակի տրորած խոտը:

Ձիերն իրար հետ կռվում էին. ամեն անկյունից վրնջոցի ձայն էր լսվում: Մի տեղ, ձիերի բազմության մեջ, քուռակն իր մորն էր կորցրել և բարակ վրնջոցով կանչում էր, վազվզում, մռութը մոտեցնում ուրիշ մայրերի: Շոգից կատաղած որձաձիերը կտրատում էին կապերը և ամեհի կրքով հալածում էգերին, իրար կրծոտում և արնոտում բաշ ու ազդրերը:

Այդ ժխորին խառնվում էր տերերի կանչն ու աղմուկը, հարայ–հրոցն ու բղավոցը: Հայ, թուրք իրար էին խառնվել: Պետական հրամանը բոլոր գյուղերում կրկնվել էր պաշտոնական կարգադրության գորշ նմանությամբ և մարդկանց ու ձիերի այդ ահագին բազմությունը քշել քաղաք:

Հրապարակի մի անկյունում, տախտակներից շինած փոքրիկ բարձրության վրա, դագաղի նման նեղ սեղանի շուրջը նստել էին իշխանավորները:

Նրանցից հեռու ոտքի վրա էր ստորադաս պաշտոնյաների՝ ուրյադնիկների, տանուտերերի և գյուղական գրագիրների խումբը, իրենց պաշտոնական տարազով, շքանշաններով և պղնձյա ծանր մեդալներով: Ավելի հեռու՝ հպատակների բազմությունն էր, որ ծովի նման ծփում էր:

Եվ բոլորի աչքերն ուղղված էին սեղանի շուրջ նստած չինովնիկների կողմը, որովհետև նրանք էին որոշում ձիու և ձիատիրոջ բախտը:

Գյուղի տանուտերը կարդում էր ձիատիրոջ ազգանունը, բազմության միջից մեկը, ձիու սանձը բռնած, առաջ էր գալիս, ինչպես կրկեսում՝ ըմբիշը: Ապա նրա ձիուն մոտենում էին մի քանի հոգի, տնտղում, ատամները նայում, թղթի վրա ինչ–որ նշումներ անում: Մի վայրկյան խորհրդակցելուց հետո՝ սեղանի մոտ նստած պրիստավը ձեռքով նշան էր անում:

Ահա այդ նշանն էր, որ հայտնի էր դարձնում ամեն ինչ:

Եթե նշանը բազմության կողմն էր, ուրեմն ձին անպետք էր: Ձիու տերը սկզբում երկյուղով, ապա ուրախությունից դողացող ոտքերով քաշում էր ձին և արագ հեռանում: Իսկ եթե նշանը տախտակների մոտ կանգնած ռուս զինվորներին էր ուղղած, ապա նրանք իսկույն մոտենում էին, նոր սանձ հագցնում ձիու գլուխը, հինը շպրտում տիրոջ կողմը, ձին հեռացնում էին, հանձնում ուրիշ զինվորների, որոնք բազմության և տիրոջ աչքի առաջ միահավասար կտրում էին ձիու պոչը, բաշը խուզում և բաշի մազերից կախում տախտակի մի փոքրիկ կտոր: Ձիատերը փորձում էր գնալ իր ձիու հետևից, սակայն բղավում էին նրա վրա և ինչպես պարտված ըմբիշ, նա մնում էր գլուխը կախ: Բազմությունը լուռ դիտում էր այդ տեսարանը: Ապա տանուտերը կանչում էր նրան և շշմած մարդը սթափվում էր, հավաքում այն, ինչ հանձնում էին՝ ձիու սանձը, չվանները, համետը,– և այդ իրերը շալակած անցնում էր հրապարակով դեպի բազմությունը, ձեռքում բռնած թղթի կտորը, որի վրա նշանակված էր ձիու գինը և նրա նախկին տիրոջ ազգանունը:

Գյուղացիները երբ քաղաք իջան, ձիերը կապեցին հրապարակից հեռու: Գիլանց Մուքին և Աքելը առաջ ընկան ամբոխի մեջ գտնելու հարևան գյուղերի մարդկանց: Առաջին հանդիպած ծանոթին, որ նրանցից կանուխ էր եկել, իսկույն հարցրին.

– Հը՛, շա՞տ են տանում...

– Էլ մի ասեք, զուլում ա...

Ինչպե՞ս էին կազմակերպում ձիերի ընտրությունը: Դու ի՞նչ պայմաններ կառաջարկեիր:

Սիմոնը տեսավ իր վաղուցվա ճանաչ թուրքին և նրան մի կողմ քաշելով առանձին հարցրեց, թե ինչպիսի ձիերն են ազատվում, արդյոք կարճահասակ ձին է՞լ են տանում:

– Ձիուդ ոտքը պիտի կոտրած լինի կամ խոր վերք ունենա, որ ազատվի... Թե չէ՝ բոյը հաշիվ չի...

Սիմոնի ոտները թուլացան:

Մինչև այդ խոսակցությունը նա դեռ աղոտ մի հույս ուներ, որ այնուամենայնիվ հույս էր: Այժմ այդ էլ ցնդեց: Նա հուսահատ մոտեցավ ձիուն:

– Ցոլա՛կ,– և ձին վրնջաց այդ ծանոթ կանչից: Կարծեց հիմա խոտ պիտի գցեին նրա առաջը: Սիմոնը հարդով լի պարկը կոխեց նրա գլուխը:

– Ցոլակ... Գնում ես էլի...

Քիչ հետո Գիլանց Մուքին հոգնած վերադարձավ: Նրա ալեհեր դեմքի վրա դառն անհուսություն կար: Եվ հուզված, հևացող շնչով ասաց գյուղացիներին.

– Հիմա Քարագլուխն են կանչում, հետո զիլբիրեցիք են գնալու, նրանցից հետո՝ մենք...

Սիմոնը մի վայրկյան մտածեց, տոպրակը ձիու գլխից հանեց ու ձին քշեց:

– Էդ ո՞ւր, Սիմոն,– ձայն տվավ Սաքու տղան:

– Տանեմ գետը... Կաթնաղբյուրից ջուր չխմեց:

Այդպես փախչում են սարսափից: Այդպես փախում է հոտը, երբ կայծակն ահռելի որոտով խփում է մոտակա ժայռին: Այդպես դողահար վազում է գազանը, երբ հրդեհվում է անտառը:

Սարսափահար փախչում էր Սիմոնը, մոլորվելով քաղաքի փողոցներում, անվերջ մտրակելով ձիուն: Կարծես նրա հետևից էին ընկել հրապարակի բոլոր զինվորները և նրանք, որոնք նստել էին դագաղի նման նեղ սեղանի շուրջը: Ահա հասավ գետափի խուլ փողոցը: Այնտեղ էլ ձիեր կային. նրա նման գյուղի մարդիկ, յուրաքանչյուրն իր ձիու սանձից բռնած և ստրուկի հեզությամբ իր հերթին սպասող:

Նրանք տեսան փախչող ձիավորին և ոմանք կարծեցին, թե ահից սարսափած ձիավորը փախչում է դեպի հեռվի լեռները, ինչպես կփախչի պարտվածը դեպի փրկության բերդը:

Հոգնած ձին մտրակի հարվածից մի քիչ արագացնում էր քայլերը, ապա նորից գնում բեռան տակ մեծացած գյուղական ձիու ծանր քայլերով:

Ահա ետ մնաց վերջին տունը և բացվեց կարտոֆիլի դաշտը: Սիմոնը դանդաղեցրեց ձիու ընթացքը և շունչ քաշեց: Նրան քաղաքի սահմանից դուրս ավելի հեշտ թվաց:

Պատմվածքի այս հատվածում Սիմոնի արարքը հասկանալի՞ է քեզ համար, ընդունելի՞ է, թե՞ ոչ:

Այն հեռվի լեռներից, որոնց լանջին իրենց գյուղն էր, մի անապական զով զարկեց նրա քրտնած դեմքին:

Սիմոնը ծռվեց դեպի աջ, գետը տանող նեղ ճանապարհով: Ձին զգաց գետի սառնությունը և առանց մտրակի արագացրեց քայլերը:

Գետակի հունն իջնելուց առաջ Սիմոնը երկյուղով շուրջը նայեց և տեսավ, որ ամայություն է: Միայն ներքևը, ուռիների ստվերում, ննջում էին կովերը: Ու երբ ծարավ ձին գլուխը կռացրեց ջրի վրա, Սիմոնը ցած թռավ, սանձն ամուր կապեց ձիու առաջին ոտքից և սկսեց հետևի ոտքերը կապոտել:

Ցոլակը կուշտ խմելուց հետո փորձեց գլուխը վեր հանել, բայց չկարողացավ: Եվ մռութը հնազանդ ու մունջ նորից կախեց գետի կապույտ ջրերի վրա:

Սիմոնն անսովոր արագությամբ ձիու համետը հանեց: Արևի տակ փայլփլեց ձիու ողորկ և գեր մեջքը: Ապա նույն արագությամբ կռացավ և գետնից վերցրեց մի չեչաքար: Երբ առաջին անգամ նա չեչաքարը Ցոլակի մեջքին քսեց, ձին հովություն զգաց, խաղացին նյարդերը և հաճելի գրգռից մեջքի մաշկը դողդողաց:

Ապա հանկարծ ձին մեջքին զգաց ծակծկոց: Ձին փորձեց հեռանալ, բայց չկարողացավ, որովհետև ոտքերն իրար պինդ կապված էին:

Նորից փորձեց գլուխը վեր հանել, դարձյալ չկարողացավ: Իսկ ցավը հետզհետե սաստկանում էր, որովհետև Սիմոնը հուսահատ կատաղությամբ չեչաքարը քսում էր նրա մեջքին:

Մի քանի րոպեից մաշկը պլոկվեց և արնոտեց քարը: Ցոլակը տնքում էր, պոչն ուժգին խփում այս ու այն կողմ, գավակն աջ ու ձախ դարձնում, բայց ոչինչ չէր օգնում: Սիմոնն ամբողջ ծանրությամբ ընկել էր ձիու մեջքի վրա և քարը հա՛ քսում էր: Արդեն նոր բացված վերքից արյան կաթիլները դուրս էին ցայտում և գլորվում հևացող կողերի վրայով: Իսկ Սիմոնն ավելի արագ էր քերում, կարծես չեչաքարն ուզում էր թաղել Ցոլակի այնքան գեր ու ողորկ մեջքի մեջ:

Ձին այլևս չդիմացավ, շրջվեց կողքի վրա և մեջքը կիսով չափ թաղեց գետի մեջ: Ցավից և անսովոր վիճակից Ցոլակը ցնցում էր ոտքերը, փռնչում ռունգներով, վիզն ու գլուխը քսում գետափին և փորձում ոտքի կանգնել: Սիմոնն արնոտ չեչաքարը մի կողմ գցեց, ինչպես մարդասպանը դաշույնը և սարսափով նկատեց, որ գետի ջուրն անվերջ կարմրում է, երբ ալիքը զարկում է ձիու մեջքին:

– Չլինի՞ տամար տրաքեց...

Ի՞նչ կարծիք ունես Սիմոնի արարքի վերաբերյալ: Քննարկի՛ր դասընկերներիդ հետ:

Ցոլակի աչքերի առաջ մթնել էր: Գլխիվայր դառնում էին քարերը, գետափը, և թվում էր, թե գետափի փափուկ մամուռը կախվել է երկնքից: Հաճելի էր ջրի մեջ և բնազդաբար կենդանին ավելի խորն էր թաղվում լպրծուն տիղմի և ջրային խոտերի մահիճում: Իսկ վիզն ու գլուխը չէր բարձրացնում կապույտ քարերի բարձից: Սիմոնն արագ արձակեց կապերը, սանձը, ինքը կիսով չափ մտավ ջուրը և գոռալով, աղերսելով, հրելով ու քաշելով մի կերպ բարձրացրեց ձիուն: Ցոլակը դողում էր:

Նրա մեջքի աջ կողմը ափսեի չափ վերք էր բացվել և երևում էր կարմիր, տեղ–տեղ փոս ընկած, ճաքճքած միսը: Արյունը շարունակում էր կաթկթել, բայց մի քանի տեղ արդեն լերդանում էր:

Սիմոնը հանցագործի հապճեպությամբ արյան հետքերը լվաց ձիու կողերից, իր ձեռքերից, տիղմի բարակ շերտով ծածկեց վերքը, ջրախոտերով ծածկեց, ապա շտապ համեմատեց ձին և դուրս եկավ ճանապարհը:

Գրի՛ր, թե ինչ շարունակություն ես պատկերացնում, հետո շարունակի՛ր ընթերցումը: Վերջում համեմատի՛ր քո և Բակունցի տարբերակները:

Ձին հազիվ էր քայլերը փոխում:

Սիմոնն ինչքան էլ կանչում էր, ոտքով փորին խփում, փաղաքշական խոսքեր ասում, ձին չէր արագացնում քայլերը: Եվ Սիմոնն ու Ցոլակը նույն փողոցներով գնացին դեպի հրապարակը: Երկուսն էլ գլխիկոր էին: Մարդն իր դաժան խոհի հետ էր՝ կտանե՞ն այժմ, թե ոչ, ձին հազիվ տնքում էր, պղտոր աչքերի առաջ գլխիվայր կախված մի չնաշխարհիկ արոտ...

7

Իսկ հրապարակն այդ ժամանակ ծփում էր մի արտասովոր դեպքից: Փողոցներում խռնված բազմությունից ոմանք բարձրացել էին պատերի և պատուհանների վրա, որ ավելի լավ տեսնեին, թե ի՞նչ է կատարվում մեջտեղը: Ոմանք բարձրացել էին ձիերի վրա: Ոտքի էին և կենտրոնում սեղանի շուրջը բոլորած մարդիկ:

Մի կապտավուն ձի՝ երկար, ծալեծալ բաշով, բոլորովին մերկ, կատաղած վազում էր հրապարակով: Նա երամակի ձի էր, սնվել էր լեռներում, երբեք հեծվոր չէր նստել մեջքին, սանձը չէր դիպչել մռութին, սմբակները պայտ չէին տեսել: Այդ ձին էին ուզում բռնել զինվորները, որոնք երկար պարանները թևերին փաթաթած շպրտում էին գերության օղակը, հենց որ ձին մոտենում էր նրանց: Բայց ձին ամեհի ոստյուն էր անում, թռչում օձի նման գալարվող օղակի վրայով և փախուստի ելք փնտրում: Զինվորների մյուս խմբերը

գազանային ոռնոցով կտրում էին նրա ճանապարհը և ետ փախցնում դեպի նրանք, որոնք ոլորում էին նոր օղակ:

Գյուղացիները շունչ պահած, անսահման հետաքրքրությամբ դիտում էին կապտավուն նժույգի գազազած վազքը: Նրանք չէին թաքցնում իրենց հրճվանքը, երբ ձին թռչում էր օղակի վրայով: Նրանց բոլորի թաքուն ցանկությունն էր, որ ձին ճեղքեր զինվորների շղթան և հրեղեն հրաշքի պես աներևութանար, թռչեր դեպի հայրենի լեռները և այնտեղից պղնձաձայն վրնջար հատուցման և անսահման ազատության երգը:

Մարդիկ մի պահ մոռացել էին իրենց ձիերը, որոնց զինվորները կապել էին փշալարի ցանկապատի հետևը,– մոռացել էին, որ ձիերի սանձերն ու չվանները շալակած, ոտքով պիտի բարձրանային դեպի լուռ գյուղերը, որոնց դաշտերում այլևս չէին վրնջալու փշալարով անջատված ձիերը:

Հանկարծ բազմությունը հառաչեց, լսվեց խուլ գվվոց, ինչպես հողմի շառաչն անտառում: Զինվորները վազեցին փշալարի կողմը: Մի վայրկյան ճեղքվեց բազմությունը, ինչպես ծովի սև ալիքները, երբ երևում է մութ անդունդը, ապա նորից կլանեց ամեն ինչ:

Կապտավուն նժույգը վերջին հուսահատ ոստյունն էր արել, փորձել էր թռչել փշալարի վրայով և ընկել էր լարի երկաթյա սուր փշերի վրա... Ճեղքվել էր կուրծքը, փորը և վշշում էր արյունը լարերի վրա, մահվան հրապարակի վրա և մեռնող նժույգի ջինջ աչքերում ընդմիշտ սառչում էր հեռվի կապույտ լեռնաշխարհը...

Զինվորները ձիու սառած մարմինն իջեցրին փշալարից: Բժիշկն արձանագրություն կազմեց և վերադարձավ սեղանի շուրջը, որպեսզի նույն գորշ տաղտկությամբ շարունակեն գործը:

Սիմոնը յուրայիններին նույն տեղը չգտավ: Նրան ասացին, որ արդեն իրենց գյուղացիներին կանչում են: Եվ բազմությունը հրելով, ձին հետևից՝ հասավ հրապարակը, որի մի կողմը կանգնել էին դարբնի տղան, Գիլանց Մուքին, Աքելը և մյուսները: Գրագիրը կարդում էր անունները:

– Այ մարդ, ո՞ւր կորար, քիչ մնաց քեզ շտրաֆ անեն: Ասացինք հրես կգա:

Ամենից առաջ Շուղունց Ալեքին կանչեցին: Դողդողալով նա առաջ անցավ, մի անգամ էլ ետ նայեց համագյուղացիներին, կարծես նրանց ներկայությունը հուսադրում էր նրան:

Մոտեցան և զննեցին նրա ձիուն: Ու մեկ էլ զինվորները վրա տվին, ձիու համետն արձակեցին և շպրտեցին Աքելի կողմը: Ձեռքը վերևից հայտնեց վճիռը: Զինվորները

Տետրում գծի՛ր այսպիսի աղյուսակ և ներկայացրո՛ւ պատմվածքի երեք ձիերին:

սպիտակ ձի	Ցոլակ	կապույտ ձի

Բնութագրի՛ր նրանցից յուրաքանչյուրի դերը պատմվածքում:

քաշեցին ձին: Աքելը հրապարակում մնաց մի րոպե, նայեց ձիու հետևից և անխոս վերադարձավ, մեջքին ձիու համետը:

Դարբնի տղան սրախոսեց.

– Ափիցեր Աքել Շուղունցով,– բայց ոչ ոք չծիծաղեց: Դարբնի տղայի ժպիտն այլանդակ կծկվեց և դեմքի վրա սառեց, որպես դառնության կնիք:

Հետո Ռուստամենց ճակատը նշան ձին տարան: Գնաց և տերտերի ձին: Ժամհարը գլուխը կախ եկավ:

– Հիմա ես տերհորն ի՞նչ պատասխան եմ տալու...

Չորրորդ հերթը Կոստանդինն էր: Գյուղացիները զարմացան, երբ լսեցին նրա ազգանունը, որովհետև Կոստանդը նրանց մեջ չկար: Դարբնի տղան նկատեց, որ սեղանի շուրջը նստողների մեջ ինչ–որ փսփսոց ընկավ: Հրապարակի մյուս կողմից երևաց Կոստանդը՝ լղար, մեջքը փոս ընկած, մոխրագույն մի ձի հետևից: Թվաց, թե նույնիսկ չնայեցին նրա կողմը և ձեռքը վերևից նշան տվեց, որ Կոստանդն ու ձին հեռանան հրապարակից: Այդ այնքան արագ կատարվեց, որ գյուղացիներից շատերը չհավատացին իրենց աչքերին, թե այդ «խեղճ» գյուղացին Կոստանդ աղան է: Նրանք մնացել էին ապշած: Իսկ Կոստանդը կեղծ ուրախությամբ ետ տարավ ձին և անհայտացավ:

Դարբնի տղան Սիմոնի ականջին շշնջաց.

– Տեսա՞ր, որ ասում էի...

Երբ մոտեցավ, վերցնել տվին ձիու համետը և մի ակնոցավոր ռուս, որ անասնաբույժ էր, քիթը վեր քաշելով կռացավ վերքի վրա:

– Չտարան,– անցավ Սիմոնի մտքով: Բայց մարդը բարկացավ և մատը թափ տվեց Սիմոնի վրա: Նա հայհոյում էր: Սիմոնը վախից դողաց, գունատվեց և նստեց համետի վրա: Ձինվորները Ցոլակին տարան: Սիմոնը տեսավ, թե ինչպես իր ձիու երկար պոչը սուր մկրատով կտրեցին: Եվ իսկույն աչքին այնպես երևաց, ասես Ցոլակը մեծացավ և դարձավ ղազախի ձի:

Գյուղական գրագիրը բղավեց նրա վրա: Նա սթափվեց և բեռը շալակին վերադարձավ յուրայինների մոտ:

8

Արևն արդեն թեքվել էր, երբ գյուղացիները ճանապարհ ընկան տուն: Ազատվել էին միայն ութ ձի, որոնց վրա բարձել էին մնացած ձիերի համետները: Գյուղացիներից ոմանք իրենք էին շալակել ձիերի սանձերն ու չվանները: Ազատված ձիերը, որոնցից երեքը ծուռոտ էին, մեկի մեջքն էր փոս

ընկած, երկուսը քոս էին, իսկ Հաբեգանց ձիու երկու կողոսկրը չկար,– ազատված ձիերը հազիվ էին քայլում ծանր բեռան տակ:

Սիմոնը գլուխը կախ գնում էր մյուսների հետ: Դարբնի տղան էլ լուռ էր, որովհետև ոչ ոք սիրտ չուներ նրան լսելու: Նրանք անընդհատ բարձրանում էին լեռը, կարծես պիտի գնային մինչև մութ երկինքը: Մայրամուտի արևը աջ կողմից նրանց ոսկեվորել էր: Նեղ արահետով գնում էին նրանք իրար հետևից, ինչպես կռունկի երամ և թվում էր, թե բեռների տակ կքած սև ստվերները հավիտյան պիտի բարձրանային մութ լեռը, մինչև մի խավար անդունդ հանկարծ կլաներ նրանց:

Սիմոնը ձիու չվաններից և սանձից զգում էր Ցոլակի ողորկ մարմնի ծանոթ հոտը: Եվ մի միտք, ծանր բեռից ավելի դժվար ծանրությամբ, նստել էր նրա գլխում և նա խոնարհել էր գլուխը: Բայց փակ աչքերով էլ տեսնում էր արնոտ չեչաքարը:

– Հենց իմ փիսությունը մնաց, Ցոլա՛կ... Հիմա հազար ձիու մեջ անտեր խրխնջում ես... Ցարաբ տեսնես արյունը ցամաքե՞ց:

Եվ նա բուռը լայն բաց արեց, այն բուռը, որով բռնել էր քարը:

Բռի մեջ ստացականի կտորն էր, վրան Ցոլակի գինը և իր ազգանունը:

Արևի մայր մտնող շողերը հրդեհել էին ամպերը, ներկել արնոտ գույնով: Լեռների սև ստվերները ավելի վառ էին ցոլացնում ամպերի կարմիրը: Կաթնաղբյուրի արոտներում և սարալանջում էլ ոչ մի կաքավ չէր կարդում և ոչ լոր էր ճկում: Քնել էին քարերը, խոտերը, անբան հավքերը և լեռների վրա իջել էր իմաստուն մի երեկո:

Կաթնաղբյուրից նրանք ջուր խմեցին և հացի փշրանքները թաթախեցին սառը ջրում: Մութն ընկնում էր և ճանապարհ դեռ շատ կար:

Սիմոնը նայեց ներքև... Ա՛յ, այստեղ արածում էր Ցոլակը, նրա ատամների արանքում երևի դեռ մնում է այս դաշտերի խոտը: Իսկ ինքը պառկել էր այս քարի տակ և մի լույս ճառագայթ խոստանում էր զվարթ վերադարձ: Ու ետ նայեց Սիմոնը: Այնտեղ, ներքևը, խավար էր, խավարի մեջ քաղաքը և քաղաքի փշալարյա վանդակում աղիողորմ վրնջում էր իր հույսը, իր Ցոլակը:

Հանկարծ Կաթնաղբյուրից ներքև, քարերի վրա, զրնգացին ծանր պայտերը: Գյուղացիները ճանապարհից դուրս եկան և մի կողմ քաշեցին բեռնած ձիերը:

Ինչո՞ւ է պատմվածքը վերնագրված «Սպիտակ ձին»: Արդա՞ր է արդյոք Կոստանդ աղայի ձիուն ազատելը:

Գագաթնակետը (կուլմինացիա) դիպաշարի ամենալարված աստիճանն է, որից հետո կոնֆլիկտը ստանում է իր **լուծումը**:

Հեծվորը Կոստանդ աղան էր, սպիտակ ձիու վրա... Միայն Շուղունց Աքելը կիսաբերան ընդունեց նրա ողջույնը: Մյուսները քարի նման լուռ էին: Դարբնի տղան ատամները սեղմելով զայրացավ.

– Տեսա՞ր, Սիմոն, սևն ու սպիտակը...

Սպիտակ ձին մի վայրկյան ցոլաց մթնող արևի շողերում և չքացավ դեպի նարնջագույն ամպերը: Կարծես մարմարիոնե մի արձան արշավում էր դեպի պատվանդանը, որ իր անհաս բարձունքից ահ ու սարսափ մաղի ռամիկ գյուղացիների վրա:

9

Կեսգիշեր էր, երբ տուն հասան:

Դռան մոտ կանգնել էր Շարմաղ բիբին, ճրագը ձեռքին: Սիմոնը ներս մտավ, տոպրակն ու սանձը գցեց մի անկյուն: Անկողնից վեր թռավ Շողերը:

– Ապի՛, բա Ցոլա՞կը:

Աղջկա միամիտ հարցին, որպես պատասխան, դուրսը, լեռնային գյուղի սառը խավարում, վրնջաց անմայր մի քուռակ: Կարծես բազմաթիվ մանր զանգակներ երգեցին անեզրական տխրություն:

Շարմաղ բիբին սարսուռով վրա դրեց դուռը, և հին դուռը մի անգամ էլ երգեց երկար ու կերկեր, արևելյան թախծոտ մի երգ:

Համեմատի՛ր պատմվածքի նախաբանը և վերջաբանը:

Պառավը լալիս էր...

Հետո քանի երեկո իջավ, և զանգեր զարկեցին, բայց մինչև մահ, իրիկնապահին նա ոչ դուռը բացեց և ոչ էլ զանգերի ղողանջը որպես անանձնական օրհնություն ներս մտավ նրանց սև խրճիթը...

բիբի հորաքույր. տարեց կնոջը դիմելու բարբառային ձև
բայղուշ բու, փոխաբերաբար՝ չարագուշակ մարդ
սհաթ (սահաթ) ժամ, ժամանակ
յանի իբր, **յանի թե** իբր թե
հալբաթ երևի, թերևս, հավանաբար
կալել (կալնել) փակել, մուտքը կալել՝ մուտքը փակել
համետ փալան, գրաստի՝ ձիու, ավանակի, ջորու մեջքին դնելու հարմարանք բեռ բարձելու, ինչպես նաև նստելու համար
չվան պարան
արմանալ զարմանալ
յավայավա խոսել ավելորդ, անմիտ, հիմար, անկիրթ խոսք, ափեղցփեղ խոսել (ափից դուրս եկած և ցփնված խոսք), օդի մեջ կրակել (խոսել)
լազարեթ հիվանդանոց
Ռուսեթ Ռուսաստան
սլուշայ լսիր (ռուսերեն)
ափիցեր սպա (ռուսերեն)
թամամ ամբողջ, ամբողջովին, լիովին

նոմեր թվահամար, հերթի համար
ասպանդակ ձիու, ջորու թամբից կախված ոտնատեղ
ամենաքաշը ամենից ցածր, ամենաքիչը
արջառ ջահել եզ
ռունգեր (ռունգներ) քթի անցք, քթանցք
արտերի միջնակ վարած արտերի միջև առանց վարելու թողնված մաս
ծանրած հղի կենդանի
սեպ ծայրը սուր փայտյա կամ մետաղյա ձող փայտը ճեղքելու համար, ցից անասուններին կապելու համար
հարդ ցորենի (նաև գարու, մյուս հացազգիների) չոր ծղոտը, դարման
ուրյադնիկ գավառային ոստիկանության ցածր պաշտոնյա, կազակական բանակի ենթասպա
չինովնիկ աստիճանավոր, պետական պաշտոնյա
պրիստավ տեղական ոստիկանության պետ
զուլում աղետ, մեծ չարիք, սաստիկ ծանր
չեչաքար թեթև ծակոտկեն քար
գավակ ձիու ետևի կողմը՝ մինչև մեջքն ընկած մասը
տամար երակ
մահիճ անկողին
շտրաֆ տուգանք (ռուսերեն)
հրես հիմա, ուր որ է, այս րոպեիս, իսկույն, նաև ահավասիկ, ահա այստեղ
լղար նիհար, մաշված, տրորված
ճկալ թռչունի ընդհատ–ընդհատ ձայն, ճվոց
յարաբ արդյոք

Ամփոփիչ գործնական աշխատանք

Դու արդեն գիտես, թե ինչ է կերպարը: Առանձնացրո՛ւ պատմվածքի կերպարները: Դասարանում քննարկի՛ր, թե նրանցից ով է գլխավոր և ով՝ երկրորդական: Հիմնավորի՛ր ընտրությունդ: Կերպարներից մեկի անունից գրի՛ր նրա կյանքի երեք օրվա օրագիրը: Ազա՛տ եղիր քո երևակայության աշխարհում:

Կազմակերպե՛ք գրական դատ՝ քննելով Սիմոնի և Կոստանդ աղայի արարքները: Անհրաժեշտ են դատավոր, ընթերականեր, փաստաբաններ, մեղադրող և պաշտպանող կողմեր:

Անդրադարձ

Դու ծանոթացար արձակագիր Ակսել Բակունցի կյանքին և նրա «Սպիտակ ձին» պատմվածքին: Իմացար նաև՝ ինչ է դիպաշարը և ինչ մասերից է բաղկացած: Առանձնացրո՛ւ այս պատմվածքի դիպաշարի մասերը: Արդիակա՞ն է պատմվածքի գաղափարը:

Պատկերացրո՛ւ, որ դու զբոսավար ես և զբոսաշրջիկների համար պիտի շրջագայություն կազմակերպես Բակունցի հայրենի Սյունիքում: Տեսարժան վայրերի ցանկ կազմի՛ր, դրանց մասին նյութ պատրաստի՛ր:

Սյուժեի բաղադրիչները պահպանելով՝ գրի՛ր պատմվածք և դասընկերներիդ հետ գրքույկ պատրաստի՛ր:



ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ

(1900-1969)

Նաիրի Զարյանի իսկական անուն-ազգանունը Հայաստան Եղիազարյան է:

Կյանքը, ուսումնառությունը: Նաիրի Զարյանը ծնվել է 1900 թվականի դեկտեմբերի 31-ին, Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի **Խառակոնիս** գյուղում:

1915 թվականին, փրկվելով Եղեռնից, Զարյանը գաղթում է Արևելյան Հայաստան: Այստեղ նա ապաստանում է **Երևանի** և **Դիլիջանի** որբանոցներում: Որբանոցներում էլ նա ստանում է միջնակարգ կրթություն: Ավարտել է նաև Երևանի թեմական դպրոցը: Սովորել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետում: 1933-ին ավարտել է **Լենինգրադի** (այժմ Սանկտ Պետերբուրգ) արվեստագիտության պետական ակադեմիայի գրական բաժնի ասպիրանտուրան:

1935 թվականին **«Ստալին»** բանաստեղծության համար Զարյանն արժանացել է պետական բարձրագույն պարգևի՝ Լենինի շքանշանի:

1920-1930-ական թվականներին Նաիրի Զարյանը եղել է մի շարք գրական պարբերականների պատասխանատու քարտուղար և խմբագիր: Այդ շրջանում, հատկապես 1930-ական թվականներին, լինելով գրական և հասարակական դաշտի ամենաակտիվ գործիչներից մեկը, Նաիրի Զարյանը բուռն մասնակցություն է ունեցել ստալինյան անհատի պաշտամունքի հաստատմանը: Ավելին՝ այդ դիրքերից քաղաքական մեղադրանքներ է հնչեցրել Եղիշե Չարենցի, Ակսել Բակունցի, Մկրտիչ Արմենի, Գուրգեն Մահարու և ուրիշների հասցեին՝ ըստ էության դառնալով նրանց բանտարկությունների, գնդակահարությունների ու աքսորի մեղավորներից մեկը:

1944-1946 թվականներին Նաիրի Զարյանը եղել է Հայաստանի գրողների միության վարչության նախագահը: 1951-1958 թվականներին եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Կյանքի վերջին տարիներին Նաիրի Զարյանը գրեց **«Սպասում եմ քեզ»** ժողովածուն, որը լույս տեսավ 1968 թվականին: Այստեղ Զարյանը զղջումի բազմաթիվ խոսքեր հնչեցրեց՝ փորձելով մաքրագործել 1930-ական թվականների իր գործունեության արատավոր կողմերը:

Մահացել է 1969 թվականի հուլիսի 12-ին Երևանում:



Տեսարան Նաիրի Զարյանի ծննդավայր Խառակոնիս գյուղից

Ստեղծագործությունը: Նաիրի Զարյանը բազմաժանր գրող է՝ բանաստեղծ, արձակագիր, թատերագիր: Նրա առաջին բանաստեղծությունը տպագրվել է 1918 թվականին, երբ նա դեռ որբանոցի սան էր:

1920-ական թվականներին Զարյանը շատ արագ արձագանքեց ձևավորվող նոր գրական շարժումներին, և, կարելի է ասել, դարձավ պրոլետարական գրականության դեմքերից մեկը: Այդ գրականության նպատակներից մեկը անցյալի ժխտումն էր և նոր ժամանակների, նոր կյանքի գովերգումը: Զարյանի այդ շրջանի գործերը՝ **«Զրանցքի կապույտ երկրում»** ժողովածուն, **«Հրանուշը»**, **«Ռուշանի քարափը»** պոեմները, **«Հացավան»** վեպը և շատ այլ գործեր գրված են այդ ոգով:

Նաիրի Զարյանը ստեղծագործել է հետևյալ ժանրերով՝ **բանաստեղծություն**, **պոեմ**, **վեպ**, **հուշագրական վեպ**, **պիես**, **դրամա**, **կատակերգություն**, **ողբերգություն**:

Նաիրի Զարյանը վերամշակել է **«Սասնա ծռեր»** էպոսը արձակ շարադրանքով և վերնագրել **«Սասնա Դավիթ»**:

Ստեղծագործական բոլորովին այլ որակներով դրսևորվեց Նաիրի Զարյանի տաղանդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Այդ շրջանի բազմաթիվ բանաստեղծություններ, ինչպես նաև **«Զայն հայրենական»** պոեմը և **«Արա Գեղեցիկ»** դիցապատմական ողբերգությունը Զարյանի լավագույն ստեղծագործություններն են:

Հետագա տարիներին Զարյանը հեղինակեց կատակերգություններ, գրեց **«Պարոն Պետրոսն ու իր նախարարները»**, **«Երկրորդ կյանք»** ինքնակենսագրական վեպերը, հրատարակեց բանաստեղծական ժողովածուներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Պարզի՛ր, թե ինչու է բանաստեղծը ընտրել Նաիրի Զարյան գրական անունը:
2. Պարզի՛ր, թե ինչով է հայտնի Զարյանի ծննդավայր Խառակոնիս գյուղը:
3. Վանա լճի մասին ի՞նչ ավանդազրույցներ կան: Դրանցից մեկը ներկայացրո՛ւ դասընկերներիդ:
4. Եթե հանդիպեիր Նաիրի Զարյանին, ի՞նչ հարցեր կտայիր: Քո կազմած հարցերը քննարկիր դասընկերներիդ հետ:
5. Ընթերցի՛ր «Երկրորդ կյանք» ինքնակենսագրական վեպից մի հատված: Գրի՛ր հարցազրույց հեղինակի հետ:
6. Գրողի կյանքի ո՞ր դրվագը գրավեց քո ուշադրությունը, ինչո՞ւ:

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Այս գիշեր տեսա մի անուշ երազ.
Ես իմ հայրենի տունն էի նորոգում,
Մանկության երկինքն էր բացվել վրաս,
Եվ արշալույսներ կային իմ հոգում:

Այնտեղ էր մայրս, հայացքը պայծառ,
Մայրենի լեզվով խոսում էր առուն,
Խշշում էր բակում հինավուրց մի ծառ...
Այնպես ծանո՛թ էր և այնպես գարո՛ւն...

Երդիկից կաթած շողն արեգական
Թվում էր հոգուս ոսկյա բանալի,
Արևն էր նայում աչքով մայրական,
Եվ քաղցր էր աշխարհն ու հասկանալի...

Բանաստեղծությունը կազմված է բանաստեղծական տողերից: Տողերը միավորվում են՝ ձևավորելով **բանաստեղծական տներ**: Տները անվանվում են ըստ պարունակած տողերի քանակի: Այսպես, երկու տող պարունակողը կոչվում է դիստիքոս, երեք տող պարունակողը՝ տերցին, քառատողը՝ քատրեն և այլն:
«Հայրենի տուն» բանաստեղծությունը բաղկացած է քառատող տներից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրի՛ր հնարավորինս շատ բառեր, որոնք, ըստ քեզ, առնչվում են *կարոտ* բառին: Այդ բառերով հորինի՛ր ասույթներ:
2. Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր այն բառերը, որոնք, ըստ քեզ, ուրախ և դրական իմաստ ունեն: Այդ բառերով վերաշարադրի՛ր բանաստեղծության բովանդակությունը:
3. Վենի դիագրամի միջոցով համեմատի՛ր «Հայրենի տուն» և Վահան Տերյանի «Կարծես թե դարձել եմ ես տուն» բանաստեղծությունները:
4. Քո կարծիքով՝ ինչո՞ւ է բանաստեղծը մանկության մասին գրել:
5. Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր քեզ ամենից շատ դուր եկած տողը և մեկնաբանի՛ր այն:
6. Հինգ րոպեում մտքերդ շարադրի՛ր «Իմ հայրենի տունը» վերնագրով:



ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

(1889-1938)

Թոթովենցը եղել է զորավար Անդրանիկի թիկնապահ-թարգմանիչը:

Թոթովենցը բազմաժանր հեղինակ է: Գրել է **բանաստեղծություններ**, **արձակ բանաստեղծություններ**, **պատմվածքներ**, **վիպակներ**, **վեպեր**, **պիեսներ**, **հոդվածներ**, **դիմանկարներ**:

Կյանքը, ուսումնառությունը: Վահան Թոթովենցը ծնվել է 1889 թվականի հուլիսի 18-ին Արևմտյան Հայաստանի Խարբերդ գավառի **Մեզիրե** քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է Խարբերդի ազգային կենտրոնական վարժարանում: Ավարտելով վարժարանը՝ 1908-ին, մեկնում է Պոլիս: 1909-ին Թոթովենցը Պոլսից հեռանում է Փարիզ, ապա՝ տեղափոխվում **Նյու Յորք**: 1912-ին ընդունվել է Վիսքոնսինի համալսարան, որտեղ սովորել է գրականություն, պատմություն և փիլիսոփայություն:

1915 թվականին ամերիկահայ այլ կամավորների հետ մեկնել է կովկասյան ռազմաճակատ, կռվել է **Վանում**, **Էրզրումում**: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Թոթովենցը կրկին մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ: 1922-ին վերադարձել է Հայաստան: 1924-1932 թվականներին Թոթովենցն աշխատել է Երևանի պետական համալսարանում, դասավանդել անգլերեն և արտասահմանյան գրականություն:

Վահան Թոթովենցը նույնպես զոհ դարձավ 1930-ական թվականների ստալինյան բռնություններին: 1936-ին նրան բանտարկեցին:

Գնդակահարվել է 1938 թվականի հուլիսի 18-ին՝ հենց իր ծննդյան օրը:

Թոթովենցի անունով Երևանում անվանակոչվել են դպրոց և փողոց:

Ստեղծագործությունը: 1907 թվականին «Արևելյան մամուլ» ամսագրում տպագրվում է Վահան Թոթովենցի առաջին բանաստեղծությունը: Կոստանդնուպոլսում 1908 և 1909 թվականներին հրատարակում է **«Ավերակ»** և **«Սրինգ»** գրքույկները, որոնք նրա այդ տարիների քերթվածներն էին ամփոփում:

Թոթովենցի գրական տաղանդը առավել բազմակողմանի արտահայտվեց 1920-ական թվականներից սկսած: Մեկուկես տասնամյակի ընթացքում նա գրեց պիեսներ, վեպեր, վիպակներ, տասնյակ պատմվածքներ, ֆելիետոններ: Նրա առավել ուշագրավ երկերից են **«Նոր Բյուզանդիոն»** դրաման, **«Ամերիկա»** պատմվածաշարը, **«Բաքու»** եռահատոր վեպը, **«Հովնաթան որդի Երեմիայի»** վիպակը և այլն: 1933-ին լույս տեսավ Թոթովենցի **«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»** ինքնակենսագրական վեպը, որտեղ գրողը պատմում է իր մանկության, հայրենի քաղաքի, ծնողների ու ընտանիքի մասին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որտե՞ղ է ծնվել Թոթովենցը: Խարբերդի մասին տեղեկություններ հավաքի՛ր և կազմի՛ր նրա կյանքի տարեգրությունը:
2. Ներկայացրո՛ւ Թոթովենցի կյանքի հետագիծը քարտեզի վրա:
3. Ի՞նչ կրթություն է ստացել նա և ինչպե՞ս դա ազդեց դա նրա հետագա կյանքի վրա:
4. Ինչո՞վ էր զբաղվում Թոթովենցը Հայաստանում:
5. Ի՞նչ հանգամանքներում նա կնքեց իր մահկանացուն: Ո՞ր հայտնի գրողներն արժանացան նույն ճակատագրին: Ինչո՞ւ:
6. Ի՞նչ ժանրի ստեղծագործություններ է գրել Վահան Թոթովենցը: Նշի՛ր ժանրը և ստեղծագործության վերնագիրը:
7. Ի՞նչ ընդհանրություններ և տարբերություններ կան Վահան Թոթովենցի և քեզ ծանոթ մյուս գրողների կենսագրությունների միջև:

Թոթովենցի ստեղծագործությունների հիման վրա են նկարահանվել **«Կտոր մը երկինք»** և **«Ճերմակ անուրջներ»** գեղարվեստական կինոնկարները:

Թոթովենցի կյանքի հետաքրքիր դրվագներին ավելի մանրամասն ծանոթանալու համար դիտի՛ր **«Վահան Թոթովենց. գաղտնի թղթապանակ»** տեսաֆիլմը:

1934-1936 թթ. Վահան Թոթվենցը բնակվել է Երևանի Աբովյան 32 հասցեում գտնվող այս շենքում:

Մտածի՛ր և քննարկի՛ր դասընկերներիդ հետ:

Ի՞նչ է անում նկարում պատկերված երեխան: Որո՞նք են եղել մանկության քո սիրելի խաղերը: Արդյոք ժամանակակից սարքերը կարո՞ղ են փոխել երեխաների վերաբերմունքը խաղի նկատմամբ:

ԿՅԱՆՔԸ ՀԻՆ ՀՌՈՎՄԵԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ

(հատված)

Ես քաղաքում համարվում էի լավ թռուցիկ շինողներից մեկը: Շինում էի մեծ տրամագծով, երկար պոչով, գույնզգույն և փռփռան: Ամառ երեկոները, երբ մեր կտուրների վրայով և փողոցների միջով անցնում էր զարմանալի քնքուշ քամին, մենք բաց էինք թողնում թռուցիկները ամենաբարձր կտուրներից, երբ դեռ արևը, վիթխարի ծիրանի նման, լողում էր դիմացի սարերի կապույտ անկողնում: Մանիշակագույն մութը բարձրանում էր դաշտից, մանիշակագույն մե՛ծ-մե՛ծ քողեր կախվում էին և երկնքից թափվում էին աստղե՛ր, աստղե՛ր, ավելի առատ, քան որևէ երկնքում, այն ժամանակ արդեն մեր թռուցիկները սավառնում էին կապույտ եթերում գույնզգույն և մեծ լապտերներով: Երբ կապույտը խտանում էր, թռուցիկներն այլևս չէին երևում, միայն լապտերներն էին, որ լողում էին երկնքում, երփներանգ և վառ, կարծես տեղահանված և օրորվող լուսիններ լինեին, որ թափառում էին և չէին կարող գտնել իրենց ծիրը: Ամեն երեկո քաղաքի վրա լողում էին այսպիսի տասնյակ լուսիններ: Պատահում էր, որ հանկարծ նրանցից մեկնումեկը այրվում էր. ահա բոցի մի խոշոր լեզու, միայն մի պահ, և չկա:

Ըստ այս հատվածի՝ մոտավորապես քանի՞ տարեկան է հեղինակը: Ի՞նչը քեզ հուշեց դա:

Մի օր ես բարձրացրել էի թռուցիկը ու թելի ծայրը կապել կտուրի լողին և, անհո՛գ ու գոռո՛զ, ընկողմանել էի կտուրի մի

անկյունը և դիտում էի թռուցիկիս սավառնումը: Նա սավառնում էր ավելի բարձր, քան բոլոր կտուրներից բարձրացող թռուցիկները: Հանկարծ նշմարեցի, որ լողը գլորվում է: Մինչև հասա, լողն ընկավ երեք հարկանի կտուրից ներքև, ուղիղ փողոցի մայթի վրա: Սարսափահար ես կռացա և նայեցի կտուրից ներքև՝ ստուգելու համար, թե արդյոք որևէ մեկի վրա ընկե՞լ է: Մայթը դատարկ էր և ո՛չ ոքին չէր վնասել, բայց իմ սարսափն ավելի աճեց այն հեռապատկերից, որ կարող էր ընկնել մի մարդու վրա, սարսափն ավելի ու ավելի աճեց, երբ պատկերացրի, որ կարող էր ընկնել հորս վրա, որ առհասարակ այդ ժամին էր վերադառնում տուն: Աչքերս մթնեցին, հազիվ կարողացա ինձ ետ քաշել քիվից և վազեցի ներքև, կտրեցի թռուցիկի թելը, սկսեցի արագ կերպով կծկել: Թռուցիկը եկավ-փաթաթվեց մեր տան դիմացի պարտեզի բարձր թթենուն: Քաշեցի: Ավելի փաթաթվեց: Մտածում էի բարձրանալ ծառը և ազատել թռուցիկը, բայց հանկարծ հորս էշի զռոցը պայթեց փողոցում: Քաշեցի, պոկեցի թելն ու բարձրացա հորս սենյակը և լուսամուտից սկսեցի դիտել փողոցը: Ուզում էի իմանալ, թե հայրս պիտի նշմարի՞ լողը: Նշմարեց և հարցրեց ծառային.

– Լողն ինչո՞ւ ընկեր է փողոցը:

Ծառան անմիջապես չկարողացավ պատասխանել, էշի սանձից բռնած՝ մոտեցավ լողին և տեսավ թռուցիկի թելի մնացորդը լողի վրա: Ծառան անմիջապես գլխի ընկավ և բացատրեց հորս:

– Կանչե՛ քովս, տեսնամ,– պատվիրեց հայրս ծառային և վեր բարձրացավ: Ես անմիջապես որոշեցի անելիքս. ցատկեցի լուսամուտից ներքև և անմիջապես բարձրացա այն խոշոր պահարանը, որտեղ դարսվում էին անկողինները: Պահարանը ծածկվում էր վարագույրով: Բարձրացա անկողինների վրա և պառկեցի, որովհետև գլուխս դիպչում էր առաստաղին: Ծառան ամեն տեղ նայել էր և չէր գտել: Եկավ ներս և ասաց.

– Հաջի էֆենդի, չոջուխը չերևար:

Մայրս ներս մտավ: Հայրս նրան հարցրեց.

– Տեներն է, թռուցիկ կը թռցնե,– պատասխանեց մայրս: Պարզ էր, որ մայրս տեղյակ չէր, թե ինչ էր պատահել: Հայրս բացատրեց նրան: Մայրս երկու ձեռքերով բռնեց քունքերը և բացականչեց.

– Վո՛ւյ, աչքս քոռնար…

Պահարանում ես կծկվեցի վախից:

Քիչ անց մայրս սկսեց մտահոգվել իմ ճակատագրով:

– Շատ աղե՛կ, եղածը եղեր է, քա չոջուխն ու՞ր է:

Ի՞նչ լուծում գտավ տղան իր չարաճճիությունը կոծկելու համար: Իսկ ի՞նչ լուծում կառաջարկես դու:

Ինքնակենսագրական վեպը տարբերվում է սովորական վեպից: Այստեղ բոլոր իրադարձություններն ու մարդիկ հավաստի են:

Ինքնակենսագրական վեպում հեղինակը և պատմողը նույնն են: Նույնն են նաև պատմողը և գլխավոր հերոսը:

Ինչո՞ւ են երկխոսությունների հատվածները գրված բարբառով: Առանձնացրո՛ւ բարբառային բառերը, գրի՛ր դրանց գրական համարժեքները:

Եկան եղբայրներս ու քույրերս: Տան մեջ սկսվեց չտեսնված որոնում: Տան բոլոր ծակուծուկերը քրքրեցին, բացի հորս սենյակից: Ով կարող էր մտքովն անցկացնել, որ հենց այդ սենյակում էի թաքնված:

Եղբայրներիցս ամեն մեկին ուղարկեցին հարևանների և ազգականների տները: Վերադարձան թե՝

– Էնտեղ չի գացեր:

– Բախչայի ծառերուն վրա նայեցեք,– կարգադրեց հայրս: Եղբայրներս ընկան պարտեզը, վերադարձան թե՝

– Չկա:

– Մութ է, չերևար,– կասկածեց մայրս:

– Լուսնի լուս է,– պատասխանեց մեծ եղբայրս:

Հայրս լցրեց օղու բաժակը (ես դիտում էի վարագույրի ճեղքից), բռնեց, բարձրացրեց վեր, որ ճնկեր, ձեռքը մնաց օդում: Նա երևում էր չափազանց մտահոգ:

– Չոջուխն ի՞նչ եղավ,– շշնջաց նա:

Նրա ձայնը դողդոջեց և թաղվեց խորը թախիծի մեջ: Եթե այդ րոպեին ես ցատկեի պահարանից դուրս, հայրս ինձ կգրկեր ու կսեղմեր իր կրծքին, բայց, չգիտեմ ինչու, չարի:

Ինչո՞ւ մայրը որոշեց միջնորդել երեխայի խաղը վերականգնելու համար: Ի՞նչ վարք էր դրսևորել երեխան մինչև այդ:

– Ակո՛ւբ, տղաս՛, ձին նստե՛, գնա քաղաք, եկո՛, մութլախա քեռանց տուն է գացեր,– ասաց մայրս մեծ եղբորս:

Եվ ետևից պատվիրեց.

– Ռիվոլվերը հետդ առ, եթե չոջուխը հոն է, հետդ մի բերեր, կվախնա, թող հոն կենա, քանի մ՚օրմեն թո՛ղ տղաքը բերեն:

Ես լսեցի, մի տասնևհինգ րոպե հետո, ձիու առողջ դոփյունը փողոցի սալահատակների վրա:

Սենյակում տիրեց կապարյա լռություն: Այդ լռությունն ինձ ավելի անշարժ դարձրեց: Մնալով անշարժ՝ վրաս քաղցր քուն եկավ: Էլ չիմացա, թե ինչ պատահեց, հանկարծ թրմփացի սենյակի հատակին, գորգերի վրա: Ջարթնեցի: Հիշեցի ամեն բան: Ուզում էի փախչել, մեծ քույրս բռնեց: Մայրս վազեց, գրկեց ինձ և, ժպիտով ու արցունքով խառն, համբուրեց ինձ: Ես գլուխս սեղմել էի մորս կրծքին, ոչինչ չէի տեսնում, հանկարծ զգացի հորս բեղերը և նրա ծխախոտի հոտը: Հայրս համբուրում էր ինձ և ասում.– «Անառակ քեզի, անառակ քեզի»:

Ո՞վ է վեպի գլխավոր հերոսը: Բնութագրի՛ր նրա ընտանիքը:

Քիչ անց՝ ես դարձյալ լսեցի ձիու դոփյունը փողոցի սալահատակի վրա: Եղբայրս էր: Նա հայտնվեց սենյակի շեմքի վրա և գոռաց.

– Չոջուխը հոն չէ:

Բոլորն սկսան ծիծաղել, ես հորս թևի տակից դիտում էի մեծ եղբորս, որի աչքերի զայրույթը հետզհետե փոխվեց

խորը եղբայրական ժպտի: Վազեցի նրա մոտ և փաթաթվեցի մեջքին: Նա ինձ գրկեց, բարձրացրեց վեր: Նա այնքա՜ն բարձրահասակ էր և հզոր: Այնուամենայնիվ, առավոտյան հայրս արգելեց ինձ թռուցիկ թռցնելը:

Անցնում էր ոսկյա ամառը, անցնում էր ունայն ինձ համար, սիրտս դատարկվում էր: Ամեն երեկո բարձրանում էի կտուրը, անձկությամբ դիտում թափառող «լուսինները»: Առաջին օրերն այնքան չէի տխրում, բայց քանի օրերն անցնում էին, քանի հալչում էր ամառվա ոսկին, քանի քամին շոյում էր իմ ճակատը և անց կենում, խորը տխրություն էր իջնում իմ հոգու վրա: Մի երեկո, երբ նստած էի կտուրին և ուրիշների սավառնող թռուցիկներն էի դիտում, երեկոյան այն պահին, երբ երկնքից վազում են ծիրանագույն առվակներ, վազում, թափվում են մի վիթխարի և բոսորավառ ծովում, մայրս բարձրացավ կտուրը, որպեսզի ստուգի արևի տակ եփվող քաղցրավենիները. տեսավ ինձ և զգաց իմ անսահման թախիծը, որ սև ամպի նման կանգնած էր այդ փառավոր երեկոյի մեջ: Մոտեցավ մայրս, գրկեց գլուխս և հարցրեց.

– Ի՞նչ ունիս, յավրու՛ս:

Ես աչքս հառեցի երկնքին և թափառող «լուսիններին»:

Երկար չկարողացա պահել իմ հայացքը: Աչքերս պղտորվեցին արցունքներից:

– Ես հայրիկիդ կըսեմ, թող հրաման տա, որ թռցնես, ամա թելը լողին չպիտի կապես,– ասաց մայրս:

– Չեմ կապեր,– հեկեկացի:

Առավոտյան սկսեցի կառուցել նոր թռուցիկ, ավելի մեծ, քան երբևիցե կառուցել էի:

Կառուցվածքային առումով ինչո՞վ էր այս հատվածը տարբերվում քո ուսումնասիրած պատմվածքներից:

Ինքնակենսագրության մեջ նա պատկերել է նաև իր ժամանակի բարքերը, մարդկանց, հասարակության շերտերը: Շարադրի՛ր մտքերդ այս թեմայով:

Կազմի՛ր հարցեր վեպի տարբեր հատվածների վերաբերյալ:

Ամփոփիչ գործնական աշխատանք

Կարդա՛ վեպը և հատվածներից մեկի շուրջ գրի՛ր դատողական կարծիք:

Ուսումնասիրե՛ք **կոնֆլիկտ** հասկացությունը տարբեր առարկաների տեսանկյունից և կազմակերպե՛ք բանավեճ-քննարկում այդ թեմայով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

(1914-1984)

Հովհաննես Շիրազի իսկական անուն-ազգանունը Օնիկ Կարապետյան է:

Կյանքը, ուսումնառությունը: Հովհաննես Շիրազը ծնվել է 1914 թվականի ապրիլի 27-ին **Ալեքսանդրապոլ** քաղաքում (այժմ՝ Գյումրի): Մեծացել է աղքատության մեջ: Որոշ ժամանակ ապրել է մանկատանը: Ալեքսանդրապոլում ստացել է յոթնամյա կրթություն: Որոշ ժամանակ աշխատել է ծննդավայրի «Մանածագործ» թերթում՝ որպես ցրիչ: 1936-1941 թվականներին Շիրազը սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքում: Այնուհետև շատ կարճ աշխատել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթում: Դրանից հետո չի աշխատել և զբաղվել է բացառապես գրական-ստեղծագործական աշխատանքով:

Մահացել է 1984 թվականի մարտի 14-ին:

Հովհաննես Շիրազը ստեղծագործել է հետևյալ ժանրերով՝ բանաստեղծություն, պոեմ, բալլադ, առակ, քառյակ և այլն:

Ստեղծագործությունը: Շիրազի առաջին բանաստեղծությունը տպագրվել է 1931 թվականին, «Մանածագործ» թերթում: Չորս տարի անց՝ 1935 թվականին, լույս է տեսնում նրա առաջին ժողովածուն՝ **«Գարնանամուտ»** վերնագրով: Նույն թվականին հրատարակվում է նաև նրա **«Սիամանթո և Խջեզարե»** պոեմը: 1940-ական թվականներից մինչև իր կյանքի վերջը Շիրազն ապրում է բուռն ստեղծագործական կյանքով:

Գրում է **«Բիբլիական»** պոեմը: Հրատարակում է բազմաթիվ ժողովածուներ, որոնց շարքում առանձնահատուկ տեղ ունի **«Քնար Հայաստանի»** եռահատորը: Նրա լավագույն ժողովածուներից են նաև **«Բանաստեղծի ձայնը»**, **«Լիրիկա»**, **«Հուշարձան մայրիկիս»** գրքերը:

Շիրազի բազմաթիվ բանաստեղծություններ, **«Հայոց դանթեականը»**, **«Անի»** պոեմներն ամբողջությամբ առաջին անգամ լույս տեսան նրա մահից շատ տարիներ անց: Նրա այդ գործերը ընթերցողների մեջ տարածվում, ընթերցվում և արտասանվում էին բանավոր ճանապարհով: Իր հատկապես հայրենասիրական բանաստեղծությունների շնորհիվ Շիրազը մեծ ժողովրդականություն էր վայելում:

Հովհաննես Շիրազի առաջին կինը հայ նշանավոր բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանն էր: Նրանք ունեցել են մեկ որդի՝ քանդակագործ Արա Շիրազը:

Հուշատուն-թանգարանի հասցեն է՝ ք. Գյումրի, Վարպետաց փողոց 101: Հեռ.՝ (0312) 5 51 42:

Գյումրիում գործում է Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ է բանաստեղծն ընտրել Հովհաննես Շիրազ գրական անունը: Հավաքի՛ր տեղեկություններ, ներկայացրո՛ւ դասընկերներիդ:
2. Շիրազի մասին մի հետաքրքիր հուշ գտի՛ր և ներկայացրո՛ւ:
3. Շիրազի բանաստեղծությունների հիման վրա գրված ի՞նչ երգեր կան: Դրանցից մեկի մասին գրի՛ր կարծիքդ:
4. Գյումրի քաղաքի մասին ամենահետաքրքիր փաստերի տասնյակ կազմի՛ր:
5. Ի՞նչ ժանրի ստեղծագործություններ է գրել Շիրազը: Կազմի՛ր ամենահայտնի ստեղծագործությունների ցանկը:

Հովհաննես Շիրազի կյանքի հետաքրքիր դրվագներին ավելի մանրամասն ծանոթանալու համար դիտի՛ր «Հավերժական սառույցների տակ ապրող սիրտը» ֆիլմը:

ԹԱԳԱԴՐՈՒՄ

Հոգիս արթնացավ հարավի բույրից,
Ինձ է դուրս կանչում զեփյուռը նրա,
Ձյունն էլ արևի ջահել համբույրից
Ուրախ լալիս է դաշտերի վրա:
Ելնեմ, ծաղկումն է ձնծաղիկների,
Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ,
Գնամ հետևից ծիծեռնակների,
Նրանց հետ ետ գամ, գարունը բերեմ.
Բարձրանամ կապույտ գահը լեռների՝
Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ,
Հագնեմ ծիրանին արշալույսների,
Գարնան թագավոր ինձ թագադրեմ,
Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ,
Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,
Որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ,
Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն,
Որ գարունները գան ու չգնան,
Որ հավերժանան զմրուխտ դրախտով,
Որ բեկվի իմ դեմ խորհուրդը մահվան,
Որ մարդը ցնծա հավերժի բախտով:
Եվ ես երջանիկ կլինեմ այնժամ,
Եվ գուցե այնժամ ես մահը սիրեմ,
Երբ անմահ լինեմ, երբ հավերժանամ,
Երբ գարունները ողջ թագավորեմ…

Մակդիրը (էպիտետ) լեզվի պատկերավորության միջոցներից մեկն է: Այն բառ է կամ բառակապակցություն, որը տալիս է առարկայի կամ երևույթի գեղարվեստական բնորոշումը:

Վինսենթ վան Գոգ, «Նշենու ծաղկած ճյուղերը» (1890)

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Մի քանի նախադասությամբ վերաշարադրի՛ր բանաստեղծության բովանդակությունը:
2. Ըստ բանաստեղծության՝ ներկայացրո՛ւ թագադրման արարողությունը:
3. Բանաստեղծությունն ուշադիր կարդալուց հետո լրացրո՛ւ այս աղյուսակը:

Ի՞նչ պատկերներ տեսա բանաստեղծությունն ընթերցելիս:	
Ի՞նչ զգացողություններ ունեցա:	
Ի՞նչ ձայներ լսեցի:	

4. Ի՞նչ է հրովարտակը: Հրովարտակ հորինի՛ր և ձևավորի՛ր՝ օգտվելով նաև Շիրազի այս բանաստեղծությունից:
5. Դասարանում կազմակերպե՛ք թագադրման արարողություն: Հիշե՛ք, որ բոլորդ ինչ-որ դեր և համապատասխան խոսք պետք է ունենաք:
6. Դո՛ւրս գրիր մակդիրները: Լրացրո՛ւ այդ շարքը քո հորինած ինքնատիպ մակդիրներով: Դրանցից մի քանիսով նախադասություններ կազմի՛ր:

ջահել համբույր

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԳԸ

(Վերելք)

Աչքերիս մեջ՝ գարնան օրեր,
Ճամփես՝ բախտիս սարերն ի վեր,
Ելնում եմ ես քարերն ի վեր,
Ելնում եմ ես սարերն ի վեր,
Քարեր, սարեր, դարերն ի վեր:

Բախտս աստղերն են վեր պահել,
Ձահել եմ ես ու ձիս ջահել,
Չեմ նկատում քարեր ճամփիս,
Չեմ նկատում սարեր ճամփիս,
Քարեր, սարեր, դարեր ճամփիս:

Շանթն է բեկվում ճակտիս վրա,
Մահ՝ չգիտեմ՝ կա՞, թե՞ չկա,
Ելնում եմ ես ահերն ի վեր,
Ելնում եմ ես մահերն ի վեր,
Ահեր, մահեր, գահերն ի վեր:

Աչքերիս մեջ՝ գարնան օրեր,
Ճամփես դեպի աստղերն անմեռ՝
Ինձ ելնելու քարեր կան դեռ,
Ինձ ելնելու սարեր կան դեռ,
Քարեր, սարեր, դարեր կան դեռ...

Շիրազի պոեզիան ունի թեմատիկ մեծ բազմազանություն: Նա գրել է սիրային, խոհափիլիսոփայական, հայրենասիրական, մորը, բնությանը նվիրված բանաստեղծություններ, պոեմներ:

Փանոս Թերլեմեզյան, «Լեռներ»

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ըստ քեզ՝ ի՞նչ է հայրենասիրությունը: Դու քեզ համարո՞ւմ ես հայրենասեր: Ինչպե՞ս է դա արտահայտվում:
2. Հորինի՛ր հայրենասեր մարդու վարքականոն հետևյալ սկզբունքով՝

   Սիրել հայրենիքը որպես հարազատ էակի:

   . . . . . .
3. Որո՞նք են մեր հայրենիքի պետական և ոչ պետական խորհրդանիշները: Ինքդ էլ կարող ես հավելումներ անել այդ ցանկին:
4. Հայ ժողովրդի բնավորության ո՞ր գծերն են քեզ դուր գալիս: Իսկ ի՞նչը կուզեիր փոխել:
5. Հայաստանում ապրում են նաև ազգային փոքրամասնություններ: Ի՞նչ գիտես նրանց մասին: Համացանցից տեղեկություններ հավաքի՛ր նրանց սովորությունների, կենցաղի, կրոնի և ավանդույթների մասին:
6. ***Քար, սար, դար*** բառերը գործածելով՝ ասույթներ գրի՛ր քո հայրենիքի մասին:

Ունկնդրի՛ր Ռուբեն Մաթևոսյանի կատարմամբ «Հայ ժողովրդի երգը»՝ գրված Շիրազի բառերով:

Ամփոփիչ գործնական աշխատանք

Ընտրի՛ր Շիրազի բանաստեղծություններից մեկը: Այն ներկայացրո՛ւ որևէ հետաքրքիր ձևով: Օրինակ՝ համակարգչային ցուցադրություն, պաստառ, նկարազարդում, կոմպոզիցիա և այլն:

Շիրազի մայրերգության թեմայով ձեր դասարանի կամ դպրոցի համար պատրաստե՛ք պաստառ, որը կներառի նրա բանաստեղծություններից ծաղկաքաղ, նկարազարդումներ, մոր մասին ասույթներ:

Անդրադարձ

Դու ծանոթացար Հովհաննես Շիրազի կյանքին և ստեղծագործություններից մի քանիսին: Ինչո՞վ է Շիրազը տարբերվում մյուս հեղինակներից: Նրա տողերից որո՞նք կարող ես մեջբերել:

Գյումրին շատ արվեստագետների ծննդավայրն է: Դու լսե՞լ ես Վարպետաց փողոցի մասին: Հայտնի արվեստագետներից մեկի մասին փոքրիկ տեսանյութ կամ համակարգչային ցուցադրություն պատրաստի՛ր:



ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

(1890-1967)

Ստեփան Զորյանի իսկական ազգանունը Առաքելյան է:

Կյանքը, ուսումնառությունը: Նշանավոր արձակագիր Ստեփան Զորյանը ծնվել է 1890 թվականի սեպտեմբերի 16-ին **Ղարաքիլիսա** (այժմ՝ Վանաձոր) քաղաքում: Նախնական գիտելիքներ ստացել է տեղի Զաքար վարժապետի դպրոցում, ապա սովորել ռուսական ուսումնարանում, որն ավարտել է 1904-ին: 1906-ին մեկնել է **Թիֆլիս**՝ հույս ունենալով սովորել Ներսիսյան դպրոցում: Սակայն դա նրան չի հաջողվել. նյութական ծանր վիճակի պատճառով Զորյանը ստիպված է եղել աշխատել: Թղթակցել է «Սուրհանդակ», «Մշակ» թերթերին, տպարաններից մեկում աշխատել որպես սրբագրիչ:

1919-ին տեղափոխվել է **Երևան**, մինչև 1920 թվականը աշխատել «Հայաստանի կոոպերացիա» թերթում: Հայաստանի խորհրդայնացումից հետո մինչև կյանքի վերջը Զորյանը տարբեր պաշտոններ է զբաղեցրել պետական հաստատություններում: Եղել է տարբեր գիտական հաստատությունների խորհրդի անդամ, անդամակցել բազմաթիվ հանձնաժողովների:

Մահացել է 1967 թվականի հոկտեմբերի 14-ին Երևանում: Թաղված է Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում:

Ստեփան Զորյանի տուն-թանգարանի բացումը կատարվել է 1990 թ. սեպտեմբերի 15-ին, Վանաձորի այն առանձնատանը, որտեղ 1964-1967 թթ. ապրել է գրողը:

Տուն-թանգարանի հասցեն է՝ ք. Վանաձոր, Ստ. Զորյանի 24, հեռ.՝ (0322) 4-30-93

Ստեփան Զորյանը գրել է **պատմվածքներ**, **վիպակներ**, **վեպեր**, **պատմավեպեր**, **հեքիաթներ**, **հոդվածներ**, **հուշեր**:

Ստեղծագործությունը: Զորյանի առաջին պատմվածքը՝ **«Քաղցածները»**, տպագրվել է «Լումա» ամսագրում՝ 1909-ին: Դրանից հետո նա ամբողջ ստեղծագործական կյանքում հավատարիմ մնաց արձակ ժանրերին: 1918-ին լույս տեսավ Զորյանի առաջին՝ **«Տխուր մարդիկ»** ժողովածուն, որը միանգամից ջերմ ընդունելության արժանացավ: Դրան հաջորդեցին **«Ցանկապատ»** և **«Պատերազմը»** պատմվածքների ժողովածուները, որոնք ամրագրեցին նրա հաստատուն տեղը հայ գրականության մեջ: Այդ ժողովածուները միևնույն ժամանակ պատմվածաշարեր էին, այսինքն՝ պատմվածքներ, որոնք թեմայով, ժամանակով, ասելիքով և գաղափարով առնչվում են միմյանց: Դրանցում Զորյանն իրեն դրսևորում է որպես դիտողունակ ու հոգեբան գրող:

Հայաստանում 1920-ական թվականներին տեղի ունեցած հասարակական, քաղաքական իրադարձություններն են ընկած Զորյանի **«Ամիրյանի ընտանիքը»** վեպի և **«Հեղկոմի նախագահը»**, **«Գրադարանի աղջիկը»** վիպակների հիմքում:

1944-ին լույս տեսավ **«Պապ թագավոր»** պատմավեպը, որը հետագայում գրված **«Հայոց բերդը»** և **«Վարազդատ»** պատմավեպերի հետ կազմում է եռագրություն՝ 4-րդ դարի հայ Արշակունի թագավորների գահակալության շրջանի պատմական իրադարձությունների մասին:

Զորյանի ստեղծագործությունների հիման վրա նկարահանվել են «Զրհորի մոտ», «Հեղկոմի նախագահը», «Խնձորի այգին» գեղարվեստական կինոնկարները:

Ջորյանի ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ ունի 1939-ին լույս տեսած **«Մի կյանքի պատմություն»** ինքնակենսագրական վեպը: Այստեղ Ջորյանը ներկայացրել է իր ապրած ժամանակաշրջանը՝ բնորոշ իրադարձություններով, հոգեվիճակներով ու բնավորություններով:

«Հուշերի գրքում» Ջորյանը գրել է հուշեր իր ժամանակակիցների՝ Հովհաննես Թումանյանի, Ղազարոս Աղայանի, Վահան Տերյանի, Ալեքսանդր Շիրվանզադեի և մի շարք այլ նշանավոր մարդկանց մասին:

Ստեփան Ջորյանը նաև հայ լավագույն թարգմանիչներից է: Նրա թարգմանությամբ է հայերեն լույս տեսել, օրինակ, ռուս մեծ գրող Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» քառահատոր հանրահայտ վեպը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է Ջորյանի ծննդավայրը: Տեղեկություններ հավաքի՛ր և ներկայացրո՛ւ այդ բնակավայրի մասին:
2. Ի՞նչ դեր է ունեցել Թիֆլիս (այժմ Թբիլիսի քաղաքը) հայ մշակույթի համար:
3. Ի՞նչ գիտես Թիֆլիսի Ներսիսյան ճեմարանի մասին: Ի՞նչ նշանավոր մարդիկ են ուսանել այնտեղ:
4. Ի՞նչ հիմնական գործունեությամբ է զբաղվել Ջորյանն իր կյանքի ընթացքում:
5. Ի՞նչ գիտես Երևանում Կոմիտասի անվան պանթեոնի մասին:
6. Ի՞նչ ժանրով է ստեղծագործել Ջորյանը: Որո՞նք են նրա պատմավեպերը:

Ստեփան Ջորյանի կյանքի հետաքրքիր դրվագներին ավելի մանրամասն ծանոթանալու համար դիտի՛ր «Ստեփան Ջորյան» ֆիլմը:

Ստեփան Ջորյանի գերեզմանը Կոմիտասի անվան պանթեոնում

Մտածի՛ր և քննարկի՛ր դասընկերներիդ հետ:

Ի՞նչ միջավայր է պատկերված: Քո կարծիքով՝ ինչպե՞ս է միջավայրն ազդում մարդու ձևավորման վրա:

ՄԵՐ ՏՈՒՆԸ

(Հատված «Մի կյանքի պատմություն» վեպից)

Մորս պատմելով՝ ծնվել եմ գարնան մի առավոտ, վաղ արշալույսին, ու իմ ծնվելուն պես՝ մեր եկեղեցու զանգերն սկսել են ղողանջել:

– Տի՛ն-դի՛ն... տի՛ն-դի՛ն...

Ներկաների կարծիքով՝ շատ հանդիսավոր ու խորհրդավոր է եղել այդ վայրկյանը: Զանգերը կարծես ավետել են, թե ահա աշխարհ է գալիս մեկը, որ առանձին մի բան է լինելու– ուշադրությո՛ւն,– «Տի՛ն-դի՛ն... տի՛ն-դի՛ն»... Յոթանասունհինգ տարեկան տատմերն այն կարծիքն է հայտնել (հանաքով, թե լուրջ– հայտնի չէ), թե քառասուն տարվա ընթացքում այդպիսի– զանգերի ղողանջով ծնունդ չի պատահել իրեն, և այդ հանգամանքն առիթ է տվել նրան կարծելու, որ ես կա՛մ շատ «աստղով» ու նշանավոր մարդ պիտի լինեմ, կա՛մ... նշանավոր ավազակ, որի մասին աստված արդեն առաջուց– զանգահարությամբ զգուշացնում է մարդկանց: Իսկ տատս, նույնպես աստվածավախ մի կին, զանգերի այդ ղողանջից ենթադրել է, որ ես հավանաբար եկեղեցու սպասավոր եմ դառնալու, այլապես իմ ծնունդը չէր զուգադիպի եկեղեցու զանգահարությանը... Բայց, փոքր անց, դիմագծերս զննելով, գտել է, որ բերանս նման է ձկան բերանի, ուստի և մի համարձակ գուշակություն է արել, թե ես, երևի, շատ պիտի ճամփորդեմ, այն էլ, ով գիտի, ծովերով...

Ըստ այս հատվածի՝ նկարագրի՛ր գրողի ընտանիքը: Ովքե՞ր էին նրա տան անդամները: Ի՞նչ մտածելակերպ ունեին նրանք:

– Ծովերո՜վ,– վախեցել է հորաքույրս:– Վո՜ւյ, ամա՛ն, կխեղդվի, կխեղդվի...

– Ո՞վ պիտի նրան փող տա, որ ճամփորդի,– ասել է պապս տերողորմյան քաշելով:

– Հե՛րը,– հեգնել է վաճառական հորեղբայրս, ակնարկելով հորս անփողությունը, որ հողագործ մարդ՝ փող չի գտնի ինձ համար:

Հայրս լռել է համեստությունից թե ամաչելուց, որ երեխա է ունեցել, կամ մտքում ուրախացել է գուցե, որ ես, իբրև տղա, վար ու ցանքին կարող եմ օգտակար լինել իրեն:

Ինչ վերաբերում է մորս, նա կողքի սենյակում մահճակալին պառկած, լսել է այս ամենը և զայրացել հորս վրա, որ նա հորեղբորս հեգնանքին չի պատասխանել արժանի խոսքերով, թե՝

– Մի վախի, իմ տղան ճանապարհածախսը քեզնից չի ուզի...

Կամ թե ասեր՝

– Ինքը կաշխատի, ինքը կճամփորդի...

Մինչ այդ, տատմերն ինձ փաթաթել է բարուրի մեջ և տարել մուտքի դռան շեմքում կանգնել՝ երեսը դեպի արևելք ու սկսել խաչակնքելով.

– Տեր ամենակալ ու լույս արեգնակ,
տվեք երկրիս խաղաղություն,
թագավորաց հաշտություն,
ցավին թանկություն,
հացին առատություն,
էս երեխին էլ՝ երկա՛ր արև...

Ինչո՞ւ է հորեղբայրը հեգնում հեղինակի հորը: Ի՞նչ վերաբերմունք ունես նրա ասածի նկատմամբ:

Այնուհետև, թե ինչպես են վերաբերվել մերոնք ինձ՝ ես ոչինչ չգիտեմ, որովհետև ոչ ոք ոչինչ չի պատմել այդ մասին:

Բայց ես իմ մանկությունը հիշում եմ այն օրից, երբ մի կտոր շաքար ուտելու համար ծեծեցին ինձ: Այդ՝ ինձ համար նշանավոր դեպքից առաջ հիշում եմ, իհարկե, և ուրիշ բաներ, բայց դրանք շատ աննշան են ու ակնթարթային, ինչպես խանգարված երազի մասեր, որ ոչնչով չեն կապվում իրար, կամ խավարի մեջ նշմարվող ցոլքեր, որ անկարող են փարատել խավարը:– Հիշում եմ ինձ, օրինակ, սպիտակ շորեր հագած, հիշում եմ մի աղբյուր, որից ջուրը թափվում է մերկ թրի պես շողշողալով, և մի սևազգեստ կին, որ ձեռս բռնած տանում է ինձ այդ աղբյուրի մոտով: Սևազգեստ կինը՝ տատս է. տանում է ինձ եկեղեցի... իսկ եկեղեցում զարմացնում են ինձ վառված ջահերը և տերտերը, մանավանդ տերտերը, որ չեմ իմանում տատի՞ է, թե պապի, կի՞ն է, թե մարդ– ու որոշում եմ, որ կեսը, երևի, պապի է, կեսը՝ տատի... Հետո՝

Ի՞նչ էր խնդրում տատմերն իր աղոթքում: Քո կարծիքով՝ ինչո՞ւ էին դրանք կարևոր:

հիշում եմ մի ցանկապատ, որի փշերը մագիլների նման բռնել են շորերս. չեմ կարողանում տուն գնալ ու լալիս եմ... Այնուհետև– կանգնած եմ մեր տան շեմքին. հանկարծ երկինքը տրաքում է, մեր հարևանի բարդին բոցավառվում է երկինք հասնող կրակե սյունի պես, և ճարճատյունով ընկնում: Բարդու հետ ընկնում եմ և ես...

Կան և ուրիշ կցկտուր դեպքեր, որոնք մնում են դարձյալ առանձին-առանձին և չեն կապվում իմ հետագա կյանքի հետ: Իսկ շաքարի նշանավոր դեպքով միանգամից սկսվում է իմ, եթե կարելի է ասել, գիտակցական կյանքը:

Ի՞նչ հուշեր ունի հեղինակն իր մանկությունից: Մի քանի կետերով առանձնացրո՛ւ դրանք:

Այս դեպքը հիշելուս պատճառն այն է գուցե, որ դրա հետևանքով մեր տանը կատարվեցին ուրիշ նշանավոր դեպքեր, որոնք այնքան հուզում ու վիշտ պատճառեցին ինձ:

Դժվար է ասել՝ քանի տարեկան էի– չո՞րս, հինգ, թե՞ վեց, բայց լավ հիշում եմ՝ ինչեր կատարվեցին մեր տանը այդ ծեծից հետո:

Սակայն նախ շաքարի մասին:

Ես ահա մի փոքրիկ-փոքրիկ տղա՝ կրծքակալ կապած (այդ մայրս է կապել, որ կերակուր ու ջուր չթափեմ հագուստներիս) գնում եմ դեպի պահարանը, որի մեջ մայրս, տատս ու հորեղբորս կինը դնում են հաց, պանիր, մածուն, մրգեր և ուրիշ-ուրիշ ուտելիքներ:

Ի՞նչ ճակատագրական դեր ունեցավ շաքար ուտելը նրա կյանքում:

Պահարանը մեծ չի. հացի սեղանից բարձր է և սևագույն. վրան դրված են եղնիկի ոտներից շինված մոմակալներ և սև հասարակ շրջանակով մի հայելի, որի մեջ (երբ մայրս ցույց է տալիս) երևում է ինձ նման մի փոքրի՛կ-փոքրի՛կ տղա:

Մոտենում եմ պահարանին, դուռը բացում եմ ու նայում ներս: Տանը մարդ չկա, մենակ եմ: Մայրս չգիտեմ ուր է գնացել, իսկ տատս ու հորեղբորս կինը՝ Սանամ զիզին, բակում՝ ծառի տակ կար են անում: Այդ է պատճառը, որ ես երկար, հանգամանորեն նայում եմ պահարանի ներսը: Ինչքա՛ն բան կա, հաց, պանիր, ձու, ափսեներ, բաժակներ, աղամաններ, մուրաբի վազեր – բոլորը շարված իրար կողքի, իրար վրա... ահա և շաքարամանը՝ անկյունում... Չգիտեմ ինչու, շաքարամանը տեսնելով, մտնում եմ պահարանը, դռները վրա եմ քաշում, մեջը մտնում: Ապա վերցնում եմ մի կտոր շաքար ու սկսում ուտել:

Հրճվալից հաճույքի մեջ եմ: Ինձ թվում է, որ այդպես կարող եմ նստել երկա՛ր, երկա՛ր:

Չգիտեմ որքան ժամանակ է անցնում, մեկ էլ պահարանի դուռը բացվում է հանկարծ: Երևում է հորեղբորս մորուքով դեմքը:

– Ա՛յ դու... էդ ի՞նչ ես անում...

Ու նրա չար կանաչ աչքերը չռվում են վրաս:

Տանը ամենից շատ ես նրա այդ աչքերից եմ վախենում: Հացի սեղանի մոտ էլ, երբ այդ աչքերի հայացքն ընկնում է վրաս, ես ուտելը թողնում եմ ու մորս կողմը նայում:

Բայց հիմա բերանս փակում եմ, որ չտեսնի ինչ եմ ուտում:

Սակայն նա ամեն ինչ հասկացել է արդեն:

– Ուրեմն դու էդպես մտնում ես էդտեղ շաքար ուտո՞՛ւմ,– ասում է նա ու, ձեռս ցավեցնելով, դուրս է քաշում ինձ պահարանից:

Ես զարմանում եմ հորեղբորս խելքի վրա, թե չտեսած՝ ինչպե՛ս իմացավ, որ շաքար եմ ուտում:

Համեմատի՛ր հեղինակի հոր և հորեղբոր կերպարները:

Նա բարկացած դուրս է բերում ինձ պահարանից, կանգնեցնում է սենյակի մեջտեղը և ասում.

– Բերանդ բա՛ց...

Ես դողում եմ և, վախից բերանս ավելի պինդ եմ սեղմում: Բայց հորեղբայրս բարկանում է իմ այդ վարմունքի վրա և հաստ մատը կոխում է ատամներիս արանքը:

Ես վախից կծում եմ նրա մատը, բայց նա բանի տեղ չի դնում. այդ շաքարը մատներով հանում է բերանիցս ու հանկարծ, երեսիս զգում եմ մի ծանր հարված... և ես ընկնում եմ հատակին:

Այնուհետև աչքերս բաց եմ անում մորս գրկում: Նա ձեռքերը շարժում է հուսահատ ու կրկնում.

– Թո՛ղ, թո՛ղ ձեռներդ, երեսդ լվանամ...

Ես նայում եմ ձեռներիս ու զարմանքից զգաստանում. ձեռներս ամբողջովին կարմրած են արյունից:

– Թող լվանամ, որ արյունը կտրի,– շարունակում է մայրս, ջրամանը վերցնելով:– Թող արյունը լվանամ:

Այդ արյունը գալիս է իմ բերանից, և երբ ձեռս տանում եմ դեպի շուրթերս, մատներս ներկվում են կարմրով: Բայց այդ բանն այնքան անհանգստություն չի պատճառում ինձ, որքան մորս անհանգստությունը, ա՛յն, որ նա ահաբեկ ու արտասվալից ձայնով լվանում է ձեռներս ու երեսս և աշխատում է բամբակով կտրել եկող արյունը... Այդ անհանգստությունը վախեցնում է ինձ:

Ու սկսում եմ լաց լինել: Գիտակցում եմ, որ վատ բան է պատահել ինձ, այլապես մայրս այդպես չէր անհանգստանա:

Իմ լացի վրա մայրս ավելի է հուզվում և, ձայնը բարձրացնելով, սկսում է անիծել:

– Տվողի ձեռը կոտրվի՛,– ասում է նա և ձեռով շոյում գլուխս, որ լացս կտրեմ, բայց նրա հպումից ես ցավ եմ զգում

ճակատիս: Իսկ մայրս կարծում է, թե իր ձեռքով հանգստացնում է ինձ:

– Ձեռքը կոտրվի՛ տվողի,– կրկնում է նա, և ինձ կանֆետ ու մրգեր է խոստանում, որ լաց չլինեմ:

Վերջին անգամ, երբ մայրս ասում է՝ «տվողի ձեռը կոտրվի»,– կողքի սենյակից նորից դուրս է գալիս հորեղբայրս, կանաչ աչքերը խոժոռում ինձ ու մորս վրա և ասում բարկացած.

– Հերի՛ք է դուրս տաս: Սատկիլ չի...

– Ահ, ուրեմն դո՞ւ ես տվել,– ասում է մայրս, նոր միայն հասկանալով, որ ինձ խփել է հորեղբայրս:– Քեզ ի՞նչ էր արել, անիրավ, որ...

– Ի՜նչ,– նորից հորեղբայրս կանաչ աչքերը հառում է վրաս:– Հըմ, էդ քիչ է դրան:

Ես սեղմվում եմ մորս կրծքին:

– Ի՞նչ է արել, որ քիչ է,– տարակուսում է մայրս:

– Ի՞նչ է արել... Մտել է շկաֆը, մեջը նստել՝ շաքար էր ուտում: Ա՛յ ինչ է արել...

– Մի կտոր շաքարի համա՞՛ր,– զարմանում է մայրս,– ինձ ասեիր... էլ ինչո՞ւ ես արյունլվա արել...

– Էդ դրան քիչ է,– շարունակում է հորեղբայրս:– Ասում եմ՝ «բերանդ բաց», մատս կծում է...

Ու նա, բռունցքը վրաս թափ տալով, նորից մտնում է կողքի սենյակը:

Ես դողում եմ: Հորեղբայրս՝ իր սև մորուքով ինձ թվում է ահռելի հսկա, որին ոչ ոք չի կարող հաղթել, ու նա ինչ ուզենա, կարող է անել:

Բայց իմ շաքար ուտելու պատմությունը սրանով չի վերջանում:

Հենց նույն երեկո մեր տանն սկսվում է իրարանցում ու կռիվ: Բոլորը խոսում են հուզված ու մատնացույց անում ինձ:

Հայրս, որ մի նիհար, երկար մարդ է՝ կոշտ բեղերով, սենյակի մեջտեղը կանգնած՝ բարկացած խոսում է հորեղբորս վրա, թե ինչո՛ւ է ծեծել ինձ: Իսկ պապս (տերտերի նման մեծ մորուքով մարդ) և տատս (սև գլխաշոր կապած կին) պաշտպանում են հորեղբորս, և բոլորը ձեռները շարունակ մեկնում են իմ կողմը:

– Անկարգ երեխա է, ամեն բանի մեջ ընկնում է, ամեն ինչ խառնում...

– Բա երեխան ո՞նց կըլնի,– ասում է հայրս:– Երեխան իրա երեխայությունը կանի: Բա մի կտոր շաքարի համար էնպես կտան, որ ատամը պռոշումը թաղվի՞... էն ի՜նչ բան է...

Քո կարծիքով՝ ինչո՞ւ են պապն ու տատը պաշտպանում տղայի հորեղբորը:

Ես ձեռս տանում եմ դեպի շուրթս, որ ցավում է հիմա: Բայց ոչ մի ձայն չեմ հանում: Անխոս նստել եմ մորս կողքին, բռնել եմ նրա փեշից և վախլուկ աչքերով նայում եմ խոսողներին: Այդ լինում է այն ժամանակ, երբ խոսողները ձեռնին մեկնում են ինձ:

Սակայն այդ վախը չունեմ հորիցս:

Մինչև այդ օրը ես այն կարծիքի էի, թե իմ պաշտպանը և բոլոր վտանգներից ինձ պահպանողը մայրս է: Մի փոքր՝ նաև տատս: Իսկ դե ինչի՞ համար էր հայրս՝ ես չէի հասկանում: Չէի հասկանում առհասարակ նրա գոյության իմաստը, նրա դերը: Այդ պատճառով էլ կարծում էի, որ նա ավելորդ է... միայն խանգարում է ինձ և ուրիշ ոչինչ... Օրինակ, նա հաճախ բարկանում էր վրաս, ոտքը խփում գետնին ու չէր թողնում անեմ ա՛յն, ինչ ուզում էի: Խանգարում էր ու թվում բոլորովին ավելորդ:

Ի՞նչ նշանակություն ունեցավ ընտանեկան կոնֆլիկտը երեխայի կյանքում: Ի՞նչ բացահայտումներ արեց նա:

Բայց այդ օրը, երբ տանը խոսում են իմ շաքար ուտելու մասին, նա բոլորովին փոխվում է իմ աչքերում: Եվ ես զգում եմ, որ նա՛ էլ, մորս նման, իմ պաշտպանն է: Ու հետաքրքրված նայում եմ նրան և հետևում նրա խոսքերին ու ձեռների շարժումին:

Այսօր նա շատ է գրգռված:

– Բա ես աշխատեմ, արուն-քրտինք թափեմ ամեն օր, մի կտոր շաքարն իմ երեխին շատ համարե՞ն,– ասում է հուզված ու գնում-գալիս սենյակում, երկար-երկար քայլեր անելով:

Իսկ պապս, տերողորմյան ձեռին, մութաքին թիկն տված՝ պատասխանում է.

– Աշխատո՛ւմ... ինձ համար հո չես աշխատում: Ինչքան աշխատում, երկու էնքան ուտում եք: Կնիկդ, չորս երեխադ... Մենք չըլենք, դու կարա՞ս ապրես: Քո երեխեքը պահողը մե՛նք ենք: Դեռ խոսո՛ւմ ես:

Հայրս ավելի է բարկանում.

– Ուրեմն, դո՞ւք եք ինձ պահում, հա՞...

Ու խոսում է դարձյալ ձեռները շարժելով ու դարձյալ գնում-գալիս է սենյակի մեջտեղով:

Ես առաջին անգամ եմ ներկա լինում մեծերի կռվին, գուցե եղել եմ ուրիշ անգամ էլ, բայց այժմ լսում եմ կլանված, չեմ ուզում թողնել և ոչ մի բառ. աշխատում եմ հասկանալ նրանց խոսքերի իմաստը: Բայց այդ ինձ չի հաջողվում. շատ բան մնում է մութ ու անհասկանալի: Ի՞նչ բան է աշխատանքը և ինչո՞ւ են աշխատում, ո՛վ է ո՛ւմ պահում,– ես այդ չեմ հասկանում: Ես գիտեմ միայն, որ ինձ պահողը մայրս է, հորս էլ նա է հաց տալիս, պապիս էլ, տատիս էլ... բոլորին: Մայրս ու հորեղբորս կինը՝ Սանամ զիզին. դրանք են,

որ կերակուր ու թեյ են եփում, անկողին են գցում... էլ ինչո՞ւ է պապս ասում, թե հորս պահողն ինքն է, երբ ինքը ոչինչ չի անում, ոչ կերակուր է եփում, ոչ թեյ, ոչ սեղան սարքում, ոչ անկողին գցում, այլ միայն տերողորմյա է քաշում ու իր նման պապերի հետ զրույց անում:

Խոսակցությունը շարունակվում է: Պապս դարձյալ ինչ-որ խոսքեր է ասում հորս, տատս աշխատում է մեղմել պապիս ասածները, իսկ հորեղբայրս պապիս մոտ, սեղանի կողքին նստած, աչքի տակով խեթ նայում է հորս և անձայն ծիծաղում նրա վրա: Այդ ծիծաղն ինձ դուր չի գալիս:

Հայրս ավելի է տաքանում:

– Ուրեմն ես էս տանն աշխատանք չունե՞մ...

– Մեծ բան է՝ մի երկու արտ է վարում,– խոսում է հորեղբայրս և նորից, ատամները բանալով, ծիծաղում անձայն:

Հայրս բարկացած գնում է դեպի հորեղբայրս.

– Ի՞նչ. իսկ դու ի՞նչ ես անում: Սաղ օրը պարապ-սարապ նստած ես խանութիդ դռանը...

– Քեզ ի՛նչ,– ասում է հորեղբայրս:– Մի օրվա մեջ ես քու մի տարուց շատ եմ աշխատում:

Ու վարից վեր նայում է հորս (ինձ թվում է, նա նայում է նրա շորերին) ու ավելացնում.

– Սրան տեսեք: Գյադա՛...

Չեմ հասկանում, թե ինչո՛ւ այս խոսքերից զայրացած հայրս հարձակվում է հորեղբորս վրա և ուզում է խփել նրան բռունցքով, բայց տատս ու Սանամ զիզին կտրում են առաջը ու չեն թողնում, որ հայրս մոտենա նրան: Տատս ոչ միայն չի թողնում, այլևս բարկանում է սաստիկ:

– Լա՛վ, հերի՛ք, տունն իրար գլխով մի տաք մի լակոտի համար...

Եվ ձեռը մեկնում է իմ կողմն ու չանչում ինձ:

– Ո՛ւ, շաքարը բկումդ մնար...

Մեղավո՞ր էր արդյոք տղան: Իրավիճակը փորձե՛ք ներկայացնել տարբեր հերոսների տեսանկյունից:

Քո կարծիքով՝ ի՞նչ դեպքեր են հաջորդելու այս դրվագին: Կարդա՛ վեպը և համեմատիր քո կանխագուշակումների հետ:



ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

(1914-1993)

Համո Սահյանի իսկական անուն-ազգանունը Հմայակ Գրիգորյան է:

Լոր գյուղի դպրոցում 1915-1916 թվականներին որպես ուսուցիչ աշխատել է Ակսել Բակունցը:

1975 թվականին Սահյանն արժանացել է Հայաստանի պետական մրցանակի **«Սեզամ, բացվի՛ր»** ժողովածուի համար:

Կյանքը, ուսումնառությունը: Համո Սահյանը ծնվել է 1914 թվականի ապրիլի 14-ին Սիսիանի շրջանի **Լոր** գյուղում: Կրթություն է ստացել Լոր գյուղի դպրոցում:

1927 թվականին Սահյանը տեղափոխվում է **Բաքու:** Այստեղ էլ նա ստանում է միջնակարգ կրթություն: 1935-1939 թվականներին սովորել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժանմունքում: 1939-1941 թվականներին աշխատել է Բաքվի՝ հայերեն լույս տեսնող «Խորհրդային գրող» ամսագրում՝ որպես գրական աշխատող:

1941-1945 թվականներին, որպես Կասպիական նավատորմի նավաստի, Սահյանը մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին:

1951 թվականին Սահյանն ընտանիքով տեղափոխվում է Երևան: Աշխատում է «Ավանգարդ», «Ոզնի» թերթերում: 1965-1967 թվականներին եղել է «Գրական թերթի» գլխավոր խմբագիրը:

Մահացել է 1993 թվականի հուլիսի 17-ին:

Ստեղծագործությունը: Համո Սահյանի առաջին բանաստեղծությունները լույս են տեսել Բաքվում հրատարակվող «Խորհրդային գրող» ամսագրում: Նրա անունը հայտնի

դարձավ **«Նաիրյան դալար բարդի»** բանաստեղծության շնորհիվ, որը Սահյանը գրեց և հրատարակեց այն ժամանակ, երբ կռվում էր ռազմաճակատում՝ հայրենիքից հեռու:

1946 թվականին լույս է տեսնում Սահյանի առաջին՝ **«Որոտանի եզերքին»** ժողովածուն: Հետագայում Սահյանը հրատարակում է բազմաթիվ նոր գրքեր, որոնց շարքում առանձնանում են «**Քարափների երգը», «Սեզամ, բացվի՛ր», «Իրիկնահաց»** ժողովածուները: Դրանցում լիարժեքորեն դրսևորվեց Սահյանի պոեզիայի թեմատիկ բազմազանությունը: Բանաստեղծի մահվանից հետո լույս տեսավ նրա **«Ինձ բացակա չդնեք»** խորհրդանշական վերնագրով ժողովածուն, որում գերիշխում են հրաժեշտի տրամադրությունները:

Սահյանը հիմնականում գրել է **բանաստեղծություններ,** որոնց թեման բազմազան է՝ սեր, հայրենասիրություն, բնություն և այլն:

Տուն-թանգարանի հասցեն է՝ Սյունիքի մարզ, Լոր համայնք, 3-րդ փողոց, 28 շենք:

Սահյանի ծննդավայր Լոր գյուղում գործում է նրա տուն-թանգարանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Սահյանի ծննդավայրի մասին տեղեկություններ գտի՛ր և ներկայացրո՛ւ դասընկերներիդ:
2. Սահյանի ժողովածուների անուններից ո՞րն է հետաքրքիր քեզ համար: Դրանցից ընտրի՛ր մի քանի բանաստեղծություն, մեկը սովորի՛ր անգիր:
3. Կազմի՛ր Սահյանի կյանքի հետաքրքիր փաստերի փունջ:
4. Ինչպե՞ս է Սահյանի ծննդավայրը ազդել նրա ստեղծագործությունների վրա:
5. Պատմաքաղաքական ի՞նչ շրջափուլերում է ապրել և ստեղծագործել Համո Սահյանը:

Սահյանի կյանքի ու ստեղծագործության հետաքրքիր դրվագներին ավելի մանրամասն ծանոթանալու համար դիտի՛ր «Համո Սահյան. քարափներից երկինք» տեսաֆիլմը:

ԱՆՏԱՌՈՒՄ

Անտառում ամպի ծվեններ կային,
Կապույտ մշուշներ կային անտառում,
Օրոր էր ասում աշունն անտառին,
Բայց դեռ անտառի քունը չէր տանում:

Շշուկներ կային անտառում այնքան,
Եվ խոնա՛վ-խոնավ բուրմունքներ կային,
Իրար փաթաթված ստվեր ու կածան
Ու հետքե՛ր, հետքե՛ր, հետքեր մարդկային:

Եղյամն էր սունկի գլուխն արծաթում,
Մրսում էր կարծես վայրի նշենին,
Հանգստանում էր հողմը բացատում՝
Ականջն ամպրոպի ազդանշանին:

Եղնիկի հորթը՝ մամուռը դնչին,
Թռչում էր իր մոր բառաչի վրա,
Եվ որսկանը թաց խոտերի միջին
Կորած հետքերն էր որոնում նրա:

Փայտահատը հին երգն էր կրկնում
Եվ տաք սղոցն իր յուղում էր կրկին,
Թեղին անտարբեր ականջ էր դնում
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:

Անտառապահի տնակի առաջ
Խարույկն իր խաղաղ ծուխն էր ծածանում,
Եվ խարույկի մոտ եղևնին կանաչ
Սոճու հետ սիրով զրույց էր անում…

Անտառում խորին խորհուրդներ կային,
Եվ արձագանքնե՛ր կային անտառում,
Օրո՛ր էր ասում աշունն անտառին,
Սակայն անտառի քունը չէր տանում...

Փոխաբերությունը (մետաֆոր) գեղարվեստական պատկերավորության միջոց է: Փոխաբերության մեջ մի առարկայի կամ երևույթի անունը նմանության հիման վրա փոխարինվում է մեկ այլ առարկայի կամ երևույթի անունով:



Իվան Շիշկին, «Երեկո» (1882)

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երկու րոպեում գրի՛ր հնարավորինս շատ բառեր, որոնք առնչվում են *անտառ* բառին:
2. Այդ բառերը գործածելով՝ հինգ րոպեում փոքրիկ շարադրանք գրի՛ր «Անտառում» վերնագրով:
3. Ուշադիր կարդա՛ բանաստեղծությունը, քո գրած բառերը և շարադրանքը համեմատի՛ր Սահյանի բանաստեղծության հետ: Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան:
4. Բանաստեղծությունից առանձնացրո՛ւ այն բառակապակցությունները, որոնք փոխաբերական իմաստ ունեն: Կազմի՛ր բառակապակցություններ, որոնցում բնության երևույթներն ունենան մարդկային հատկանիշներ:
5. Տարվա ո՞ր եղանակն է նկարագրված անտառում: Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր այն հատվածը, որը քեզ համար ամենատպավորիչն էր, և մեկնաբանի՛ր այն:

ՄԱՍՐԵՆԻ

Մարտիրոս Սարյանին

Կախվել է ժայռը անդունդի վրա,
Եվ դարեր այդպես կախված է մնում,
Ջրերի մեջ են ոտքերը նրա,
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:

Կախվել է ժայռը, կորընթաց իջել
Ժամանակների ջանքով անմեկին,
Երկնքի և խոր անդունդի միջև
Դարձել քարեղեն ուրույն մի երկինք:

Եվ այդ քարեղեն երկնքի միջից
Մասրի մի թուփ է գլխիվայր ուսել,
Որ դալարել է երկնքի շնչից,
Բայց ոչ մի անգամ երկինք չի տեսել:

Երկինք չի տեսել թուփն այդ հիրավի,
Երկինքն էլ երբեք չի տեսել նրան,
Միայն գետի մեջ բեկված արևի
Գունատ ցոլքերն են դողացել վրան:

Ցուրտ քամիներն են ոստերը քրքրել,
Հողմերն են ծեծել բոլոր կողմերից,
Բայց նա ժեռ քարից սնունդ է առել
Եվ ջուր է առել խոնավ հողմերից:

Չի զիջել նա իր արմատը վերջին
Արհավիրքների զարկին անխնա,
Ճոճվել է անգամ ճնճղուկի շնչից,
Բայց հողմի շնչին դիմացել է նա:

Դիմացել է՝ պիրկ պարանի նման
Արմատով կառչած քարե երկնքին,
Շյուղեր է տվել և ամեն գարնան
Քնքշորեն ծաղկել, բուրել է կրկին:

Եվ շնչում են դեռ, զվարթ սոսափում,
Գարնանը ծաղկում ոստերը նրա,
Աշնանը կարմիր մասուր են թափում
Անդունդով անցնող կածանի վրա:

Կախվել է ժայռը անդունդի վրա...
Եվ հավիտյան էլ կախված մնա թող,
Քանի քարեղեն զանգվածը նրա
Մասրենու համար երկինք է ու հող:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Արտահայտիչ ընթերցի՛ր բանաստեղծությունը:
2. Մի քանի նախադասությամբ վերաշարադրի՛ր բանաստեղծության բովանդակությունը:
3. Առանձնացրո՛ւ այն բառերն ու արտահայտությունները, որոնք մասրենուն մարդկային հատկանիշներ են հաղորդում: Այդ բառերով կապակցված խոսք գրի՛ր:
4. Համեմատի՛ր հայ ժողովրդի անցած ուղին և մասրենու ճակատագիրը: Նշի՛ր նմանություններ և տարբերություններ:
5. Եթե մասրենին խոսել իմանար, քո կարծիքով՝ ի՞նչ կասեր մեզ: Մտքերդ գրավոր շարադրի՛ր:
6. Մասուրի օգտակարության մասին տեղեկություններ հավաքի՛ր և ներկայացրո՛ւ:

ԱՆՈՒՆԴ ՏԱԼԻՍ

Հայաստա՛ն, անունդ տալիս,
Ժայռի մեջ մի տուն եմ հիշում,
Ալևոր կամուրջի հոնքին
Ծիծեռի մի բույն եմ հիշում,
Թեքված մի մատուռ եմ հիշում
Եվ բերդի տեղահան մի դուռ,
Ավերակ տաճարի մի վեմ
Եվ բեկված մի սյուն եմ հիշում:

Հիշում եմ լքված մի թոնիր,
Բերանին մամռոտած մի խուփ,
Մամռոտած որմի խոռոչում
Մասրենու վարսաթափ մի թուփ,
Աշխարհի քարերին մաշված,
Աշխարհից խռոված մի ցուպ,-
Եվ հեռվում ինչ-որ ուշացած
Ձիերի դոփյուն եմ հիշում:

Արևոտ մի սար եմ հիշում,
Ճակատին ձյունի պատառիկ,
Սարն ի վար բարակ մի առու-
Շուրթերին հայրեն ու տաղիկ,
Ցորենի կանաչ արտի մեջ
Առվույտի կապույտ մի ծաղիկ
Եվ արտի եզրին՝ մենավոր
Մի բարդու շրշյուն եմ հիշում:

Բանաստեղծություններում երբեմն հանդիպում են պարբերաբար կրկնվող տողեր կամ տներ, որով ընդգծվում է որևէ տրամադրություն կամ գաղափար: Այդ կրկնվող հատվածը կոչվում է **կրկներգ (ռեֆրեն):**

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ ես պատկերացնում դու Հայաստան ասելիս: Գրի՛ր բառեր, դրանցով կազմի՛ր նախադասություններ:
2. Բանաստեղծության յուրաքանչյուր հատվածում խմբավորի՛ր բառերն ըստ թեմատիկայի: Օրինակ՝ բերդ, մատուռ-ճարտարապետություն և այլն:
3. Գրավոր մեկնաբանի՛ր բանաստեղծության մեկ քառատող:
4. Բանաստեղծության մեջ ավելի շատ ո՞ր ժամանակն է ներկայացվում: Կարծիքդ հիմնավորիր համապատասխան մեջբերումներով:
5. Բնության ի՞նչ տեսարան է պատկերացնում հեղինակը Հայաստանի անունը տալիս: Իսկ դո՞ւ:
6. Արձակ կամ չափածո հորինի՛ր բանաստեղծության շարունակություն:

7 Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր կրկներգերը: Բացատրի՛ր, թե ինչ տրամադրություն կամ գաղափար են ընդգծում դրանք: Փորձի՛ր չափածո կամ արձակ խոսք գրել կրկներգերով:

Ամփոփիչ գործնական աշխատանք

Ընտրի՛ր Համո Սահյանի բանաստեղծություններից կամ ժողովածուներից մեկը և զեկուցում գրի՛ր դրա վերաբերյալ:

Համո Սահյանի բանաստեղծություններից ընտրե՛ք և դո՛ւրս գրեք տողեր: Այդ ծաղկաքաղի տողերը միավորելով՝ փորձե՛ք ստանալ մեկ ամբողջական ստեղծագործություն՝ անելով նաև հեղինակային հավելումներ:

Սյունիքի մարզի մասին ի՞նչ գիտես: Ռեպորտաժ կամ հոդված պատրաստի՛ր Սյունիքի բնության, բնապահպանական խնդիրների կամ մշակութային կոթողների մասին:

Ունկնդրի՛ր «Project La» նախագծի երգը՝ գրված Սահյանի բանաստեղծությունների բառերով:

Անդրադարձ

Դու ծանոթացար Համո Սահյանի կյանքին և ստեղծագործություններից մի քանիսին: Ի՞նչ նոր բան սովորեցիր: Ի՞նչ յուրահատկություն ունի Սահյանի պոեզիան:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

(1919-2006)

Սիլվա Կապուտիկյանի իսկական անունը Սիրվարդ է:

Սիլվա Կապուտիկյանը եղել է Հովհաննես Շիրազի առաջին կինը: Նրանք ունեցել են որդի՝ քանդակագործ Արա Շիրազը:

Կյանքը, ուսումնառությունը: Սիլվա Կապուտիկյանը ծնվել է 1919 թվականի հունվարի 20-ին **Երևանում**: Ավարտել է Երևանի թիվ 19 դպրոցը: 1939 -1941 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքում: Ապա 1949-1950 թվականներին կրթությունը շարունակել է Մոսկվայի Գորկու անվան գրական ինստիտուտի բարձրագույն դասընթացներում:

Սիլվա Կապուտիկյանն այն բացառիկ գրողներից է, որն իր ամբողջ կյանքում զբաղվել է հիմնականում գրական գործունեությամբ: Նա ակտիվորեն շրջագայել է: 1962 թվականից սկսել է իր ուղևորությունները: Եղել է Լիբանանի, Սիրիայի, Եգիպտոսի, Եթովպիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Կանադայի, Հարավային Ամերիկայի, Գերմանիայի, Ավստրիայի, Իրանի, Երուսաղեմի սփյուռքահայ գաղթօջախներում, գրել ճամփորդական ուղեգրություններ և հուշեր:

Եղել է ՀԽՍՀ 9-րդ գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր:

Մահացել է 2006 թվականի օգոստոսի 25-ին Երևանում: Թաղված է Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում:

Ստեղծագործությունը: 1933 թվականին «Պիոներ կանչ» թերթում լույս է տեսնում Կապուտիկյանի առաջին բանաստեղծությունը՝ **«Պատասխան Թումանյանին»**

վերնագրով: 1945-ին հրատարակվում է առաջին գիրքը՝ **«Օրերի հետ»**: Ընդհանուր առմամբ՝ Կապուտիկյանը հրատարակել է մոտ 70 գիրք, որոնց շարքում առավել նշանակալից են **«Սրտաբաց զրույց»**, **«Մտորումներ ճանապարհի կեսին»**, **«Ձմեռ է գալիս»** բանաստեղծական ժողովածուները, **«Քարավանները դեռ քայլում են»** ուղեգրությունը, **«Էջեր փակ գզրոցներից»** հուշագրությունը:

Կապուտիկյանի պոեզիան հատկանշվում է թեմատիկ բազմազանությամբ: Նա գրել է սիրային, խոհափիլիսոփայական, հայրենասիրական բանաստեղծություններ:

Սիլվա Կապուտիկյանը գրել է **բանաստեղծություններ**, **պոեմներ**, ուղեգրություններ, հուշեր, հրապարակախոսական հոդվածներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրո՛ւ հետաքրքիր փաստեր Սիլվա Կապուտիկյանի ծննդավայրի մասին:
2. Ի՞նչ կրթություն է ստացել նա: Քո ուսումնասիրած գրողներից էլ ո՞վ է ուսանել այդ կրթօջախներում:
3. Ի՞նչ գործունեությամբ է զբաղվել Սիլվա Կապուտիկյանը: Գտի՛ր տեղեկություններ նրա հասարակական գործունեության մասին:
4. Ի՞նչ դեր ունի հայրենիքը Կապուտիկյանի պոեզիայում: Գտի՛ր հայրենիքին նվիրված այլ բանաստեղծություններ, որոնց հեղինակը նա է:
5. Կապուտիկյանը շատ է ճամփորդել: Քո կարծիքով, ի՞նչ ազդեցություն է դա թողել նրա ստեղծագործության վրա:
6. Բնութագրի՛ր Սիլվա Կապուտիկյանին՝ ըստ իր ստեղծագործությունների: Ինչպիսի՞ն է նրա կերպարն ըստ քեզ:

1952 թվականին «Իմ հարազատները» բանաստեղծությունների ժողովածուի համար արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի:

2009 թվականին նրա ապրած տանը բացվել է Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանը:

Տուն-թանգարանի հասցեն է՝ Բաղրամյան պողոտա, 1-ին անցուղի (Սիլվա Կապուտիկյան փողոց), շենք 1, 2-րդ մուտք, 4-րդ հարկ, բն. 26:

ՔԵԼԵ՛, ԼԱՈ

Գիշեր-ցերեկ նույն երգն է իմ ունկերում,
Զայնի տեղակ ծուխ է ելնում այդ երգից,
Ու ծխի մեջ կսկծում է մի ծերուկ.
«Քելե՛, լաո, քելե՛ էրթանք մըր էրգիր»:

Արնոտել է ոտքը ճամփից քարքարոտ,
Մանգաղն ուսած, գաղթի մախաղը մեջքին,
Դեռ քայլում է սարով, ձորով, աշխարհով.
«Քելե՛, լաո, քելե՛ էրթանք մըր էրգիր»:

Աչքերի մեջ համառ մի ուխտ ու հարցում,
Ու մի զարմանք, խեղճ մի զարմանք անմեկին
Հարցնում է իրեն, բախտին, Աստծուն.
«Իմա՞լ կեղնի, իմա՞լ չէրթանք մըր էրգիր»:

Իր ի՞նչ գործն է, թե կա սահման ու կա վեճ,
Իր ի՞նչ գործն է, թե կան ռումբեր ու հրթիռ,
Հողի, հոգու միամիտ կանչն է իր մեջ.
«Իմա՞լ կեղնի, իմա՞լ չէրթանք մըր էրգիր»:

Իմա՞լ կեղնի, ինքը՝ այստեղ, հողն՝ այնտեղ,
Արտը կծղել, սպասում է իր ձեռքին:
Ինչպե՞ս թողնենք տունն ու ջաղացը անտեր.
«Իմա՞լ կեղնի, իմա՞լ չէրթանք մըր էրգիր»:

Ինչպե՞ս խեղդենք խև խռովքը Սասնա տան,
Ինչպե՞ս մարենք այսքան կարոտ, վառք ու կիրք,
Այսքան երազ ինչպե՞ս թաղենք գետնի տակ.
«Իմա՞լ կեղնի, իմա՞լ չէրթանք մըր էրգիր»:

Թե աշխարհում արդարություն կա վերուստ,
Ու թե դաշն են Աստված, երկիր ու երկինք,
Պիտի փլվի՛ ամեն պատնեշ, ամեն սուտ.
Պիտի երթա՛նք, պիտի երթա՛նք մեր երկիր:

Ունկնդրի՛ր «Քելե՛, լաո» երգը:

Հրաչյա Հարությունյան, «Աշնակ. «Սասունցիների պարը»» (1970)

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Սահուն և արտահայտիչ կարդա՛ բանաստեղծությունը: Ընթացքում դո՛ւրս գրիր այն բառերը և արտահայտությունները, որոնք բարբառային են: Գրի՛ր դրանց գրական համարժեքները:
2. Քո կարծիքով՝ ինչո՞ւ է Կապուտիկյանն ընտրել ծերուկի կերպար:
3. Ուշադրությո՛ւն դարձրու բանաստեղծության տների վերջին տողերին: Ի՞նչ օրինաչափություն նկատեցիր:
4. Բնութագրի՛ր բանաստեղծության քնարական հերոսին:
5. Ի՞նչ թեմաներ են արծարծվում բանաստեղծության մեջ: Ո՞րն է դրանցից ամենակարևորն ըստ քեզ: Կարծիքդ հիմնավորի՛ր համապատասխան մեջբերումներով:
6. Գրի՛ր մենախոսություն ծերուկի անունից: Խրախուսելի է բարբառային բառերի տեղին գործածումը:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

(1924-1971)

Պարույր Սևակի իսկական ազգանունը Ղազարյան է:

Այն տունը, որտեղ Պարույր Սևակն անցկացրել է իր մանկությունն ու պատանեկությունը:

Կյանքը, ուսումնառությունը: Հայ մեծ բանաստեղծ Պարույր Սևակը ծնվել է 1924 թվականի հունվարի 24-ին Վեդու շրջանի **Չանախչի** գյուղում (այժմ՝ Արարատի մարզ, գյուղ Զանգակատուն):

Գերազանց առաջադիմությամբ ավարտել է ծննդավայրի դպրոցը: Այնուհետև 1940-1945 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանում: Շարունակելով կրթությունը ասպիրանտուրայում՝ Սևակը զուգահեռաբար աշխատում է «Ավանգարդ» և «Գրական թերթ» պարբերականների խմբագրություններում: 1951-1959 թվականներին Սևակն ապրում, սովորում և ստեղծագործում է **Մոսկվայում**: 1955 թվականին ավարտում է Մոսկվայի Մաքսիմ Գորկու անվան գրականության ինստիտուտը, այնուհետև մինչև 1959 թվականը նույն ինստիտուտում աշխատում է որպես դասախոս:

Վերադառնալով Երևան՝ Սևակն աշխատում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտում՝ որպես գիտաշխատող: 1967 թվականին **«Սայաթ-Նովա»** մենագրության համար նրան միանգամից շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1966-1971 թվականներին Սևակը եղել է Հայաստանի գրողների միության քարտուղարը:

Մահացել է 1971 թվականի հունիսի 17-ին, ավտովթարից:

Ստեղծագործությունը: Սևակի առաջին բանաստեղծությունները լույս են տեսել 1942 թվականին «Սովետական գրականություն» ամսագրում: Առաջին ժողովածուն՝ **«Անմահները հրամայում են»** վերնագրով, հրատարակվեց 1948 թվականին: Սևակի ստեղծագործական կյանքում արգասաբեր եղավ մոսկովյան շրջանը: Նրա շատ ստեղծագործություններ, այդ թվում՝ **«Ուշացած իմ սեր»** պոեմը, նախ լույս տեսան ռուսական գրական մամուլում՝ ռուսերենով, և թեժ բանավեճերի առիթ ստեղծեցին: Մոսկվայում Սևակը գրեց **«Անլռելի զանգակատուն»** պոեմը, որը 1959 թվականին հրատարակվեց Երևանում:

Տուն-թանգարանի հասցեն է՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Զանգակատուն, Պարույր Սևակի փող. 1-ին փակուղի, 1 տուն: Հեռ.՝ (093) 37 75 99:

1963 թվականին լույս տեսավ Սևակի **«Մարդը ափի մեջ»** ժողովածուն, որը գեղարվեստական մտածողության փոփոխություն էր բերում հայ պոեզիայում: Եվ պատահական չէ, որ ժողովածուի շուրջ եղան բազմաթիվ բանավեճեր, թեր ու դեմ կարծիքներ: Սևակը նույնպես մասնակցեց այդ բանավեճերին՝ գրելով իր բանաստեղծական արվեստը և ընդհանրապես ժամանակակից պոեզիայի ընթացքը մեկնաբանող հոդվածներ: Դրանց շարքում առանձնանում են **«Հանուն և ընդդեմ «ռեալիզմի նախահիմքերի»»,**

Պարույր Սևակը գրել է **բանաստեղծություններ, պոեմներ, վեպ:** Ինչպես նաև հեղինակել է բազմաթիվ գրականագիտական, հրապարակախոսական հոդվածներ, մենագրություններ, ուսումնասիրություններ:

«Անլռելի զանգակատուն» պոեմի համար Պարույր Սևակն արժանացել է Հայաստանի պետական մրցանակի:

Պարույր Սևակի տուն-թանգարանը գտնվում է գրողի ծննդավայրում՝ Զանգակատուն գյուղում: Բացվել է Պարույր Սևակի ողբերգական մահվան տասնամյա տարելիցի օրը՝ 1981 թվականի հունիսի 17-ին:

«Դեպի մեծ ուղեծիր», **«Դժվարը իրենից հասուն լինելն է»** հոդվածները, որոնք շատ կարևոր են Սևակի պոեզիան հասկանալու և մեկնաբանելու համար:

Պարույր Սևակը գրել է նաև մանուկների համար: «Ձեր ծանոթները» ժողովածուն լույս է տեսել 1971 թվականին:

Գրիգոր Խանջյան, «Հարսանեկան երգ»

«Անլռելի զանգակատուն» պոեմի նկարազարդումները կատարել է հայ անվանի նկարիչ **Գրիգոր Խանջյանը:**

Ընդհանրապես, 1960-ական թվականները բուռն ստեղծագործական շրջան էր Սևակի համար: Այդ ժամանակահատվածում ստեղծված **«Նահանջ երգով», «Երգ երգոց», «Եվ այր մի՝ Մաշտոց անուն», «Եռաձայն պատարագ»** պոեմները ժանրային ինքնատիպության առումով նորություն էին հայ գրականության մեջ:

Կյանքի վերջին տարիներին Սևակը աշխատում էր իր նոր՝ **«Եղիցի լույս»** ժողովածուի վրա: Այն պատրաստ էր և պետք է լույս տեսներ 1969 թվականին: Սակայն գրաքննության միջամտությունների պատճառով գիրքը լույս տեսավ Սևակի ողբերգական մահից հետո միայն:

Սևակի մի շարք բանաստեղծություններ, պոեմներ ևս լույս տեսան հետմահու: 2014 թվականին հրատարակվեց նրա անավարտ վեպը՝ **«Ամանեջ»** վերնագրով:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչու՞ է բանաստեղծն ընտրել Պարույր Սևակ գրական անունը: Հավաքի՛ր տեղեկություններ և ներկայացրո՛ւ:
2. Համեմատի՛ր Սևակի կենսագրությունը քո ուսումնասիրած այլ գրողների կենսագրության հետ. ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան:
3. Սևակի կյանքից հետաքրքիր տեղեկություններ, նրա մասին հուշեր հավաքի՛ր և ներկայացրո՛ւ դասընկերներիդ:
4. Ի՞նչ ժանրերով է ստեղծագործել Սևակը: Այլ աղբյուրներից գտի՛ր նրա ստեղծագործություններից մեկը: Գրի՛ր կարծիք դրա մասին: Հանգավորման ի՞նչ ձևեր է գործածել:
5. Պարույր Սևակի տարբեր ստեղծագործություններից առանձնացրո՛ւ տողեր և կազմի՛ր ասույթների ցանկ:

Պարույր Սևակի կյանքի հետաքրքիր դրվագներին ավելի մանրամասն ծանոթանալու համար դիտի՛ր **«Խարույկ սառույցի վրա»** ֆիլմը:

Պարույր Սևակի գերեզմանը իր տուն-թանգարանի այգում

ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ քաղցրանո՛ւն,
Իմ բարձրանո՛ւն,
Իմ տառապա՛ծ,
Իմ փառապա՛նծ:
Հների մեջ՝ դու ալեհեր,
Նորերի մեջ՝ նոր ու ջահել.
Դու՝ խաղողի խչմարված վազ,
Վշտերըդ՝ ջուր, ինքըդ ավազ.
Դու՝ բարդենի սաղարթաշատ,
Առուն ի վար փռված փշատ.
Դու՝ կիսավեր ամրոց ու բերդ,
Մագաղաթյա մատյանի թերթ.
Դու՝ Զվարթնոց – ավեր տաճար,
Կոմիտասյան Ծիրանի ծառ.
Դու՝ ջրաղաց խորունկ ձորում,
Դու՝ հորովել անուշ ծորուն,
Փայլ գութանի արծաթ խոփի.
Դու՝ նե՛տ, նիզա՛կ, մկո՛ւնդ կոպիտ,
Դու՝ հայրենի ծխանի ծուխ,
Դու՝ անգի՛ր վեպ, դու՝ Սասնա ծո՛ւռ...

Իմ փառապա՛նծ
Իմ տառապա՛ծ,
Իմ բարձրանո՛ւն,
Իմ քաղցրանո՛ւն:
Դու՝ մրգերի շտեմարան,
Ոսկեվազյան գինու մառան.
Դու՝ թավշե դեղձ, դու՝ փրփուր հաց,
Արտաշատյան խաղող սևաչ.
Դու՝ Սևանի վառվող կոհակ,
Երևանի սյուն ու խոյակ.
Դու՝ հանգրվան, կանչող փարոս,
Դու՝ հայկական գերբ ու դրոշ.
Խոսուն վկա կոտորածի
Ու վճիտ աչք ցամքած լացի,
Արդարության ահեղ ատյան,
Սրի պատյան,
Սիրո մատյան –
Միշտ հի՛ն ու նո՛ր իմ Հայաստան:

«Հայաստան» բանաստեղծությունը ներբող է: **Ներբողը** գովասանական կամ փառաբանական բովանդակություն ունեցող բանաստեղծություն է: Նրան բնորոշ է հանդիսավորությունը, բուռն ոգևորությունը:

Եղիշե Թադևոսյան, «Արարատ» (1914)

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բանաստեղծությունը հատվածաբար կարդացե՛ք դասարանում:
2. Առանձնացրո՛ւ այն բառերը, որոնք բնորոշում են Հայաստանը: Դրանցից որո՞նք ես կարևոր համարում և ինչո՞ւ:
3. Առանձնացրու հատուկ անունները: Դրանք ի՞նչ կարևորություն ունեն Հայաստանի համար:
4. Ի՞նչ տրամադրություն և գույներ կան բանաստեղծության մեջ: Կարծիքդ հիմնավորի՛ր համապատասխան մեջբերումներով:
5. Համեմատի՛ր այս բանաստեղծությունը Սահյանի «Անունդ տալիս» բանաստեղծության հետ:
6. Օգտվելով Պ. Սևակի այս բանաստեղծությունից՝ պատրաստի՛ր գովազդային հոլովակ կամ պաստառ Հայաստանի մասին:

ՔԻՉ ԵՆՔ, ԲԱՅՑ ՀԱՅ ԵՆՔ

Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում:

Մենք մեզ ո՛չ ոքից չենք գերադասում:
Պարզապես մենք էլ պիտի ընդունենք,
Որ մե՛նք, միայն մե՛նք Արարատ ունենք,
Եվ որ այստեղ է՝ բարձրիկ Սևանում,
Երկինքը իր ճիշտ պատճենը հանում:
Պարզապես Դավիթն այստեղ է կռվել:
Պարզապես Նարեկն այստեղ է գրվել:
Պարզապես գիտենք ժայռից վանք կերտել,
Քարից շինել ձուկ, և թռչուն՝ կավից,
Ուսուցմա՛ն համար և աշակերտե՛լ
Գեղեցկի՛ն,
Բարո՛ւն,
Վսեմի՛ն,
Լավի՛ն...

Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում:

Մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում
Պարզապես մեր բախտն ուրիշ է եղել,-
Պարզապես շատ ենք մենք արյուն հեղել.
Պարզապես մենք մեր դարավոր կյանքում,
Երբ եղել ենք շատ
Ու եղել կանգուն,
Դարձյա՛լ չենք ճնշել մեկ ուրիշ ազգի,
Ո՛չ ոք չի տուժել զարկից մեր բազկի:
Եթե գերել ենք՝
Լոկ մեր գրքերով.
Եթե տիրել ենք՝
Լոկ մեր ձիրքերով...
Պարզապես մահն էր մեզ սիրահարվել,
Իսկ մենք ինքնակամ նրան չենք տրվել:
Ու երբ ճարահատ մեր հողն ենք թողել՝
Ո՛ւր էլ որ հասել, որտեղ էլ եղել,
Ջանացել ենք մենք ամենքի՛ համար.
Շինել ենք կամուրջ,
Կապել ենք կամար,
Ամե՛ն տեղ հերկել,
Հասցրել բերքեր,
Ամենքի՛ն տվել մի՛տք, առա՛ծ, երգե՛ր՝

Բանաստեղծությունը կարող է ոչ միայն չունենալ հանգեր, այլև տողերը կարող են բաղկացած լինել անհավասար թվով վանկերից: «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծության մեջ տողերն ունեն 5, 10 և 15 վանկ: Նման դեպքերում ռիթմը ապահովվում է այսպես կոչված **ոտքի** միջոցով: Այս բանաստեղծության մեջ յուրաքանչյուր 5 վանկի խումբը մեկ ոտք է, և դա երբեք չի խախտվում:

Պաշտպանել նրանց հոգևոր ցրտից,-
Ամե՜ն տեղ թողել մեր աչքից՝ ցոլանք,
Մեր հոգուց՝ մասունք,
Եվ նշխար՝ սրտից...

Մենք քիչ ենք, այո՛, բայց կոչվում ենք հայ -
Գիտենք դեռ չանցած վերքերից տնքալ,
Բայց նոր խնդությամբ ցնծալ ու հրճվել.
Գիտենք թշնամու կողը մխրճվել
Ու բարեկամին դառնալ աջակից.
Դուրս գալ մեզ արված բարության տակից՝
Մեկի փոխարեն տասն հատուցելով...
Հօգուտ արդարի և արեգակի
Գիտենք քվեարկել մեր կյանքով նաև...
Բայց թե կամենան մեզ բռնի վառել՝
Մենք գիտենք մխա՛լ - և կրա՜կ մարել.
Իսկ եթե պետք է խավարը ցրել՝
Գիտենք մոխրանալ որպես վառ կերոն.
Եվ գիտենք նաև մեզ կրքոտ սիրել,
Բայց ուրիշներին մի՜շտ էլ հարգելով...

Մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում,
Բայց մեզ էլ գիտենք -
Մեզ հա՛յ են ասում:
Եվ ինչո՞ւ պիտի չհպարտանանք...

Կա՛նք: Պիտի լինե՛նք: Ու դեռ - շատանա՜նք:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Դուրս գրի՛ր այն բառերը, որոնք ազգային արժեքներ են նշանակում: Հիմնավորի՛ր ընտրությունդ:
2. Ընտրի՛ր տողեր, որոնք արտահայտում են բանաստեղծության հիմնական իմաստը: Հիմնավորի՛ր ընտրությունդ:
3. Ըստ բանաստեղծության՝ շարադրի՛ր այն հիմնական հատկանիշները, որոնք ունի հայը:
4. Մեկ նախադասությամբ ներկայացրո՛ւ բանաստեղծության հիմնական ասելիքը:
5. Բանաստեղծության բանալի բառերով գրի՛ր արձակ կամ չափածո խոսք՝ նվիրված հայ ժողովրդին:

ԾՆՎԵԼ ԵՄ

Ես ծնվել եմ նրա համար,
Որ մոր սրտում կարոտ դառնամ
Եվ սպասվող որդու նման
Հեռուներից վերադառնամ.

Ես ծնվել եմ նրա համար,
Որ ցավածին մխիթարեմ.
Ջահելների հարսանիքին
Ձեռքիս գինի՝ զվարթ պարեմ.

Նորածընի բերնով ճչամ
Ու մոր բերնով ասեմ «նանիկ».
Տուն երազող զույգի համար
Դառնամ սիրո համեստ տանիք.

Եթե շուրջըս խավար լինի՝
Մարդկանց համար փայլատակեմ,
Հասակով մեկ փռվեմ գետին՝
Վհատության ճամփան փակեմ...

«Ծնվել եմ» բանաստեղծությունը Պարույր Սևակի **«Մարդը ափի մեջ»** բանաստեղծական շարքից է: Այդ շարքից են նաև **«Ապրել», «Փառաբանում եմ», «Խոստանում եմ»** և այլ բանաստեղծություններ: Դրանք միավորվում են ներքին տրամադրության և ընդհանուր ասելիքի շնորհիվ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բանաստեղծության բովանդակությունը վերաշարադրի՛ր քո բառերով:
2. Փորձի՛ր նույն ոճով գրել քո մասին՝ պատասխանելով հետևյալ հարցերին՝ ի՞նչ եմ ուզում կյանքից, ինչո՞ւ եմ ուզում, ի՞նչ եմ պատրաստ տալ մարդկանց ու աշխարհին և այլն:
3. Համեմատի՛ր քո գրածը բանաստեղծության հետ:
4. «Մարդը ափի մեջ» շարքից ընտրի՛ր որևէ բանաստեղծություն, գրավոր կամ բանավոր մեկնաբանի՛ր այն:

Ամփոփիչ գործնական աշխատանք

Պարույր Սևակի տարբեր ստեղծագործություններից ընտրի՛ր տողեր: Դրանցից կազմի՛ր ծաղկաքաղ՝ ստեղծելով հեղինակի դիմանկարը: Օրինակ՝ Սևակը ծնվել է, որ վիատության ճամփան փակի: Հիմնավորի՛ր ընտրությունդ:

Բաժանվե՛ք խմբերի և պաստառ ձևավորե՛ք՝ ներառելով *հետաքրքիր փաստեր գրողի մասին, նրա մտքերից սեփական դատողություններ:*

Պատկերացրո՛ւ, որ քեզ է հանձնարարված նկարազարդել և ձևավորել Պարույր Սևակի ժողովածուներից մեկը: Կատարի՛ր այդ աշխատանքը և ներկայացրո՛ւ ընկերներիդ:

Անդրադարձ

Դու ծանոթացար Պարույր Սևակի կյանքին և ստեղծագործություններից մի քանիսին: Ի՞նչ նոր բան սովորեցիր: Ո՞ր ստեղծագործությունը քեզ դուր եկավ. ինչո՞ւ:



ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

(1935-2002)

Հրանտ Մաթևոսյանի հայրական տունը:

Հրանտ Մաթևոսյանը 1983 թվականին արժանացել է Հայաստանի, իսկ 1984-ին՝ Խորհրդային Միության գրական բարձրագույն պարգևներին՝ Պետական մրցանակների:

Կյանքը, ուսումնառությունը: Հայ մեծ գրող Հրանտ Մաթևոսյանը ծնվել է 1935 թվականի փետրվարի 12-ին Թումանյանի շրջանի **Ահնիձոր** գյուղում (Լոռու մարզ): Յոթնամյա կրթություն է ստացել հայրենի գյուղի դպրոցում: Երկու տարի սովորել է հարևան Լորուտ գյուղի դպրոցում: Այնուհետ կրթությունը շարունակել է **Կիրովականի** (այժմ՝ **Վանաձոր)** մանկավարժական ուսումնարանում: 1952 թվականին տեղափոխվելով Երևան՝ Մաթևոսյանը երեք տարի սովորել է արհեստագործական ուսումնարանում՝ ստանալով գրաշարի մասնագիտություն: Այստեղ շարունակել է նաև միջնակարգ կրթությունը՝ ավարտելով Մանուկ Աբեղյանի անվան երեկոյան դպրոցը: 1958-1962 թվականներին սովորել է Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմալեզվաբանական ֆակուլտետում: Ուսմանը զուգահեռ որպես սրբագրիչ աշխատել է «Սովետական Հայաստան» օրաթերթում, «Սովետական գրականություն» ամսագրում ու «Գրական թերթում»:

1965-1967 թվականներին **Մոսկվայում** հաճախել է բարձրագույն կինոսցենարական դասընթացների:

1996-2000 թվականներին եղել է Հայաստանի գրողների միության նախագահը:

Մահացել է 2002 թվականի դեկտեմբերի 18-ին: Թաղված է Երևանի Կոմիտասի անվան հայոց մեծերի պանթեոնում:

Ստեղծագործությունը: Հրանտ Մաթևոսյանի հրապարակված առաջին ստեղծագործությունը **«Տափաստանում»** ակնարկն է, որը լույս է տեսել 1959 թվականին՝ «Սովետական գրականություն» ամսագրում: Դրան հաջորդել են մի քանի ակնարկներ ու պատմվածքներ ևս, սակայն գրական աշխարհում մեծ ուշադրության չեն արժանացել: Ամեն ինչ փոխվեց, երբ 1961 թվականին «Սովետական գրականություն» ամսագրում լույս տեսավ **«Ահնիձոր»** ակնարկը: Այն մեծ աղմուկ հանեց, որովհետև երիտասարդ գրողը բոլորովին այլ կողմից էր պատկերել գյուղի կյանքը, բացահայտել ճշմարտություններ, որոնք ձեռնտու չէին իշխանություններին: Նրանք լայն հասարակության աչքից սովորաբար կոծկում էին ճշմարտությունը՝ գյուղական կյանքը ներկայացնելով իբրև հովվերգություն:

«Ահնիձոր» ակնարկի հրապարակումից հետո Մաթևոսյանին այլևս չէին հրատարակում թերթերում և ամսագրերում: Այդ է պատճառը, որ նրա առաջին գիրքը՝ **«Օգոստոս»** ժողովածուն, լույս տեսավ միայն 1967 թվականին: Բայց ունենալով ընթերցողի ու որոշ հեղինակավոր քննադատների աջակցությունը Մաթևոսյանը՝ առանց նահանջելու իր ստեղծագործական սկզբունքներից շարունակեց գրել և հրատարակել պատմվածքներ, վիպակներ, հոդվածներ, կինոսցենարներ: **«Օգոստոս»**-ին բավական երկար ընդմիջումից հետո հաջորդեցին **«Ծառերը»**, **«Մեր վազքը»**, **«Տերը»** ժողովածուները: Մաթևոսյանը մեծ ճանաչում ձեռք բերեց ոչ միայն Խորհրդային Միությունում, այլև աշխարհի բազմաթիվ

Հրանտ Մաթևոսյանի պաշտոնական կայքէջը:

Հրանտ Մաթևոսյանը գրել է **ակնարկներ,** էսսեներ, **պատմվածքներ, վիպակներ,** հոդվածներ, սցենարներ:

Երևանում՝ Աբովյան 51/1 հասցեում է «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոնթանգարանը:

երկրներում: Նրա ստեղծագործությունները թարգմանվեցին բազմաթիվ լեզուներով:

Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունների հիման վրա, ինչպես նաև նրա կինոսցենարներով նկարահանվել են մի շարք ֆիլմեր՝ **«Մենք ենք, մեր սարերը», «Աղքատի պատիվը», «Աշնան արև», «Այս կանաչ, կարմիր աշխարհը», «Տերը»** և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է Հրանտ Մաթևոսյանի ծննդավայրը: Տեղեկություններ գտի՛ր դրա մասին:
2. Ի՞նչ աշխատանքով է զբաղվել Մաթևոսյանը: Կազմի՛ր նրա ինքնակենսագրականը:
3. Որտե՞ղ է Հայաստանի գրողների միության շենքը: Ի՞նչ գիտես դրա մասին:
4. Մաթևոսյանը շատ է գրել գյուղի մասին: Ներկայացրո՛ւ քո գյուղը կամ քո իմացած գյուղերից մեկը:
5. Ի՞նչ նոր թեմաներ է բերել Հրանտ Մաթևոսյանը հայ գրականություն:

Սցենարը ֆիլմի գրական հիմքն է: Այն բաղկացած է երկխոսություններից և բեմական արձակ տեքստից, որ այլ կերպ անվանում են նաև **ռեմարկ:**



Գագիկ Սիրավյան, «Հրանտ Մաթևոսյան» (1987)

Հրանտ Մաթևոսյանի կյանքի և ստեղծագործության հետաքրքիր դրվագներին ավելի մանրամասն ծանոթանալու համար դիտի՛ր «Հրանտ Մաթևոսյան. աշխարհի մերկացած նյարդը» տեսաֆիլմը:

Սեդրակ Առաքելյան, «Բնանկար. Դաշտ» (էտյուդ) (1927)

Մտածի՛ր և քննարկի՛ր դասընկերներիդ հետ:

Ուշադի՛ր նայիր նկարին և ասա՛ տպավորությունդ: Եթե հայտնվեիր այսպիսի դաշտում, առաջինը ի՞նչը կնկատեիր և ի՞նչ զգացողություն կունենայիր:

ԿԱՆԱՉ ԴԱՇՏԸ

[1]

Կայծակը չոր ճայթյունով բախվեց ժայռին, մի կողմ շպրտվեց և թաղվեց կանաչ գետնի մեջ: Ժայռը կարծր էր, կայծակը հազիվ թե կարողացավ գորշ այդ ժայռից պոկել քարի մի երկու փշուր: Ժայռի տակ կանաչ գետինը այդ հովտում ճայթող բոլոր կայծակների գերեզմանոցն էր. գարունների և ամառների բոլոր կայծակները թաղվում էին ժայռի տակ, և մոտիկ կաղնին միշտ, ամեն ճայթյունի վախից սրսփում և, իր մտքում, կաղնիորեն շնորհակալ էր լինում ժայռին այն բանի համար, որ նա՝ ժայռը, հովիտ նետվող բոլոր կայծակները ձգում թաղում է իր տակ և կաղնուն փրկում խանձվելուց:

Քիչ առաջ, երբ կայծակը պտտվում էր հովտի և բլուրների վրա և մտածում էր ճայթել ու դեռ չէր ճայթել, քուռակի մայրը մեղմ խրխինջով կանչեց քուռակին. քուռակի մայրը գիտեր, որ կայծակը ճայթելու է, ճայթյունը վախեցնում է քուռակին, իսկ քուռակը կարծեց մայրն իրեն կանչում է կուրծք տալու և ականջ դրեց ինքը իրեն, ականջները շարժեց և ունկնդրել սկսեց ինքը իրեն, թե ինքն արդյո՞ք ուզում է կուրծք

Ի՞նչ տրամադրություն կա առաջին հատվածում:

ուտել, և այնքան էլ չէր ուզում ուտել, ուզում էր խոտերից ու ծաղիկներից հոտ քաշել և մեկիկ-մեկիկ ճանաչել խոտերը, և հենց այդ ժամանակ ճայթեց կայծակը: Քուռակը խրտնեց ու վազեց դեպի մայրը, բայց շատ էր վախեցել, մորը չէր տեսնում, ուրիշ կողմ էր փախչում: Մայրն ուզեց գնալ դեպի քուռակը, բայց վզի պարանը խանգարեց: Եվ մայրը քուռակին խրխինջով կանչեց իր մոտ:

Քուռակը մեկ ամսվա քուռակ էր, միամսյա նրա կյանքում դա առաջին կայծակն էր: Նա պատսպարվեց մոր լանջի տակ: Մոր լանջի տակից, ականջները սրած, քուռակը մի քիչ լսեց անձրևի թմբկահարումը կաղնու տերևներին, մի քիչ նայեց ժայռին, մասրենու թփին, կաղնուն, աչքերը թարթեց և մոռացավ, որ ինքը վախեցել էր կայծակի ճայթյունից, կարծեց ինքը մոր մոտ էր եկել կուրծք ուտելու: Գանգուր, սև պոչիկը թափահարելով՝ քուռակը մտավ մոր փորի տակ: Պառավ ձին ոտքը ետ դրեց և թուլացրեց կաթի երակները, որպեսզի իր քուռակը ազատ ծծի և կուշտ ծծի:

Ընտ հատվածի՝ նկարագրի՛ր քուռակին:

Դա աստղազարդ քուռակ էր, այսինքն՝ ծածկված էր եղյամի հատիկների նման աստղիկներով: Ոտքերը բարակ ու երկար էին: Ետևի աջ ոտքի սրունքը սպիտակ էր: Ինքը կարծես եղյամոտ էր, ետևի աջ ոտքը՝ ձյունոտ: Վիզը բարակ ու երկար էր: Գլուխը փոքր էր, ճակատին կլորիկ սպիտակ կար, աստղածաղկի նման: Այդ հովտի առվից ջուր խմելու էին գալիս եղնիկներ, ուլեր ու գառներ, նաև՝ այդ ձին, որ շատ քուռակներ էր ունեցել, բայց այս քուռակը այս կանաչ դաշտի ամենագեղեցիկ արարածն էր: Բաշը և պոչը սև էին: Մենք չգիտեինք, թե ինչպիսին են քուռակի աչքերը, որովհետև նա խրտնում էր, և մենք չէինք կարողանում մոտենալ նրան, բայց ասենք, որ այդ քուռակի աչքերը շատ գեղեցիկ աչքեր էին, քանի որ ձիերի աչքերը գեղեցիկ են լինում, շրջապատն արտացոլվում է ձիերի աչքերում: Քուռակի աչքերում հիմա արտացոլվում էին կաղնին, ծաղիկները, մասրենին, իր կարմիր մայրը և ամբողջ կանաչ հովիտը:

Նա մի քիչ հիմարիկ էր, բայց հիմարիկ էր փոքրության պատճառով: Անձրևի կաթիլը գլորվեց մտավ նրա ոտքերի արանքը, և նա խրտնեց ու փախավ մոր մոտից: Մայրը նրան ետ չկանչեց. անձրևը դադարել էր, կայծակ այլևս չէր ճայթելու, և հիմա արև էր:

Արևի մեջ կանաչ դաշտը փայլում էր: Թացության ու առատ լույսի մեջ փայլում էր նաև այդ հովտի միակ կաղնին, և մասրենու թո՛ւփն էր փայլում, և ձիու թաց մե՛ջքը, և քուռակի՛ մեջքը, և առո՛ւն, որ սկսվում էր մոխրագույն ժայռից և գալիս ու գնում էր կանաչ հովտով: Առվից կայծակի հոտ

էր գալիս, և քուռակը մի քիչ խրտնեց: Մասրենուց նույնպես կայծակի հոտ էր գալիս. քուռակը մի երկու ցատկ խրտնեց, կանգ առավ, նայեց մասրենուն և տոտիկ-տոտիկ գնաց՝ նորից հոտոտելու:

[2]

Ձին ճանաչում էր այդ հովտի բոլոր բույրերն ու հոտերը: Նա գիտեր բոլոր հովիտների ու բլուրների բույրերը, բայց այս հովտի բույրերն ավելի լավ գիտեր, քանի որ ձիուն այս հովտում հաճախ էին կապում արածելու: Կայծակի հուրն անցողիկ էր, արևի տակ, ցողի հետ հիմա պիտի ցնդեր: Ուրցի բույրը նույնպես այս հովտի բույրը չէր, ուրցի բույրը քամին էր նետել բլուրներից հովիտ: Ձին արածում էր և ոչխարի թաց բրդի հոտ էր զգում: Ձին մտածում էր, որ բլուրների մյուս երեսին ոչխարներ են արածում, ուրեմն նաև գամփռ շներ կան:

Բլուրների մյուս երեսին ոչխարներ էին արածում, հովտի թաց խոտը համեղ է, առվի ջուրը համեղ է,- մտածում էր պառավ ձին,- արևը ջերմացնում է, և քուռակը խրտնում ու մեծանում է հովտի ջերմ բարության մեջ:

Ձին բարձրացրեց գլուխը. կաղնին կանգնած էր հանգիստ, ժայռը կեցած էր մի տեսակ քնածի պես, քուռակը մասրենուց հոտ էր քաշում: Արևը ջերմացնում էր, և խոտը համեղ էր, հարկավոր էր արածել: Ձին գլուխը կախեց արածելու, մի երկու բերան խոտ պոկեց, բայց անհանգստացնող ինչ-որ բան կար, և ձին գլուխը բարձրացրեց:

Կանաչ հովտի մեջ անշարժ կանգնած, գլուխը բարձր՝ կարմիր պառավ ձին երկար նայեց հովտին և երկար ունկնդրեց լռությունը: Ամեն ինչ առաջվա պես էր, կաղնին կեցած էր հանդարտ, ժայռը նիրհում էր, քուռակը թռչկոտում էր մասրենու մոտ: Եվ կարծես թե կարելի էր արածել, բայց կարմիր ձին մռութը չիջեցրեց մինչև գետին, գլուխը կտրուկ վեր նետեց և սպասեց ականջները սրած՝ որսալու համար հովտի բոլոր թաքուն ձայները: Եվ սպասեց ռունգները լայնացրած՝ զգալու հովտի օտար հոտերը: Թիթեռները շրշում էին, բզեզները երգում էին, առուն խոխոջում էր, վիզը ձգած՝ քուռակը պտտվում էր թիթեռի ետևից մասրենու շուրջը, բայց պառավ կարմիր ձին ուզում էր լսել ոչ այդ ձայները և ուզում էր տեսնել ոչ այդ պատկերները: Հովտում, համենայն դեպս, վտանգ կար: Օդում այդ վտանգից ձայն չկար, հովտում այդ վտանգը չէր երևում, քամու մեջ այդ վտանգի հոտը չկար, բայց ձին չէր կարողանում արածել:

Գործողությունները ներկայացրո՛ւ հետևյալ աղյուսակով.

Ի՞նչ է եղել	Ի՞նչ է կատարվում	Ի՞նչ է լինելու

Ըստ հատվածի՝ բնութագրի՛ր մայր ձիուն:

Պառավ կարմիր ձին սկսեց զայրանալ: Կարմիր պառավ ձին զայրանում էր այն բանի համար, որ հովտում թշնամի կար, բայց այդ թշնամին չէր զգացվում, չէր լսվում և չէր երևում:

Կանաչ հովտում կանգնած՝ նայում ու լռությունն ունկնդրում էին մոխրագույն ժայռը, փարթամ կաղնին, կարմիր պառավ ձին և մասրենու թուփը: Եվ ժայռի համար կանաչ հովտում չկար ոչ մի վտանգ, որովհետև կայծակ այսօր այլևս չէր լինելու: Կաղնին նայում էր, և կաղնու համար ամեն ինչ լավ էր, որովհետև կայծակ չէր լինելու և ջերմ արև էր: Մասրենու համար նույնպես լավ էր, որովհետև քուռակի դունչը չէր հասնում նրա կատարի մի երկու ծաղկին: Իսկ պառավ կարմիր ձին լարված սպասումից քրտնեց:

Գրի՛ր երեքից հինգ մտահոգություն, որ ուներ մայր ձին:
Ըստ քեզ՝ դրանցից ո՞րն էր ամենակարևորը:

Հովիտը դավաճանում էր ձիուն. հովտում թշնամի կար, բայց հովիտը չէր մատնում թշնամու ձայնը և թշնամու հոտը: Կարմիր պառավ ձին սիրտ չէր անում գնալ դեպի քուռակը. վախենում էր իր ոտնաձայների մեջ կորցնի թշնամու թաքուն ձայները: Կարմիր պառավ ձին սիրտ չէր անում շնչել. վախենում էր իր թոքերի աղմուկի մեջ կորցնի թշնամու թաքուն շնչառությունը: Կարմիր պառավ ձին աչքերը չէր թարթում. վախենում էր, որ իր աչքաթարթի հետ թշնամին տեղից տեղ կցատկի, և ինքը չի հասցնի նկատել նրա ցատկը:

Կանաչ հովտի մեջ այդպես անշարժ կանգնած էին ժայռը, կաղնին, մասրենին, ձին: Ժայռը նիրհում էր: Կաղնու կաղինները ապահով զրահների մեջ լցվում էին հյութով, և կաղնու համար ամեն ինչ լավ էր: Մասրենին իր ծաղկաբաժակները բացել էր արեգակի դեմ և արև էր խմում, իսկ կարմիր պառավ ձին զայրույթից դողում էր: Երբեք, ոչ մի անգամ հովիտը ձիուն այդպես չէր դավաճանել: Գուցե կայծակի՞ հոտն էր ձիու ռունգներին խանգարում զգալ այն հոտը, որ ուներ թշնամին, որը մոտերքում էր, մոտիկ մի տեղ էր և հոտ էր տալիս, բայց նրա հոտը թաքնվում էր կայծակի խանձահոտի տակ:

Քուռակը նայում էր մի բանի և ապա նայում էր մորը: Դարձյալ նայում էր նույն բանին, ապա նայում էր մորը: Այդ բանը մայրը չէր տեսնում, մոր մոտից այդ բանը չէր երևում: Քուռակը նայում էր այդ բանին, ապա գլուխը թեքում էր մոր կողմը: Մայրը կանգնած էր գլուխը բարձր, և մոր աչքերը վառվում էին:

Քուռակը վիզը ձգեց, դնչիկը պարզեց և գնաց դեպի այդ բանը, և այդ պահին մայրը զգաց գայլի զզվելի հոտը: Մայրը խրխինջ արձակեց ու նետվեց դեպի քուռակը և տեսավ, թե գետնից ինչքան սահուն ու երկար ցատկով զատվեց գայլը:

Բլուրների մյուս երեսին լսվեց ձիու ջղային կարճ վրինջը: Բլուրների մյուս երեսին, ոչխարների մոտ, գամփռ շները մի վայրկյան սրվեցին, մի քիչ սպասեցին ուրիշ ձայների և հանգստացան:

Կարմիր ձին նետվեց դեպի քուռակը, թափով նետվեց դեպի գայլն ու քուռակը, բայց տապալվեց: Նա պառավ ձի էր, ուրիշ անգամներ էլ ընկել էր, բայց ոչ մի անգամ այդպես անսպասելի չէր տապալվել: Տապալվեց ու ելավ միանգամից: Նրան տապալել էին իր հուժկու թափն ու պարանը: Պարանը նրան խեղդում էր, պարանը նրան չէր թողնում թռչել իր փոքրիկի մոտ:

Քուռակը փախչում էր մասրենուց դենը հեռու մի տեղ, քուռակն ուզում էր դեպի մայրը գալ, երկար շրջան տալով՝ քուռակը ձգտում էր դեպի մայրը, բայց գայլն ամեն անգամ կտրում էր նրա ճանապարհը և նրան հեռացնում ու դարձյալ հեռացնում էր: Իսկ պարանը խեղդում էր մորը: Եվ քուռակը ցատկեց գայլի վրայով դեպի մայրը, բայց գայլը տակից բռնեց նրա ետևի ոտքը, և քուռակն ընկավ: Քուռակը ճչաց ու վեր ցատկեց:

Հատվածից դո՛ւրս գրիր բնությանը վերաբերող բառեր: Այդ բառերով ներկայացրո՛ւ պատմվածքի այս հատվածի բովանդակությունը:

[3]

Բլուրների մյուս երեսին լսվեց քուռակի սուր ծղրտոցը, և գամփռ շները սրվեցին, և գամփռ շների մեջ սրվեց սևադունչ Թոփուշ շունը:

Քուռակը ճչաց ու վեր ցատկեց, և այդ ժամանակ մայրը ծառս եղավ և ամբողջ ծանրությամբ ու ամբողջ կատաղությամբ ձգվեց դեպի գայլն ու քուռակը, և պարանը կտրվեց ու մտրակվեց մոր ոտքերին: Մայրը գնաց ամբողջ թափով, ամբողջ ուժով, ամբողջ կատաղությամբ ու ամբողջ սիրով: Նա շատ արագընթաց զամբիկ էր, բայց իր կյանքում երբեք այդպես թռիչքի պես չէր սլացել:

Բլուրների մյուս երեսին լսվում էր նրա սմբակների խուլ դոփյունը: Հետո բլուրների մյուս երեսին հովտի ոչ մի ձայն չէր լսվում, և գամփռ շներն ու փոքրիկ հովիվը խաղաղվեցին:

Գայլը քուռակին թողեց ու ազատվեց տրորվելուց: Ձին հարձակվում էր, և գայլը մի քիչ փախավ: Ձին դարձյալ գալիս էր, և գայլը մի քիչ էլ ետ քաշվեց: Դունչը գետնին հպած՝ ձին գալիս էր, դանդաղ, սպառնալի՝ ձին գալիս էր, գայլը ճապաղվեց գետնին և ահա-ահա կարող էր ցատկել ու կախվել ձիու ռունգներից, և ձին շուռ եկավ:

Այս հատվածում առանձնացրո՛ւ քեզ համար ամենակարևոր մասը, դրա մասին կարծիքդ գրավոր արտահայտի՛ր՝ անդրադառնալով հետևյալ հարցադրումներին՝

- ո՞րն էր այս հատվածի ոսկե նախադասությունը,
- ի՞նչն ինձ գրավեց,
- ո՞րն էր հեղինակի ասելիքը,
- ի՞նչ եմ մտածում ես,
- ի՞նչ եզրակացության հանգեցի:

Ձին շուռ եկավ, և գայլը ցատկեց ու կանգնեց ձիու դեմ: Քուռակը լանջի տակ՝ ձին դարձյալ շուռ եկավ, և նրա հետ պտտվեց նաև գայլը: Գայլը անընդհատ պտտվեց, և ձին անընդհատ շուռ եկավ: Երկու կարճ ցատկով գայլը հայտնվեց ձիու դնչի տակ, բայց ձին դարձյալ հասցրեց շրջվել ու աքացի շպրտել: Մի երկար ցատկով գայլը հայտնվեց ձիու դնչի տակ, և ձին չհասցրեց լրիվ շրջվել, գայլը կարողացավ քերծել ձիու ռունգները, և ձին կարողացավ նրան տրորել առջևի ոտքով: Գայլը ետ քաշվեց, բայց չփախավ, նստեց ու նայեց ձիուն, և ձին էլ նայեց գայլին: Եվ գայլը հասկացավ, որ ձին իր քուռակին պաշտպանելու է մինչև վերջ, և ձին հասկացավ, որ գայլը չի հեռանալու: Ձին քրտնել էր, բայց գայլը նույնպես հոգնել էր: Գայլը նետվեց միանգամից: Դրանից հետո գայլն անընդհատ ցատկեց դեպի ձիու ռունգները, և ձին անընդհատ շրջվեց ու քուռակին անընդհատ պահեց լանջի տակ:

Արդեն երեկո էր, նրանց շարժումները դանդաղել էին, ձիու շուրջը գայլը պտտվում էր դանդաղ, գրեթե քարշ էր գալիս, գրեթե սողում էր, և ձին իր տեղում պտտվում էր դանդաղ, դժվար, երբեմն սայթաքելով և գրեթե ընկնելով: Նրանց աչքերը մթնել էին, և նրանք միմյանց հազիվ էին տեսնում: Հոգնածությունից նրանք խլացել էին:

Համեմատի՛ր մայր ձիու և գայլի կերպարները՝ նշելով ընդհանրությունները և տարբերությունները:

[4]

Փոքրիկ հովիվը դուրս եկավ բլուրների գլուխ և նայեց մայրամուտին: Մայրամուտը կարմիր էր, մայրամուտի տակ գեղեցիկ էր հովտի միակ կաղնին... բայց այն, ինչ տեսավ փոքրիկ հովիվը, այնքան տգեղ էր, որ փոքրիկ հովիվը չէր կարողանում խոսել. գայլը կախվել էր կարմիր ձիու ռունգներից, և կարմիր պառավ ձին չէր կարողանում տրորել գայլին. կարմիր պառավ ձին արդեն-արդեն խոնարհվում էր:

– Այ տղա, հե՛յ,– կանչեցին դիմացի բլուրներից,– էն գելն էն ձիուն խեղդում է, այ տղա, հե՛յ... շներն ո՞ւր են, հե՛յ...

Փոքրիկ հովիվը բերանը բացեց ծղրտալու, բայց չկարողացավ ձայն հանել: Փոքրիկ հովիվը միայն ձեռքերը թափահարեց: Գամփռ շները սրվեցին ու նայեցին: Գամփռ շները տեսան ու թռան... Թոփուշը, Բոբը, Սևոն, Բողարը, Չալակը, Չամբարը: Սևադունչ Թոփուշը վարպետ շուն էր, լուռ գնում ու բռնում էր, նա առջևից հիմա էլ լուռ էր վազում, իսկ Բողարը ջահել շուն էր, գայլերից դեռ մի քիչ վախենում էր. այդ պատճառով էլ հաչում էր դեռ հեռվից, որպեսզի գայլերը

փախչեն, և ինքը այդպիսով նրանց հետ չկռվի: Բողարը հիմա գնում էր հաչելով: Բողարը շատ արագավազ էր, նա հիմա Թոփուշից երբեմն առաջ էր անցնում, բայց չէր համարձակվում պոկվել խմբից ու գնալ մենակ, կանգնում էր և հաչելով սպասում Թոփուշին, վազում էր Թոփուշի կողքից, սակայն դարձյալ առաջ էր անցնում և դարձյալ դանդաղում:

Երբ ձին ահա-ահա պիտի ծնկեր, գայլը հեռվում, կարծես երազում, շների հաչոց լսեց: Գայլը չուզեց հավատալ, թե շները հաչելով իր վրա են գալիս. բախտը հո չէր կարող լինել այնքան անողոք, որ իր մեկ լրիվ օրվա չարչարանքն անտեղի անցներ, և ինքը իր երեք ձագի մոտ դառնար քաղցած ու դատարկ:

Երբ իր մեջ այլևս ուժ չկար, և ռունգների ցավերը բթանում էին, և աչքերը բոլորովին մթնել էին, և ականջները լիովին խլացել էին, մայր ձին հեռու-հեռվում շների հաչոց լսեց և հավատաց, որ շները հաչում են իր քուռակի համար և իր համար. բախտը հո չէր կարող լինել այնքան դաժան, որ նրա քուռակն ապրեր ընդամենը մի հունիս: Պառավ ձին գիտեր, որ շները մոտիկ են, և շների հաչոցը հեռավոր է թվում իր հոգնած խլության պատճառով: Պառավ ձին գիտեր, որ ինքը կարող է համբերել մի քիչ էլ, դեռ մի քիչ էլ, մինչև շների հասնելը ինքը պարտավոր է համբերել: Բայց ի՜նչ ծանր է շնչելը, ի՜նչ ծանր բեռ է դարձել այս կյանքը:

Շների հաչոցը պայթեց գայլի հենց ականջների մեջ, բայց գայլը դարձյալ չէր հավատում, որ այդպիսի տանջալից հաջողությունից հետո այդպիսի ձախողություն կպատահի: Ձագերը տանը քաղցած, իր պտուկները դատարկ... Վիզը ծակծկեցին, ականջը ծակծկեցին, և գայլը բաց թողեց ձիու ռունգները: Թաթը բռնել էին: Թաթն ազատելու ուժ չկար: Գայլն ուզում էր քնե՛լ, քնել: Կռվելու ուժ չկար, գայլն ուզում էր մեռնել, հանգստանալ: Գայլը ճապաղվեց և բուկը սեղմեց գետնին, որպեսզի շները բուկը չբռնեն: Շները քրքրում էին նրա մեջքը, վիզը, քաշքշում էին ականջներից, իսկ նա բուկը պաշտպանում և հանգստանում էր շների կույտի տակ:

Գայլը մի թաթ կծեց, և շներից մեկը վնգստոցով մի կողմ ցատկեց: Գայլը կանգնեց, և շները, շրջապատած, սպասեցին: Շների մեջ կանգնած՝ գայլը նայեց շներին, և նրանք շատ էին, և դժվար էր, անչափ դժվար էր, անհնար էր ազատվել նրանցից ու քարշ գալ դեպի տուն, ուր սպասում էին ձագերը: Ժանիքները բաց՝ գայլը նայեց շներին, շները նայեցին գայլին, մի պահ այդպես նայեցին միմյանց, և գայլը չգիտեր ինչ է անելու, և շները չգիտեին ինչ են

Բնութագրի՛ր գայլին հետևյալ սկզբունքով՝

Դրական կողմեր	Բացասական կողմեր

Կազմի՛ր պատմվածքի հերոսների ամբողջական ցանկ: Օրինակ՝
- մայր ձի
- կաղնի
- .....

Ըստ քեզ՝ ի՞նչ ավարտ կունենա պատմվածքը:

անելու: Եվ շներից մեկը փշաքաղվեց, ցատկեց ու լանջով խփեց, շպրտեց գայլին: Գայլը հազիվ կարողացավ չընկնել և հասկացավ, որ ամենավտանգավորը դունչը սև այդ շունն է:

– Այ տղա, հե՛յ... Էդ ո՞վ ես, հե՛յ... հասիր էն շներին օգնիր, հասիր էն շներին օգնիր՝ թող խեղդեն, հե՛յ...– կանչեցին դիմացի բլուրներից:

Ձին հազիվ էր կանգնած մնում: Ձիու գլուխը ծանրանում ու խոնարհվում էր: Ձին զգում էր, որ քուռակը ծծում է, և հազիվ կարողանում էր ուրախանալ քուռակի ծծելուց: Ձիու գլուխը հակվեց, ծալվեցին նաև առջևի ոտքերը, իսկ քուռակը դեռ ծծում էր: Ձին փուլ եկավ: Քուռակը հիմա կանգնած էր ձիու մոտ և սպասում էր մոր ելնելուն, սակայն մայրը չէր ելնում: Քուռակը դնչիկով խփեց մոր փորին, սակայն մայրը չկանգնեց, չշարժվեց: Քուռակը նստեց մոր փորի մոտ, և ետևի ոտքը սաստիկ ցավեց, և սկսեց ծծել: Եվ մայրը դեռ կաթ էր տալիս, դեռ վարար, վարար, վարար կաթ էր տալիս, վերջին անգամ կաթ էր տալիս իր այլևս որբ քուռակին, իր կյանքում ունեցած ամենագեղեցիկ քուռակին, որն աստղազարդ էր, սև բաշն ու պոչը՝ գանգուր, սրունքը՝ սպիտակ և ճակատին՝ աստղածաղիկ, որը մի քիչ հիմարիկ էր, բայց հիմարիկ էր փոքրության պատճառով:

Գայլը, համենայն դեպս, կարողացավ փախչել: Եթե փախչել չկարողանար, նրա ձագերը որբ կմնային և, բոլորովին անօգ էին, կկոտորվեին, և գայլը կարողացավ փախչել: Դա փախուստ չէր, դա նահանջ էր քայլ առ քայլ, ցատկ առ ցատկ, մի քանի ցատկ առ մի քանի ցատկ. մի քանի ցատկից հետո, երբ շները հասնում ու քիչ էր մնում բռնեին, գայլը շուռ էր գալիս փշաքաղվում ու ժանիքները բացում, և շները կանգ էին առնում, և գայլը դարձյալ մի երկու ցատկ հեռանում էր:

Սևադունչ հսկա գամփռը այդպես էլ չկարողացավ բռնել գայլի բուկը, և գայլը չկարողացավ կծել ու վախեցնել նրան, բայց սևադունչ գամփռը գայլին հիմա չէր հետապնդում, որովհետև գայլի վզից մի փունջ մազ էր մտել նրա բերանը, և սևադունչը հիմա ետ էր ընկել և որձկալով ու փռշտալով՝ զզվանքով մաքրում էր բերանը: Սևադունչը չէր հետապնդում, իսկ մյուս շները վտանգավոր չէին, որովհետև վարպետ չէին:

Շները կորցրին գայլին, ապա կորցրին նաև հետքը, բայց երկար ժամանակ պտտվում, վազում, խառնվում ու ոռնում էին կանաչ հովտի մեջ, ուր հիմա մթնել էր ժայռը, հանգիստ կանգնած էր կաղնին, իր մի երկու ծաղկաբաժակը ցող հավաքելու էր պարզել մասրենին, և ուր ընկած

էր կարմիր պառավ ձիու մարմինը: Քուռակը կանգնած էր մոր մոտ և մի քիչ անհանգստանում էր, կարծես թե արդեն հասկանում էր պատահածը:

Մայրամուտի տակ ամբողջ հովիտը լուսավոր կանաչ էր, և սև էր, շատ մուգ սև էր պառավ կարմիր ձիու շուրջը: Պառավ ձիու կարմիր մարմինն ընկած էր այդ սև շրջանակի մեջ: Այդ սև շրջանակը ձիու և գայլի կռվի տեղն էր, այդ սևը ձիու տրորածն էր: Այդ սև, տրորված, քանդված, շատ տրորված գետնին նայելով կարելի էր հասկանալ, թե ինչքան երկար ժամանակ էր պտտվել պառավ ձին գայլի հետ ինքն իր շուրջը:

Սև այդ շրջանակը այդպես սև էլ մնաց մի երեք տարի, մի երեք տարի այդտեղ խոտ չէր ծլում, և մեր հին լավ ձիու սպիտակ կմախքն ընկած էր այդ սև շրջանի մեջ: Հետո կանաչը հաղթեց. կանաչը ծլեց այդ սև շրջանի մեջ, կմախքի արանքներից ծաղիկներ ծաղկեցին, խոտեր ելան, փարթամացան, և կանաչ հովիտը հիմա լիովին կանաչ է:

Երբ բլուրների գլխից նայում ես, կանաչ հովիտը լիովին կանաչ է, կաղնին վեհորեն կեցած է կանաչ հովտում, ժայռը նիրհելով ունկնդրում է ամպերի շրշյունը, մասրենին իր հինգ հատ ծաղկաբաժակը պահել է արևի տակ, և կանաչ դաշտում կապած արածում է աստղազարդ մի ձի՝ ետևի աջ ոտքի սրունքը սպիտակ, ոտքերը երկար, վիզը երկար, բաշն ու պոչը արևախանձ ու թուխ, ճակատին՝ սպիտակ աստղածաղիկ: Երբ քայլ է դնում, ետևի աջ ոտքը մի քիչ ձգվում է, ջղային դողի պես, հին սպիի պատճառով:

Աստղածաղիկ ճակատով ձին բարձրացնում է գեղեցիկ գլուխը, և նրա աչքերի մեջ արտացոլվում են ժայռը, կաղնին, ծաղկած մասրենին, կանաչ հովիտը և կապույտ երկնքի սպիտակ ամպերը:

– Վերջացա՞վ:

– Վերջացավ:

– Ոչ:

– Ինչո՞ւ ոչ:

– Չի մայրիկը թող չմեռնի:

– Ես չեմ կարող ասել, թե մայր ձին չմեռավ, որովհետև մայր ձին մեռավ: Երբ փոքրիկ հովիվը վազելով իջավ բլուրների գլխից, մայր ձին մեռած էր, քուռակը տխուր կանգնած էր մոր կողքին: Երբ այն հովիվը, որ կանչում էր՝ «Այ տղա, հե՛յ», այդ հովիվը երբ իջավ դիմացի բլուրներից, մայր ձին արդեն լրիվ սառած էր, և ծեր հովիվն ու փոքրիկ հովիվը մի քիչ նստեցին պառավ կարմիր ձիու կողքին և մտածեցին, թե ինչպես են պահելու քուռակին:

Ներկայացրո՛ւ քո զգացողությունները ձիու և գայլի պայքարի հատվածը կարդալիս:

Պատմվածքի վերաբերյալ գրի՛ր հնարավորինս շատ ասույթներ: Օրինակ՝ *ապրել նշանակում է պայքարել:*

– Հետո, ինչպե՞ս պահեցին:

– Մի ուրիշ ձիու կաթով:

– Ոչ, մայրը թող չմեռնի:

– Ես չեմ կարող ասել, թե մայրը չմեռավ, որովհետև ամբողջ ամառն այդ որբ քուռակին ես կերակրում էի ուրիշ ձիերի կաթով:

– Ասե՛մ թող ինչ լինի:

– Ասա:

– Բլուրների մյուս երեսի հովիվը թող բլուրների գլխին լինի և գայլին շուտ նկատի:

– Հովիվը բլուրների մյուս երեսին էր և գայլին նկատեց այն ժամանակ, երբ դուրս եկավ բլուրների գլուխ:

– Ձին ինչո՞ւ մեռավ:

– Երբ նստած էին պառավ կարմիր ձիու մարմնի մոտ, ծեր հովիվը փոքրիկ հովվին ասաց, որ ձիու սիրտը պայթել է քուռակի համար վախենալուց, և զզվանքից ու կատաղությունից:

Թվարկի՛ր մի քանի թեմաներ, որոնք արծարծվում են պատմվածքում: Դրանցից մեկի շուրջ կազմակերպե՛ք քննարկում:

– Գայլի՞ց էր զզվել:

– Այո, գայլից:

– Շները գայլին թող խեղդեն:

– Ես չեմ կարող ասել, թե շները գայլին խեղդեցին, որովհետև մեր սևադունչ շունը գայլի մազ էր կուլ տվել և քիչ էր մնում ինքը սատկի:

– Փոքրիկ հովիվը դո՞ւ էիր:

– Ես էի, ձին մեր ձին էր, քուռակը մեր ձիու քուռակն էր:

– Հիմա քուռակը մեծացե՞լ է, կապա՞ծ է կանաչ հովտում:

– Այո, մեծացել է, կապած է կանաչ հովտում:

– Իր կարմիր մայրիկին հիշո՞ւմ է:

– Գուցե հիշում է իր կարմիր մայրիկին, որովհետև ձիերը հիշում են:

– Դե նորից պատմիր:

– Կայծակը չոր ճայթյունով բախվեց որձաքարե ժայռին, մի կողմ շպրտվեց և թաղվեց կանաչ գետնի մեջ: Մոխրագույն ժայռը կարծր էր, կայծակը հազիվ թե կարողացավ որձաքարե այդ ժայռից պոկել քարի մի երկու փշուր: Միայն թե մի քիչ վախեցավ կաղնին, որովհետև կայծակները խփում ու խանձում են կաղնիները, և շատ վախեցավ երկարոտն աստղազարդ փոքրիկ մտրուկը. քուռակին «մտրուկ» են ասում... այնպես վախեցավ, որ փախչում էր իբր մոր մոտ, բայց մորը չէր տեսնում և փախչում էր ուրիշ կողմ: Եվ կարմիր պառավ ձին մեղմ խրխինջով հայտնեց նրան իր տեղը...

Պատմվածքի ո՞ր կերպարը քեզ դուր եկավ և ինչո՞ւ:

Ամփոփիչ գործնական աշխատանք

Ընտրի՛ր կերպարներից մեկին և պատմվածքի դեպքերը ներկայացրո՛ւ նրա անունից: Խրախուսելի են քո հեղինակային հավելումները:

Դասարանում կազմակերպե՛ք բանավեճ-քննարկում պատմվածքի գաղափարի վերաբերյալ:

Դիտե՛ք Հրանտ Մաթևոսյանի սցենարով նկարահանված **«Մենք ենք, մեր սարերը»** ֆիլմը (ռեժիսոր՝ Հենրիկ Մալյան):

Պատկերացրո՛ւ, որ դու կենսաբան ես: Հետաքրքիր փաստեր հավաքի՛ր ձիերի մասին, սահիկաշար պատրաստի՛ր և ներկայացրո՛ւ դասընկերներիդ:

Անդրադարձ

Դու ծանոթացար Հրանտ Մաթևոսյանի կյանքին և «Կանաչ դաշտը» պատմվածքին: Ի՞նչ նոր մտքեր ունեցար պատմվածքն ընթերցելիս: Ի՞նչն ամենից շատ կարևորեցիր պատմվածքում:

ՋԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ

(1878–1943)

Զապել Եսայանի օրիորդական ազգանունը Հովհաննիսյան է: Նա Եսայան է ստորագրել՝ վերցնելով ամուսնու՝ նկարիչ Տիգրան Եսայանի (1874-1921) ազգանունը: Նրանք ամուսնացել են 1900 թվականին:

ԽՍՀՄ զինվորական կոլեգիան, որ շատերի հետ կայացրել էր Զապել Եսայանի մահավճիռը, 1957-ին հետմահու արդարացրեց նրան՝ ճանաչելով անմեղ:

Կյանքը, ուսումնառությունը: Զապել Եսայանը ծնվել է 1878 թվականի փետրվարի 5-ին Կոստանդնուպոլսի Սկյուտար թաղամասում: Ավարտել է տեղի Սուրբ Խաչ վարժարանը: 1892-ի վերջերին տեղափոխվել է **Փարիզ**: Այստեղ աշխատակցել է Գվիդոն Լուսինյանի ֆրանսերեն-հայերեն բառարանին՝ իբրև սրբագրիչ և խմբագիր, միաժամանակ գրականության դասընթացներ լսել Սորբոնի համալսարանում: 1902-ին վերադարձել է Պոլիս և զբաղվել ստեղծագործական և հասարակական ակտիվ գործունեությամբ: 1905-1908 թվականներին կրկին ապրել է Փարիզում:

1909 թվականին Կիլիկիայում հայերի կոտորածից անմիջապես հետո նա Պոլսի Հայոց պատրիարքարանի հանձնախմբի կազմում մեկնել է դեպքերի վայր և իր տեսածն ու լսածը ներկայացրել «Ավերակներու մեջ» գրքում:

1910-ին կրկին մեկնել է Փարիզ: Հոր ծանր հիվանդության պատճառով 1911-ին վերադարձել է Պոլիս, մնացել մինչև 1914-ի մայիսը: Այնուհետև կրկին մեկնել է Փարիզ, սակայն Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին վերադարձել է Կ. Պոլիս: 1915 թվականի ապրիլի 24-ի գիշերը նա միակ կինն էր, որի անունը գրված էր այն հայ մտավորականների նախապես կազմված ցուցակում, որոնք պետք է աքսորվեին: Դիպվածով ազատվելով ձերբակալությունից ու

աքսորից՝ Զապել Եսայանը շուրջ երեք ամիս փախստականի կյանք է վարել, ապա մեկնել է Բուլղարիա, Ռումինիա, իսկ 1915 թվականի վերջին՝ եկել Կովկաս, ապրել **Թիֆլիսում** ու **Բաքվում**:

Միջին Արևելքի երկրներում Զապել Եսայանը կազմակերպել է Եղեռնից փրկված հայ որբերի հավաքման, նրանց խնամքի ու տեղափոխման գործը:

1933 թվականին խորհրդային իշխանությունների հրավերով Զապել Եսայանը եկել է Հայաստան և աշխատանքի անցել Երևանի պետական համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնում՝ վարելով եվրոպական և մասնավորապես ֆրանսիական գրականության դասընթացը:

Սակայն, ինչպես Խորհրդային Հայաստանի լավագույն մտավորականների մեծ մասը, այնպես էլ Զապել Եսայանը ստոր մատնությունների զոհ դարձավ, բանտարկվեց ու աքսորվեց:

Նրա մահվան հանգամանքները ստույգ հայտնի չեն: Առավել տարածված վարկածով՝ Զապել Եսայանը մահացել է 1943-ին Բաքվի բանտում:

Ստեղծագործությունը: Զապել Եսայանի առաջին բանաստեղծությունը լույս է տեսել 1895 թվականին Արշակ Չոպանյանի խմբագրությամբ լույս տեսնող **«Ծաղիկ»** հանդեսում:

Զապել Եսայանը գրել է **բանաստեղծություններ**, **պատմվածքներ**, **վիպակներ**, **վեպեր**, գրական ու հրապարակախոսական հոդվածներ:

2018 թվականի մարտի 8-ին Փարիզի Հանրապետության պողոտայի և Տլիմսեն ու Սպինոզա փողոցների (20-րդ և 11-րդ շրջաններ) հատման կետում գտնվող ճեմուղին անվանակոչվել է Զապել Եսայանի անունով:

Զապել Եսայանի լավագույն ստեղծագործություններից են **«Կեղծ հանճարներ», «Երբ այլևս չեն սիրեր», «Շնորհքով մարդիկ»** վեպերը: Դրանք միևնույն ժամանակ և՛ ջերմ ընդունելության արժանացան, և՛ քննադատվեցին՝ Զապել Եսայանի արտահայտած որոշ գաղափարների համար: 1935 թվականին Երևանում լույս տեսավ Եսայանի **«Սիլիհտարի պարտեզները»** ինքնակենսագրական վեպը, որտեղ գրողը պատմում էր իր մանկության ու պատանեկության տարիների մասին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է Զապել Եսայանի ծննդավայրը: Ո՞ր հայտնի գրողների ծննդավայրն է այն:
2. Ֆրանսիայի ո՞ր հայտնի համալսարանում է նա գրականության դասընթացի մասնակցել: Տեղեկություններ գտի՛ր այդ համալսարանի մասին:
3. Իր ժողովրդին պատուհասած արհավիրքներին նա ինչպե՞ս է արձագանքել: Ինպե՞ս են դրանք արտացոլվել նրա գրականության մեջ:
4. Ներկայացրո՛ւ Հայոց ցեղասպանության և գրողի կապը:
5. Ի՞նչ ճակատագիր ունեցավ Զապել Եսայանը:
6. Նրա կյանքի ո՞ր դրվագն ես համարում ամենից կարևոր, ինչո՞ւ:

Պետրոս Դուրյանի շիրիմը Ստամբուլում

Ժան Օնորե Ֆրակոնար, «Երիտասարդ ընթերցողը» (1772)

Մտածի՛ր և քննարկի՛ր դասընկերներիդ հետ:

Բնութագրի՛ր այս նկարը: Ի՞նչ կասես հերոսուհու մասին:

ԴՈՒՐՅԱՆԻ ՇԻՐԻՄԸ

(հատված «Սիլիհտարի պարտեզները» վեպից)

Անչափ եռանդով անձնատուր եղեր էի ընթերցանության: Առաջին անգամ որ ֆրանսերեն գիրք մը կարդացի, մինչև վերջը գրեթե ամբողջովին հասկնալով, նոր հորիզոններ բացվեցան իմ առաջ:

Դպրոցը ավարտելե հետո կտրվեր էի այն մարդոցմե, որոնք մեզ հրահրված վիճակի մեջ կը պահեին: Մտեր էի ինքնամփոփումի շրջանի մը մեջ: Ինքզինքս կը զգայի հոգնած, ինչպես եթե հիվանդութենե մը դուրս ելած ըլլայի: Մյուս կողմանե կառավարությունը կարծես մեղմացուցեր էր իր խստությունները: Ընդհանուր ներումի հետևանքով շատ մը բանտարկյալներ տուն վերադարձեր էին. նոր ձերբակալություններ չի կային և ազգային բրոբականտը որոշ չափով թուլացեր էր. ան անշուշտ ստացեր էր ուրիշ կերպարանք և ես հեռու կը գտնվեի առժամանակյա կերպով անոր ազդեցության շրջանակեն:

Ժամերով կ'առանձնանայի սենյակս և կը կարդայի: Ուրիշ հարցեր և խնդիրներ սկսան ինձ զբաղեցնել և առաջին հերթին իմ դպրոցական ընկերուհիներուս և դեռ ուրիշ ծանոթ բարեկամուհիներու դրությունը, որոնք հակամարտության

Կենսագրական ի՞նչ տեղեկություններ է հաղորդում առաջին պարբերությունը:

մեջ էին ոչ միայն հասարակության կարծիքին հետ, այլև իրենց ընտանիքին, իրենց ծնողներուն և գլխավորաբար իրենց հոր հետ:

Ինչո՞ւ էր հեղինակն ինքնամփոփ դարձել:

Այդ նորահաս աղջիկները առանձին դուրս չէին կրնար ելլել, անոնցմե ոմանք ստիպման տակ էին ամուսնանալու այնպիսի մարդոց հետ, որոնց նկատմամբ ատելություն և արհամարհանք ունեին: Ազատ չէին հագնելու ինչպես կ'ուզեն, վարվելու ինչպես հարմար կը գտնեն, վերջապես անոնք զրկված էին ամենատարրական ազատություններե և կզգային, որ ուշ թե կանուխ պիտի մտնեին ծնողական ցանկապատին մեջ, ուրկե դուրս գալու և նոր կյանք մը ստեղծելու ցանկությունը ունեցեր էին:

Այդ օրերուն մեր կողքի տանը նոր վարձվորներ եկան: Այդ նոր ընտանիքը սգավոր էր և իրենց տղան, Միհրան, որուն քույրը նոր մեռեր էր, իմ ուշադրությունս գրավեց, որովհետև մորաքույրերս ըսին, որ տարօրինակ կերպով կը նմանի Զմբայենց Պետրոսին (Պետրոս Դուրյանին):

Մարդու իրավունքների ոտնահարման ի՞նչ երևույթի մասին է պատմում հեղինակը: Արդիակա՞ն է այդ երևույթը մեր օրերում:

Շուտով եղանակը գտանք իրարու հետ բարեկամանալու: Գիրքեր փոխ կուտայինք իրարու և կը խոսեինք մեր ըրած ընթերցումներուն վրա: Մեր տեսակցությունները տեղի կ'ունենային պարտեզի կողմը՝ պատշգամին վրա, որ բաժնված էր ցանկապատով մը: Միհրան ամեն բանե վեր կը դասեր Դուրյանի բանաստեղծությունները և երբեմն կ'արտասաներ հուզումով և զգացումով և ես մտածելով Դուրյանին կը նայեի իր կամարաձև հոնքերուն, որոնք կը գծվեին իր տժգույն ճակատին վրա:

Եվ իրիկուն մը, երբ վարանող շարժումներով ինձ վերադարձուց փոխ տված գիրքս, հասկցա որ արտասովոր բան մը կա և սիրային նամակ մը գտա գիրքին մեջ:

Մեր պատանեկական սերը կը կայանար իրարու հանդիպիլ ցանկով բաժնված պատշգամբին վրա, խոսիլ բանաստեղծություններու մասին և ստանալ իրմե հասմիկի փունջեր. ըսեր էի, որ նախասիրած ծաղիկս է հասմիկը:

Եվ օր մըն ալ նախաձեռնակ եղա այցելություն մը կազմակերպել Դուրյանի շիրիմին:

Ի՞նչ գիտես Պետրոս Դուրյանի մասին: Տարբեր աղբյուրներից նյութեր հավաքի՛ր և ներկայացրո՛ւ:

Խեղճ տղան չի համարձակեցավ մերժել, բայց անտարակույս այն կարծիքը ուներ, որ մեծ քաջագործություն մըն է աղջկան մը ժամադրություն տալ տունեն դուրս: Երբ երեկոյին որոշված ժամուն Միհրանը գտա գերեզմանատան դրան առաջ, ան դողահար վիճակի մեջ էր: Ես ջանացի անտարբեր երևույթ մը առնել և խոսիլ ասկե անկե, բայց կը զգայի, որ չէի հաջողեր փարատել խեղճ երիտասարդին մտահոգությունը:

Սկսանք հառաջանալ անխոս: Երբ Դուրյանի շիրիմին հասանք, մինակ էինք: Միհրան այնքան տժգույն էր, որ վախցա, թե պիտի հիվանդանա: Մեղմորեն ձեռքը առի և սեղմեցի զինքը պաշտպանելու համար իր տկարության դեմ: Հետո մոռցա ամեն ինչ և ուժգնորեն թափանցվեցա Դուրյանի հիշատակով: Խոր զգացում մը ինձ գրավեց ամբողջովին: «Սկյուտարի վերջալույսներ» շարքին մեջ ջանացած եմ արտահայտել իմ այդ օրվա կրած տպավորությունս: Շքեղ վերջալույս մը իր բոցավառ շողերով խորքը կը կազմեր մեր այդ պահու հուզումին: Թռչուն մը հուսահատորեն կ'երգեր բազկատարած թմբիի մը վրայեն: Կարծես տապանաքարերը, անոնց հովանի եղող սաղարթագեղ ծառերը մեզ կը դիտեին զարմացած: Հետզհետե ուրիշ երիտասարդներ ալ եկան և առաջին րոպեներու վարանումեն հետո հաղորդակցություն հաստատվեցավ մեր մեջ: Խմբով կանգնած վաղամեռիկ բանաստեղծի շիրիմին առաջ, նույն տրամադրությամբ վարակված, խորասուզվեցանք մտածմունքներու և երազանքի մեջ: Հետագային հաճախ գացեր եմ այցելության Դուրյանի շիրիմին և միշտ այնտեղ գտեր եմ առանձին կամ խմբով երիտասարդներ: **Այդ շիրիմը իմ ժամանակի և հետևող սերունդի երիտասարդներուն ուխտատեղին էր:**

Ինչո՞ւ որոշեց այցելել Դուրյանի շիրիմին: Ի՞նչ ընդհանրություններ կարող էին ունենալ երկու գրողները:

Այդ իրիկուն, Սկյուտարի գերեզմանատան մեջ մենք հասեր էինք մեր գունատ սիրո գագաթնակետին, գոնե ինձ համար այդպես էր:

Մեկնաբանի՛ր ընդգծված տողը:

Դարձյալ մեր պատշգամներուն վրա իրարու փոխ կուտայինք գիրքեր, դարձյալ Միհրան ինձ համար կը ճարեր հասմիկներ, բայց այլևս կը ջանայի մեղմորեն վերջ դնել Միհրանի սրտազեղումներուն, որոնք ինձ կը թվեին անհարկի և հաճախ ծիծաղելի:

Կարդա՛ Զապել Եսայանի վեպից այլ հատվածներ ևս, գրի՛ր քո կարծիքը դրա մասին:

Ես իմ տուրքս տվեր էի պոլսական սանթիմանթալիզմին և այլևս այդ կարգի բան չի պատահեցավ ինձ:

Ամփոփիչ գործնական աշխատանք

Ի՞նչ առանձնահատկություն ունեն ինքնակենսագրական վեպերը: Գրի՛ր զեկուցում այդ թեմայով:

Կազմակերպե՛ք քննարկում-բանավեճ «ինքնակենսագրական վեպը՝ որպես ժանր» թեմայով:



ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

(1903-1969)

Գուրգեն Մահարու իսկական ազգանունը Աճեմյան է:

Գուրգեն Մահարին գրել է ինքնակենսագրական երկեր: **«Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդության սեմին», «Երիտասարդություն», «Ծաղկած փշալարեր»** վիպակների միջոցով հնարավոր է գրեթե ամբողջապես պատկերացնել նրա կյանքը:

Կյանքը, ուսումնառությունը: Գուրգեն Մահարին ծնվել է 1903 թվականի օգոստոսի 1-ին (նոր տոմարով՝ 14) Արևմտյան Հայաստանի **Վան** քաղաքում:

Նախնական կրթությունը ստացել է Վանի Նորաշեն և Երամյան վարժարաններում: 1915 թվականին՝ Վանի հերոսամարտից հետո, հարազատների հետ գաղթել է Արևելյան Հայաստան: Ճանապարհին կորցրել է ընտանիքի անդամներին: Հետագայում ապրել է **Երևանի** ու **Դիլիջանի** որբանոցներում: Մի քանի տարի անց Մահարին գտնում է կորած մորը և հարազատներին:

Մահարին կրթությունը շարունակում է նախ Երևանի թեմական դպրոցում, ապա 1923 թվականին ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետ: 1920-ական թվականներից Մահարին ծավալում է ակտիվ գրական գործունեություն: Ծանոթանում է Եղիշե Չարենցի, Ակսել Բակունցի, Մկրտիչ Արմենի հետ, դառնում «Նոյեմբեր» միության ակտիվ անդամներից մեկը:

1934-1936 թվականներին Մահարին աշխատում է «Խորհրդային Հայաստան» օրաթերթում՝ որպես արվեստի բաժնի վարիչ:

1930-ականների քաղաքական հալածանքները չեն շրջանցում նաև Մահարուն: 1936 թվականի օգոստոսի 9-ին նրան նույնպես ձերբակալում են անհիմն մեղադրանքով:

Մահարին դատապարտվում է 11 տարվա բանտարկության և աքսորվում **Սիբիր**: 1947 թվականին վերադառնալով աքսորից՝ ուղիղ 444 օր անց՝ 1949 թվականին, Մահարուն կրկին ուղարկում են Սիբիր՝ այս անգամ որպես ազատ աքսորյալ:

1954 թվականին Մահարին արդարացվել է և վերադարձել Երևան:

Մահացել է 1969 թվականի հուլիսի 17-ին:



Տեսարան Վանի Այգեստաններ թաղամասից

Ստեղծագործությունը: Դեռ որբանոցում գտնվելու տարիներին Մահարին գրել ու հրատարակել է բանաստեղծություններ: 1920-ական թվականներին հրատարակում է **«Տիտանիկ»**, **«Բարդիներ»** և այլ բանաստեղծական ժողովածուներ, **«Սիրո, խանդի և Նիցցայի պարտիզանների մասին»** պատմվածքների ժողովածուն, **«Մանկություն»**, **«Պատանեկություն»** ինքնակենսագրա-

Երկրորդ աքսորի ժամանակ Մահարին ծանոթացել է իր երկրորդ կնոջ՝ լիտվուհի Անտոնինա Պաուլիտայտեի (1923-2018) հետ: Նրանք ամուսնացել են 1952 թվականին, ունեցել մեկ որդի՝ Գուրգեն կրտսերը, և մեկ դուստր՝ Ռութա-Նազիկը: Առաջին ամուսնությունից Մահարին ունեցել է մեկ որդի՝ Գրիգորը:

Գուրգեն Մահարու կյանքի հետաքրքիր դրվագների և «Այրվող այգեստաններ» վեպի շուրջ ծավալված բանավեճերին ծանոթանալու համար դիտի՛ր «Գուրգեն Մահարի» փաստագրական ֆիլմը:

Գուրգեն Մահարին բազմաժանր հեղինակ է: Նա ստեղծագործել է հետևյալ ժանրերով՝ **բանաստեղծություն**, **պոեմ**, **բալլադ**, **ակնարկ**, **պատմվածք**, **վիպակ**, **վեպ**, **պիես** և այլն: Գրել է նաև հրապարակախոսական և գրականագիտական հոդվածներ, հուշագրություններ:

կան վիպակները: 1933 թվականին լույս է տեսել **«Մրգահաս»** բանաստեղծությունների ժողովածուն, որն արժանացել է բարձր գնահատականի:

Աքսորում անցկացրած 18 տարիների ընթացքում Մահարին շարունակում էր ստեղծագործել, թեպետ նրա ստեղծագործությունները չէին հրատարակվում: Այստեղ գրում է **«Ծաղկած փշալարեր»** վիպակը, բազմաթիվ բանաստեղծություններ, պատմվածքներ: Դրանցից շատերը լույս տեսան Մահարու մահից հետո:

Աքսորից վերադառնալուց հետո Մահարին զբաղվում է գրական-ստեղծագործական ակտիվ գործունեությամբ: 1959 թվականին լույս է տեսնում **«Հնձաններ»** բանաստեղծությունների ժողովածուն, 1962 թվականին՝ **«Լռության ձայնը»** պատմվածքների ժողովածուն: 1966 թվականին հրատարակվեց Մահարու **«Այրվող այգեստաններ»** վեպը: Այն ենթարկվեց բազմաթիվ քննադատությունների:

Գուրգեն Մահարու **«Մրգահաս»** ժողովածուն խմբագրել է Եղիշե Չարենցը, ձևավորել է Մարտիրոս Սարյանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ուշադի՛ր նայիր Մահարու լուսանկարին և փորձի՛ր ներկայացնել նրա ներաշխարհը: Քո կարծիքով՝ ինչպիսի՞ մարդ էր նա:
2. Համացանցից և այլ աղբյուրներից գտի՛ր հուշեր Մահարու մասին և ներկայացրո՛ւ ընկերներիդ:
3. Որո՞նք են Մահարու երկերի հիմնական թեմաները:
4. Քո կարծիքով՝ Մահարին ինչո՞ւ է շատ գրել իր մասին:
5. Եթե դու ինքնակենսագրական գիրք գրեիր, ի՞նչ վերնագիր կունենար, ինչպե՞ս կզարգանային դեպքերը:

Վարդգես Սուրենյանց, «Թափորի ելքը Էջմիածնի մայր տաճարից»

Մտածի՛ր և քննարկի՛ր դասընկերներիդ հետ:

Ո՞ր եկեղեցին է պատկերված: Ի՞նչ դեր ունի այն հայ ժողովրդի համար:

ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

(Հատված «Պատանեկություն» վիպակից)

Մայրիկանց տան վերի օդի հենց ճակատին կախված էր Էջմիածնի մեծադիր նկարը: Ամեն անգամ զարթնելիս, անկողնի միջից ես երկար-երկար դիտել եմ այդ նկարը և պատկերացրել նրա փառահեղ կառուցվածքը: Ինձ այնպես էր թվում, որ վանքը, վանքի բակը, շրջակայքը, ամեն ինչ, ամեն ինչ այնտեղ սպիտակ մարմարիոնից է: Եվ երբ որբերով բեռնավորված ֆուրգոնները շարժվեցին առաջ, երբ ֆուրգոնից-ֆուրգոն տարածվեց այն լուրը, որ մեզ Էջմիածին են տանում, ես ուրախությունից մոռացա ամեն ինչ և մինչև անգամ մտքիս մեջ սկսեցի երգել Վանում սովորած էջմիածնական մի երգ...

Քեզի մեռնեմ, Էջմիածին,
Նանի, նանի, նանի ջան...

Փաստեր հավաքի՛ր Էջմիածնի մասին և ներկայացրո՛ւ դրանք:

Ի՞նչ կապ կար Էջմիածնի և նանի մեջ, չգիտեմ. առհասարակ այդ երգը սովորեցնող երգեցողության ուսուցիչը արտառոց երգեր էր սովորեցնում մեզ: Այդ նա էր, որ մինչև հիմա ինձ անծանոթ լեզվով սովորեցրեց մի երգ, որի յուրաքանչյուր տան վերջում կրկնվում էր.

Ինչո՞ւ էր հեղինակը հայտնվել Էջմիածնում:

Յուփայ-դիյայ-դիյայ-դա
Յուփայդի-յուփադյա,
Յուփայ-դիյայ-դիյայ-դա
Յուփայ-դիյայ-դա…
Հետո սատանան գիտե, թե ինչ…

Հետո ես հիշեցի նույն այդ ուսուցչի մի ուրիշ արտառոց երգը՝ «Երեք ագռավ ծառի վրա», որի յուրաքանչյուր տողավերջում կրկնվում էր.

Օ՛, Բիլի-մակի-մակա...

Քո կարծիքով՝ ինչո՞ւ էր փոքրիկ տղան մոռացել իր անունը: Ի՞նչ հոգեվիճակում էր նա և ինչո՞ւ:

Այս հիշողություններն ու Էջմիածինը տեսնելու հեռանկարը զվարթություն պատճառեցին ինձ: Ես մինչև անգամ կատակելու ցանկություն ունեցա. նայեցի կողքիս նստած տղային. հազիվ լիներ նա 12-13 տարեկան, թուխ դեմքով և սև մազերով, փոքրիկ, սև և անփայլ աչքերով այդ տղան զարմանալի մոտիկ և հարազատ թվաց ինձ. մինչև անգամ ինձ թվաց, որ ես նրա անունն էլ գիտեմ.

– Բիլի-մակի…

Նա նայեց ինձ և ժպտաց վախկոտ ժպիտով:

– Բիլի-մակի,– կրկնեցի ես:

– Ես Բիլի-մակ չեմ,– կամաց և հայցող ձայնով առարկեց նա, կարծես ցավելով, որ ուրիշ անուն ունի:

– Ապա ի՞նչ է քո անունը…

Ինչո՞ւ տղան հիասթափվեց, երբ առաջին անգամ տեսավ Էջմիածինը: Դու եղե՞լ ես Էջմիածնում: Համեմատի՛ր քո տեսած և տեքստում պատկերված քաղաքները:

Նա կենտրոնացավ, հետո լարվեց ու հանկարծ սկսեց լաց լինել:

– Մոռացել եմ:

– Ռուբե՞ն, Խորե՞ն, Վահա՞ն, Վարդա՞ն, Վազգե՞ն…

– Չէ՛...

Էլի մի քանի անուն տվի:

– Չէ՛…

Ես սկսեցի նրան մխիթարել, վեր հանելով Բիլի-մակի անվան բարեմասնություններն ու առավելությունները. ես մի տեսակ չար խնդություն էի զգում դեպի նա, որը մոռացել է իր անունը, և զվարճանում էի, որ նրան կպցնում եմ մի ծաղրական անուն: Երբ մենք Էջմիածին հասանք, երբ նախքան

մեզ տեղավորելը արձանագրեցին բոլորիս անունները, իմ փոքրիկ հարևանը պատասխանեց «ի՞նչ է քո անունը» հարցին՝ տխրությամբ և թախիծով.

– Բիլի…

– Եվրոպական անուն ունես, փոքրիկ,– նկատեց արձանագրողը, որը սև ակնոցով, նիհար և զարմանալի երկար մի կին էր:

– Հայրանո՞ւնը,– շարունակեց արձանագրողը:

– Մակ,– մեքենաբար արտասանեց Բիլին:

– Ա՛զգդ...

– Խայ եմ...

Դուրս եկավ այսպես.

Բիլի Մակ Խայեմ...

Ու ամեն անգամ, երբ ներկա-բացակա էին անում, մի առանձին հանդիսավորությամբ հնչում էր նրա անունը.

– Բիլի Մակ Խայեմ...

Նա հլու և հնազանդ պատասխանում էր.

– Ներկա…

Բիլի-Մակ-Խայեմ,– ինչ որ ֆրանս-նորվեգական հյուպատոս, այնպես չէ՞...

.....

Էջմիածին:

Ես երբեք, երբեք իմ կյանքում չեմ կրել այնպիսի հիասթափություն, ինչպես կրեցի այն ժամանակ, երբ տեսա Էջմիածնի խունացած դեմքը:

Շոգ: Փոշի: Կեղտոտություն: Վանքի խունացած սիլուետը: Իսկ պարիսպների տակ իրար վրա թափած գաղթականություն:

Ճեմարանի բակի ծառերի տակ մեզ շարեցին ծալապատիկ և ճաշ տվին:

Բիլի Մակը կծկվեց մոտս: Ես մի անգամ էլ հիշեցի մայրիկանց տան վերի օդի պատից կախված Էջմիածնի փառահեղ նկարը, մի անգամ էլ նայեցի Բիլի Մակի վրա, և սիրտս լցվեց անասելի դառնությամբ:

Ճաշից հետո լուր տարածվեց, որ բոլոր որբերին տանելու են բաղնիք, հին շորերը ոչնչացնելու և նոր շորեր տալու:

Այդպես էլ եղավ:

Այստեղ ես շատ վնասվեցի, որովհետև ես կորցրի իմ նոր և վայելուչ շորերը և բոլորի նման հագա ծաղկավոր չթից կարած մի շապիկ, մի վարտիք, իսկ գլխիս կապեցի մի ծաղկավոր թաշկինակ: Ուրիշ ոչինչ: Այլ պայմաններում ես կամաչեի այդ դրությամբ՝ մի տակ շապիկ-վարտիքով և բոբիկ ոտներով ման գալ, բայց ստեղծված

Կյանքի ի՞նչ շրջափուլում էր հերոսը: Ի՞նչ դժվարություններ էին նրան սպասում:

Քո կարծիքով՝ ի՞նչ հատկանիշներ են պետք մարդուն այդ դժվարությունները հաղթահարելու համար:

կացությունը թույլ չէր տալիս զբաղվել նման կենցաղային մանրուքներով:

Ինձ մոտեցավ ինձնից մեծ, հանդուգն աչքերով մի տղա և մի կողմ տարավ: Զգուշությամբ, շուրջը նայելով, նա շապիկի տակից հանեց մի ծաղկավոր թաշկինակ և ցույց տվեց.

– Թռցուցի… շորերդ ինչի՞ տվիր:

– Ի՞նչ անի... առին:

– Ծը, ծը, ծը… թաժա ին... գնա ուզի, տանենք ծախենք... էս ալնախ կուտամ քե:

– Չեն տա:

– Կուտան: Ասա մորքուր ունեմ, տանեմ տամ ինոր, խեղճ ի:

– Չեն տա,– պնդեցի ես, զգալով, որ այդ իմ ուժերից վեր է...

– Ես տեր կելնեմ. դու սուս կաց... խա՞:

– Խա՛:

Նա ներս մտավ բաղնիք և հինգ րոպե հետո դուրս եկավ արցունքները սրբելով, ձեռքին իմ շորերը: Մոտեցավ, չարությամբ ծիծաղեց արտասուքների միջից.

– Չուր լաց չելա՝ չտվին շանորդիք… արե:

Ես հետևեցի նրան:

Մենք դուրս եկանք վանքի դարբասից, անցանք փողոցը և մտանք առաջին պատահած խանութը: Քիչ հետո մենք նստեցինք փողոցի մի քարի վրա, քանդեցինք մեր գլխի թաշկինակները և բաժանեցինք 300 հատ կոնֆետ մեր մեջ:

– Քո անունն ի՞նչ ի,– հարցրի ես նրան՝ լցված անսահման երախտագիտությամբ.

– Կուշո... քո՞ն:

– Գուրգեն…

Մենք մտերմացանք. նա դարձավ իմ խնամատարն ու շահերի պաշտպանը: Ես իմ բաժին կոնֆետից մաս հանեցի նաև Բիլի-Մակին, որի համար և արժանացա Կուշոյի հանդիմանությանը:

Ես խոսք չգտա արդարանալու:

Կարողացա՞վ Մահարին հաղթահարել որբության դժվարությունները: Ասածդ հիմնավորի՛ր նրա կենսագրության փաստերով:

Համաշխարհային գրականությունից ուսումնասիրե՛ք ինքնակենսագրական վեպեր և դրանցից մեկի մասին ձայնագիր (փոդքասթ) ստեղծե՛ք:

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆ

(1933-1980)

Կյանքը, ուսումնառությունը: Մուշեղ Գալշոյանը ծնվել է 1933 թվականի դեկտեմբերի 13-ին Թալինի շրջանի **Կաթնաղբյուր** գյուղում:

Միջնակարգ կրթությունը ստացել է հայրենի գյուղի դպրոցում: Այնուհետև ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը: Որոշ ժամանակ աշխատելով մասնագիտությամբ՝ Գալշոյանն այնուհետև սկսել է զբաղվել լրագրողական գործունեությամբ: Աշխատել է «Ավանգարդ» թերթում, «Գարուն» ամսագրում: 1969-1971 թվականներին ուսանել է **Մոսկվայի** Մաքսիմ Գորկու անվան գրականության ինստիտուտի բարձրագույն դասընթացներում: 1975-1977 թվականներին աշխատել է «Սովետական գրող» հրատարակչությունում:

Գալշոյանը մահացել է 1980 թվականի հոկտեմբերի 15-ին ողբերգական պատահարի հետևանքով:

Ստեղծագործությունը: Մուշեղ Գալշոյանի առաջին ժողովածուն՝ **«Կռունկ»** վերնագրով, լույս է տեսել 1969 թվականին: Գրքում ընդգրկված էին **«Զորի Միրոն»** և **«Կածանի ճամփորդները»** վիպակները: Այդ վիպակներում արդեն ընդգծված են այն հատկանիշները, որոնք ընդհանրապես բնորոշ դարձան Գալշոյանի ստեղծագործության համար: Իրենց կորցրած հայրենի եզերքի կարոտով

Մուշեղ Գալշոյանի իսկական ազգանունը Մանուկյան է:

«Մարութա սարի ամպերը» ժողովածուի համար 1981 թվականին Մուշեղ Գալշոյանը հետմահու արժանացել է Հայաստանի պետական մրցանակի

ապրող մարդիկ են Գալշոյանի հերոսները, որոնք այդպես էլ չեն հաշտվում ներկա իրականության հետ:

1974 թվականին լույս տեսավ **«Բովտուն»** վեպը: Գալշոյանի գրական տաղանդը ամբողջությամբ դրսևորվեց **«Մարութա սարի ամպերը»** պատմվածաշարում, որը լույս տեսավ գրողի մահից հետո՝ 1981 թվականին:

Մուշեղ Գալշոյանը ստեղծագործել է հետևյալ ժանրերով՝ ակնարկ, պատմվածք, վիպակ, վեպ:

Տուն-թանգարանի հասցեն է՝ Արագածոտնի մարզ, գ. Կաթնաղբյուր:

Մուշեղ Գալշոյանի տուն-թանգարանը բացվել է 2004 թվականին: Թանգարանում ներկայացված են գրողի անձնական իրերն ու ստեղծագործական կյանքի մանրամասները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ գիտես Գալշոյանի ծննդավայրի մասին: Գիտելիքներդ հարստացրո՛ւ՝ օգտվելով տարբեր աղբյուրներից:
2. Գալշոյանի նախնիները Սասունից էին: Տեղեկություններ հավաքի՛ր Սասունի, «Սասնա ծռեր» էպոսի մասին և զեկուցում պատրաստի՛ր:
3. Գալշոյանի հերոսների մեծ մասը իրենց կորցրած հայրենիքի կարոտով ապրող մարդիկ էին: Ինչո՞ւ էին նրանք գաղթել:
4. Հետաքրքրվի՛ր, թե քո նախնիները որտե՞ղ են ապրել, տեղեկություններ հավաքի՛ր այդ բնակավայրի մասին:
5. Ի՞նչ ժանրերով է ստեղծագործել Գալշոյանը: Ուսումնասիրի՛ր և աղյուսակով ներկայացրո՛ւ նրա ստեղծագործությունների ցանկը ըստ ժանրերի:

Մուշեղ Գալշոյանի կյանքի հետաքրքիր դրվագներին ավելի մանրամասն ծանոթանալու համար դիտի՛ր **«Մեր մեծերը. Մուշեղ Գալշոյան»** տեսաֆիլմը:

Մտածի՛ր և քննարկի՛ր դասընկերներիդ հետ:

Ուշադի՛ր նայիր նկարին և ասա՛ տպավորությունդ: Քեզ ծանո՞թ է այս արձանախումբը: Ինչի՞ ես նմանեցնում հայոց տառերը:

ՄԱՄՓՐԵ ԱՐՔԱՆ

(կրճատումներով)

1

Մամփրեն ահագին ժամանակ հետևում էր, թե երրորդ դասարանցի թոռնուհին ինչպես է այբուբենը սովորեցնում եղբորը, որպես թե՝ նախապատրաստում է, որ տղան գալ տարի այբուբենը սերտած գնա դպրոց: Եվ տես, թե ինչպես է սովորեցնում. շուտասելուկի պես,– ա — բ — գ — դ — ե — զ...,– առանց ինչեցնելու, առանց ներդաշնակելու: Բա Մամփրեի սովորած այբուբենը ա՞յդ էր, այդպե՞ս էր: Վարժապետ Տեր Հարությունը նահատակվեց, այբուբենը հո չփոխվե՞ց...

– Գիրքն հոս բեր... ...Դե բաց ու ինչպես մեջ գրքին է, էդպես զրուցե: Կարդա հատիկ-հատիկ,– խիստ պահանջեց Մամփրեն,– կարդա մեկիկ-մեկիկ ու մեկիկ-մեկիկ ցուցամատե:– Եվ աչքը բաց էջին լարված՝ սպասեց:

– Այբ-բեն-գիմ-դա-եչ-զա...

– Համբերե:– Լարված նայում էր տառերի շարուկին:– Գիմ-ից հետո հարկ է, որ էղնի՝ ե՛լ, Հովակիմ:

– Այդպիսի բան չկա:

– Լավ նայե:

– Չկա, ա՛յ պապ, չկա: Չիք:

– Համբերե,– հերսոտեց Մամփրեն և թոռանը պինդ սեղմեց ծնկների արանքը:– Այբուբենը ես կսովորեցնեմ իմ ձգուկին:

«Մամփրե արքան» պատմվածք է: Ինչպես գրական գրեթե ցանկացած ստեղծագործություն, այս պատմվածքն էլ ունի **թեմա: Թեման** կյանքի այն կոնկրետ կողմերի և կենսական հարցերի ամբողջությունն է, որ դրված է ստեղծագործության հիմքում:

Այ՛բ, բե՛ն, գի՛մ,
Ե՛լ, Հովակիմ,
Դա՛, ե՛չ, զա՛,
Լծիր եզան:

Վարժապետ Տեր Հարությունը արտասանում էր, և իրենք խմբով կրկնում էին: Տեր Հարությունը հայոց տառերն էր ասեղնագործում ճերմակ պաստառին, հետն էլ արտասանում այբուբենը, և իրենք խմբով կրկնում էին–

– Է՛, ը՛թ, թո՛,
Վե՛ր կաց, Թաթո,
Ժե՛, ինի՛, լյո՛ւն,
Կապիր քո շուն:

Ուշադրություն դարձրո՛ւ այս հատվածին: Այստեղ ներկայից անցում է կատարվում դեպի անցյալ առանց հատուկ նշելու: Կարդալու ընթացքում առանձնացրո՛ւ այդպիսի հատվածները:

Տեր Հարությունը մեծ ու ճերմակ պաստառը կախել էր Տիրամոր նկարի կողքին և վառ կարմիրով հյուսում էր տառերը: Հայոց տառերը կարմիր են, բացատրում էր Տեր Հարությունը, քանզի սուրբ Մաշտոցը իր սրտից է հանել ի լույս: Եվ կարմիր են, քանզի թրծվել են արդար Արեգակով: Եվ կարմիր են, քանզի սրբազան կռիվների են մասնակից եղել: Եվ ասեղնագործում էր հանդարտիկ, հեռվից ու մոտիկից ուշադիր զննելով, երբեմն այնպես վերացած, որ իրենց թվում էր, թե հայոց տառերը նոր-նոր հորինվում են, և Տեր Հարությունն է ստեղծողը: Օրը՝ մեկ տառ: Եվ օրեր շարունակ իրենք կրկնում, հա կրկնում ու սերտում էին այբուբենը.

Պատկերվող երևույթներին հեղինակի ուղղակի կամ անուղղակի տրված գնահատականը կոչվում է ստեղծագործության **գաղափար:**

– Խե՛, ծա՛, կե՛ն,
Ո՞ւր է Հակեն:
Հո՛, ձա, ղա՛տ,
Միհրան, Միհրդատ:
Ճե՛ն, մե՛ն, հի՛,
Կգանք հիմի:

Գյուղում բոլորը գիտեին, որ Տեր Հարությունը ճերմակ պաստառին կարմիր տառեր է ասեղնագործում և, որպես թե ի հիշատակ մշեցի այն ուսուցչի, որին սուլթանը, ասում են, կախաղան է հանել: Մահապարտ այդ ուսուցիչն է հայոց այբուբենը հանգավորել այսպես,– Այ՛բ, բե՛մ, գի՛մ, Ե՛լ Հովակիմ,– ներդաշնակել այնպես, որ երեխաները շուտ սովորեն այբուբենը և բոլորովին չմոռանան.

– Նո՛ւ, շա՛, ո՛,
Պրծի, Շավո,
Չա՛, պե՛, ջե՛,
Ուշ է, Վաչե:

Ռա՛, սե՛, վե՛վ,
Ծագեց արև:
Տյո՛ւն, ռե՛, ցո՛,
Մարդ Աստծո:

...Իրենք պետք է ամեն օր, չհաշված կիրակի օրերը, ամեն օր արտասանեին, կրկնեին ու սերտեին այբուբենը և ապա, գործն ավարտելուց հետո, վարժապետը տառ առ տառ պետք է սովորեցներ գրերը: Այդպես էին որոշել, բայց եկավ և ասաց:– Պատերազմ է, զավակներս, և ձեր հայրերին, հարկավ, ասկյար կտանեն: Գնացեք ձեր հայրերի մոտ: Եթե տերը կամենա՝ նորեն կհավաքվենք, և ձեզ կուսուցանեն սուրբ Մաշտոցի գրերը: Իսկ այժմ, զավակներս, վերջին անգամ միասին հնչեցնենք այբուբենն հայոց:– Եվ այբուբենի վերջը այնպե՛ս էին ձգում, այնպե՛ս էին ձգում, առանց պայմանավորվելու բոլոր երեխաները միաշունչ (և վարժապետն ինքն էլ, վարժապետն էլ) վերջը այնպե՛ս էին ձգում... Չէին ուզում, որ այբուբենը վերջանա.

– Վյո՛ւն, փյո՛ւռ, քե՛,
Քելե Սրքե,
Եվ, օ՛, ֆե՛,
Օ՛, ինչ զով է:

– Դե՛, զավակնե՛րս, Տերն ընդ ձեզ:

Առավոտ էր, բայց գյուղը լուռ էր: Այբուբենին դաշնած կանչերը, որ իրեն թվում էր, թե մշեցի վարդապետը իրենց գյուղից, հենց իրենց գյուղից է վերցրել, բարձրաձայն ու բարձրախոս իրենց գյուղացիներից՝ կտուրից կտուր, թաղից թաղ, արտից արտ, ձորից ձոր միմյանց ձայն տվող բարձրագոչ գյուղացիներից, այդ կանչերը չկային: Այն, ինչ ամեն օր կար, այդ առավոտ չկար, իսկ այն, ինչ չպետք է լիներ, կար՝ գյուղի շներն էին խառնվել իրար, կտուրներին կանգնած, դնչներն ի երկինք կատաղի հաչում էին: Շները ինչպե՞ս էին հասկացել, որ թուրքաց սուլթանը պատերազմ է հայտարարել ռուսաց ցարին:

...Գյուղ հասած լուրը ավետի՞ս էր, թե՞ բոթ... Ավետի՞ս է, թե՞ բոթ...

Ի՞նչ մտահոգություններ ուներ պապը: Ըստ քեզ՝ ինչո՞ւ:

Թեման և **գաղափարը** շատ միասնական են: Թեմայի ընտրությունը միշտ բխում է հեղինակի գաղափարներից, իսկ ստեղծագործության գաղափարը՝ ընտրված թեմայից:

...Հոր հետ քայլում էին լուռ, ելվերում էին իրենց թաղը՝ Վերին... Վերին թաղ, Վերին թաղ և Վերին թաղի վերին տուն... Տան թիկունքին սարալանջն էր, լանջին շաղգամի արտը և շաղգամի արտն ի վեր՝ Մեհրեաղբյուրը: Առավոտյան ինքը Մեհրեաղբյուրի ջուրը կապեց շաղգամի արտին և ապա գնաց այբուբենը սերտելու: **Իսկ, ահա, ջուրը կտրվել էր...** Օսմանի լակոտ, Օսման, աղբյուրի ջուրը էլի նա է կտրել, այդ ճպռոտ լակոտը: Որտեղի՞ց հայտնվեցին ու հարամեցին գյուղը: Գյուղը, փողոցը, հողը, ջուրը, աղբյուրը: Էն խեղճ պառավի (անունն ինչպե՞ս էր), պառավի հիմար որդին ղարիպության գնաց, գնաց հիմարը ու էլ չերևաց, և պառավը մեռավ, և պառավի հիմար որդու փոխարեն, որտեղից որտեղ, այդ հարամ Օսմանը հայտնվեց ու տիրացավ տանը: Իր անունը Օսման, լակոտի անունը Օսման, աշխարհում էլ ուրիշ անուն չկա: Հայտնվեց, տիրացավ պառավի տանը և ասում է, թե տունը գնել է. գայմագամից, այսինքն գավառապետից թուղթ ունի: Երեկ-մյուսօր է հայտնվել, բայց գյուղի անունը արդեն աղավաղել-հարմարեցրել է իր լեզվին, իսկ Մեհրեաղբյուրը կնքել է Աթաբունար, որպես թե հին անունը, աղբյուրի նախնական անունը այդ է եղել՝ Աթաբունար: Սադայելի ծնունդ, այդպիսի բան ինչպե՞ս կարող է լինել. չէ՞ որ աղբյուրը Մհերի անունով է: Առյուծ Մհերի անունով: Աղբյուրն իր պատմությունն ունի. Մհերը, ուրեմն, Սասնա տան Մհերը, հենց այստեղ, այս սարի վրա է առյուծին հանդիպել, հանդիպել ու դատարկ ձեռոք ճղել է առյուծին և, Աստծո հրամանով, այդտեղից առյուծին հանդիպած ու ճղած տեղից, աղբյուր է բխել: Այ, այդպես է եղել: Եվ Մհերը կնքվել է՝ Առյուծ Մհեր, իսկ աղբյուրը Մեհրե: Այ, այդպես է եղել...

Սա խորհրդանշական պատկեր է: Առանձնացրո՛ւ այդպիսի այլ պատկերներ ևս: Մեկնաբանի՛ր դրանք:

Եվ լցված ու հերսոտ քշեց դեպի աղբյուրը... Սուլթանը Ռուսաց ցարին պատերազմ է հայտարարել, վարժարանը փակվեց, հորը ուզում են ասկյար տանել, վարժարանը փակվեց, գյուղի շները օրը ցերեկով խառնվել են իրար, վարժարանը փակվեց, դու էլ, Օսմանի ճպռոտ լակոտ, դու էլ Մամփրեի՞ն ես կռիվ հայտարարել: Հիմա կտեսնենք...

Ընտ առաջին հատվածի՝ բնութագրի՛ր Մամփրե պապին՝ ստեղծելով նրա դիմանկարը:

Այո, աղբյուրի, ջուրը Օսմանն էր կտրել, իրեն հասակակից, ճպռոտ, բայց ցիցքիթ այդ լակոտը: Ջուրը շուռ էր տվել իրենց տան կողմ և նստել էր ուրթին:

Եվ հասնելն ու ոտքի տակ առնելը մեկ եղավ... հետո թևից բռնեց-շպրտեց իրենց հարամ տան կողմ և դարձավ ջուրը կապելու: Ծնկեց ուրթի մոտ և...

– Օխաաշշշ...,– Մամփրեն, թոռանը ծնկների արանքում սեղմած, ձեռքը տարավ գլուխը: Ծոծրակի մոտ այնպես իրական պոռթկաց ցավը, ինչպես, է՛, այն օրը, երբ այդ նենգ

լակոտը, այնուամենայնիվ, թիկունքից քարով զարկեց-ջարդեց իր գլուխն ու փախավ: Փախչում էր և, ուսն ի ետ, քարերի պես շպրտում,– Աթաբունար... Աթարանար,– որպես թե՝ աղբյուրի անունը Մեհրե չէ, աղբյուրը քոնը չէ...

Մամփրեն ցավով տմբտմբացրեց անցած հուշերին.– Օսմա՛ն, դու ճպռոտ լակոտ էիր, բայց դու պարծենալու իրավունք ունես. նենգորեն ջարդեցիր Մամփրեի գլուխը և մնացիր անպատասխան... Կոտորում եղավ, գաղթ եղավ, և Մամփրեն ճար չունեցավ, քեզ ոտքի տակ գցելու հնար չունեցավ: Մարաթուկ վկա, Մամփրեն քեզ այնպես կտրորեր, որ դու այլևս չէիր պղծի աղբյուրի սուրբ անունը: Սուրբ և տիրակոչ: Դու ավարառու անօրեն ես, բայց իրավունք ունես պարծենալու. աղբյուրի անունը, այնուամենայնիվ, պղծվեց, իսկ Մամփրեն հայոց գրին, այդպես էլ, անծանոթ մնաց... Տեր Հարությունը հյուսած տառերը դրեց ծոցն ու ելավ Արարատ, գնաց ու կորավ վիհերում ու ձյունների մեջ, և ինքը՝ Մամփրեն, հայոց տառերին անծանոթ մնաց:

Իսկ ե՞րբ սովորեր՝ կոտորումի ժամանա՞կ, գաղթի ճանապարհի՞ն, հետո... հետո՝ պատերազմի դաշտո՞ւմ... Ե՞րբ: Բայց եղավ, այդպիսի մի պատեհություն եղավ, ախր, հայտնվեց, բայց այն էլ ինքը չկարողացավ օգտագործել. իր հիմար բնավորության պատճառով՝ խռովկանության: Այս նոր՝ Քարագլուխ գյուղի սովետականացման առաջին տարիներին գյուղում անգրագիտության վերացման կայան բացվեց, ախր, լիկկայան: Վարժապետը ջահել, իրենից շատ ջահել մի տղա էր: Եվ, հենց առաջին օրը, ի՞նչ արեց այդ լղպորը. մատը տնկեց իր կողմ, թե՝ մեկից-տասը հաշվիր: Վիրավորվեց, բայց, դե, վարժապետն էր պահանջողը, հաշվենք թե՝ Տեր Հարությունը:

– Մեգ, էրգու, իրիք...

– Երկու... երեք,– ուղղեց լիկկայանի վարժապետը:

– Երկու... եր... երեք, չուրս...

– Չորս,– ուղղեց վարժապետը:

– Չուրս... չուր... չորս,– քրտնած տակից դուրս եկավ,– չորս, հինգ, վից...

– Վեց,– ուղղեց վարժապետը:

– Վից:

– Վեց:

– Վի... վից,– և հա փորձեց, վարժապետն էր ստիպում, ու հա անարդյունք և վիրավորված ու խռով թողեց-հեռացավ լիկկայանից: Չլիներ այդ անհնազանդ «վիցը» (վեց-վեց-վեց... տես, թե ինչ հանգիստ է պտտում լեզուն, վից կամ վեց, ի՞նչ տարբերություն), չլիներ այն հիմար վարժապետը,

Ովքե՞ր էին նրա թոռնիկները: Ըստ հատվածի՝ ներկայացրո՛ւ նրանց:

այն ժամանակ Մամփրեն տառերը սովորած կլիներ: Դրանից հետո այլևս ի՞նչ տառ, ի՞նչ գիր... Լավ է դեռ, Տեր Հարությունի սովորեցրած այբուբենն էլ չի մոռացել, զարմանալի է, որ չի մոռացել. քանի՞ տարի է անցել. վաթսունչո՞րս, վաթսունիհի՞նգ, բայց, տես որ, հիշում է,– ա՛յբ, բե՛ն, գի՛մ, Ել, Հովակիմ...

– Հա, լիկկայանից հետո այլևս ի՞նչ գիր. մինչև քիչ ու միչ ուշքի եկավ, էլի՝ պատերազմ, և Մամփրեն՝ ճակատային և գիր չիմանալու պատճառով, նամակ չգրելու պատճառով, գյուղում լուր էր տարածվել, թե Մամփրեն անհայտ կորած է: Իսկ պատերազմից հետո... Խենթություն կլիներ, որ կռվից տուն գալուց հետո Մամփրեն նստեր ու գրերը սովորեր... Եվ, այդպես էլ, Տեր Հարությունի ասած ժամանակը չեկավ: Չեկավ և... բայց... գուցե հիմա՞ է, հիմա՞ է հայոց գիրը սովորելու իր ժամանակը:

– Հըմը թող զիս, ձգո՛ւկ:– Մամփրեն թոռանը հրեց ծնկների արանքից, ոտքի ելավ և սկսեց անհանգիստ քայլել:

«Մարաթուկ վկա, սուրբ Մաշտոցի գրերն սովորելու Մամփրեի օրն ու ժամանակը նոր-նոր տեղ է հասե»:

Ուշադիր եղի՛ր, թե հատկապես ինչ պատճառով է տանջվում Մամփրեն:

2

Եվ գյուղը դըրնգաց. Մամփրեն որոշել է տառաճանաչ դառնալ: Մամփրեն՝ ութսունին մոտ, ութսուն տարի առանց գրի յոլա է գնացել, իսկ ահա որոշել է գրել-կարդալ սովորել:

Ով լսում էր, հանկարծակիի եկած, Մամփրեի տան կողմն էր նայում. այնպես թե տունը հրդեհվել է, հետո տեսնում էր՝ տունը խաղաղ ծխում է, դառնում ծիծաղում էր,– խելոռել է Մամփրեն:

Իսկ ով մուտք ու ելք ուներ Մամփրեի տունը, գնում-տեսնում էր. Մամփրեն՝ խելքը տեղը, շատ լուրջ, շատ զգաստ և շատ գործնական կուրծքն ի վար մեկնված է հատակին, դիմացը՝ այբբենարանը, դիմացը՝ տետրեր, ձեռքին կարմիր մատիտ և գլխավերևում, որպես ուսուցիչ թոռնուհին:

– Ասա՝ ա:

– Ա՛յբ:

– Դմբո, այբ չէ, ա՛,– և խփում է գլխին:

– Աղջի, կամաց զարկ, իմ գլուխն է կցավա: Ա՛:

– Մեծատառ Ա:

– Մեծտառ Ա:

– Մեծտառ չէ, դմբո, մեծատառ,– և խփում է գլխին:

– Կամաց զարկ, ձգուկ: Մեծատառ Ա:

– Դե գրիր մեծատառ Ա:

Եվ Մամփրեն մատիտը երկար թքոտում է:

– Դմբո, մատիտը մի թքոտիր:

– Թող արա թրջեմ, որ գիրն լավ երևա, ձգուկ:

– Դրա համար էլ, ասում եմ, սև մատիտով գրիր:

– Չէ, ձգուկ, սուրբ Մաշտոցի գրերն հարկ է որ գրվեն կարմիրով: Ասա ինչո՞ւ, քանզի սուրբ Մաշտոցը գրերն իր սրտից է հանել ի լույս:

– Լռությո՛ւն:

– Համբերե զիմ խոսքն ավարտիմ, ձգուկ, համբերե: Ուրեմ, սուրբ Մաշտոցի գրեր կարմիր են, քանզի թրծվել են արդար Արեգակով: Եվ կարմիր են, քանզի սրբազան կռիվ-ների են մասնակից եղել: Իմացա՞ր:

– Ուսուցիչը ե՞ս եմ, թե դու: Դե գրիր մեծատառ Ա: Հո չե՞ս մոռացել:

– Չէ, ձգուկ, չէ, մոռանալու բան չէ. ջուխտակ առվակ կողք կողքի սարից կիջվարեն-կթափվեն պստիկ առվակի մեջ, ու առվակներն ավելի կլցվեն ու ավելի կբարձրանան, ու աջակողմյան առվակից պստիկ մեկ առվակ ճոթ կտա դեպ աջ ու քչիկ կերթա ու էլի կդառնա իջվար: Էս քեզ մեծտառ Ա: Պատկերն իմ աչաց դեմն է, հըմը…

…Յա՜… Հարևանը, ժպիտը դեմքին, անկյունում նստած է: Ե՞րբ է հայտնվել: Ինչո՞ւ է եկել և ինչ է ուզում:

– Գրասենյակ չերթա՞նք, Մամփրե:

– Չէ, ջանմ… Գրասենյակ:

Մամփրեի խելքն էր շատ, որ աշունքվանից-գարուն գրասենյակից դուրս չէր գալիս:

Պրծա՜վ: Այլևս՝ ոչ մի գրասենյակ: Թող պարապ-սա-րապները գնան՝ ծխեն ու դատարկ խոսեն, խոսեն ու ծխեն և խեղդվեն իրենց ծխի մեջ: Մամփրեն կարևոր գործ ունի, նպատակ ունի, Մարաթուկին տված ուխտ ու պայման ունի Մամփրեն. մինչև սուրբ Մաշտոցի գրերը չսովորի, ոտք չի դնի գյուղամեջ: Վերջ: Եվ… և խնդրում է, որ չխանգարեն իրեն: Այդքան բան:

…Եվ կամաց-կամաց, ձմռան հետ, մոռացան նրան: Թե հարսանիքների ժամանակ կամ տխրության (այդ ձմռան Մամփրեի համերկրացի Փողփուչ Մելոն վախճանվեց) հիշե-ցին, հիշեցին ժպտալով,– ձմեռ է. փոթորիկ է մտել Մամփրեի գլուխը, գարնան հետ դուրս կգա:

Մամփրեի նմանությամբ բնութագրի՛ր հայոց այբուբենի տառերը: Ուսումնասիրի՛ր հայ-կական թռչնագրերը: Եթե կարող ես, զարդատառեր ստեղծի՛ր:

3

Եվ գարնան հետ Մամփրեն հայտնվեց գյուղում:

Մամփրեն պատերազմից, կռվի դաշտից էր եկել, Մամփրեն ղարիպությունից էր եկել, Մամփրեն սահմանն անցել-գնացել էր էրգիր և ահա եկավ: Գյուղի հավաքատեղիում այդպես դիմավորեցին նրանք, որ նստոտած էին քարերին, ոտքի ելան, նրանք, որ ոտքի էին՝ ընդառաջ գնացին, ձեռքսեղմում, նույնիսկ ողջագուրություն, և Մամփրեն թև ու թևատակն ազատելու համար թղթերը խցկեց գրպանները: (Ճանապարհին ինչքան թուղթ ու թերթի կտոր էր հանդիպել, հավաքել էր, հայհոյել էր թափթփողներին ու հավաքել թևի տակ): Թղթերը խցկեց գրպանները, ձեռքվեց ու կարոտած նստեց իր քարին:

Եվ եղավ իմաստուն մի լռություն:

Գյուղի հավաքատեղիում այդպիսի խորհրդավոր մի լռություն մեկ էլ տարիներ առաջ էր եղել. երբ լուր հասավ, թե ռուս մի տղա, տոհմանունով Գագարին, Տիեզերք է թռել – դեպի Աստված:

Եվ ինչպես այն ժամանակ, հիմա նույնպես, լռությունը խախտեց տարեկիցներից ամենաանհոգը՝ Անդարդ Ավեն:

– Է, Մամփրե, բարի տեսանք: Քու չարչարանքն՝ ապաշխարանք:

Այ, հենց դա չէր ուզում Մամփրեն: Հայացքը գարնանագոլ գետնին, Մամփրեն մտածեց, այնուամենայնիվ, լռությունը խախտողը Ավեն չպետք է լիներ. ցավի, ուրախության և խոսքի կշիռը չիմացող Անդարդ Ավեն չպետք է լիներ խորհրդավոր լռության խախտողը:

– Տառերն թամամ սովորեցի՞ր, Մամփրե:

Մշեցի Խաչոն, նեղսրտած, ձեռնափայտը դեմ արեց Ավեին.

– Համբերե: Քանց երեխա ինչո՞ւ կթռվռաս:

– Օղորմի քու անուշ ծնողաց, Մամփրե: Մարաթուկ վկա, քու արածն, քու արածն, Մամփրե, մեծ մարդու արած էր, մեծ բան էր:– Եվ խիստ բարձրացրեց ձեռնափայտն ու շեփ–հայացք նետեց Ավեի կողմ:– Ու ամեն մարդու բան չի: Օղորմի քու անուշ ծնողաց:– Կրկնեց մշեցի Խաչոն և շարունակեց բորբոք ու ներշնչված: Եվ ասաց, թե ճշմարիտ է, որ ինքը աշնանից մինչև այսօր չի գնացել Մամփրեի տուն, Մամփրեին չի երևացել՝ պարզապես չի կամեցել խանգարել, բայց զոր ու գիշեր, մտոք, Մամփրեի հետ է եղել և աղոթել է, որ Մամփրեի ուխտը ի կատար ածվի: Ինքն էլ փորձեց, ախր, հոգի ունի տալու և պետք է խոստովանի, ինքն էլ փորձեց սովորել

սուրբ Մաշտոցի գրերը: Երբ լուր առավ, թե Մամփրեն այդպիսի սուրբ ուխտ է կապել, ինքն էլ գոտեպնդվեց: Բայց որդին խանգարեց, որդին աղջկա ձեռքից գիրքը վերցրեց-շպրտեց մի կողմ, թե պապիդ իզուր մի՛ չարչարիր: Հա փորձեց, հա որդին դեմ կանգնեց, ինքը համառեց, և որդին համառեց. ինքը մշեցի էր, իսկ որդին մշեցու որդի՝ ավելի հաստկող, և որդին ի չիք դարձրեց Խաչոյի ուխտը և... և մինչև այսօր, աշունքվանից մինչև հիմա Խաչոն որդու հետ ոչ հաշտ է, ոչ խռով: Բայց Մամփրեն, Մամփրեն իր ուխտն ու պայմանը կատար ածեց:

– Օղորմի քու անուշ մոր, Մամփրե, սուրբ Մաշտոցի գրերն ի՞նչ տեսք ունեն, ու ի՞նչ բնույթ ունեն: Մեկ-երկու նմուշ պատկերե, Մամփրե՛:

Մամփրեն, որ գլուխկախ լսում էր Խաչոյին (փառք աստծո, ուրեմն գյուղում բոլորը չէ, որ իր արածը ընդունել են խենթություն), հիմա շտկվեց և ձեռքը տարավ գրպանը, որ ճամփից հավաքած թերթերից ընտրի գլխատառ գիրը և բացատրի, բայց միտքը փոխեց, գտավ մի կտոր ճիպոտ և ուղիղ մի գիծ քաշեց խոնավ գետնին:

– Էս ի՞նչ է, Խաչո՛:

Մշեցի Խաչոն երկմտեց, իսկ Անդարդ Ավեն ելավ-կանգնեց գծի գլխին և շտապեց՝

– Գիծ է: Հիմա ես էլ գծեմ ու իմ պապի պապն էլ գա ու գծե:

– Համբերե,– Խաչոն ձեռնափայտով քշեց Ավեին:–Նստիր քու տեղն ու մեր արևն մի՛ ծրարե:

– Հաշվենք, թե՝ առու է, Խաչո: Առվակ:— Մամփրեն գիծը խորացրեց:– Առվակ է ու ոչ թե դաշտի առվակ, սարից իջվարող առվակ է՝ շիտակ ու բարակ ու զուլալ:– Եվ զուգահեռ գծեց:– Ու էս ջուխտակ զուլալ առվակներն սարից կիջվարեն ու կհանդիպեն ու կմիանան մեկ ավելի պստիկ առվակի՝ լանջն ի հետ գնացող: Էս է:– Մամփրեն ճիպոտով զուգահեռ առվակները միացրեց:– Միացա՞ն... թե միացան, թե առվակներն զարկվան իրար, ուրեմն ջուրն կշատանա, ուրեմն առվակներն կլցվեն ափեափ, ուրեմն հարկ է, որ մի տեղից ջուրն ճոթ տա... էս է: Ուրեմն ճոթ կտա, քչիկ մի կերթա ու... ո՞ւր պետք է էրթա, Խաչո, սար է, չէ՛, ուրեմն կդառնա ու էսպե՛ս կիջվորե: Էս էղավ, ուրեմն, սուրբ Մաշտոցի առաջին տառն ու մեծ տառն՝ Ա:

Պատի տակ նստոտածները՝ բոլորը համերկրացիներ, բոլորը տառերին անծանոթ, լուռ նայում էին Մամփրեի գծած տառին և սպասում, թե Մամփրեն էլի ինչ կասի:

– Գրերից մի քանիսն շիփ-շիտակ առվակների պատկերից փոխս են: Էն էլ թե ինչո՞ւ, սուրբ Մաշտոցի կամքն է:

Գրողները երբեմն իրենց ստեղծագործություններում օգտագործում են **բարբառային բառեր:** Դա հիմնականում արվում է որոշ կերպարների խոսքը անհատականացնելու համար:

Մեկ-երկուսն էլ կան, որ... որ, մեղա, մեղա, սուրբ Մաշտոց... էդ մեկ-երկուսն, Խաչո, իմ սրտին դուր չեն գա:

Եվ գծեց Թ-ն ու կտիչը կտրեց:

– Կտիչ է, օձի կտիչ է, ու իմ սրտին դուր չի գա: Այս մեկ: Մյուսը:– Եվ գծեց Ք-ն:– Այ, մեծ առու է: Առու է, թե գետ է՝ մեծ է. քանզի մի տեղ լիճ է կազմել: Ահա: Ապա մի առվակ (առվակ, թե գետակ) գալիս է, թափով գալիս-զարկում-կտրում է այդ մեծ առուն (թե գետը): Զարկում-կտրում-անցնում է: Կտրելը՝ կտրում է, բայց, չգիտես ինչու, չի ճգվում, չի երկարում՝ այ, այսպես...– Եվ հատիչը՝ Ք-ի պոչը հատող գիծը, ճգեց ու տարավ, քանի ձեռքը երկարում էր, և քանի ճիպոտը տանում էր՝ ճգեց:

– Այ՛, էսպես, Աստված քու տուն սարքե, ինչո՞ւ ես առվակի դեմն առե,– դիտողություն արեց Մաշտոցին և ներողություն խնդրեց:– Մեղա՛, սո՛ւրբ Մաշտոց, մեղա: Հըմը իմ կարճ խելքով, Խաչո՛, էն առվակն, էն գետակն, որ մեծ առու ու գետ կկտրի, էդ առվակի ճամփեն հարկ է, որ էղնի երկար ու երկար:

Էլի լռություն եղավ... Մամփրեն այդ ո՞ր աշխարհն է հասել, ո՞ր աշխարհից է գալիս, ո՞ր աշխարհի մասին է այսպես ճարտար պատմում... Օր ծերություն Մամփրեն ելավ ու զարկեց (Դավթի հրեղեն թո՞ւրն էր Մամփրեի ձեռքին), զարկեց և պարիսպներ խորտակեց, և հորիզոններ բացեց իր համար, երկրից հասավ մինչև երկինք և սուրբ Մաշտոցի հետ վեճի մեջ է: Իսկ իրենք... իրենք մնացին իրենց քարերին կպած՝ քարի ոստի պես:

Ուսուցման ի՞նչ մեթոդ ուներ Տեր Հարությունը՝ Մամփրեի ուսուցիչը: Իսկ դու ինչպե՞ս ես ավելի հեշտ սովորում:

Նույնիսկ Անդարդ Ավեն էր անծպտուն ու բերանբաց նայում Մամփրեի գծած հրաշք տառին, որ տառ չէր, այլ գետ ու գետակի հանդիպում ու հատում: Մամփրեն է ասում:

– Ուրեմն, Խաչո՛, հայոց գրերն գետերի ու գետակների, սարն ի վար իջվարող ու սարն ի հետ գնացող առվակների՝ շիտակ ու զուլալ ու կանաչափ առվակների հոսք է, կցվնոնք է ու հատոնք: Էդպես պատկերացրու:

Ուշադիր ու լուրջ լսում էին (հաճելի էր ու շոյող), և Մամփրեն որոշեց հասկացածը մինչև վերջ բացատրել տարեկիցներին:

Ուրեմն՝ այդպես: Բայց կան նաև տառեր, որ դաշտի, հարթավայրի առվակների պատկերն ունեն. ահա՝ ծայր առան, ոլորվեցին ու տեղն ու տեղը սուզվեցին, ահա ոլորվեցին ու լճացան: Տառերից մի քանիսն էլ, ուրեմն, դաշտային առվակի պատկերն ունեն: Բայց այդ պատկերներով տառերը քիչ են: Ինչո՞ւ: Քանզի հայոց աշխարհը լեռնային է, և

գրերի շատը, ուզի-չուզի, լեռնային գետակների, առուների ու առվակների պատկերը պետք է ունենային:

– Գրերն սովորելուց թոռնիկն ստիպեց, թե ջղարեն թող: Ու ես թարկեցի: Հըմը էսօր իմ սիրտն ծխել շատ կուզե:

Եվ Խաչոյի վառած ծխախոտն առավ ու հակվեց ծնկներին:

Ահագին ժամանակ լուռ էին:

Հայոց գրերը խլվլում էին Մամփրեի ներսում, թռվռում էին հայացքի դիմաց, և նա անհանգիստ էր: Տունը կանչում էր նրան: Գրապահարանում նա արդեն իր անկյունն ուներ՝ այբբենարանը, կարմիր տառերով լցված տետրերը, անգրել տետրեր, ծայրած ու անծայր կարմիր մատիտներ, ռետին: Տետրերն ու մատիտները կանչում էին, և նա ուզում էր ոտքի ելնել, բայց գարնան առավոտի արևը շատ էր դուրալի: Գարնան արևը, խոնավ գետնի գոլը, սարերի ձնհալով լցված գյուղի կենտրոնական առուն, աղբյուրի ծորանից պոռթկացող ջրի շիթը... Ջուրը փշրվում է քարե գռում, և մանրիկ շիթերը պարս էին բռնել աղբյուրի գլխին: Եվ Մամփրեն հիշեց. վարժապետ Տեր Հարությունը ասում էր՝ սուրբ Մաշտոցից առաջ հայոց գրեր են եղել և հայոց բան՝ փորված քարե սալիկներին: Հայոց վայրագ թշնամին ջարդուփշուր է արել հայոց քարե մատյանները, և գրերը թևավորվել են, կերպարանափոխվել մեղուների և թռել սարերը...

Վարժապետ Տեր Հարությունը ասում էր, որ սուրբ Մաշտոցը հայոց առաջին դպրանոցները բացեց հայոց երկրի սահմանաեզրերում: Շրջում էր հայոց սահմաններով, վարժապետներ կրթում, դպրոցներ բացում, վարժապետներ կրթում, դպրոցներ բացում... Եվ այդ դպրանոցները բերդեր էին սահմանաեզրերում: Բերդեր և զորանոցներ: Քանզի տառերը, Մաշտոցի գրերը, զինվորներ են: Գեղեցկադեմ, մաքուր և զուլալ և արի զինվորներ: Զինվորներ: Ոչ թե ասկյարներ, այլ զինվորներ:

Երկրի սահմանները պաշտպանող զինվորներ:

Արդարության, ճշմարտության համար կռվող զինվորներ:

Գեղեցիկն ու բարին պաշտպանող զինվորներ:

Եվ հայոց երկրի թշնամոց դեմ կռվող հերոս զինվորներ:

Ահա այդպես: Եվ վարժապետ Տեր Հարությունն էր ճիշտ, ոչ թե Օհանը: Ճիշտ չէր Օհանը. Էրգրի իրենց գյուղի ամենատարեց մարդը, նա, որ հզոր ընկուզենի ուներ և իր ընկուզենու հասակակիցն էր, ճիշտ չէր, որ ասում էր, թե հայոց գիրը հայոց թագավորն է, արքան է: Հայոց գրերը հայոց զինվորներն են: Իսկ թագավորը, թագավորը Մամփրեն է, Մամփրեն

է արքան, այսինքն նա, ով այդ զինվորներն ունի իր հրամանի տակ և նրանց կռիվ է տանում հանուն հայրենիքի, հանուն արդարության, հանուն ճշմարտության, հանուն գեղեցիկի: Իսկ Մամփրե արքան կարող է հանկարծ փսլնքոտի մեկը լինել և զինվորներին հիմար հրամաններ տալ, այդ դեպքում նա արդեն արքա չէ, այլ սովորական մի փսլնքոտ և հրաման տալու իրավունք չունի, այլ ամենաշատը, ամենաշատը, պետք է հետևի, թե իսկական արքայի հրամանի տակ զինվորներն ինչպես են շարժվում, դեպի ուր են շարժվում և ինչ են անում, և եթե կարող է, թող մաքրի իր փսլինքը: Այդ Մամփրե արքան կարող է հանկարծ նենգ, մի ավազակ լինել, իսկ ավազակն արդեն արքա չէ, ավազակ է ու կա, և նրա պիղծ հրամանի տակ այդ զինվորները կարող են դառնալ ասկյարներ:

Այսպես:

Մամփրեն հերսոտ ոտքի ելավ:

Եվ լցված հասավ տուն, գրապահարանի իր անկյունից վերցրեց անգրել մի տետր, կարմիր մատիտ, նստեց սեղանի մոտ և թափով ու գլխատառերով գրեց. *«Մամփրեն արքա է, իսկ սուրբ Մաշտոցի գրերն զինվորներ են»:*

Նա գրել էր առանձին բառեր — *ասա, արա, սար, տար* — գրել էր անուններ — *Արարատ, Սանասար, Սիրան, Տիրան...* — բայց լրիվ մի նախադասություն, ամբողջական մի միտք՝ սա առաջինն էր:

Եվ գրեց առանց ճիգ ու ջանքի, միանգամից և հուզվեց միայն գրելուց հետո, երբ զննեց թիկունք-թիկունքի զգաստ շարված կարմիր գլխատառերը:

Հետո գրածը խնամքով անջատեց տետրից, խնամքով ծալեց-դրեց ծոցը, նստեց դռանը և սպասեց. ուր որ է՝ թոռնուհին դասից կգա:

Ինչո՞ւ են հայոց տառերին անվանում զինվորներ:

...Երբ երեկո եղավ, և գերդաստանը քնեց, Մամփրեն վերցրեց տետրերը, վերցրեց այբբենարանը. տեսար ու գրերից մեկի պատկերը մտքից թռավ, վերցրեց մատիտներն ու ռետինը և նստեց սեղանի մոտ: Հիմա Մամփրեն այդ փսլնքոտին այնպիսի դաս կտա. այնպիսի մի կոթոց կգրի, որ մուխը պնչներից դուրս գա և ողջ կյանքում ձեռքը գրերից ետ քաշի...

Բայց ինչպե՞ս սկսել, ինչպե՞ս դիմել...

Եվ ծոցից հանեց գրածը — *Մամփրեն արքա է, իսկ սուրբ Մաշտոցի գրերը զինվորներ են* — հաճույքով կարդաց և մեկնեց սեղանին, պետք է գրել այսօրինակ՝ գլխատառերով, այսպես՝ թիկունք-թիկունքի, զինվորների պես զգաստ շարված և, անշուշտ, կարմիր մատիտով: Եվ մատիտը թքոտեց:

Որքա՜ն բան կա գրելու: Որքան և որքան ճշմարտություններ ունի ասելու Մամփրեն: Ափսոս, հազար ափսոս, որ գրերի հետ ուշ ծանոթացավ — օր ծերություն: Լավ էր գոնե, որ Մարաթուկի ուխտը կատարեց, և հիմա Մամփրեն կարող է Մաշտոցի զինվորները շարքի կանգնեցնել ու շարժել: Որքան է խոսել և միշտ՝ ճշմարիտը, ժողովներին որքան և որքան է ոտքի կանգնել: Հարյուր անգամ միայն՝ Խաչոյի համար: Այո, մշեցի Խաչոյի արտի, արտերի համար նախագահի, նախագահների դեմ հա ճակատ է տվել. խեղճ մարդը՝ մշեցի Խաչոն, տարին մի արտ էր պատրաստում լանջերին, ձորաբերանին, քարերի մեջ, նախագահը խլում էր, թև ու թիկունք ջարդելով մշեցի Խաչոն քարցանք սարալանջերից էր հողը խլում, ձորից էր հողը խլում, նախագահը... նախագահը՝ Խաչոյից: Եվ ինքը՝ Մամփրեն, ամեն ժողովի ոտքի էր կանգնում՝ արդար չէ, բողոքում էր, սխալ է, և բացատրում էր՝ արտը Խաչոյից խլեցիք, իմացած եղեք, որ այդ արտը կկորցնեք. կտրորեք, կտաք բուլդոզերի բերանը, կլքեք-կտաք հեղեղի բերանը՝ կլցնեք ձորը (ինչպես որ եղավ, ինչպես որ եղավ): Թողեք, ասում էր, թող այդ լաթ արտը Խաչոյի ձեռքին մնա և սարալանջին կպած: Բայց լսողն ո՞վ էր: Քանզի խոսքը բանավոր էր՝ քամու բերան ընկած աշնան տերև: Իսկ գիրը, գիրը, ճշմարտախոս գիրը... Հաշվիր, թե խոսքդ քարի վրա ես քանդակել, ժայռերի վրա՝ միշտ աչքի դիմաց, հաշվիր, թե քանց ցորեն ցանել ես, և ծիլ է տվել, կանաչել է, հասունացել ու ծփում է: Դե եկ ու մի՛ նայիր, եկ ու ասա՝ այստեղ արտ չկա, և ասա, ասա՝ ցորենի հասուն արտը ոչ մեկին, ոչ մեկին պետք չէ: Ա՜խ, եթե Մամփրեն հայոց գրերին էն գլխեն ծանոթ լիներ: Բայց ուշ չէ, բոլորովին էլ ուշ չէ, մի օրվա կյանք էլ ունենաս, այդ մեկ օրն էլ հարկ է, որ կռվես արդարության համար, ճշմարտության ու գեղեցիկի համար... Խաչոն դեռ «ավելորդ» մի արտ ունի, մշեցի Խաչոյի վերջին արտը դեռ մնում է սարալանջին, Խաչոն առվույտ է ցանել ու սպասում է նախագահի վճռին: Ո՛չ, այդ արտի ճակատագիրն արդեն Մամփրեն է վճռելու: Մամփրեն հենց այս գիշեր Մաշտոցի ասպետ զինվորները կշարի և արևը չծագած կքշի ուղիղ կոլտնտեսության գրասենյակ: Այդպես:

Մատիտը բռում սեղմած, Մամփրեն մարտական քայլում էր. այլևս ոչ մի անկողին՝ առանց այն էլ քուն չի գալիս աչքերին. այլևս ոչ մի անկողին՝ առանց այն էլ ապրելու քիչ ժամանակ է մնացել, իսկ Մամփրեն անելիքներ ունի:

Գործ ունի:

Կռիվ ունի:

Ջորօրինակ…

Ի՞նչ հարցեր կտայիր Մամփրե պապիկին:

...Եվ հանկարծ գայթեց: Թվաց, թե տախտակապատ հատակին քար հայտնվեց–կտրեց ճանապարհը, զարկվեց ոտքին: Մամփրեն գայթեց և ձեռքը տարավ գլուխը.

– Օխաաշշշ...– Ծոծրակի մոտ այնպես իրական պոռթկաց ցավը, ինչպես, է՛, այն օրը, երբ ինքը Մեհրեաղբյուրի մոտ Օսմանի նենգ լակոտ Օսմանին լավ տրորեց, ապա ծնկեց՝ ջուրը դեպի իրենց շաղգամի արտի կողմ շտկելու, իսկ այդ ճպռոտ լակոտը, այնուամենայնիվ, թիկունքից քարով զարկեց-ջարդեց իր գլուխն ու փախավ և ուսն ի ետ քարերի պես շպրտում էր,– Աթաբունար... Աթաբունար,– որպես թե աղբյուրի անունը Մեհրե չէ, այլ Աթաբունար, որպես թե աղբյուրը քոնը չէ, այլ իմը...

– Օսմա՛ն, ես քու հավատը…

Կոտորումն ու գաղթը վրա տվեցին, և Մամփրեի ու քո կռիվը կիսատ մնաց: Եվ մնաց որքա՜ն ժամանակ, որքա՜ն ժամանակ, մինչև այսօր... Իսկ այսօր, հիմա, հենց այս գիշեր Մամփրեն քո նենգ հերը կանիծի... Ահա թե ինչի համար, թե ինչի համար, ինչի համար Մամփրեն սովորեց հայոց գրերը... Յա՛, Մարաթուկ…

Ինչո՞ւ Մամփրե *արքա:*

Գլխապտույտի մեջ և աչքերը մթնդած և շունչը հևիհև ափլփում էր դեպի սեղանը, և այն մտքից, թե կարող է հանկարծ շունչը փչել, Մամփրեն սարսռաց... Տեր Աստված, այդպիսի դաժանություն չանես, այսքան կյանք ես պարգևել Մամփրեին, շնորհիր նաև մեկ գիշեր, թաք մեկ գիշեր, այս գիշերն ի լույս: Եվ բավական է: Եվ Մամփրեն գոհ կմնա: Եվ Մամփրեն խաղաղ աչքը կփակի: Սուրբ Մարաթուկ, դու, դու ճանանչ ես, ախր, Մամփրեին, դու օգնիր, որ Մամփրեն իր անպատասխան կռիվը անի (ահա թե ինչի համար սովորեց հայոց գրերը), իր պարտք–կռիվը տա, ապա կամքը քոնն է: Յա, Մարաթուկ...

Բայց հայացքի դիմաց մշուշ էր, ճերմակն ու կարմիրը խառնվել էին իրար: Նա բռունցքով տրորեց կուրծքը, քունքերը և օգնության կանչեց Էրգրի սարերի շունչը, տրորեց աչքերը և օգնության կանչեց սարերին փլված ճանանչ եկեղեցիների զորությունը, և մատիտը ձեռքն առավ... Հիմա, հիմա... Ահա թե ինչի համար, թե ինչի համար սովորեց հայոց գրերը: Հիմա...

Բայց մատները չէին ենթարկվում, ձեռքը դողում էր, և հենց առաջին տառը ճղվեց:

– Քու անունը... Օսմա՛ն:

Ոտքի ելավ և հուզված սկսեց քայլել... Հիմա, հիմա, սիրտը կհանդարտի, դողը հիմա կանցնի, աչքերը կլուսավորվեն, կհանդարտի սիրտը, և Մամփրեն քո հարամ հերը կանիծի,

ճամփաների դարանակալ ավազակ... Ահա թե ինչի համար, ինչի համար Մամփրեն սովորեց հայոց գրերը: Համբերիր, հիմա, հիմա... Հետո ննջարանից բերեց որդու ծխախոտը, վրավրա ծխեց և քշեց դեպի սեղանը: Յա, Մարաթուկ...

Ընտրեց տետրերից լավագույնը, մատիտներից՝ ամենակարմիրը, թքոտեց մատիտն ու սկսեց.

...Լուսաբացին որդին հորը գտավ սեղանի մոտ մարած, ճակատը սեղանին, սեղմված բռունցքում մատիտը և ճակատի տակ կարմիր գլխատառերով գիրը.

«Օսման, թալանչի Օսման, ուրեմն որպես ավազակ որ ճամփին կանգնեցիր, էդ ճամփեն քոնն է, հա՞: Քու թալանչի ձեռքն, որ դռան դիպավ, էդ տունը քոնն է, հա՞: Քու գիշատիչ աչքն, որ սարը տեսավ, էդ սարը քոնն է, հա՞: Քու հարամ շունչն որ աղբրակին դիպավ, էդ աղբուրն քոնն է, հա՞...» Աթաբունար... Մամփրեն ճար չունեցավ, թե քեզ տրորեր, տրորեր ու տրորեր, ու դու հասկանայիր, թե Տալվորիկի սարերում ու ողջ Սասնո սարերում Աթաբունար հարամանուն աղբյուր չկա: Չկա ու չկա: Աղբուրի անունը Մեհրե էր ու Մեհրե կմնա՝ Մեհրեաղբյուր: Պատմություն կա, Արարիչ կա ու հնուց եկած զրույց. Առյուծ Միհրն էդտեղ, հենց էդ աղբրակի բխած տեղն է հանդիպել առյուծին ու ճղել զառյուծն ու, կամոք Արարչի, տեղն ու տեղն աղբուր է բխել: Եվ Արարիչն ինքն է կնքել՝ Մեհրեաղբյուր: Արարիչն է ծնել ու Արարիչն է կնքել: Օսման, թալանչի Օսման, ես էլ մեռնեմ, դու էլ մեռնես, աղբուրի անունը Մեհրե էր ու Մեհրե էլ կմնա: Մամփրե արքա»:

Դիտե՛ք Մուշեղ Գալշոյանի սցենարով նկարահանված «Զորի Միրոն» գեղարվեստական կինոնկարը (ռեժիսոր՝ Ժիրայր Ավետիսյան):

Ի՞նչ դեր ունի Մեհրեաղբյուրը պատմվածքում:

հոս այստեղ
հերսոտել զայրանալ, հերս՝ զայրույթ
ելվերում էին ելնում-իջնում էին
ուրթ (ուրդ) այստեղ՝ ջրի կապ, հանգույց, առվի սկիզբը
Մարաթուկ Սուրբ Աստվածածին վանքը Մարութա սարում, որ գտնվում է Սասունում
լիկկայան հապավում է՝ լիկվիդացիոն կայան, որտեղ գրել, կարդալ չիմացողներին գրագիտություն էին սովորեցնում
ձեռքվեց ձեռք տվեց, բարևեց
թամամ լրիվ, ամբողջ
քղքալ կոկորդը մաքրել
մեր արևն մի՛ ծրարե մեր արևը մի՛ ծածկիր
ջուրն ճոթ տա ջուրը ելք ունենա
կցվնոնք է ու հատոնք կցված է ու հատված
ջղարա ծխախոտի չոր տերևներից կամ մանրած մասերից փաթաթած սիգար
ծայրած այստեղ՝ ծայրը սրած մատիտ
գուռ աղբյուրի առջև քարե ավազան
լաթ արտ մի կտոր արտ
ափլփել ձեռքերով խարխափելով որոնել



ՈՒԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

(1908–1981)

Օտարագիր հայ գրողներ են համարվում ազգությամբ հայ այն գրողները, որոնք հավատարիմ են մնացել իրենց հայկական ծագմանը, բայց գրել են ոչ հայերեն, այլ օտար լեզվով (անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն, ռուսերեն և այլն):

Կյանքը, ուսումնառությունը: Ուիլյամ Սարոյանը օտարագիր հայ հռչակավոր գրող է: Ծնվել է 1908 թվականի օգոստոսի 31-ին ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգի **Ֆրեզնո** քաղաքում: Նրա ծնողները այստեղ էին տեղափոխվել Արևմտյան Հայաստանի **Բիթլիս** քաղաքից: 3 տարեկանում Սարոյանը կորցնում է հորը և եղբոր ու երկու քույրերի հետ տեղափոխվում որբանոց: Այստեղ մնում է 5 տարի: Սարոյանը կանոնավոր կրթություն չի ստացել: Ընտանիքին օգնելու նպատակով ստիպված է եղել ամենատարբեր աշխատանքներ կատարել: Լրագրեր է վաճառել, եղել է փոստատար, սևագործ բանվոր, ֆերմաներում ու այգիներում՝ մշակ: 1926 թվականին Սարոյանը գնում է **Սան Ֆրանցիսկո:** Այստեղ աշխատում է որպես հեռագրատան ծառայող, սպորտային ապրանքների խանութի վաճառող, պահեստի բանվոր: 1935 թվականին Սարոյանն առաջին անգամ այցելում է Հայաստան, ծանոթանում ու շփվում հայ գրականության՝ այդ տարիների նշանավոր դեմքերի հետ, որոնց մեջ նրան առանձապես տպավորում է Եղիշե Չարենցը: Հետագայում էլ Սարոյանը մի քանի անգամ այցելել է Հայաստան:

1942 թվականին Սարոյանը զորակոչվել է բանակ: 1950-1960-ական թվականներին ապրել է Եվրոպայում, ապա նորից հաստատվել ԱՄՆ-ում:

Ուիլյամ Սարոյանը մահացել է 1981 թվականի մայիսի 16-ին Ֆրեզնոյում: Աճյունի մի մասը թաղված է Երևանի Կոմիտասի անվան հայոց մեծերի պանթեոնում:

Ստեղծագործությունը: Ուիլյամ Սարոյանի առաջին ստեղծագործությունը հրատարակվել է հայկական «Հայ-բենիք» անգլերեն շաբաթաթերթում՝ Սիրակ Գորյան ստորագրությամբ: 1934 թվականին լույս է տեսնում նրա առաջին՝ **«Խիզախ պատանին թռչող ճոճաձողի վրա և այլ պատմվածքներ»** ժողովածուն, որը միանգամից հայտնի է դարձնում նրա անունը գրական աշխարհում: Հետագայում էլ նա շատ է գրել պատմվածքներ, որոնք ամփոփված են տասից ավելի ժողովածուներում: Դրանց շարքում առանձնանում է **«Անունս Սարոյան է»** ժողովածուն, որում ընդգրկված պատմվածքներում Սարոյանը ստեղծել է հայերի մի շարք տպավորիչ կերպարներ:

Սարոյանը համաշխարհային գրականության լավագույն դրամատուրգներից է: Նրա **«Քո կյանքի ժամերը», «Իմ սիրտը լեռներում է», «Կոտորածն մանկանց», «Հե՛յ, ով կա այդտեղ»** և այլ պիեսներ տարիներ շարունակ չէին իջնում բեմերից և այժմ էլ շարունակվում են բեմադրվել:

Ուիլյամ Սարոյանը բազմաժանր հեղինակ է: Գրել է **պատմվածքներ, վիպակներ, վեպեր, պիեսներ,** հուշագրական երկեր:

Տուն-թանգարանի հասցեն է՝ ԱՄՆ, Կալիֆոռնիա, Ֆրեզնո, Գրիֆիթ Վեյ 2729:

Ուիլյամ Սարոյանի ծննդյան 110-ամյակին՝ 2018 թվականի օգոստոսի 31-ին, ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնո քաղաքում բացվել է գրողի տուն-թանգարանը:

Ինչպես իր ժամանակակից շատ գրողներ, Սարոյանը նույնպես անդրադարձել է Երկրորդ համաշխարհային պատերազմի թեմային: Դրան են նվիրված նրա **«Մարդկային կատակերգություն»** վիպակն ու **«Ուեսլի Ջեքսոնի արկածները»** վեպը: Այս ստեղծագործություններում պատերազմը ներկայացվում է որպես աղետ մարդկության համար:

Ինքնակենսագրական տարրը շատ մեծ տեղ է գրավում Սարոյանի ստեղծագործության մեջ: Բացի նրանից, որ գրողի բազմաթիվ պատմվածքներում, պիեսներում առկա են սեփական կենսագրության դրվագներ, Սարոյանը ստեղծել է գեղարվեստական գործեր, որոնք բնույթով ինքնակենսագրական են: **«Հայրիկ, դու խենթ ես», «Մայրիկ, ես սիրում եմ քեզ»** վիպակները ծնող-երեխա կապի խորունկ և հոգեբանական նուրբ դիտարկումներով գեղեցիկ գործեր են:

Սարոյանը հեղինակ է նաև բազմաթիվ հուշագրական երկերի: Դրանք նվիրված են ոչ միայն համաշխարհային արվեստի ու գրականության նշանավոր դեմքերին՝ Բեռնարդ Շոու, Չարլի Չապլին, Թոմաս Էլիոթ, Եղիշե Չարենց և ուրիշներ, այլև բացահայտում են հենց իր՝ Սարոյանի անձնական կյանքի բազմաթիվ հետաքրքիր դրվագներ:

Ուիլյամ Սարոյանի ամենահայտնի թարգմանիչներից են Խաչիկ Դաշտենցը, Զավեն Բոյաջյանը, Սամվել Մկրտչյանը, Նունե Թորոսյանը և ուրիշներ:

Ուիլյամ Սարոյանը նաև նկարում էր: Պահպանվել են նրա բազմաթիվ գծանկարներ և ծաղրանկարներ:

Ուիլյամ Սարոյանի նկարներից մեկը

Ուիլյամ Սարոյանի հուշարձանը՝ Երևանի կենտրոնում
Քանդակագործ՝ Դավիթ Երևանցի
Ճարտարապետներ՝ Ռուբեն Հասրաթյան, Լևոն Իգիթյան

Ուիլյամ Սարոյանի կյանքի հետաքրքիր դրվագներին ավելի մանրամասն ծանոթանալու համար դիտի՛ր «Ուիլյամ Սարոյան» տեսաֆիլմը:

Ուիլյամ Սարոյանի ստեղծագործությունները դեռ 1930-ական թվականներից թարգմանվել են հայերեն և ներկայացվել հայ ընթերցողին: Ընդ որում՝ թարգմանվել են և՛ արևմտահայերեն, և՛ արևելահայերեն: Հայերեն լույս են տեսել Սարոյանի բազմաթիվ գրքեր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայաստան իր առաջին այցելության ժամանակ Սարոյանը հանդիպել է նաև Եղիշե Չարենցին: Գտի՛ր Սարոյանի հուշերը, դասընկերներիդ ներկայացրո՛ւ, թե ի՛նչ է ասել Սարոյանը Չարենցի **«Ես իմ անուշ Հայաստանի»** բանաստեղծության մասին:
2. Սարոյանի մտքերից ծաղկաքաղ կազմի՛ր և գրի՛ր քո տետրում: Ո՞ր միտքը քեզ ամենից շատ դուր եկավ. ինչո՞ւ:
3. Սարոյանը շատ է գրել պատանիների մասին: Ինչո՞ւ: Ո՞ր ստեղծագործությունն ես ընթերցել կամ կուզեիր ընթերցել:
4. Ի՞նչ վերաբերմունք ուներ Սարոյանը Հայաստանի նկատմամբ, ինչպե՞ս է դա արտահայտվել:
5. Կարդա՛ «Իմ անունը Արամ է» պատմվածաշարի ստեղծագործություններից մեկը և մեկնաբանի՛ր:

Մտածի՛ր և քննարկի՛ր դասընկերներիդ հետ:

Ուշադիր նայի՛ր այս կտավին: Բնութագրի՛ր նկարը երեք բառով: Հիմնավորի՛ր քո ընտրած բառերը:

Փանոս Թերլեմեզյան, «Նռնենի»

ՆՌՆԵՆԻՆԵՐԸ

Մելիք հորեղբայրս երևի աշխարհի ամենաձախողակ ագարակատերն էր: Սեփական երևակայության ձեռքը կրակն էր ընկել: Սիրտը գեղեցկություն էր ուզում. ուզում էր, որ ծառ տնկի ու աճելը տեսնի: Ես իմ ձեռքով հարյուրից ավելի նռնենի եմ տնկել: Ես էլ հորեղբորս պես «Ջոն Դիրի» տրակտոր եմ քշել: Սա հողագործություն չէր՝ զուտ արվեստ էր: Հորեղբորս դուր էր գալիս ծառեր տնկել ու նայել, թե ոնց են աճում:

Հակառակի պես չէին աճում: Պատճառը հողն էր: Չոր էր: Ոնց որ անապատ: Հորեղբայրս, ձեռքը իր գնած վեց հարյուր քառասուն ակր տափաստանի կողմն անելով, երբևէ արտաբերած ամենահուզական հայերենով ասել էր. էստեղ, էս ահավոր անապատում ծաղկանոց կբացվի, հողի տակից սառն աղբյուրներ կբխեն, ու մի սքանչելի հեքիաթային գեղեցկություն կսարքենք:

Հա, հորեղբա՛յր, ասացի:

Մեր ընտանիքից հողակտորը տեսած առաջին ու միակ անդամն էի: Գիտեր, որ կհասկանայի, թե նրան ի՛նչ ուժ էր սնանկացման մղում: Հասկանում էի: Գիտեի, ու ինքն էլ

Պատմվածքը անգլերենից թարգմանել է Նունե Թորոսյանը:

գիտեր, որ գնածը գրողի ծոցում՝ Սիեռա Նևադայի ստորոտում, մի անպետք անապատ էր՝ չոր ցամաք հողից դուրս պրծած բոլոր տեսակի բուսականությամբ ծածկված, մեջը վխտացող մարգաշներ, սկյուռներ, քարադոդոշներ, օձեր ու հազար ու մի անապատային արարածներ: Վերի երկինքը բազեներից, ճուռակներից ու արծիվներից բացի, ուրիշ ներկայություն չէր իմացել: Լռության, մենության, ունայնության, շիտակության ու արժանապատվության տարածք էր՝ բնությունն իր ամենից հպարտ, ամենից չոր և ամենից գեղեցիկ պարզությամբ:

Հորեղբորս հետ մեր երկտեղ ֆորդից դուրս եկանք ու քայլեցինք պապակ հողի վրայով:

Էս հողն իմն է, ասաց հորեղբայրս:

Ոտքով չոր հողը բոթբոթելով՝ կամաց քայլեց: Ոտքերի տակից մի մողես դուրս թռավ: Հորեղբայրս ուսս բռնեց ու գամվեց տեղում:

Էս արարածն ի՞նչ էր:

Էս պստիկ մողե՞սը:

Հա, ի՞նչ էր:

Հաստատ չգիտեմ, բայց դրանց քարադոդոշ ենք ասում:

Քարադոդոշը մեզնից երեք ոտնաչափ հեռու կանգ առավ ու գլուխը շրջեց:

Հորեղբայրս պստիկ արարածին նայեց:

Թունավո՞ր է, հարցրեց:

Ուտե՞լը, հարցրի, թե՞ կծելը:

Էն էլ, էն էլ:

Չէ, ուտելու չի: Բայց ոնց որ անվնաս է: Էնքա՜ն եմ բռնել: Որ բռնում ես՝ տրտմում են, բայց չեն կծում: Կուզե՞ս բռնեմ:

Լավ կանեիր:

Կամա՜ց մոտեցա ու հանկարծակի վրան ընկա: Հորեղբայրս նայում էր:

Զգույշ, ասաց: Հաստա՞տ թունավոր չի:

Շատ եմ բռնել:

Մողեսին մոտ տարա: Փորձեց վախը ցույց չտալ:

Ի՜նչ լավ պստիկ արարած է, չէ՞: Բայց ձայնը դողում էր:

Կուզե՞ս բռնել:

Չէ, դու բռնիր: Ոչ մի անգամ սրա նման արարած մոտիկից չէի տեսել: Ոնց որ աչքեր ունի: Երևի մեզ կտեսնի:

Քե՛զ է նայում:

Հորեղբայրս ուղիղ քարադոդոշի աչքերին նայեց: Քարադոդոշն ուղի՛ղ հորեղբորս աչքերին նայեց: Էսպես կես րոպե իրար աչքերի էին նայում, վերջը մողեսը գլուխը շրջեց ու նայեց գետնին: Հորեղբայրս թեթևացած շունչ քաշեց:

Որտե՞ղ են կատարվում գործողությունները: Ինչո՞ւ է հեղինակն ընտրել հենց այդ միջավայրը:

Հազարով լինեն՝ վայ թե մարդ էլ կսպանեն, ասաց:

Էդքան շատ մի տեղ չեն հավաքվում: Մի տեղում դժվար մեկից ավելի տեսնես:

Դրանց մեծը վայ թե կծելով մարդ էլ կսպանի:

Էդքան չեն մեծանում: Սրանց չափն էս է:

Փոքր չափի համեմատ ի՜նչ էլ մեծ աչքեր ունի: Հաստատ գիտե՞ս, բռնելուց հո չե՞ն կատաղում:

Հենց ցած դրեցիր, մոռանում են:

Հաստա՞տ գիտես:

Չեմ կարծում, թե երկար հիշողություն ունեն:

Հորեղբայրս, ծանր շնչելով, մեջքն ուղղեց:

Պստիկ արարածին ցա՛ծ դիր, ասաց: Ամենակարող Աստծու անմեղ արարածների հանդեպ բարի լինենք: Թե թունավոր չի ու մկան չափի է մնում ու հազարներով մի տեղ չես տեսնի, ու հիշողությունը կարճ է, խեղճուկրակին տեղը դիր: Մեր կողքին ապրող էս պստիկ արարածներին պիտի սիրենք:

Հա՛, սը՛ր:

Քարադոդոշին ցած դրեցի:

Կամա՛ց: Իմ հողի էս տարօրինակ բնակչին չվնասես:

Քարադոդոշը ծլկեց, փախավ:

Էս պուճուր արարածները հազար տարի էս հողերում են ապրել, ասացի:

Հազա՞ր, ասաց հորեղբայրս, հաստա՞տ գիտես:

Չէ, ասացի, բայց կարծում եմ: Ինչ որ է, հիմա էստեղ են:

Երկխոսություններից առաջ գծիկներ դրված չեն: Քո կարծիքով, ինչո՞ւ:

Հորեղբայրս շուրջը նայեց՝ իր հողին, դեսուդեն աճած կակտուսներին, բիզ-բիզ խոտին ու վեր՝ կապույտ երկնքին:

Էսքան տարի սրանք ի՞նչ են կերել, հարցրեց:

Երևի միջատներ:

Ի՞նչ միջատներ:

Պստիկ բզեզներ:

Շարունակեցինք չոր հողով քայլել: Գետնի մեջ ինչ-որ անցքերի հասանք, հորեղբայրս դրանց գլխին կանգնեց ու հարցրեց. սրանց մեջ ո՞վ է ապրում:

Մարգաշները:

Դրա՞նք ինչացու են:

Առնետի պես բան են՝ կրծողների դասից:

Էս բոլոր արարածներն իմ հողում ի՞նչ գործ ունեն:

Ի՞նչ իմանան՝ ում հողն է: Ապրում են, էլի՛:

Տեսնես էն քարադոդոշն առաջ մարդու աչքերի նայած կա՞ր:

Չեմ կարծում:

Հո չվախեցա՞վ:

Ի՞նչ իմանամ:

Թե վախեցրել եմ, դիտմամբ չեմ արել: Մի օր էստեղ տուն եմ սարքելու:

Չգիտեի:

Մի հոյակապ շքեղ տուն եմ սարքելու:

Մի քիչ հեռու չի՞:

Քաղաքից կես ժամվա ճանապարհ է:

Եթե ժամում հիսուն մղոն անցնես:

Մինչև քաղաք հիսուն մղոն չկա. երեսունյոթ է:

Հա, բայց էս ճանապարհով արագ չես գնա:

Աշխարհի ամենասիրուն տունն եմ սարքելու: Էստեղ ուրիշ ապրողներ կա՞ն:

Մի երեք-չորս տեսակի օձեր:

Թունավո՞ր, թե՞ չէ:

Մեծ մասը՝ չէ: Բացի բոժոժավոր օձերից:

Չլինի՞ ուզում ես ասել, որ էստեղ բոժոժավոր օձեր կան:

Բոժոժավոր օձերը սովորաբար էս հողերում են ապրում:

Քանի՞սը կլինեն:

Մի ակրի՞ վրա, թե՞ վեց հարյուր քառասունի՝ միասին վերցրած:

Մի ակրի վրա:

Մոտավոր ասած՝ երևի երեքը:

Ամեն ակրին՝ երեք հա՞տ: Մոտավոր ասա՞ծ:

Կամ երկուսը:

Այսինքն՝ բոլորն իրար հետ քանի՞սը կանեն:

Հիմա հաշվեմ. մի ակրին՝ երկու, անգամ վեց հարյուր քառասուն: Համարյա հազարուկես:

Հազարուկես բոժոժավոր օ՞ձ:

Ակրը մեծ է: Մի ակրի վրա երկու օձը շատ չի: Հազիվ աչքովդ ընկնեն:

Ուրիշ ի՞նչ թունավոր արարածներ կան էս կողմերում:

Ուրիշ չգիտեմ: Մյուսները վտանգավոր չեն: Բոժոժավոր օձն էլ վտանգավոր չի, եթե վրան չկանգնես:

Լավ, ասաց հորեղբայրս: Առաջ անցիր, բայց ոտքերիդ տակ նայիր: Բոժոժավոր օձ տեսնես՝ վրան չկանգնես: Չեմ ուզում, որ տասնմեկ տարեկանում մեռնես:

Հա՛, սը՛ր, զգույշ կլինեմ:

Շուռ եկանք ու հետ գնացինք: Ճանապարհին ոչ մի բոժոժավոր օձ աչքովս չընկավ: Հորեղբայրս նստեց մեքենան ու գլանակ վառեց:

Էս անկենդան անապատն այգի պիտի դարձնեմ:

Հա՛, սը՛ր:

Ի՞նչ մրգերի ծառեր էր ուզում տնկել պատմվածքի հերոսը: Քո կարծիքով՝ ինչո՞ւ հենց այդ մրգերը:

Դժվարություններս գիտեմ ու դրանց հախից գալու ձևն էլ գիտեմ:

Ո՞նց:

Քարադոդոշների մասի՞ն ես ասում, թե՞ օձերի:

Դժվարությունների:

Հը՛մ: Նախ մեքսիկացիներ կվարձեմ ու գործի կդնեմ:

Ինչի՞ խորհրդանիշն է նուռը:

Որ ի՞նչ անեն:

Հողը մաքրեն: Հետո ջրհոր փորեն:

Ջրհորը որտե՞ղ են փորելու:

Հողի մեջ: Հետո՝ հենց ջուր ունեցանք, կասեմ, որ հողը վարեն: Հետո կսկսեմ աճեցնել:

Ցորե՞ն:

Ցորե՞ն, գոռաց հորեղբայրս: Ցորենն ինչի՞ս է: Հացի եղածը հիսուն սենթ չի՞: Նու՛ռ եմ աճեցնելու:

Բա նու՞ռն ինչ արժի:

Ի՞նչ իմանամ: Էս երկրում ո՞վ է նուռ տեսել: Հատը՝ տասը, տասնհինգ, քսան սենթ:

Էլ ուրիշ բան չե՞ս աճեցնելու:

Մի քանի ուրիշ պտուղներ էլ եմ մտքիս դրել:

Դե՞ղձ:

Հա, մի տասը ակր:

Ծիրան է՞լ:

Անպայմա՛ն: Ծիրանը շատ անուշ պտուղ է: Ինքը՝ սիրուն, բույրը՝ փառավոր, կորիզը՝ քաղցր: Մի քսան ակր էլ ծիրանենի կտնկեմ:

Ինչո՞ւ ամերիկացիները չգնեցին նուռ:

Երանի մեքսիկացիները ջուրը գտնեն: Էս հողի տակ ջուր կլինի՞:

Անպայմա՛ն, ասաց հորեղբայրս: Կարևորը՝ գործը սկսենք: Կասեմ, որ օձերից զգույշ մնան: Նուռ, դեղձ, ծիրան... Է՞լ ինչ:

Թուզ:

Մի երեսուն ակր էլ թուզ:

Բա թթի՞ն ինչ կասես:

Թթենին շա՜տ սիրուն ծառ է, ասաց հորեղբայրս: Մեր երկրում դրանք շատ էին աճում: Հը՞, ինչքա՞ն տնկեմ, որ լավ լինի:

Մի տասը ա՞կր:

Լավ, է՞լ ինչ:

Ձիթենիներն էլ են սիրուն:

Հա, սիրուն են: Մի տասը ակր էլ ձիթենիներ: Է՞լ:

Վախենամ էս հողում խնձորենի չաճի:

Երևի, բայց խնձոր չեմ էլ սիրում:

Նա շարժիչը միացրեց, ու չոր հողից չոր ճանապարհ դուրս եկանք: Մեքենան, թափ տալով, կամաց առաջ էր գնում, մինչև հարթ տեղ հասանք, ու ավելի արագ ընթացավ:

Տե՛ս, ասաց հորեղբայրս, որ տուն հասնենք, էս ագարակիս մասին մերոնց մոտ չխոսես:

Հա՛, սը՛ր: (Ագարակի՞, մտածեցի: Ի՞նչ ագարակ):

Թող անակնկալ լինի, թե չէ տատիդ գիտես: Ինչ որ մտքիս դրել եմ, կանեմ, հետո, որ գործն անենք, բոլորին ագարակ կբերեմ, թող զարմանան:

Հա՛, սը՛ր:

Տես՝ ոչ մի շունչ չիմանա:

Հա՛, սը՛ր:

Մի խոսքով, մեքսիկացիները գործի անցան ու հողը մաքրեցին: Համարյա տասը ակրը՝ համարյա երկու ամսում: Ցոթ հոգով էին: Քլունգներով ու բահերով էին աշխատում: Ոչ մի բան չէին հասկանում: Տարօրինակ գործ էր, բայց չէին բողոքում: Կարևորը, որ իրենց վարձը ստանում էին, էլ ի՞նչ էր պետք: Երկու եղբայր էին իրենց որդիներով: Մի օր եղբայրներից մեծը՝ Դիեգոն, հորեղբորս քաղաքավարությամբ հարցրեց, թե արածի նպատակն ինչ էր:

Սենյո՛ր, ասաց, հազա՛ր ներողություն, կակտուսներն ինչու՞ ենք կտրում:

Ուզում եմ էս հողը մշակել, ասաց հորեղբայրս:

Մյուս մեքսիկացիներն իրենց լեզվով Դիեգոյին հարցրին, թե հորեղբայրս ինչ ասաց, ու սա թարգմանեց:

Սրանք մտածեցին, թե չարժի նեղություն քաշել ու հորեղբորս բացատրել, որ ուզածն անօգուտ է: Ուղղակի շարունակեցին կակտուսները կտրել:

Ինչևէ, կակտուսները երկար կտրած չմնացին. մաքրած հողը շատ շուտով նորից կտրածի տեղն աճած կակտուսներով ու մացառներով ծածկվեց: Հորեղբորս էս բացահայտումը, կասեի, ապշեցրեց:

Երևի կակտուսից ազատվելու համար հողը խոր պիտի փորվի, ասացի: Երևի ճիշտ կանես՝ վարես:

Հորեղբայրս խնդիրը Ռայանի հետ քննարկեց, որը գյուղատնտեսական մեքենաների գործ էր անում: Ռայանն ասաց՝ մեր օրերում ձիերի վրա հույս չեն դնի. ճիշտը տրակտոր աշխատեցնելն է, որ մի տարվա գործը մի օրում անի:

Մի խոսքով, հորեղբայրս «Ջոն Դիրի» տրակտոր գնեց: Շա՜տ սիրուն էր: Ռայանի մեխանիկներից մեկը Դիեգոյին տրակտոր վարել սովորեցրեց, և մյուս օրը հողամաս հասնելով՝ ես ու հորեղբայրս հեռվում անապատի քար լռության մեջ դղրդացող տրակտորը տեսանք: Ասես խենթություն

Ինչպե՞ս են հողը մշակել ավելի հին ժամանակաշրջանում, իսկ ինչպե՞ս են մշակում մեքսիկացի աշխատողները:

Ինչպե՞ս էր վերաբերվում Մելիք հորեղբայրն այդ հողակտորում ապրող կենդանիներն: Ինչո՞ւ:

լիներ: Խենթություն էր, որ կար: Հորեղբորս կարծիքով հրաշալի էր:

Առաջընթա՛ց եմ ասել, վրա բերեց: Էս էլ քեզ նոր ժամանակները: Տասը հազար տարի առաջ հարյուր հոգով մի շաբաթում էնքան գործ չէին անի, ինչքան տրակտորը մի օրում է արել:

Տասը հազար տարի առա՞ջ: Ուզում էիր ասել՝ երե՞կ:

Ինչ որ է: Էս նոր հարմարանքներին ոչինչ չի հասնի:

Տրակտորը հարմարանք չի:

Բա ի՞նչ է, առարկեց հորեղբայրս: Վարորդը նստած է:

Ո՞նց պիտի կանգներ:

Հենց որ գործը նստած ես անում, ուրեմն հարմարանք է: Սուլել գիտե՞ս:

Հա, հորեղբայր: Ի՞նչ մեղեդի կուզես սուլեմ:

Ոչ մի մեղեդի էլ չեմ ուզի: Տրակտոր վարող մեքսիկացու՛ն սուլիր:

Ինչի՞ համար:

Կարևոր չի, դու սուլի՛ր: Թող իմանա, որ էստեղ ենք ու արած գործից գոհ: Երևի մի քսան ակր վարած կլինի:

Երկու ձեռքիս ցուցամատն ու միջնամատը բերանս դրի ու ինչքան ուժ ունեի՝ փչեցի: Լավ, բարձր սուլեցի: Բայց Դիեգոն ոչ մի նշան ցույց չտվեց, թե լսել է: Ահագին հեռու էր: Չհասկացա, թե սուլելը հորեղբորս ինչին էր պետք, մեկ է՝ նրա կողմն էինք գնում:

Էլի, ասաց հորեղբայրս:

Էլի սուլեցի, բայց Դիեգոն էլի չլսեց:

Մի քիչ էլ ուժեղ:

Երրորդ անգամ՝ թոքերումս ինչքան շունչ կար՝ սուլեցի, էնպես, որ հորեղբայրս ականջները փակեց: Երեսս կասկարմիր կտրեց, բայց սուլոցս մեքսիկացուն հասավ: Սա ընթացքը դանդաղեցրեց, տրակտորը շրջեց ու հողը մեջտեղից վարելով՝ դեպի մեզ շարժվեց:

Ուզում էիր, որ էսպես վարի՞:

Կապ չունի:

Որպեսզի չանցած՝ տրակտորն ու մեքսիկացին մեզ հասան: Մեքսիկացին երջանիկ էր: Փոշի-քրտինքը դեմքից սրբեց ու ցած իջավ:

Սենյո՛ր, ասաց, հրաշալի է:

Ուրախ եմ, որ հավանեցիր, ասաց հորեղբայրս:

Կուզե՞ք մի պտույտ տալ:

Հորեղբայրս հեչ չէր ուզում: Ինձ նայեց:

Հը՛, ասաց, նստի՛ր: Մի պտույ՛տ տուր:

Դիեգոն մեքենան բարձրացավ ու օգնեց, որ ես էլ բարձրանամ: Ինքը նստեց վարորդի մետաղե աթոռակին, ես, նրանից բռնած, հետևում կանգնեցի: Տրակտորը ցնցվեց ու տեղից շարժվեց: Մեքսիկացին մի մեծ շրջան արեց ու հորեղբորս կանգնած տեղը վերադարձավ: Ցած իջա:

Լավ, ասաց հորեղբայրս: Գործիդ գնա:

Մեքսիկացին վարած տեղը հետ գնաց:

Ամիսներն անցնում էին, բայց հորեղբայրս ջուրը չէր գտնում: Չորսբոլորը հորեր էին փորել, բայց ոչ մեկում ջուր չկար: Պոմպեր տեղադրել տվեց, բայց ջուրը չկար ու չկար: Տեխասից Ռոյ անունով ջրի մասնագետ եկավ, ու եղբայրների հետ սկսեցին տեղանքը հետազոտել: Վերջը հորեղբորս ասացին, որ ջուրը կգտնեն: Երեք ամիս տևեց: Ջուրը ցեխոտ էր ու սակավ: Մասնագետն ասաց, որ ժամանակի հետ կարգի կընկնի, ու Տեխաս վերադարձավ:

Երբ հողի կեսն արդեն մաքրած էր, ջուրը՝ գտնված, տնկելու ժամանակը եկավ:

Նռնենիներ տնկեցինք: Ամենալավ տնկիներն էինք առել ու շատ թանկ: Ընդհանուր առմամբ յոթ հարյուր ծառ տնկեցինք, մի հարյուրը՝ ես, հորեղբայրս՝ ութ թե ինը հատ: Պապակ անապատում կորած՝ քսան ակր նռնենիների այգի ունեինք: Հորեղբորս խելքն իրենը չէր: Մենակ մի խնդիր կար. փողը վերջանալու վրա էր: Ու փոխանակ գործը շարունակելու՝ ամբողջ վեց հարյուր քառասուն ակրը այգի դարձնելու, հորեղբայրս որոշեց ժամանակը, փողն ու եռանդը միայն նռնենիներին նվիրել:

Առա՛յժմ, ասաց: Մինչև սկսենք նուռը ծախել ու փող վաստակենք:

Հա՛, սը՛ր:

Հաստատ չգիտեի, բայց ինձ թվում էր՝ էդ փոքրիկ ծառերից գոնե դեռ մի երկու-երեք տարի կարգին բերք չէինք ստանալու, թեև բան չասացի: Հորեղբայրս մեքսիկացի բանվորներին ազատեց, ու ագարակը երկուսիս մնաց: Տրակտորը մերն էր, հողը՝ մեծ, և ժամանակ առ ժամանակ գնում էինք տրակտորն աշխատեցնելու, որ կակտուսները հանենք ու նռնենիների արանքի հողը փխրեցնենք:

Ինչևէ, ժամանակի հետ ջրի խնդիրը կարգի չընկավ: Մեկ էլ տեսար՝ հանկարծակի առատ աղբյուր կբխեր՝ համարյա մաքուր, ու հորեղբորս քեֆին քեֆ չէր հասնի, բայց մյուս օրը ջուրն էլի ցեխոտ ու նվազ կդառնար: Ծառերն արմատ էին գցել ու ամրացել, բայց ծարավ էին մնում:

Երկու տարուց ծաղկեցին: Հորեղբորս համար իսկական ցնծություն էր, բայց էդպես էլ պտուղ չտվեցին: Ուղղակի գեղեցիկ էին. մեջը բան չկար:

Էդ տարվա բերքը երեք փոքրիկ նուռ էր:

Մեկը ես կերա, մյուսը՝ հորեղբայրս, իսկ երրորդը նրա սենյակում դրեցինք:

Հաջորդ տարի տասնչորս տարեկան դարձա: Տարվա ընթացքում ինձ մի շարք լավ բաներ էին պատահել. հասկացել էի, որ գրել եմ սիրում ու հորեղբորս չափ հասակ էի առել: Նռնենիներն էդպես էլ մեր գաղտնիքն էին մնացել: Հորեղբորս թանկ էին արժեցել, բայց նա շարունակում էր հավատալ, թե շուտով մեծ բերք պիտի հավաքի, վաճառքից փողը հետ բերի ու անցնի անապատի մեջտեղը այգի սարքելու իր երազին:

Ծառերը մի փոքր մեծացան՝ համարյա աննկատ: Մի մասը չորացավ ու մեռավ:

Թույլատրելի կորուստն է, ասաց հորեղբայրս: Ակրից քսան ծառը թույլատրելի կորստի չափն է: Բայց հիմա նորերը չենք տնկի: Հետո:

Դեռ շարունակում էր հողի վարկը վճարել:

Հաջորդ տարի մի երկու հարյուր նուռ բերք հավաքեցինք: Սիրուն արկղերի մեջ շարեցինք ու առաքեցինք Չիկագո՝ մի մեծածախ ընկերության: Տասնմեկ արկղ եղավ:

Մի ամիս մեծածախ ընկերությունից ոչ մի լուր չունեինք, ու հորեղբայրս միջքաղաքայինով զանգ տվեց: Ընկերության տերը՝ Դ'Ագոստինո անունով մի մարդ, հորեղբորս ասաց, որ նուռը չի ծախվում:

Պատմվածքը բաժանի՛ր մասերի և վերնագրի՛ր, կազմի՛ր փոխադրության պլան:

Արկղը քանիսո՞վ ես տալիս, գոռաց հորեղբայրս:

Մի դոլարով՝ ի պատասխան գոռաց Դ'Ագոստինոն:

Քի՛չ է, գոռաց հորեղբայրս: Արկղը հինգ դոլարից մի սենթ պակաս չտաս:

Մի դոլարով էլ չեն առնում, գոռաց Դ'Ագոստինոն:

Ինչու՞, գոռաց հորեղբայրս:

Չգիտեն ինչ է, գոռաց Դ'Ագոստինոն:

Հետո կասես՝ գործարար ես, գոռաց հորեղբայրս: Նու՛ռ են, ի՞նչ են: Հինգ դոլարից պակաս չե՛մ տալիս:

Չի՛ վաճառվում, գոռաց մարդը: Մի հատն ինքս կերա ու ոչ մի երևելի բան չտեսա:

Գի՞ժ ես, գոռաց հորեղբայրս: Նռան պես պտուղ աշխարհում չկա: Հինգ դոլարը կես գինն է:

Ի՞նչ անեմ, գոռաց Դ'Ագոստինոն: Չե՛ն վաճառվում: Պե՛տքս չեն:

Եղավ, կամաց ասաց հորեղբայրս: Հետ ուղարկիր: Արագ առաքումո՛վ:

Տասնմեկ արկղերը ստացանք:

Ամբողջ ձմեռ ես ու հորեղբայրս ազատ ժամանակ նուռ էինք ուտում:

Հաջորդ տարի հորեղբայրս հողի վարկը չկարողացավ վճարել: Փաստաթղթերը նախկին տիրոջը վերադարձրեց: Իմ ներկայությամբ:

Պարո՞ն Գրիֆիթ, ասաց, ստիպված եմ ձեր ունեցվածքը ձեզ վերադարձնել, բայց մի փոքրիկ խնդրանք ունեմ: Քսան ակր նռնենի եմ տնկել ու շատ երախտապարտ կլինեի, եթե թույլ տայիք ծառերը խնամել:

Խնամե՞լ, զարմացավ Գրիֆիթը, ինչի՞ համար:

Հորեղբայրս փորձեց բացատրել, բայց չկարողացավ: Ո՞նց բացատրես մեկին, որ կարեկից չի:

Մի խոսքով, հորեղբայրս հողը կորցրեց, ծառերն էլ հետը:

Մի քանի տարի անց միասին էդ հողամասը գնացինք ու քայլեցինք նռնենիների այգու կողմը: Ծառերը մեկի պես չորացել էին: Հողը էլի կակտուսներով ու տափաստանային մացառներով էր ծածկվել: Չորացած նռնենիները չհաշված՝ տեղանքը աշխարհի արարումից ի վեր ունեցած՝ առաջվա տեսքն էր ստացել:

Մեռած այգու մեջ մի քիչ պտտվեցինք ու մեքենան վերադարձանք:

Նստեցինք ու քաղաք քշեցինք:

Ոչինչ չասացինք, որովհետև էնքա՜ն ասելիք կար, որ ոչ մի լեզվով չէիր ասի:

Մեկնաբանի՛ր պատմվածքի վերջին նախադասությունը:

Ամփոփիչ գործնական աշխատանք

Գրի՛ր նամակ պատմվածքի հերոսներից մեկին:

Առանձնացրե՛ք պատմվածքի հիմնական թեմաները և դրանց շուրջ կազմակերպե՛ք քննարկում դրանց արդիականության շուրջ:

Այս տարում քո ուսումնասիրած հեղինակներին վերաբերող ի՞նչ հուշարձաններ, փողոցներ, բնակավայրեր ու կառույցներ կան: Հետազոտի՛ր և քեզ համար նախընտրելի եղանակով ներկայացրո՛ւ:

Անդրադարձ

Դու ընթերցեցիր մի քանի պատմվածքներ: Ո՞րը քեզ տպավորեց և ինչո՞ւ: Ժանրային ի՞նչ առանձնահատկություններ ունի պատմվածքը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Կյանքը, ուսումնառությունը 6
Ստեղծագործությունը 7
Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում 10
ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ 12
ՏԱՂ ԱՆՁՆԱԿԱՆ 13

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Կյանքը, ուսումնառությունը 16
Ստեղծագործությունը 17
ԱՎԵԼՈՐԴԸ 19

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Կյանքը, ուսումնառությունը 41
Ստեղծագործությունը 42
ՍՊԻՏԱԿ ՁԻՆ 44

ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ

Կյանքը, ուսումնառությունը 64
Ստեղծագործությունը 65
ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ..... 67

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ



Կյանքը, ուսումնառությունը 68
Ստեղծագործությունը 69
ԿՅԱՆՔԸ ՀԻՆ ՀՌՈՎՄԵԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ 70

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Կյանքը, ուսումնառությունը 74
Ստեղծագործությունը 74
ԹԱԳԱԴՐՈՒՄ..... 76
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԳԸ..... 78

ՍՏԵՓԱՆ ՋՈՐՅԱՆ

Կյանքը, ուսումնառությունը 80
Ստեղծագործությունը 81
ՄԵՐ ՏՈՒՆԸ 83

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Կյանքը, ուսումնառությունը 90
Ստեղծագործությունը 90
ԱՆՏԱՌՈՒՄ 92
ՄԱՍՐԵՆԻ 94
ԱՆՈՒՆԴ ՏԱԼԻՍ 96

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Կյանքը, ուսումնառությունը 98
Ստեղծագործությունը 98
ՔԵԼԵ՛, ԼԱՌ 100

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Կյանքը, ուսումնառությունը 102
Ստեղծագործությունը 103
ՀԱՅԱՍՏԱՆ 106
ՔԻՉ ԵՆՔ, ԲԱՅՑ ՀԱՅ ԵՆՔ 108
ԾՆՎԵԼ ԵՄ 110

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



Կյանքը, ուսումնառությունը 112
Ստեղծագործությունը 113
ԿԱՆԱՉ ԴԱՇՏԸ 115

ՋԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ

Կյանքը, ուսումնառությունը 126
Ստեղծագործությունը 127
ԴՈՒՐՅԱՆԻ ՇԻՐԻՄԸ 129

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ



Կյանքը, ուսումնառությունը 132
Ստեղծագործությունը 133
ԷՋՄԻԱԾՆՈՒՄ (հատված) 135

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆ

Կյանքը, ուսումնառությունը 139
Ստեղծագործությունը 139
ՄԱՄՓՐԵ ԱՐՔԱՆ 141

ՈՒԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ



Կյանքը, ուսումնառությունը 156
Ստեղծագործությունը 157
ՆՌՆԵՆԻՆԵՐԸ 160

ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Հրատ. բաժնի ղեկավար՝ Հռիփսիմե Մադոյան
Տեխնիկական խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Սրբագրիչներ՝ Անժելա Ավագյան
Անժելա Նիկողոսյան
Ձևավորումը և կազմը՝ Վիտալի Ասրիևի
Համակարգչային էջադրող՝ Նարինե Հովհաննիսյան

Չափսը՝ 70x100 1/16:
Տպագրությունը՝ օֆսեթ: Ծավալը՝ 11 տպ. մամուլ:
Տառատեսակը՝ GHEA Koryun:
Տպաքանակը՝ ..... օրինակ:

Ակտարես

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պող. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am